

Մ Ո Ւ Ք Ր

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 2—3 1898

ՓԵՏՐՈՍ—ՄԱՐՏ

1898 № 2—3

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

երև.

1 ՄԱՆԻԼԼԵԱՆՑ, ԼԵՒՈՆ	201	Խորտակած կեանք (վէպ, շար.):
2 ՀԱՅՆԼԻՑ՝ ԱՏՈՄ ՇԱՀԷՆ	222	Բանաստեղծութիւններ: (Շար.)
3 ԲԱՐԱՆՑԵՎԻՉ, Կ. Ս.	241	Նրկու ոգի (նորավէպ):
4 ԴԵՄԻՐՃԵԱՆ, ԴԵՐԵՆԻԿ	251	Փոթորիկ (բանաստեղծութիւն):
5 " " " "	254	Փոթորիկի ժամըն (բանաստեղծութ.)
6 ԽՈՋԱ-ԷՅՆԱԹԵԱՆՑ, ՅՈՎՀԱՆ	255	Գիւղական ցաւեր (վերջ):
7 ԱԹԱՅԵԱՆ, ԱՐՇԱԿ	263	Նէր ընկերիս (Բանաստ.):
8 ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ, ՄԻՔԱՅԷԼ	266	Էտրիցիայի դաղափարը (շարուն.):
9 ՅՐՈՒԳ-ԻՉ՝—Յ. ՅԱԿՈԲԵԱՆ	272	Տիրջ սկիհը (լեզենդա):
10 ՅԻԼԻՊՊՈՆԻՅ Գ. ՍԱՐԳՍԵԱՆ	274	Օգտակար և վնասակար միկրոքներ:
11 ՎԱՐԳԱՆԵԱՆՑ, ՎԱՍԻԼ	290	Տրամադրութեան ստրուկ (վերջ):
12 ԱՂԲԱԼԵԱՆ, Ն.	303	Սեիֆաի «Կուլիվերի ճանապարհորդութիւնը»:
13 ԱՐԱՍԽԱՆԵԱՆՑ, Ա.	310	Ժամանակակ. Տեսութիւն:— Զոլայի դատի առիթով II:
14 Ա.	326	Զոլայի գործը երգեակների դատարանում: (Մանրամասն արձանագ.):
15 ՄԱՐ. ՅԱՐ.	362	Նրեանի քաղաքային ընտրութիւնների առիթու:
16 ՕՆԻԵԱՆ, Հ.	366	Թատրոնի չուրջը, XVII:
17 ՎԱՆՑԵԱՆ, ԳՐ.	369	Նամակ խմբագրին:
18 ԽՄԲ.	372	Զանազան լուրեր:

Յայտարարութիւններ

Թ Ի Ֆ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Դ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типография М. Д. Ротинянова, Гол. пр., д. № 41.

1898

THE HISTORY OF THE
CITY OF BOSTON
FROM THE FIRST SETTLEMENT
TO THE PRESENT TIME
BY NATHANIEL BENTLEY

IN TWO VOLUMES.
VOL. I.
FROM THE FIRST SETTLEMENT
TO THE YEAR 1700.
LONDON: PRINTED BY R. CLAY AND COMPANY, ST. MARTIN'S LANE, 1793.

Մ Ո Ւ Ր Ճ

ՔԱՂԱՔԱԿԱՆ, ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ, ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր

№ 2—3 1898

ՓԵՏՐԻԱՐ — ՄԱՐՏ

1898 № 2—3

ՏԱՍՆԵՐՈՐԴ ՏԱՐԻ

Թ Ի Յ Լ Ի Ս

ՏՊԱՐԱՆ Մ. Գ. ՌՕՏԻՆԵԱՆՑԻ

Типография М. Д. Ротлиаппа, Гол. пр. д. № 41.

1898

საქართველო

საქართველოს ისტორიის ენციკლოპედია

საქართველოს ისტორიის ენციკლოპედია

Дозволено цензурою. Тифлисъ, 23-го Февраля 1898 г.

საქართველოს ისტორიის ენციკლოპედია

საქართველოს ისტორიის ენციკლოპედია
საქართველოს ისტორიის ენციკლოპედია

„ՄՈՒՐՃ“

ՔԱՂԱՔԱԿԱՆ-ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ի Ր Ը

մտաւ 1898 թւականին իւր **ՏԱՍՆԵՐՈՐԴ** տարեշրջանը
և հրատարակելու է նախկին ծրագրով

(**ՄՐԱԳԻՐ ՄԱՅՐԱԲԱՂԱԲՆԵՐԻ ՌՈՒՍԱՅ ՄԵՇ ԱՄՍԱԳՐԵՐԻ**)

Մշտական աշխատակիցներից անցած տարում մասնակցեցին հետեւեալները.

ԱՐԱՍՈՒՄՆԵՍԱՆՑ ԱԼ. (հրատարակախօսութիւն), ՄԱՆՈՒԼ-
ԼԵԱՆՑ Լ. (բռնատու, վէպ, քննադատու), ՎԱՐԴԱՆԵՍԱՆՑ Գրիգոր
(անաստեղծական-սոցիալական յօդւածներ), ՇԱՆԹ (վէպ, բանաստեղ-
ծութիւն), ԲԱԲԿԵՆՑ (վէպ), ԺԱՏՈՒՐԵԱՆ ԱԼ. (բանաստեղծ.),
ՏԵՐ-ՄԻՐԱԶԵԱՆ Յովհ. (ժողովրդական կրթութեան հարցեր և
գրախօսութիւն), ՓԱՓԱՋԵԱՆ Վ. (պատմանքներ), ԱԴԵԼԵԱՆ (վէպ),
ԱԶԲԱԼԵԱՆ ՆԻԿ. (գրախօսութիւն, քննադատութիւն), ՋԱԶԱ-
ՐԵԱՆ Թադ. բժշկ. (հասարակական-բժշկական յօդւածներ), ՏԵՐ-
ԴԵՆՈՐԳԵԱՆ Յակ. (թարգմանական պոէմաներ), ՎԱՆՑԵԱՆ Գրի-
գոր (հայկական ազգագրութիւն և այլք), ԻՂԽ. ԵՐԿԱՑՆԱԲԱԶՈՒԿ-
ԱՐԶՈՒԹԵԱՆ Սոֆիա (կրթական խնդիրներ), ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆ
ՄԻք. (գիտական-սոցիալական խնդիրներ), ՄԱՐԳՍԵԱՆ Գարեգ.
բժ. (բժշկական քրոնիկ), ԹԱՌԱՑԵԱՆՑ Սեդրակ (գրախօսութիւն),
Արամ ՉԱՐԸԳ., ԴԵՄԻՐՃԵԱՆ Դ., ՅԱԿՈՐԵԱՆ Յ. և ԱԹԱ-
ՑԵԱՆ Ա. (բանաստեղծ.), ՍԵՆԵԱՆ (թատրոնական քրոնիկ), ՏԵՐ-
ՄԱՐՏԻՐՈՍԵԱՆ ՄԻք. (թարգմ. վէպեր), ՄԱՐԴԱՆԵԱՆ Փրիդ.

(նաւթաչին դորժ), ՄՈՌՐԱԳԵԱՆ Յակ. (նամակներ Սև Տովի
ափերից), ՂԱՐԱԶԵԱՆ Գ. (նամակներ Երևանից), ԽԱԶ-ՊԱՊԵԱՆ Ատ.
(տաճկա-հայկական խնդիրներ), ՄԻՐԻՄԱՆԵԱՆ Յար. (վրաց դրա-
կանութիւն), Ն. (քաղաքական տեսութիւն) և ուրիշներ:

Մասնակցել են անցած տարում, բացի չիշեալ մշտական աշ-
խատակիցներից նաև պ.պ. ՇԻՐՎԱՆ-ԶԱԴԷ (գեղարեստական քննա-
դատութիւն), ԿՈՌՍԻԿԵԱՆ Կ. (Ռ. Պատկանեանի մասին), ԶՈՊԱ-
ՆԵԱՆ Արշակ (Իրսէնի մասին), ԽՈԶԱ-ԼՅԵԱԹԵԱՆ Յ. (Վիւզա-
կան ցաւեր»), ՎԱՐԴԱՆԵԱՆՅ Վլասիլ (Կոմս Լ. Տոլստոյի մասին):

ԲԱԺԱՆՈՐԴԱԳԻՆԵՆ Է տարեկան 10 ռ.: Վճարել կարելի է
նաև մաս-մաս, սկզբում 5 ռ., մնացած 5 ռ. մինչև յունիսի վերջը:
Հասցէ. Тифлисъ, въ редакцію „МУРЧЪ“

Խմբագրատունը գտնուում է Սերգիեւսիպա փ. № 6:

ԽՈՐՏԱԿԻԱԾ ԿԵԱՆՔ

Վ Է Պ

ՆԵՌՈՆ ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅԻ

ՄԱՍՆ ԵՐԿՐՈՐԴ

ՀԻԱՍԹԱՓՈՒՄՆԵՐ

(Շարունակութիւն ¹)

XIV

Անցաւ մօտ երեք ամիս: Փարունը փայլում էր իւր բոլոր գեղեցկութեամբ: Այնպիսի ժամանակ էր, երբ իւրաքանչիւր մարդ, մի բաժին ստանալով բնութեան լիառատ պարգևից, որքան նեղութեան մէջ էլ լինի, այնուամենայնիւ աւելի հաշտ աչքով է նայում կեանքի վրայ: Կայ մի ինչ որ փարատիչ զօրութիւն ջինջ կապուտակի, անուշաբոյր օդի, բուսականութեան փարթամ պճրանքի և թռչունների ուրախ, անհոգ երգերի մէջ:

Ոսկերչեանը, իբրև վերածնւած բնութեան հիւլէներից մէկը, իրան զգում էր այժմ անհամեմատ աւելի լաւ: Բացի այդ, հէնց այն գիտակցութիւնը, որ նա ամեն օր և ամեն ժամ իրան հարկադրւած էր տեսնում արթուն և զգաստ լինել անարժան ընկեր-

¹) Տես «Մուրճ» 1897 թ. № 1, 2—3, 4, 5, 7—8, 9, 10, 11—12:

ների խարդաւանանքից, հէնց այդ գիտակցութիւնը նորա հոգուն մի տեսակ անդորրութիւն էր բաշխում:

Հարկաւ, այժմ նա ապրում էր կարիքի և զրկանքի մէջ, շատ անգամ իւր կարեւոր պիտոյքներին գոհացում տալ անկարող էր լինում, մարդավայել ապրուստ չունէր: Միայն մի դաս ունէր, և այդ դասի համար ստանում էր ընդամենը տասնուհինգ ուսուցիչ, որից եօթը տալիս էր սենեկի վարձ. մի չնչին գումար էր մնում, որով նա պիտի հոգար իւր ուսելիքը, խմելիքը, ծխախոտը և շորը: Դա մի խղճալի կացութիւն էր անտէր-անտիրական և ջահէլ գրագէտի համար:

Բայց մի մխիթարութիւն կար: Իւր կացարանը վարձել էր մի տան մէջ, որը գտնուում էր Սուրբ Դաւթի ստորոտում: Դա մի փոքրիկ սենեակ էր, չարմարեցրած տանիքի տակ, և նայում էր դէպի փողոց: Արեւի առաջին ճառագայթները, ս. Դաւթի խաչի վրայ մի քանի վայրկեան շողողալուց յետոյ, զարնւում էին այդ բնակարանի փոքրիկ երկփեղկ լուսամտին. և երխտասարդ բանաստեղծը իրան բաղդաւոր էր զգում, երբ չաջողւում էր զարթնել կանուխ և դուրս գալով պատշգամբ՝ հիանալ արեւածաղի զեղեցիկ տեսարանով: Լուսաբացի հանդիսաւոր բոսկեններին, հոգեզմայլութեամբ լցւած, նա չառում էր աչքերը արեւելեան հորիզոնի այն արծաթափայլ տարածութեան վրայ, որտեղից դողողալով պիտի բարձրանար հրեղէն գունդը:

Մի առաւօտ, հոգու վերացման ժամին, Ոսկերչեանը յօրինել էր մի բանաստեղծութիւն, բնութեան նկարագիր, որի վերնագիրն էր «Արեւածագ»: Հեղինակը, ըստ երևոյթին, սքանչացել էր իւր նոր ստանաւորով: Նորան թւում էր, որ այս երկը նոյն ընդունելութիւնը պիտի գանի, որին արժանացաւ երբեմն «Լեւոն ծաղիկը»: Նա հաւատացած էր, որ «Արեւածագը» իւր մասին անշուշտ խօսել պիտի տայ բանասէրների շրջանում: Ձեռքերը ետեւին դրած՝ հպարտ հպարտ նա շրջում էր իւր նիւղի մէջ: Այդ ժամանակ մէկը սկսեց բարձրանալ աստիճաններով: Հազի ձայնից նա ճանաչեց հիւրին և, դուրս գալով սանդուխքների գլուխը, խօսեց.

— Օ, մալշեանը! Բարև'... Արի, արի. ես քեզ մի լաւ բան պիտի կարդամ:

—Գարձեալ բանաստեղծութիւն? արտասանեց այցելուն շնչասպառ և, անփայթ կերպով նորան ողջունելուց յետոյ, իրան նետեց մահճակալի վրայ և խօսեց հետևով. թող դեռ մի շունչ քաշեմ Տնաշէն, բաւական չէ, որ սարի ծայրն ես հասել, տան գլուխը ինչու ես բարձրացել?

—Հը, նախանձում ես? կատակեց Ոսկերչեանը:

—Ինչպէս չէ, — հեգնեց Պալչեանը:

—Ի հարկէ, կը նախանձես: Ապա մի համեմատիր իմ բնակարանը քոնի հետ: Վեր կաց: Այստեղ արի: Նայիր: Տեսնում ես, ինչ հրաշալի տեսարան է բացւում առջևդ? Ես ապրում եմ, կարելի է ասել, երկնքումը, իսկ դու գեհննի ամենաստորին յարկում: Ահա որտեղ է քո կացարանը: Նայիր. ահա այնտեղ Քուրն է. աջակողմեան ափի վրայ մի բարձր շինութիւն կայ, տեսնում ես? նորա ետև ինչ որ մտախուզի նման բան է երևում. դա ծուխ է և փոշի, որոնք միանալով կարծես ցանկանում են ծածկել այն բոլոր աղտոտութիւնները, որոնցից բլրակներ են դոյացել. բայց իզուր. անցորդը քթի մօտ թաշկինակ է բռնում այնտեղ և շուտ է տալիս երեսը, որպէս զի չտեսնէ զգլելի աղբակոյտերը...

—Այո, խոստովանում եմ. բանաստեղծական դիրք ունի կացարանդ: Ասա, օրը քանի ոտանաւոր ես թխում?... Հա, իրաւ, քիչ էր մնում մոռանայի: Ուր է այն լաւ բանը, որ ուզում էիր կարդալ? Ոսկերչեանը մօտեցաւ սեղանին, որպէս զի վերցնի թերթիկը: Բայց Պալչեանը կամեցաւ ինքը կարդայ: Ձեռքերը ետևին, դունչը վեր քաշած, առանց գլուխը կռացնելու նա սկսեց իւր մոքումը կարգալ՝ աչքերը յառած սեղանի վրայ դրած թերթիկին:

Իսահակ Պալչեանը տարիքով երեսնի մօտ մի երիտասարդ էր, միջին հասակից քիչ աւելի բարձր, հիւանդոտ, գունատ և այնքան նիհար, որ այտերի ոսկորները, կաշւի տակից դուրս ցցւած՝ պարզ որոշում էին: Գլուխը փոքրիկ, իսկ մազերը երկայն. սրածայր քիթը իւր սաղատի ետև կրում էր հասարակ ակնոցներ, որոնց տակ մկան աչքերի պէս արագ շարժւում էին սև և անփայլ բիբերը: Հազ ունէր նա, որը սաստկանում էր աշնան մտախուզների և երկարատև անձրևների ժամանակ, և տարւայ այդ եզանակին աչքերի սպիտակուցի վրայ մանր երակները լցւում էին արիւնով: Հագած

էր հնամաշ և աղքատիկ շոր: Դա ծնունդ էր կարիքի, չքաւորութեան և հազար ու մէկ անյաջողութիւնների: Աւտում առել էր նա Ներսիսեան դպրանոցում, որը սակայն չաւարտեց և, հիւանդութեան պատճառով, դուրս եկաւ հինգերորդ դասարանից:

Նա սիրում էր գրականութիւնը. շարադրում էր դեռ ևս աշակերտական նստարանի վրայ: Աւտումը թողնելուց յետոյ, նա սկսեց աշխատակցել «Ժամանակին», ուր տպեց մի քանի թարգմանական պատկերներ և կիսաթարգմանական յօդաձևներ: Բայց խմբագրութեան հետ մի ինչ որ անխորթութիւն ունեցաւ և հեռացաւ այդ թերթից: Տպեց մի պօէմա, որ ամենքը գզգզեցին: Հրատարակեց ոտանաւորների տետր, որի վրայ ոչոք ուշադրութիւն չդարձրեց: Դորանից յետոյ նա գրում էր «Ճառագայթի» և «Մանկական թերթի» մէջ: Աւթ տարուց աւելի էր, որ նա ոտ էր դրել գրականական ասպարիզի վրայ, գրած տողերի թիւը տասնեակ հազարների կ'հասնէր, բայց, չնայած դորան, նա չունէր փոքր ի շատէ արժէք ունեցող գէթ մի հաս գրականական վաստակ:

Իւր անյաջողութեան գլխաւոր պատճառները նա գտնում էր արտաքին հանդամանքների մէջ, որոնք և կազմում էին շարունակ նորա հոգսերի և մտածմունքների աւարկան: Նորա կարծիքով, մեծ կարեւորութիւն է ներկայացնում այն, թէ որ լրագրին ես աշխատակցում, և ահա ինչու այսօր նորա անունը երևում է մի թերթի մէջ, վաղը մի ուրիշ տեղ: Նոյնքան ստէպ փոփոխում էր նա գրականութեան ճիւղերը: Պօէման ընդունելութիւն չգտաւ, հրատարակեց մանր ոտանաւորների ժողովածու: Ժողովածուն սառնութեան հանդիպեց. իրան ներքեց մանկական պատմաձգների: Այդ էլ չօգնեց, քննադատի պաշտօն ստանձնեց: Նոյն խաղը խաղում էր նա և իւր անւան հետ: Մի օր կ'երևայ իւր իսկական անունով, մի ուրիշ անգամ կ'տեսնես Խահակը դարձած Վահ—Ասի, որը կազմւած է անւան տաւերի տեղափոխութիւնից. այդ էլ հնացաւ, նա մի նոր անուն կ'հնարի, և մարդ զարմացած էր մնում, թէ որտեղից քրքրեց ու հանեց այդ օտարօտի կեղծանունը, կամ որ սատանան թելադրեց նորան այդ նորութիւնը:

Երկու ամիս չկար, որ նոքա ծանօթացել էին իրար հետ: Առաջին անգամ իրար հանդիպեցին «Մանկական թերթի» խմբագրա-

տանը: Ոսկերչեանի մէջ տեսնելով նոյն բողոքող ոգին, որ Յալչեանը զգում էր իւր բոլոր էութեան մէջ, նա փափագ ունեցաւ նորա հետ մտերմանալու: Սկզբումը Ոսկերչեանին հետաքրքրեց, նոյն իսկ զրաւեց իւր նոր ծանօթի բնաւորութեան քննադատող, ժխտող գիծը: Բայց վերջին ժամանակները, աւելի մօտ ճանաչելով այդ մարդուն, կամաց-կամաց սկսում էր համոզուել, որ այդ բարձրագոյն բողոքների, մաշլ յոռետեսութեան և գեղեցիկ բառերի տակ թաղնւած էր մի ողորմելի հոգու դատարկութիւն:

Երբ Յալչեանը կարգաց բանաստեղծութիւնը, Ոսկերչեանը անհամբերութեամբ հարցրեց.

— Հը, ինչպէս էր? հաւանեցիր?

— Ը, այո՛, վատ չէ, կայ էլի, միջակ բան է:

— Միջակ բան է?... Ուրեմն քեզ դուր չեկաւ, որ ասում ես միջակ բան է: Իսկ ես կարծում էի, դու կ'հիանաս:

— Գիտես, ինչ կայ, սիրելիս? Ոտանաւորը այնպիսի բան է, որ արժէ կարդալ միայն ամենասիրունը: Իսկ վատը կամ նոյն իսկ միջակը կրակը նետելու է!

— Էհ, բաւական է: Դու այդպէս ես. միշտ և ամեն բանից յժգոհ, յժգոհ: Աշխարհումս բան չկայ, որ դու հաւանես:

— Ո՛չ, ինչու? Այ՛, օրինակ, Բայրնի բանաստեղծութիւնները...

— Ո՛չ, դու մեր գրականութիւնը վերցրու:

— Թեկուզ հէնց մեր գրականութիւնը: Պատկանեանի, Նալբանդեանի ոտանաւորները ինչ պակաս բաներ են?

— Նե-րե-ցէք! Ես քեզ ուրիշ բան կ'ասեմ: Ես քեզ հաւատացնում եմ, որ, եթէ Պատկանեանը այժմ լինէր ինձ նման մի երիտասարդ և, իւր «Նկարիչը» քո մօտ կարդալուց յետոյ, քո կարծիքն ուղեւար իմանալ, դու անշուշտ ասելու էիր. «այո՛, վատ չէ, կայ էլի, միջակ բան է»:

— Սխալում ես, բարեկամ!

— Ո՛չ, չեմ սխալում, այլ ուղիղն եմ ասում: Դու ընդունում ես միայն այնպիսիներին, որոնց անունը վաղուց հաստատուած է գրականութեան մէջ: Իսկ նորերին, որոնց զնահատելու համար մի առանձին հոտաւութիւն և կիրթ ճաշակ է հարկաւոր ունենալ, դու

ժխտում ես, այդպիսիների դրածքը խորհուրդ ես տալիս կրակը նետել! Ահա դու ինչ տեսակ մարդ ես!

Ոսկերչեանը խօսում էր ամենայն լրջութեամբ: Փալչեանը, որ քիչ առաջ կարծում էր, թէ կատակի ձևով ճշմարտութիւններ է ասում, իւր ընկերոջ վերջին ջանդիմանութիւնից խոցւած, նմանապէս լուրջ կերպարանք ընդունեց, սաքացաւ և սկսեց իւր կրակոտ Ֆիլիպպիկան: Խօսելով գրականագէտների հին սերնդի մասին, նա վերջացրեց իւր ասելիքը այսպէս.

—Նոցա դէմ խօսք չունիմ: Նոքա տաղանդաւոր մտածողներ և գեղարւեստագէտներ էին, և իւրաքանչիւրը իւր դերը կատարեց կամ դեռ շարունակում է դործել:

Բայց այդ տիտանները ահա մեռնում են մէկը միւսի ետեւից, ոչ մէկը արժանի ժառանգ չէ թողնում: Նոցա տեղը մնում է թափուր, ասպարէզը ամալանում է, գրականական հորիզոնը մթնանում:

Յետոյ նա անցաւ գրողների աչտէս ասած, նոր սերնդին և նոցա գլխին թափեց իւր փղծուկը: Նոցա մասին խօսում էր բարձրից և կծու արհամարանքով:

—Այդ բոլոր նորելուկները անճաշակ, անկիրթ, ողորմելի զբրչակներ են և ջանգեր շինողներ: Գոքա նման են ծաղկի այն կոկոններին, որոնք դեռ չբացւած թառամում, ընկնում են: Չնայած իրանց երիտասարդ հասակին, դոցա ուղեղը արդէն չորացել է, և, ինչպէս անբերրի հողը անջօր է պտուղ արտադրելու, այնպէս են և դոցա գլուխները!

Նա ասաց, որ իւր կարծիքը անհերքելի փաստերով շուտով կ'ապացուցանէ մամուլի մէջ:

—Ժամանակով ես բոլորին կ'դնեմ իմ քննադատական պրէսսի տակ, և ամենքը կ'համոզւեն, որ մի մնալալ թարմ հիւթ չկայ այդ չորացած ուղեղների մէջ! Այո՛, ես, ես...

Փալչեանի հազը բռնեց, որ նա աշխատեց զսպել իւր խօսքը վերջացնելու համար, բայց չկարողացաւ: Այս թշուառ անջաջողակը, որի մարմնի ամբողջ շինւածքը կերել, քայքայել էր աղքատութիւնը, իսկ միտքը չարաչար տանջել էին մի կողմից իւր միջավայրի ստուռ անտարբերութիւնը, միւս կողմից իւր գրականական ընկերներից կրած գրչի հալածանքը, նա, որ իրան համարում էր չգնահատուած

սաղանդ, որ շատերից չէր լսել համակրութեան խօսքեր, որի մէջ հեղինակի ինքնասիրութիւնը խոցւած էր կրած անյաջողութիւններից, այժմ, դաւնութեամբ և մաղձով լցւած, աջ ու ձախ հայհոյում էր ամենքին, և փրփրում էր բերանը, և արիւն էր քամում աչքերի մէջ:

Նորա խօսելու ժամանակ Ոսկերչեանը սաստիկ զայրացած էր և, ցանկանալով հակաճառել, ամեն բոպէ ընդհատում էր նորան: Բայց երբ նորա հազը բռնեց, և սա տեսաւ, թէ ինչպէս խեղճը կծկում էր տեղումը և ճիգ էր թափում ախտի դէմ մաքառել, այն ժամանակ սորա բարկութիւնը տեղի տւեց խղճահարութեան, սա երեսը զարձրեց մի կողմ և սկսեց մտախոհ անցուզարձ անել:

Երբ Ֆալչեանը քիչ հանդստացաւ, Ոսկերչեանը զիմեց նորան և ասաց եղբայրաբար.

— Ինչու չես բժշկուում, Իսահակ?

Ի պատասխան այս հարցին, հիւանդ գրականագէտը ձեռքով չուսահատակիւն նշան արաւ, որի խորհուրդը այն էր, թէ նա ձեռք է վերցրել իրանից էլ, բժիշկներից էլ: Այնուհետև տիրեց կարճատև լութիւն, և չետոյ նա սկսեց խօսել: Ամեն կերպ աշխատում էր չյուզւել, շուտ շուտ մաքրում էր կոկորդը և ձայնը չէր բարձրացնում: Նա զանգատուում էր բժիշկներից, ասելով, թէ նոքա ոչինչ չեն կարողանում անել իւր հիւանդութեան դէմ, թէ մէկը ծաղրում է միւսի դեղատոմսը, թէ ամենքը գրում են թանկագին դեղեր, որոնց գնելու համար հարկաւոր է փող:

— Երկուսից մէկը, — ասում էր, — կամ պէտք է դեղեր ընդունեմ և քաղցած մնամ, կամ դեղեր չ'ընդունեմ, որպէս զի քաղցից չմեռնեմ: Ես ընտրել եմ երկրորդ, իսկ հիւանդութիւնս չանձնել եմ բախտին:

Ոսկերչեանը հարցրեց, թէ ինչու նա զոնէ մի տարի չէ կամենում ապրել հայրենի գիւղում, ուր կենդանարար ջուրը և օդը կարող են կազդուրել քայքայւած առողջութիւնը գուցէ աւելի լաւ, քան թէ գեղանկար աուփերի պիլիւլները և սրւակների ներկւած գոյնզգոյն ջրերը: Ֆալչեանը պատասխանեց, թէ նա փորձել է, բայց անյաջող, որովհետև քաղաքի կեանքին նա այն աստիճան ընտելացել է, որ գիւղումը ձանձրանում է, օրը տարի է թւում, և կեանքը դառնում է անսանելի:

—Ո՛չ,—աւելացրեց նա վճռականապէս. աւելի լաւ է կամաց-
կամաց փոփոխ քաղաքումը:

Ոսկերչեանը նայեց ժամացոյցին և գոչեց.

—Օ՛, արդէն տասնևմէկից անց է, իմ գնալու ժամանակն է:
Այդ ասելով, նա ծածկեց գլխարկը, առաւ ձեռնափայտը և, ձեռքը
մեկնելով ընկերոջը, աւելացրեց.

—Ներողութիւն. ես պիտի շտապեմ դասի:

—Գնանք միասին,—ասաց Ֆալչեանը, տեղից վեր կենալով,—
ես էլ կը մտնեմ խմբագրատուն: Այսօրուս լրագիրները դեռ չեմ
կարդացել:

—Դասից յետոյ ես էլ կը գնամ այնտեղ, նոր գրած բանա-
տեղծութիւնս պիտի յանձնեմ խմբագրին:

Երբ փողոցումը երկու ընկերները ուզում էին միմեանցից բա-
ժանել, Ֆալչեանը ասաց.

—Գիտես, ինչի համար էի եկել քեզ մօտ?

Ու բացատրեց: Նա մի քանի մանէթի պարտք էր խնդրում
Ոսկերչեանը հանեց պորտմոնէն, որի մէջ կային մի հատ հինգնոց և
մի հատ երեքնոց, չհաշած կոպէկները: Երեքնոցը դրեց իւր ընկե-
րոջ ձեռքի մէջ և ասաց.

—Ցաւում եմ, որ աւելի չեմ կարող:

—Ես շուտով կը վերադարձնեմ:

—Դատարկ բան է,—նկատեց Ոսկերչեանը,—և, ց՛տեսութիւն
տսելով, ծռեց ձանապարհը դէպի աջ:

Մի տասը օրից յետոյ լոյս տեսաւ «Մանկական թերթը», որ-
տեղ զետեղւած էր և Ոսկերչեանի ոտանաւորը («Արեւածագը»): Հա-
մարը սովորական համարներից էր, լաւն ու վատը, ինչպէս միշտ,
խառն:

Անցաւ մի քանի օր ևս, և «Ճառագայթի» մէջ երևաց յար-
ձակողական բնաւորութեամբ և անստորագիր մի յօդւած, որի մէջ
«Մանկական թերթի» վերջին երկու համարները ենթարկւած էին
կրքոտ և կարծատես քննադատութեան:

«Ճառագայթը» և «Մանկական թերթը» մինչ այդ հաշտ էին
իրար հետ և իրար պաշտպանում էին: Բայց ինչ ինչ պատճառնե-
րով երկու պաշնակից հրատարակութիւնները միմեանց հետ ընկան,

և թշնամութիւնը անմիջապէս արտայայտեց թէ մէկ և թէ միւս օրգանի մէջ, նախ «Ճառագայթի» և ապա «Մանկական թերթի» մէջ:

Յօդաւածում Ոսկերչեանի գրւածքի մասին ասւած էր հետեւեալը. «Դա մի աշակերտական վարժութիւն է, որից ուսուցիչը զո՞ն չէր լինիլ և զուցէ դեռ մի լաւ քաշէր հեղինակի ականջիցը և խրատէր, որ նա իւր ժամանակը աւելի օգտուէտ բաների վրայ զործադրի, քան թէ անհամ ոտանաւորների շարադրութեամբ զբաղուելն է»:

Այս կծու նկատողութիւնը առաջին խօսքն էր, որ արտասանեց «Ճառագայթը» Ոսկերչեանի մասին, և, իբրև մի օրգանի խօսք, որը իւր ժամանակին բաւական կշիռ ունէր հասարակութեան մէջ, ինչ ասել կ'ուզէ, խորը վիրաւորեց սկսնակ գրականագէտի սիրարը:

«Ով է այն զաղտնի թշնամին, այն սրկան, որը ջանդգնել է իւր զրշի խաղովը մի տասնեակ անձանց ծաղրի մատնել, բայց համարձակութիւն չէ ունեցել իւր սեփական գրւածքի տակ իւր սեփական անունը ստորագրել?»:

Այսպէս էր մտածում Ոսկերչեանը:

Ու նորա հոգեկան հանգստութիւնը կրկին խանդարեց:

XV

Ոսկերչեանը կարօտ էր քաջալերութեան: Նա փափազում էր չսել վերջապէս մի հեղինակաւոր անձից մի անկեղծ կարծիք իւր գրականական ընդունակութիւնների մասին: Կարելի է, նա շլացած է մի Ֆիկտիւլ քանքարով? Կարելի է, միայն իրան է թւում, թէ ունի տաղանդ, կամ գոնէ մի շնորհք, մի ձիրք, բայց խկապէս զուրկ է միանգամայն աստուածային պարգևից?

Բայց ում մօտ գնաց լաւ է? Այն մէկը, որ ունի արժւէի հայեացք, ծերունու մագեր և երիտասարդի հոգի, ներկայ չէր քաղաքումը: Այն միւսը, որ անյայտութիւնից լոյս աշխարհ հանեց հայ ժողովրդի լեզուի բոլոր հարստութիւնները, նոյնպէս բացակայ էր: Կեանքի հզօր ալիքները, ով դիտէ, որ էին տարել ու ձգել նոցա: Որ նահանգի, որ գաւառի անկիւնում որոնում էին նոքա իրանց օրայ հացը, որը սակայն այնքան էլ հեշտ չէր տրւում նոցա?...

Արդեօք չգնաց նորա մօտ, այն քարոզիչ-վիպասանի մօտ, որը բոլոր հայերից ամենախորը ըմբռնեց իւր ժամանակի ոգին և իւր

բեղմնաւոր ու կախարդական գրչովը աշտանակեց և առաջ մղեց հայութիւնը?

Այո, նորա մօտ!... Վճոււած է: Էլ ումնից կարող է լսել մի սկսնակ աւելի խելացի խորհուրդներ և կարծիք, եթէ: ոչ այն մարդուց, որը ամբողջ քառորդ դար քրտնաջան աշխատեց գրականական ասպարիզում, շարունակ մարտնչելով գրչակների ահագին բանակի դէմ, և վերջ ի վերջոյ գրականական ճակատամարտից դուրս եկաւ փառաւոր յաղթանակով, ընդհանուր սէր և յարգանք վաստակեց և փակեց ընդմիջ իւր թշնամիների բերանները?

Ոսկերչեանը ծանօթ էր համբաւուոր գրողի հետ: Չնայած դրան, նորա սիրտը սկսեց ուժգին բարախել, երբ մի երեկոյ մտաւ նորա բնակարանը: Նորան թւում էր, որ այնտեղ նոյն իսկ ծաղիկները մի առանձին բուրմունք ունին և կարծես հպարտանում են, որ պատկանում են նշանաւոր մարդու: Սմեն ինչ այնտեղ մի տեսակ երկիւղածութիւն և պատկառանք էր ներշնչում երկուսարդ գրականագէտի հոգուն:

Դուռը բացեց, և ջահէլ հիւրին ներս հրաւիրեց ինքը վիպասանը:

Տանտէրը խնդրեց Ոսկերչեանին նստել նստեց և ինքը գրասեղանի մօտ և լուռ կացաւ: Նորան թւում էր, որ այցելուն եկել է մի որ և է գործով և սպասում էր, որ նա կը սկսի խօսել և կը յայտնի իւր գալու նպատակը: Ոսկերչեանը անյարմար էր գտնում առաջին իսկ վայրկենից իւր անձնաւորութիւնը մէջ խոթել. այդ պատճառով սա ևս լուռ էր և սպասում էր, որ նա բաց կ'անի խօսքի ծայրը:

Վերջապէս տանտէրը ինքը ընդհատեց լուռութիւնը, որի ժամանակ երկուսն էլ իրանց անյարմար գրութեան մէջ էին զգում: Նա ասաց, թէ չիշում է ձերան ծաղիկը, թէ նա շատ յաջող բան էր և թէ լաւ կը լինէր, որ նա շարունակէր զրել նոյն ոգով:

Ոսկերչեանը չափազանց ուրախ էր, որ խօսակցութիւնը սկսեց այնպիսի առարկայից, որը ամենակարճ ճանապարհով կարող էր հասցնել նորան իւր այցելութեան նպատակին:

Եւ ահա սկսեց խօսել: Ձայնը դողում էր, և նորա մէջ լուռում էր մի տեսակ արտունջ, որ ելնում էր վշտոտ սրտի խորքիցը: Բացք

խօսողի աստիճանաբար ոգևորելու չափով ձայնն էլ զառնում էր աւելի և աւելի համարձակ ու վստահ: Նորա ազնիւ ձայնը, աչքերի խելօք արտայայտութիւնը, արդարացի բողոքը—միանգամից գրաւեցին լսողի ուշադրութիւնը: Տեսնելով իւր մօտ մի արտասովոր անձնաւորութիւն, վիպասանը երկու ձեռքով ու զղեց ակնոցները երկու ծայրերից և, հայեացքը գամելով երիտասարդի դէմքի վրայ, սկսեց լսել նորան կրկնապատիկ հետաքրքրութեամբ:

Ոսկերչեանը զանգատուում էր սկսող գրականագէտի ծանր վիճակի մասին: Ասում էր, թէ քննադատութիւնը անբարեխիղճ է, կրքոտ է, անճաշակ է: Յաւում էր, որ գրականագէտը կարօտ է մնում իւր գրածքի իսկական գնահատութիւնը լսելու: Ոմանք գովում են աւելի, քան հեղինակը ինքը կը ցանկանար, միւսները բռնում են հակառակ ծայրից. հայհոյում, ծաղրում և ոչնչացնում են:

—Մարդ գլուխը կարող է կորցնել,—ասում էր նա,—այս բոլոր ծայրացեղութիւնների խօսքի մէջ: Այսօր գրում ես մի բան, ուրախանում ես, որ չաջող է, կարդում ես ընկերներիդ,—ընկերներդ ծափահարում են. յետոյ տպում ես,—և ահա ստահակի մէկը, մի թերթի էջի վրայից, Սաթաշէլի նման քրքջում է, ծաղր ու ծանակ է դարձնում ոգևորութեանդ պտուղը!... Դեռ մի կողմ թողնենք այն, որ շատ անգամ հանդիպում ես սպանիչ լուսթեան: Եւ յուսահատուում է մարդ, և ձեռքերը թուլանում են, գրիչը վայր է ընկնում ձեռքից, և վհատում է ու չգիտէ, ինչ անէ! Ճշմարիտ, երբեմն սիրտս ասում է, դէն ձգեմ գրիչս և այլ ևս մի տող չգրեմ!

Երիտասարդ հիւրը լռեց, կարծելով, թէ այժմ կը կամենայ խօսել կեանքի բովից անցած հմուտ գրականագէտը: Բայց սա շարունակում էր լուսթիւն պահպանել:

—Ախոս,—խօսեց կրկին Ոսկերչեանը,—ես շատ ցաւում եմ, որ մենք չունինք գրականագէտների մի սերտ շրջան. դա մեծ օգուտ կը տար սկսողներին: Հէնց ես ձեզ օրինակ: Ես այնքան մեծ կարիք եմ զգում իմ մասին մի կարծիք լսելու, մի խորհուրդ լսելու!...

Տանտէրը արդէն հասկացել էր իւր այցելուի սրտնեղութեան իսկական պատճառը: Նա անսնում էր, որ խեղճը մի բան է ուզում ասել, բայց խօսքը մնում է լեզուի ծայրին: Ուստի ինքը կամեցաւ հանել նորան դժուար դրութիւնից և հարցրեց.

—«Ճառագայթի» վերջին համարում ձեր բանաստեղծութեան մասին կար մի նկատողութիւն,—կորդացել էք?

Այո, կարդացի, և այնքան վատ ազդեց ինձ վրայ այն նկատողութիւնը, որ ամբողջ գիշերը չկարողացայ քնել!

—Երևում է, դուք շատ բարակ սիրտ ունիք,—նկատեց բազմամեայ աշխատաւորը, հազիւ նկատելի կերպով քմծիծաղ տալով: Այդ լուռ չէ,—շարունակեց նա,—աւելի քաջ, աւելի սրտոտ եղէք: Բարակ սիրտը նման է բարակ ապակու և շատ հեշտ կարող է կոտրուել:

Ոսկերչեանին, ըստ երևոյթին, դուր եկաւ այս համեմատութիւնը, և նա ծիծաղելով ասաց.

—Այդ ճշմարիտ է: Բայց ինչ անեմ, որ այսպէս եմ: Մի փոքրիկ անյաջողութիւն, և ես չուսահատուում եմ:

—«Արեւածաղը»,—խօսեց կրկին վիպասանը,—բնութեան մի զեղեցիկ նկարագրութիւն է. միայն ունի լեզւի մի քանի անհարթութիւններ, որոնք, երևի, առիթ են տւել «Ճառագայթի» քննադատին այնքան խիստ, մինչև անգամ անարդար լինելու ձեր վերաբերմամբ:

Այս խօսքի վրայ Ոսկերչեանը հողոց քաշեց, սիրտը թեթեւացաւ, զոհունակութեան ժպիտ փայլեց դէմքին, աչքերը մեծացան, և նա լարեց իւր բոլոր ուշադրութիւնը:

—Եթէ դատելու լինինք,—շարունակեց վիպասանը,—ձեր մի քանի չաջող ոտանաւորներից, դուք ունիք գրելու շնորհք: Միայն ձեր լեզուն, լեզուն մշակեցէք...

—Այո, այո, իհարկէ, այդ անհրաժեշտ է,—վրայ տւեց երիտասարդ հիւրը:

—Բայց որ ամենից գլխաւորն է—չվհատէք!

—Այո, չվհատել!

—Մի գրող ասել է. հանձարն է համբերութիւն: Դա ճիշտ է: Բայց, կարծեմ, աւելի ճիշտ կը լինի ասել, թէ առանց համբերութեան—չկայ հանձար: Համբերութիւնը մի երկնատուր պարզեւ է, և այն գրականագէտը, որ զուրկ է դորանից, կորած է: Դա ամեն մի գրականագէտի հրեշտակ-պահապանն է, դա եղել է իմ հրեշտակ պահապանը: Իւրաքանչիւր գրող բազմամեայ զործունէութեան

ընթացքում, որը տևում է յաճախ տասնեակ տարիներ, շարունակ գործ պիտի ունենայ հազար-գլխանի և հազար-լեզուների այն հրէշի հետ, որը կոչում է նախանձ: Եթէ ես այժմ ունիմ մի անուն, դուք կարծում էք այդ անունը ինձ էժան է նստել?... .

Նա երկար խօսեց այս ուղղութեամբ: Նա համառօտ կերպով պատմեց իւր կեանքը՝ սկսած գրական ասպարէզ երևալու առաջին օրից. և երիտասարդը համոզուեց, որ, արդարև, շատ թանկ է նստել հոշակաւոր գրողին իւր անունը: Ամեն մի քայլում անւանարկութիւն, դաւ, ինտրիգներ, անխիղճ ոտնձգութիւն և ստոր թշնամանք... Այն ինչ կեղտոտ սրտերից են բղխել այն չիշոցները, որ թափւել են խնկելի գործիչի գլխին!... Ո՛հ, ինչ կեանք է այն կեանքը, որ լիքն է անքուն գիշերներով, մշտական սրտնեղութեամբ, մտատանջութեամբ և անվերջանալի հոգսերով! Բայց չնայած այդ բոլոր խոչնդոտներին, նա ամեն հակառակն՝ ամուսնոյ, բարձրացաւ, հասաւ փառքի գագաթին, և հայհոյիչ դաճաճներին մտաց միայն պապանձել և սողալ նորա ստների տակ!...

Ոսկերչեանը զմայլւած էր այն աստիճան, որ պատրաստ էր ծունկ խոնարհել երկու տասնեակ հատորների հեղինակի առջև և համբուրել այն ձեռքը, որը ամենաձախորդ պայմանների մէջ ամբողջ քառօրդ դար շարժել է դիւթական գրիչը և վայր չէ դրել երբէք: Նա չէր խօսում այլ ևս: Նա ուրախ կը լինէր չուտել, չխմել, այլ միայն լսել և լսել: Այնքան խրատական էր այն ամենը, ինչ որ ասում էր փորձառու և տաղանդաւոր գրականագէտը!

Հրապուրւած երիտասարդը մոռացել էր, որ իւր առջև դրւած թէյի բաժակը դեռ լիքն է, չնայած, որ վաղուց մատուցւած էր: Տանտէրը չիշեցրեց նորան ըմպելիքի մասին, ասելով.

—Ձեր թէյը բոլորովին սառած կը լինի: Թողէք տաքացնեն:

—Ո՛հ, խնդրեմ, նեղութիւն չքաշէք: Այսպէս լաւ է: Ես կը խմեմ... Դուք սխալ էիք մեր մամուլի մասին...

—Այո՛, սիրելիս, — շարունակեց վիպասանը, — մեր մամուլը այժմ սաստիկ ընկած է և մի աննախանձելի տեսարան է ներկայացնում!...

Երկար ժամանակ նա խօսում էր այս հարցի մասին: Բայց կարծես իւր ասածը դեռ քիչ էր համարում: Նա բերեց մի լրագրի հին համարներից մէկը. Ֆելիկտոնի բաժնում գետեղւած էր նորա

յօղւածը, որի մէջ պարունակուում էր նորա ամփոփ կարծիքը մեր լրագրութեան մասին: Նա կարգաց այդ յօղւածից զանազան կտորներ: Բայց այնքանն էլ բաւական էր, որպէս զի Ոսկերչեանի նման մի սկսնակը կարողանար փոքրիշատէ ճանաչել այն մթնոլորդը, որի մէջ գործելու իրան կոչւած էր տեսնում:

Ահաւաստիկ այն հատուածները, որ անցողաբար կարգաց հեղինակը.

«Գրականական անամօթութիւնը մեզանում այն աստիճան կեղտոտութեան է հասել, որ բաւական է մէկը միւսի հետ մի փոքր թշնամութիւն, մի փոքր նախանձ ունենայ, միշտ պատրաստ է յաջող դէպքում նորան ցելսի մէջ կոխելու և ամեն անմաքրութիւն նրա զլխին թափելու... Մեր հասարակութեան առանց դրան էլ փճացած ճաշակը աւելի ապականում է, երբ կարգում է լրագրի մէջ անամօթ հայհոյանքներ միայն... Օղբու քաղելով մամուլի անամօթութիւնից, իւրաքանչիւր ստահակ կարող է խաչառակել ում որ ցանկանում է, մանաւանդ, երբ նա իրան աջակից է զտնում լրագրի խմբագրին... ձշմարտութիւնը մանր կրքերի մէջ մեռնում է... Մեզանում չկայ այն բանը, ինչ որ կոչուում է գրականական ազնուութիւն: Մանրակրկիտ հաւի նման քրճրճել մի գրւածք և նրա միջից դուրս բերել աննշան և չնչին հատիկներ—այդ մեր պուլեմիկոսների գործն է: Բժախնդրութիւնը հասցրած է մեզանում վերին աստիճանի անարգութեան: Օրինակ, դուք հրատարակել էք մի յօղւած. ձեր հակառակորդը յօղւածի ամբողջ բովանդակութեան հետ գործ չունի. նա ընտրում է նրա միջից միայն մի քանի բառեր և անամօթ իմաստակութեամբ աղաւաղում է, խեղաթիւրում է նրա միտքը և դուրս է բերում ծուռ ու սխալ եզրակացութիւններ... Դա սարսափելի դրութիւն է գրողների համար»...

Ոսկերչեանը խնդրեց թուլտութիւն տանել իւր հետ թերթի համարը և տանը ուշադրութեամբ կարդալ յօղւածը ծայրէփծալ: Չափազանց զոհ և ուրախ էր նա այն ժամաւայ համար, որ անցկացրեց ժամանակակից պրականութեան ամենանշանաւոր ներկայացուցչի բնակարանում: Հրաժեշտ տալու բոպէին նա խորին գոհունակութեամբ սեղմեց տանտիրոջ ձեռքը և ասաց.

—Մեծապէս շնորհակալ եմ, որ ձեր թանկագին ժամերից մէկը ինձ նւիրեցիք: Այս երեկոն ես չեմ մոռանալ!

—Մի վհատէք—չմոռանաք և այս խօսքերը:

—Օ, երբէք, երբէք! բացականչեց Ոսկերչեանը և, դուրս գալով փողոց, սջնպէս արագ թուաւ չէպի իւր կացարանը, որ կարծես նորա բերնից լսած քաջալերական խօսքերը թեւեր էին տուել ջահել գրականագէտին...

XVI

Չառիկեանների տանը աւելացել էր այժմ մի նոր անդամ, Մարիամը: Բացց նորա ներկայութիւնը տակաւին չբաժանեց այդ ընտանիքը երկու ներհակ մասերի, ինչպէս յաճախ պատահում է, երբ օտար ընտանիքի մէջ երևում է մի նոր կին-արմատ: Այդ բարեկիրթ տան մէջ բնաւ տեղի չէին ունենում անախորժ ընտանեկան տեսարաններ, որոնք անխուսափելի են տգէտ հասարակութեան մէջ և բնորոշում են մի կողմից ամուսինների, միւս կողմից՝ սկեսօր, տալերի և տէգրների շարաբերութիւնները, որոնք շատ անգամ անտանելի դժոխք են դարձնում հարսի, ամուսնու և վերջինիս արիւնակիցների կեանքը, նայած, թէ որ կողմն է յողթում և իւր բռան մէջ առնում ամբողջ ընտանիքը: Խօսքս այն ներքին, երբեմն խուլ, երբեմն աղմկալից ընդհարումների մասին է, որոնք խանգարում, թունաւորում են ընտանիքի խաղաղ երջանկութիւնը, անբարոյականացնում են տան մէջ ամենքին և, զարգացնելով իւրաքանչիւրի մէջ փոխադարձ ատելութիւն, նենգամոռութիւն ու նախանձ, սոխպում են դիմել թէ ստախօսութեան, թէ գաղտագողի ունկնդրութեան: Տիկին Չառիկեանը, թէև շատ սիրում էր իւր հարսին, բաց և այնպէս երբէք ձեռքից չէր թողնում իւր սկեսրական իրաւունքները. իսկ Մարիամը, իբրև խելօք և խաղաղասէր բնաւորութիւն, մանրակրկիտ կնոջ պէս, ամեն բանի ետևից չէր ընկնում, կամաւ հպատակում էր իւր ամուսնու մօրը, այնպէս որ, օրինակ, մի օրև է տեղ գնալու ժամանակ պէտք է զար և յայտնէր նորան, թէ ուր է գնում: Աշխէնը և Մարիամը քոյրերի պէս սիրում էին միմեանց, և մտերմանալ աւելի, քան նոքա էին մտերմացել իրար հետ, անկարելի էր:

Գարեդինը, ինչ ապել կ'ուզէ, սիրում, փայփայում էր իւր կնոջը և աշխատում էր ամեն կերպ ազդել նորա զարգացման վրայ:

նա մեծ փափազ ունէր, որ Մարիամը շարունակ հետեւէր մեր հասարակական և գրական-լրագրական կեանքի ընթացքին, և այդպիսի ուղղութիւն էր տալիս նորա հարցասիրութեանը: Միևնուցիւ ժամանակ նա շատ դո՛հ էր, որ իւր կիկը համեմատաբար բաւական կարճ միջոցում կարողացաւ տիրապետել իւր մայրենի լեզւին այն աստիճան, որ ազատ կարգում էր հայերէն և հասկանում:

Առաւօտները Գարեգինը և Աշխէնը զնուժ էին ուսումնարան: «Մայրիկը», ինչպէս ամենքը անւանում էին այդ տանը տիկին Զառիկեանին, շարունակել ու մուտ էր անում սենեակներից խոհանոց, խոհանոցից սենեակները, կամ իջնում էր մտանը, որտեղ ձողերի վրայից կախւած պտուկերի ու քսակների և ներքև շարեշար դարւած մոշնակների մէջ պահում էր տնային գործածութեան համար այլ և այլ պաշարեղէն, կրկին բարձրանում երկարածիգ աստիճաններով, ձեռքին աման՝ լիքը թթու դրած բանջարեղէնով կամ որևէ ուրիշ բանով: Իսկ երբ խոհանոցի գործը վերջանում էր, նորան կարելի էր տեսնել սեղանատանը, ուր նա գահաւորակի վրայ ծալապատիկ նստած՝ զբաղւած էր լինում կար ու կարկասանով: Պարապ մնալ նա չէր սիրում:

Մարիամը գրեթէ մենակ էր մնում մինչև ժամը երկուսը: Մի ժամի չափ անց էր կացնում դաշնամուրի առաջ, մէկ կամ երկու ժամ կարգում էր, երբեմն էլ մանկական գրքերից զանազան պատմութիւններ էր անում փոքրիկ Երևանդին:

Երբ Գարեգինի և Աշխէնի զալու ժամանակը մօտենում էր, նա սաստիկ անհամբեր էր դառնում. սպասողական դրութեան մէջ շարունակ նայում էր ժամացոյցին. ամեն մի շշուկից, ամեն մի ոտնաձայնից վեր էր թռչում. բանի անգամ զլուխը հանում էր պատուհանից տեսնելու՝ չին երևում արդեօք Գարեգինը և Աշխէնը: Իսկ երբ սոքա զալիս էին, ինչ կենդանութիւն, ինչ ուրախ ծիծաղ էր բարձրանում Զառիկեանների տանը!

Երեկոները, թէչի և ընթրիքի ժամանակ, ընտանիքը հաւաքւում էր սեղանատուն. և ահա կրկին ուրախութիւն, զւարճալի պատմութիւններ, ծիծաղ և կատակ... Որտեղ կայ Աշխէնը, այնտեղ կ'լինի և կատակը:

Իսկ երբ Գարեգինը և Աշխէնը գրասեղանի առաջ նստած՝

զբաղւած էին լինում տնտրակներ ու զղելով կամ հետեեալ օրւայ աւանդելիք դասն էին պատրաստում, Մարիամը, մենակ մնալով, տաղտկանում էր, մանաւանդ, երբ տրամադիր չէր լինում կարգալու, և սկիւմայ համեմատում էր իրան իւր ամուսնու և նորա քրոջ հետ: Նորա մէջ բարինսաննձ էր զարթնում թէ մէկի և թէ միւսի վերաբերմամբ: Յերեկը հինգ ժամ նոքա պարապում են ուսումնարանում, զալիս են տուն, կրկին պարապում են, — աշխատանքից յետոյ օրհնւած է հանգիստը: Ահա թէ ինչու Գարեգինի և մանաւանդ Աշխէնի ուրախութիւնը, ծիծաղը, հանաքը — բոլորն էլ սրախ խորքից է բղխում: Ինչու նա մի որևէ լուրջ զբաղմունք չունենայ, որ աշխատանքից յոգնած՝ ինքն էլ կարողանայ, նոցա պէս, լրիւ վայելել հանգստութեան բոլոր քաղցրութիւնը?

Իսկ երբ պատահում էր, որ անցետաձգելի գործը ամբողջ ժամերով դամւած էր պահում սեղանի մօտ Գարեգինին և Աշխէնին, Մարիամը ձանձրանում, տխրում էր և, համբերութիւնը հատած, զգուշութեամբ մտնում էր մէկի կամ միւսի սենեակը, ձեռքը դնում նոցա ուսին և գորովալիւր ձայնով մրմնջում.

— Աշխէն ջան, շուտ կ'վերջացնես?

Կամ՝

— Գարեգին, չվերջացրիր?

Այնչափ քնքշութիւն և այնքան կարօտ էր լաւում այս կիսահամարձակ կոչի մէջ, որ Գարեգինը առնում էր նորա ձեռքը իւր ձեռքի մէջ և, աչքերը թերթի վրայից չհեռացնելով, արագացնում էր գրչի շարժւածքը, ասելով.

— Այս բոպէիս, հոգեւնկա:

Աշխէնը շատ անգամ չէր էլ դիմանում. գրիչը կամ գիրքը նետում էր մի կողմ և մի առ ժամանակ ընդհատում պարապմունքը, ի հաճոյս Մարիամի:

Իսկ երբ գործը վերջացաւ, դահլիճում թնդում էր Գարեգինի խրոխտ ձայնը, դաշնամուրը դղրդում էր Մարիամի մատներին տակ, և հնչում էր Աշխէնի ուրախ տրախլան...

Ժամանակը աւելի օգտաւէտ դարձնելու համար, Գարեգինը մի լաւ բան մտածեց. շաբաթւայ մէջ յատուկ մի երեկոյ նշանակեց ընտանեկան ընթերցանութեան համար: Նրեքից մէկը կարդում

էր որևէ յօդւած, կամ պատմւածք, կամ քննադատութիւն, և միւսները լսում էին: Դա առիթ էր տալիս վիճաբանութեան, որը տեսում էր մինչև ընթրիքը, և սեղանի նստած՝ շարունակում էին վիճել, և այնքան երկար խօսում էին, որ մայրիկը սկսում էր յօրանջել, մի գլուխ երազ էր տեսնում և, քնած տեղից սթափելով, ասում էր՝ հազիւ կարողանալով բանալ աչքերի ծանրացած կոպերը.

— Զեր կռիւը չվերջացաւ, որդիքս?

Սշխէնի ընկերուհիներից և պաշտօնակից վարժուհիներից մի քանիսը ցանկութիւն էին յայտնել ներկայ լինելու Զառիկեանների մօտ ընտանեկան ընթերցանութիւնների ժամանակ: Առաջարկութիւնը ուրախութեամբ ընդունեց:

Մի երեկոյ այդ նպատակով ժողովել էին Զառիկեանների տանը եօթ-ութ հոգի: Բոլորն էլ այդ ժամանակաւ ընտիր, առաջնակարգ օրիորդներից էին, որոնք կազմում էին երիտասարդութեան մի հարազատ մասը, դաւանում էին միևնոյն զաղափարները և երես շուռ տալիս այն ամենից, ինչից նողկանքով հեռանում էր երիտասարդութիւնը: Բոլորն էլ հետաքրքրում էին հասարակական գործերով և գործիչներով և իրանց սրտին խիստ մօտ էին ընդունում հասարակական կեանքի ուրախալի և տխուր երևոյթները: Նոցա անունները այսպէս թէ այնպէս երեացել էին լրագրութեան մէջ՝ մէկը՝ իբր օրինակելի ուսուցչուհի, միւսը՝ իբր թարգմանիչ մի որևէ մանկական գրքոյկի, երրորդը՝ իբր նւիրատու և նւէրներ ժողովող սովեանների համար և այլն:

Գարեգինը ասնը չէր: Ճաշից յետոյ նա զնացել էր ծանօթներից մէկի մօտ և դեռ չէր վերադարձել:

Մարիամը, Սշխէնը և հիւրերը նստած էին դահլիճում և խօսք ու զրոյց էին անում:

— Օրիորդներ, լսել էք մի նորութիւն? — Հեղինէն դնում է արտասահման՝ ուսումը շարունակելու:

Խօսողը Զառիկեանների պաշտօնակից վարժուհիներից էր, մի քարձրահասակ, թխադէմ օրիորդ, արժւաքիթ և խոշոր դիմագծերով:

— Միթէ? հարցրեց Սշխէնը զարմանքով, որին խառն էր և նախանձ: Ուրեմն յաջողեցրել է? Տեսնում էք, ինչ ճարպիկն է այդ անպիտանը?

—Իսկ ուր պիտի գնայ? հարցւեց ներկայ եղողներին մի ուրիշը:

—Կարծեմ, ժընե, —պատասխանեց լուր հաղորդողը:

—Երանի նորան! բացականչեց օրիորդներին մէկը, որը իւր սաթի նման աչքերով, թաւ յօնքերով և կպրի նման սև ու երկայն մազերով յիշեցնում էր մի գնչուհու: Եթէ ես ևս միջոց ունենայի, ծոխ պէս կը թռչէի, կը գնայի...

—Ես ևս, չարեց նորա կողքին նստողը:

—Իսկ ինչ մասնագիտութիւն է ընտրել? Հարցրեց Մարիամը:

—Մանկավարժութիւն, եթէ չեմ սխալուում, —եղաւ հարցի պատասխանը:

—Հասկանալի է, որ մանկավարժութիւն կ'ընտրէր, —նկատեց մի օրիորդ, որի սպիտակ երեսի վրայ չորս հինգ տեղ կարծես թանաք լինէին կաթացրած, այնքան սև էին գէմքի խալերը: —Մեզ համար ամենայարմարը այդ մասնագիտութիւնն է: Ուրիշ ինչ կարելի է ընտրել?

—Ո՛չ, ինչու? Հակաճառեց Աշխէնը: Ի՛մ կարծիքով, չպէտք է սահմանափակել միայն մանկավարժութեամբ: Կան բժշկական գիտութիւններ, բնական գիտութիւններ...

—Երաժշտութիւն, —աւելացրեց մի ուրիշը:

Կանանց մասնագիտութեան վերաբերմամբ փոքրիկ վէճ ծագեց այս շրջանում: Մեծամասնութիւնը նայում էր խնդրի վրայ աւելի գործնական տեսակէտով և պնդում էր, թէ կինը կամայ ակամայ պէտք է ընտրի միայն այն մասնագիտութիւնը, որ կարող է գործադրել կեանքում, իսկ գիտութիւն գիտութեան համար չէին ընդունում: Այն ինչ Աշխէնը իւր մէկ թէ երկու կողմնակիցների հետ աշխատում էր համոզել ամենքին, որ կանայք, սղամարդկանց պէս, ընդունակ են սովորելու ամեն տեսակ գիտութիւններ և, ուրեմն, չպիտի սահմանափակեն իրանց ընտրութեան շրջանը: Ի հաստատութիւն իւր մտքի, նա բերեց Շիլլէրի երկտող աֆորիզմը գիտութեան մասին, այն է թէ՛ ոմանց համար գիտութիւնը մի կթան կով է, իսկ միւսների համար — մի ասուածուհի:

Գաղափարների չարակցութեամբ խօսակցութիւնը մի առարկայից անցաւ միւս առարկայի, և վերջումը իրանք էլ չիմացան, թէ ինչպէս խօսքը կանդ առաւ Չառիկեանին շանձնած դպրոցի վրայ:

Մարիամը այլ ևս ուշադրութեամբ չէր կարողանում հետևել ընդհանուր խօսակցութեան: Նորա ուշք ու միտքը դրանն էր: Ինչու ուշացաւ Քարեզինը? Ու՞մ մօտ է? Ինչ է անում? Մի՞թէ նա չգիտէ, որ իրան սպասում են?...

Անցաւ դարձեալ մի քսան րոպէ, մինչև որ եկաւ Քարեզինը: Մարիամը ուրախ վազեց նորան ընդառաջ:

— Ինչու ուշացար? Եղաւ առաջին հարցը:

— Իսկոյն, իսկոյն, սիրելիս,— պատասխանեց Քարեզինը քընքըութեամբ և մի երկու խօսքով բացատրեց ուշանալու պատճառը:

Այս լակոնական հարց ու պատասխանից յետոյ երկուսն էլ նախասենեակից անցան դահլիճ:

Ընդհանուր սիրալիր ողջոյն, բարևներ իւրաքանչիւրի հետ առանձին, ներողութիւն — այս բոլորը շատ արագ կատարուեց:

Քարեզինը հաղորդեց մի նորութիւն, որը հետաքրքրական էր մանաւանդ Զառիկեանի պաշտօնակիցների համար: Նա ասաց, թէ հետևեալ կիւրակի նշանակւած է դպրոցի հոգաբարձական ընտրութիւնը, և, որ զարմանալին է, Սևուժեանը մէջ է մտել վաղօրօք ու մտադիր է Զառիկեանի խումբը ցրիւ տալ:

Լսեցին զարմացական բացականչութիւններ և զայրոյթի արտայայտութիւններ Սևուժեանի վերաբերմամբ:

Սևուժեանին այդ չի չաջողւիլ,— նկատեց Աշխէնը խորին վրստահութեամբ և յիշեց մի քանի երիտասարդների անուններ, որոնք ընտրութիւնների ժամանակ միշտ պէտք էին գալիս: Մեր այդ կըտրիճները չեն թողնիլ, որ Սևուժեանները իրանց ոտը առաջ դնեն:

— Բայց դուք կարդացիք այսօր «Ժամանակի» մէջ մի կճու նկատողութիւն իմ հասցէին? Հարցրեց Քարեզինը, դիմելով մէկին ու միւսին: Այդ դեռ ազդանշանն է. աւելի լաւը, երևի, յետոյ կը լինի:

Դպրոցի մասին խօսակցութիւնը շատ երկար տևեց, այնպէս որ ընթերցանութեան մասին մոռացան և յիշեցին միայն այն ժամանակ, երբ, ուշ լինելու պատճառով, հիւրերը պէտք է ցրէին:

Շուտով օրիորդները մեկնեցին Զառիկեանների տանից:

Աշխէնը գնաց խոհանոց, որտեղ մայրիկը ընթրիքի համար պատրաստութիւն էր տեսնում: Նորա ակտիվօրէն առանց այն էլ

բաց էր, իսկ երբ տապակած զետնախնձորի հոտը քթին զիպաւ, աւելի ևս գրգռւեց ախորժակը, և նա ասաց մօրը.

— Մայրիկ, շուտ արա՛. քաղցած մեռայ!

Յետոյ մի կտոր լաւաշի մէջ փաթաթեց մի զետնախնձոր, տապակած միս և ուտելով զուրս եկաւ խոհանոցից: Նա զնաց մօր ննջարանը, որտեղ փոքրիկ մահճակալի վրայ պառկած՝ հանգիստ քնած էր կրտսեր եղբայրը: Վերմակը քաշեց, որովհետև մանուկը իրան բոլորովին բաց էր արել, և անցաւ իւր սենեակը: Նստեց գրասեղանի մօտ մի կոյտ տետրակների առաջ և, գրիչն առնելով, սկսեց ուղղել մէկը միւսի ետեւից:

Քարեզինը և իւր կինը առանձնացան իրանց ննջարանը: Մարիամը փարւեց իւր ամուսնու վզին, ասելով.

— Քեզ այնպէս կարօտել եմ այսօր!

Քարեզինը սեղմեց կրծքին նորա լիքը, զողջոջուն կուրծքը և՛ շրթունքը շրթունքին՝ նւաղեց երկարատև համբոյրի մէջ:

Ամբողջ տանը թագաւորեց լուռութիւն: Միայն սեղանատան միջից լսուում էին ժամացոյցի չափածոյ զարկերը:

(Շարունակելի)

ԲԱՆԱՍՏԵՂԾՈՒԹԻՒՆՆԵՐ

ԵՒ

ՔԵՐԹԻԱԾՆԵՐ

ՀԱՆՐԻ ՀԱՅՆԷԻ: Թարգմանութիւն Ատոմ Շահէնի

Ի Ն Թ Է Ր Մ Է Յ Յ Օ

(Շարունակութիւն 1)

ԽԲ

Տանջեցին իս, վախցուցին և տժգունեցուցին վիշտէս՝ քանի-
ներ իրենց սէրովը, ուրիշներ իրենց ատելութեամբը:

Փունաւորեցին հացս, զաւաթիս մէջ թոյն թափելով, քանի-
ներ իրենց ատելութեամբը, ուրիշներ իրենց սէրովը:

Բայց իս ամենէն աւելի տանջողը, վշտացնողն ու մորճոքողը
ան է որ իս երբեք չատեց և իս երբեք չսիրեց:

ԽԳ

Հրակէզ ամառը այտերուդ վրան է. ձմեռը, ցուրտ ձմեռը
սրտիդ մէջն է:

Աս օր մը պիտի փոխուի, սիրելիս: Ձմեռը այտերուդ վրան
պիտի ըլլայ, ամառը՝ սրտիդ մէջ:

1) Տես Մուրճ 1898 թ. № 1.

ԽԳ.

Երբ երկու սիրահար իրարմէ կը բաժնուին, ձեռքերնին իրարու կուտան և կըսկսին լալ ու հառաչել անվերջ:

Մենք չլացինք. մենք չհառաչեցինք. արցունքներն ու հառաչանքները յետոյ միայն եկան:

ԽԵ.

Թէչի սեղանի մը շուրջ նստած՝ երկար կը խօսին սիրոյ վրայ: Մարդիկ զեղեցկագիտութեան մասին, կիները՝ զգացման:

Սէրը պլատոնական պէտք է ըլլայ, կ'ըսէ նիհար խորհրդականը. խորհրդական կինը հեղնօրէն ժպտեցաւ, և սակայն շատ կամաց հառաչեց. Ափսոս:

Կանոնիկոսը լայն բերան մը բացաւ. սէրը շատ զգայական պէտք չէ ըլլայ, ապա թէ ոչ, առողջութեանը կը վնասէ: Գեւատի օրիորդը մրմնջեց. Ինչո՞ւ համար:

Կոմսուհին վշտագին երևոյթով մը ըսաւ. սէրը կիրք մըն է. և քաղտքավարութեամբ՝ պարոնին դաւաթ մը մեծարեց:

Սեղանին շուրջը պզտիկ տեղ մըն ալ կար. սիրելիս, դուն չկայիր հոն: Սիրոյ վրայ դուն քու կարծիքդ շատ աղէկ պիտի չայտնէիր:

ԽԶ.

Թունաւորած են երգերս. ուրիշ ինչպէս կրնային ըլլալ: Կեանքիս ծաղիկին վրայ թոյն թափեցիր դուն:

Թունաւորած երգերս. ուրիշ ինչպէս կրնային ըլլալ: Սրտիս մէջ կան շատ մը օձեր և դո՛ւն ալ, սիրելիս:

ԽԷ.

Հին երազս նորէն եկաւ ինձի. մայիսի գիշեր մըն էր. թմբիներու տակը նստած էինք և չաւիտենական հաւատարմութիւն մը կ'երգըննայինք:

Ու երգումները երգումներուն կը յաջորդէին, ծիծաղներով, փափուքներով և համբոյճներով խառն. որպէս զի երգումը չ'ըլեմ, ձեռքս խածիր:

Ո՛վ կապոյտ աշուի սիրելիս, ճերմակ ակուններով սիրելիս, շատ բաւական էր երգումը, խաճնելը աւելորդ էր:

ԽԸ

Բարձրացայ լեռանը գագաթը և զգացուն դարձայ. «Եթէ թռչուն մը ըլլայի» կը հառաչեմ կամաց:

Եթէ ծիծեռնակ մը ըլլայի, դէպի քեզ պիտի թռչէի, սիրունիկս, և պատուհանիդ դըւագին տակ պիտի շինէի պզտիկ բոյնս:

Եթէ սոխակ մը ըլլայի, պիտի թռչէի դէպի քեզ, սիրունիկս, և, փանայ թմբիներու մէջէն, զիշեր առն քեզի պիտի զրկէի երգերս:

Եթէ զեղձանիկ մը ըլլայի, իսկոյն դէպի քու սիրտդ պիտի թռչէի, որովհետեւ ինչպէս ինձի ըսին, սիրունիկս, զեղձանիկները կը սիրես դուն և կըզբօսնուս անոնց շաղակրատութեամբը:

ԽԹ

Լացի երազիս մէջ. երազ տեսայ որ մեռած էիր դուն. արթընցայ, ու արցունքները կը հոսէին այտերս ի վար:

Լացի երազիս մէջ. երազ տեսայ որ դուն կը թողէիր իս. արթընցայ, և ետքէն դառնապէս լացի երկար ատեն:

Լացի երազիս մէջ. երազ տեսայ որ տակաւին կը սիրէիր իս. արթընցայ, և արցունքներուս հեղեղը կը հոսի միշտ:

Ս

Ա՛մէն զիշեր քեզ կը տեսնեմ երազիս մէջ, քեզ կը տեսնեմ շնորհալից ժպիտով մը, և հեծկտալով սիրուն ոտքերուդ կ'իջնամ:

Տխուր երևոյթով մը ինձի կը նայիս. և խարտեաչ պզտիկ գլուխդ կ'երերցնես, ու աչքերէդ արցունքներուդ թաց մարգարիտները կը հոսին:

Շատ կամաց բառ մը կ'ըսես ինձի և սպիտակ վարդերու փունջ մը կուտաս: Կարթննամ. փունջը աներևոյթ եղած է. բնուն ալ կ'ուզեմ մոռնալ:

ՍԱ

Աշնան անձրեւն ու հովը կ'ոռնան ու կը մռնչեն զիշեր ժամանակ. մեր կրնայ ըլլալ այս ատեն խեղճ, վախկոտ սիրելիս:

Կը տեսնեմ որ իր մենաւոր պզտիկ սենեակին մէջ՝ պատուհանին կրթնած է. աչքները արցունքով լեցւած, իր նայւածքները խոր խաւարին մէջ կը սուզէ:

ԾԲ

Աշնան հովը ծառերը կը թօթուէ. գիշերը խոնաւ է և ցուրտ. գորշ վերարկով մը փաթթւած՝ ձիով կ'անցնիմ անտառէն:

Ու երբ կ'երթամ, մտածումներս կը սուրան առջնէս. թեթև ու ուրախ՝ անոնք կը տանին իս սիրելիս տունը:

Շուները կը հաջնն. ծառաները ճրագներով կ'երևան. մարմարիոն սանդուխէն վեր կ'ելլեմ, շխտացներով հնչուն կոշկախըթաններս:

Գորգերով զարդարուն և շքեղօրէն լուսաւորւած սենեակ մը, դաղջ ու քաղցրաբոյր մթնոլորդի մը մէջ, սիրելիս կը սպասէ ինձի. իր բազուկներուն մէջ կը նետուիմ:

Տերևներուն մէջէն հովը կը շշնչէ. իր ճիւղերուն մէջ կաղնին կը հծծէ. լի՞նչ կ'ուզես, յիմնար ձիաւոր, քու ապուշ երագովդ:

ԾԳ

Իր լուսաշող բնակարանէն աստղ մը կ'իջնայ. սիրոյ աստղն է ան, որուն իշնալը կը տեսնեմ:

Խնձորենիներէն շատ մը ճերմակ ծաղիկներ և տերևներ կ'իջնան. խենթ հովերը կը տանին անոնք և կը խաղան անոնց հետ:

Կարապը կ'երգէ լճակին մէջ. կը մօտենայ ու կը հեռանայ եզերքէն, ու միշտ աւելի կամաց երգելով՝ կ'ընկղմի իր հեզուկ զերեզմանին մէջ:

Բոլոր շուրջը հանդարտ ու մութ է. քչւած են տերևներն ու ծաղիկները. աստղը տխրութեամբ աներևոյթ եղաւ՝ իր անկումին մէջ, ու կարապին երգը դադրեցաւ:

ԾԴ

Երազ մը լոյսերով և հմայական գոլորշիներով լեցուն՝ հսկայ Գլեակ մը փոխադրեց իս, ուր այլազան գոյներով բազմութիւն մը ապարտըմաններու բաւիղին մէջէն կը տարածէր: Գունատ ամբոխը ելքի դուռը կը փնտռէր, ջղաձգօրէն ձեռքերնին գալարելով և անձ-

կութեան աղաղակներ արձակելով: Բազմութեանը մէջ տիկիներ և սասպեաներ կը տեսնուէին. ես ալ ինքզինքս խաժամուժ ամբոխէն քշած տեսայ:

Սակաչն մէկէն ի մէկ մինակ կը գտնեմ ինքզինքս, և ես ինծի կը հարցնեմ թէ այսքան շուտով ինչպէս այս բազմութիւնը կրցաւ աներևոյթ ըլլալ: Ու սկսայ քալել, վազելով սրահներէն, որ տարօրինակ խառնաշփոթութեան մէջ էին: Ոտքերս ծանրացած էին կապարի պէս, մահուան անձկութիւն մը սիրտս կը պրկէր—շուտով ելք մը գտնելէն յոյսս կտրեցի:—Հասայ վերջապէս վերջին դուռը. անցնելու վրայ էի .. Մտուածս—ո՞վ կ'արգելէ անցքս:

Սիրելիս է որ դուռին առջև կը կենար, վիշտը շրթունքներուն վրայ, անձկութիւնն ալ՝ ճակտին: Ետ-ետ պիտի գնայի. ան ձեռքովը նշան ըրաւ ինծի. չգիտէի ազդարարութիւն մըն էր աս թէ չանդիմանութիւն մը: Սակաչն աչքերուն մէջ անուշ կրակ մը կը շողար որ սիրտս թունդ հանեց: Մինչ ան խիստ և տարօրինակ կերպարանքով, բայց սակաչն սէրով անքան լեցւած՝ ինծի կը նայէր... արթնցայ:

ԾԵ

Վիշերը ցուրտ էր և լուռ. ողբալով կ'անցնէի անտառէն: Մառերը իրենց քունէն թօթեցի. անոնք գլուխնին շարժեցին՝ արդահասող երևոյթով մը:

ԾԶ

Քառուղիին վրայ թաղած են անոնք որ սպանութեամբ մեռած են. կապոյտ ծաղիկ մը կը փթթի. դատապարտած հոգիին ծաղիկը կը կոչեն ան:

Քառուղիին վրայ կանգ առի և հառաչեցի. գիշերը ցուրտ էր և լուռ: Լուսնակ լուսով ծանր ծանր կ'օրօրէր դատապարտած հոգիին ծաղիկը:

ԾԷ

Թանձր խաւարը կը շրջապատէ իս այն ատենէն ի վեր որ աչքերուդ լոյսը ան չի շլացներ իս, սիրելիս:

Սիրոյ աստղին անուշ լոյսը մարած է ինծի համար. վիհ մը կը բացուի ոտքերուս տակ. կլլէ իս, յաւիտենական գիշերս:

ԾԸ

Գիշերը կը տարածուի աչքերուս վրայ. լեզուս կապարի պէս ծանրացած էր. սիրտս ու գլուխս թմրած, կը կենացի գերեզմանին խորը:

Քնանալէ յետոյ չեմ կրնար ըսել թէ որչափ ժամանակ ետքը արթնցայ, և ինծի թւեցաւ որ գերեզմանիս կը զարնեն:

— «Զպիտի ելլես, Հանրի: Յաւիտենական օրը կը ծագի, մեռելները յարութիւն առին. յաւիտենական երանութիւնը կը սկսի:»

— «Սէրս, չեմ կրնար ելլել. որովհետեւ կոյր եմ միշտ. շատ լալուս՝ աչքերս մարեցան:»

— «Համբոյրներովս կ'ուզեմ, Հանրի, վերցնել գիշերը որ աչքերդ կը ծածկէ. պէտք է որ տեսնես հրեշտակներն ու երկնքին շքեղութիւնը:»

— «Սէրս, չեմ կրնար ելլել. քու մէկ բառիդ սրտիս բացած վերքը կ'արիւնտօի միշտ:»

— «Ձեռքս կամաց մը սրտիդ վրայ կը դնեմ, Հանրի. աս այլ ևս չարիւնտօտեր. վերքդ բուժուեր է:»

— «Սէրս, չեմ կրնար ելլել, վերք մըն ալ ունիմ որ կ'արիւնտօի գլխուս մէջ. կապար զնդակ մը տեղաւորեցի հոն, երբ քեզ ինձմէ չափշտակեցին:»

— «Մագրուս խոպոպներովը, Հանրի, կը զոցեմ գլխուդ վերքը, և կը կեցնեմ արիւնիդ ալիքը ու կ'աղեկցնեմ գլուխդ:»

Ձայնը սննդան հրապուրիչ և սննդան անուշ կ'աղաչէր որ շղթացայ զիմադրել. ուզեցի ելլել և սիրելիիս երթալ:

Յանկարծ վերքերս նորէն բացուեցան. գլուխէս ու կուրծքէս սաստիկութեամբ արիւնի ալիք մը ցայտեց. և ահա արթնցայ:

Վ Ե Ր Ջ Ա Բ Ա Ն

Հին և չար երգերը, ծանր և տխուր երազները թաղելու հզնացէք ինծի մեծ գագաղ մը փնտռեցէք:

Պիտի տեսնէք որ շատ բան պիտի դնեմ մէջը. դազազը պէտք է
 Հէյդէլբերգի խոշոր տակառէն ալ աւելի մեծ ըլլայ:

Գնացէք ինծի դիմացկուն և հաստ տախտակներով դազազ մը
 փնտռեցէք. Մայանսի կամուրջէն ալ աւելի մեծ պէտք է ըլլայ ան:

Ու բերէք ինծի տասներկու հսկայ՝ Հռենոսեան Քոլոնիայի
 գմբէթին սուրբ Կոլոմպոսէն ալ աւելի ուժեղ:

Դազազը պէտք է որ անոնք տանին ու նետեն ծովը. աջնչափ
 մեծ դազազ մը մեծ ալ գերեզման մը կ'ուզէ:

Գիտէք թէ ինչ՞ու համար այդ դազազը այսքան մեծ և այսքան
 ծանր ըլլալու է: Հոն միևնոյն ատեն սէրս ու տառապանքներս պի-
 տի դնեմ:

ՆՈՐ ԳԱՐՈՒՆ

Ա

Պոսմպազուրի ժամանակին նկարներու սրահին մէջ, շատ ան-
 գամ կը տեսնուի պատկերը ասպետի մը որ, ոտքէն մինչև գլուխը
 զինուած, նիզակը ձեռքը և վահանը թեւը, կը պատրասուի պատե-
 րազմի գնալ:

Անառակ պզտիկ սէրեր (ամուռ) կը հրապուրեն զինքը, անկից
 կ'առնեն իր վահանն ու նիզակը, և ծաղիկներու շղթաներով կը կա-
 պեն հակառակ անոր զիմադրութիւններուն և տրտունջներուն:

Այսպիսի սքանչելի խափանիչներու մէջ կը կուրիմ ես՝ վշտա-
 խառն ուրախութեամբ, մինչ ուրիշներ ստիպուած են կուրիլ ազատու-
 թեան մեծ սպառերազմին մէջ:

Բ

Եղեամէն ճերմկցած ծառի մը տակը նստած, կը լսես որ հովը
 հեռուն կը սուլէ. կը տեսնես որ վերը լուռ ամպերը մառախուղի
 քօղով մը կը ծածկւին:

Կը տեսնես թէ ինչպէս անտառն ու մարզը մեռեր են, թէ
 ինչպէս գերծւած են ու ճաղատ: Նուրջդ ձմեռ է, ձմեռ է քու մէջդ
 ալ, ու սառած է սիրտդ:

Յանկարծ սպիտակ գնդակներ կ'իջնան վրադ. արդէն դժկամա-

կութեամբ կը խորհիս թէ ծաւը իր ձիւնէ փոշին թօթուեց ճակատիդ վրայ:

Քայց շուտ կը նշմարես ուրախութեան դողով մը թէ բնաւ ձիւնի փոշի չէ աս, զարնան անուշահոտ ծաղիկներ են որ կը ծածկեն քեզ և անհանգիստ կ'ընեն:

Քաղցր սարսուռներով կախարդանք, ձմեռը մայիս ամսի կը վտոււի, ձիւնն ալ՝ զարնայնի ծաղիկներու, և սիրտդ նորէն կը սիրէ:

Գ

Անտառին մէջ ամէն բան կը բողբոջի, ամէն բան կը կանաչնայ, կարծես կուսական ուրախութեան յուզումէ մը ճնշւած: Արևը երկնքի բարձրէն ժպտելով կ'ըսէ. Նրիտասանրդ գարուն, բարի եկար:

Ո՛վ սոխակ, դուն ալ. արդէն կը լսեմ երկար շեշտերով հաճելիապէս տխուր հեծեծանքներդ, ու քու բոլոր երգդ սէր է միայն:

Գ

Գարնայնի գիշերւան գեղեցիկ աչքերը լինչպէս մխիթարիչ նայւածքներ կը ձգեն: Նթէ քեզ սէրը կործանեց, սէրը նոյնպէս պիտի կանգնեցնէ:

Կանաչ թմբիին վրայ կը կենայ և կ'երգէ անուշ սոխակը: Իր երգը որչափ թափանցէ հոգիիս մէջ, այնչափ կը զգամ որ ամբողջ հոգիս կը լացննայ:

Ե

Ծաղիկ մը կը սիրեմ, բայց չգիտեմ հրը. վիշտս անկից է որ կուզայ: Կը նայիմ բոլոր ծաղկի բաժակներուն մէջ, և սիրտ մը կը վնասուի:

Ծաղիկները կը բուրեն իրենց անուշ հոտերը իրիկւան վերջալոյսին, սոխակը կ'երգէ. իմ սրտիս պէս գեղեցիկ սիրտ մը կը վնասուի և իմինիս չափ ալ՝ խանդաղատանքով յուզւած:

Սոխակը իր երգը կ'երգէ. ու ես կը հասկնամ իր քաղցր մեղոյին: Երկուքնիս ալ այնքան ճնշւած ենք ու այնքան անհանգիստ, անս, այնքան անհանգիստ ու այնքան ճնշւած երկուքնիս ալ:

9

Մայիսն եկաւ, բոյսերն ու ծառերը կը ծաղկին, ու երկնքի կապոյտ միջոցին մէջ վարդագոյն ամպերու անցնիլը կը տեսնուի:

Սոխակները կ'երգեն տերեւապատ հովանոցի բարձրէն—սպիտակ գառնուկներ կը ցատքտեն առուոյտի կտնաչ և մտողաշ ցողուններու մէջ:

Ես ոչ կրնամ երգել, ոչ ցատքել. հիւանդ պառկած եմ խոտին մէջ: Հեռաւոր զանգակներու ձայն մը կ'առնեմ, և կ'երագեմ... չգիտեմ ինչ:

1

Սրտիս խորը կամաց մը կը լսեմ հաճելի մելոդիի մը հնչիւնը: Հնչէ, գարնայնի պզտիկ երգ, հնչէ ու թռիւր միջոցին մէջ:

Թռիւր միջոցին մէջ, գնահ մինչև այն բնակարանը ուր ամենէն գեղեցիկ ծաղիկները կը փթթին: Եթէ վարդ մը տեսնես, ըսէ որ ամենէն փութկոտ մեծարանքներս կը զրկեմ իրեն:

2

Թիթեռնիկը սիրահարն է վարդին, հազար անգամ կը թռչտի անոր շուրջը. զինքն ալ արևու ճառագայթ մը իր ոսկի լոյսովը կը զգէ տարփատենիկ:

Բայց վարդը ինչ կը սիրէ. կը փափաքէի գիտնալ: Միթէ սոխակը որ կ'երգէ, միթէ իրիկւան լռիկ աստղը:

Զգիտեմ թէ վարդը որո՞ւ սիրահարն է. բայց ես ձեզ ամենքդ կը սիրեմ, վարդ, թիթեռնիկ, արևու ճառագայթ, իրիկւան աստղ և սոխակ:

3

Բոլոր ծառերը կը հնչեն, բոլոր բոյները կ'երգեն. ո՞վ է անտառներուն երաժշտական կանաչ կայանքի նւագածուններուն պետը:

Միթէ գորշ փետուրներով վայրի սիրամարգն է որ իր ճիւղին վրայէն ամբարտաւան կերպարանքով մը կը նայի:

Արագիլը միթէ, այն զանդաղ կենդանին որ կը կանչեցնէ իր երկար մագիլը, որպէս թէ ինք վարէր երաժիշտներու խումբը:

Ո՛չ, սրտիս մէջն է որ կը կենաց անտառներու նւագածունն-

բուն պետը. կըզգամ ինչպէս կը չարավարէ ան, և կարծեմ սէր կը կոչուի անիկա:

Ժ

«Սկիզբէն կար սոխակը, ու ան երգից tsukut, tsukut ոտա- նաւորը: Ու երբ կ'երգէր, ամէն սեղ կը փթթէին մարմանդը, մա- նիշակն ու մարգարտածաղիկը:

«Վտուցի հարւած մը տաւ կուրծքին, կարմիր արիւնը հոսե- ցաւ, և արիւնէն կարմիր վարդենի մը բուսաւ. սոխակը այս վար- դենիին է որ իր սէրը կ'երգէ:

«Վարդին երգչին վէրքէն ցայտած արիւնը մեզ, այս անտառին բոլոր թռչուններս, փրկեց և հաշտեցուց. բայց երբ օրին մէկը փրկիչ սոխակը դադրի վարդին իր սէրն երգելէ, մեր և ամբողջ ընտա- նիքին գործը կը լմննայ:

Այսպէս կը խօսի իր ձագին կաղնիի մը վրայ բոյն դրած ծեր ճնճղուկը: Էգ ճնճղուկը պատմութեան ատեն զէս ու զէն իր քիօ- քիօն կը ձգէ. ան հօն, իր պատիւի տեղը աղէկ մը բազմած է:

Լաւ կին մը, կատարեալ տանտիկին մըն է. աղէկ թուխս կը նստի իր հաւկիթներուն վրայ և չի շարժիր բնաւ: Մերուկը ժա- մանակը պարսպ չանցնելու համար ձագերուն բարեպաշտիկ կրթու- թիւն կուտայ:

ԺԱ

Պարնան տաք գիշերը բոլոր ծաղիկները փթթեցուց, և եթէ չզգուշանայ սիրտս, պիտի սիրահարուի:

Բայց այս ծաղիկներէն որը իս իր կարթերուն մէջ պիտի բռնէ: Սոխակները իրենց երգերով խորհուրդ կուտան զզուշանալ այնքան երկտոս, այնքան համեստ մանիշակներէն:

ԺԲ

Յաւը կը ճնշէ. զանգակները կը հնչեն. խելքս կորսնցուցի: Պարունը և երկու աղւոր աչք նորէն միաբանած են դաւադրու- թեամբ սրտիս զէմ:

Պարունը և երկու աղւոր աչք կը քաշեն կը տանին սիրտս նոր չիմարութեան մը մէջ: Կարծեմ որ վարդերն ու սոխակները սերտ միաբանած են այս դաւադրութեանը:

ԺԳ

Ա՛խ, կ'ուզէի լա՛յ, լալ սիրոյ արցունքներ, դառնութեամբ և հեշտանքով լի արցունքներ, և կը վախնամ որ սիրոս ետքէն չփափաքի անսալ:

Ա՛խ, սիրոյ անուշ տառապանքը, և սիրոյ դառն բերկրանքը կը զգամ որ կը սպրդին, ուրախ ասնջանք, հազիւ բուժեաճ սրտիս մէջ:

ԺԴ

Քարնան կայոյտ աչքերը կը նային խոտին մէջէն. սիրուն մանուշակներն են ասոնք որ քաղեցի՝ փունջ մը շինելու համար:

Կը քաղեմ և կը խորհիմ, ու բոլոր մտածումներս՝ որ կը հառաչեն սրտիս խորը՝ սոխակները կ'երգեն բարձրաձայն:

Այ՛ո, ինչ որ կը խորհիմ, կ'ըսէ ան իր երգերուն մէջ՝ հնչուն խաղերով որ կ'արձագանգեն հեռուն: Ամբողջ անտառը արդէն գիտէ փափուկ գաղտնիքս:

ԺԵ

Երբ անցնիս քովէս, երբ շրջազգեստոյ ինձի քսւի միայն, սիրոս ուրախութեամբ կը խաչտաչ և բեզի կը հետևի:

Այն ատեն ետե կը դառնաս, ինձի կը նայիս խոշոր աչքերովդ, ու սիրոս այնքան զարհուրած է որ հազիւ կրնայ բեզի հետևիլ:

ԺԶ

Չուրերու փափկիկ ծաղիկը երազելով կ'օրօրւի լիճին մէջ. դիշերւան աստղը կը բարևէ ան՝ դողդղալով վիշտէն ու բաղձանքէն:

Մազիկը, ամօթահար, կը ծռէ գլուխը ջուրերուն մէջ. յանկարծ հոն ոտքերուն տակ կը տեսնէ իր սիրահարը դժգոյն:

ԺԷ

Եթէ լաւ աչքեր ունիս, երգերուս մէջ պիտի տեսնես դեռատի գեղեցիկուհի մը որ հոն կը պալտի դէս ու դէն:

Եթէ փափուկ ականջ ունիս, նոյն իսկ իր ձայնը կրնաս լսել, և իր հառաչանքները, իր ժպիտը, իր երգը պիտի յիմարեցնեն խեղճ սիրտդ:

Իր նաչւածքին ցուքերովը, իր ձայնին հնչիւնովը՝ ան քեզ պիտի խուովէ ինծի պէս, և, երազկոտ սիրահար, թափառելով պիտի երթաս գարնայնի անտառը:

ԺԸ

Ո՞վ է որ քեզ կը թափառեցնէ գարնան գիշերները: Ծաղիկները յիմարեցուցիր: Մարգարտածաղիկները խուոված են, վարդերը՝ ամօթէն կարմրած, շուշանները տոբոյն են մահւան պէս. կ'ողբան անոնք, բոլորն ալ վրդոված, բոլորն ալ շփոթած:

—Ո՞վ սիրելի լուսին, ինչ պարոզ է այս ծաղիկներու ցեղը... իրաւունք ունին, ծանր յանցանք մը գործեցի. բայց կրնայի՞ր գիտնալ որ հոն իս մտիկ կ'ընէին, երբ այրող սէրով մը գինովցած, աստղերուն հետ կը խօսէի:

ԺԹ

Կապոյտ աչքերովդ անուշ մը ինծի կը նայիս և ես այնքան մտախոհ կ'ըլլամ որ չեմ կրնար խօսիլ:

Կապոյտ աչքերուդ վրայ է որ կը խորհիմ միշտ. կապոյտ մտածումներու ովկիանոս մը կ'ողողէ սիրտս:

Ի

Անգամ մը ևս խեռ սիրտս լուծի տակ է, և մարած է բոլոր իր հին ոխը. անգամ մը ևս մայիսի հովով գորովալի զգացումներ սպրտեցան սրտիս մէջ:

Իրիկուն և առտու նորէն կը պտըտիմ ամենէն շատ անցուդարձ եղող ճամբաները և ամէն յարդէ գլխարկի տակ կը ջանամ նշմարել իմ գեղեցիկ սիրելիս:

Անգամ մը ևս ջուրերու կանաչ եզրը, անգամ մը ևս կամուրջին վրայ կը կենամ... Միս, թերևս անոր կառքը այստեղէն անցնի, և սիրելիիս նաչւածքները հանդիպէին իմ նաչւածքներուս:

Անգամ մը ևս սահանքի մրմունջին մէջ կը լսեմ փրկարար խորհուրդներ, ու սիրտս կը հասկնայ ինչ որ կ'ըսեն ճերմակ ալիքները:

Անգամ մը ևս իրարու հիւսւած արահետներու մէջ կորսուեցայ երազելով. ու թռչունները մացառներուն մէջ կը ծաղրեն յիմար սիրահարը:

ԻԱ

Վարդը անուշ կը բուրէ,—բայց թէ կըզգան սփռած բոյրը, թէ սոխակը կըզգան ինչ որ կը յուզէ մեր հոգին՝ իր երգին անուշ հեծեծանքներովը,

Զգիտեմ: Սակայն ճշմարտութիւնը մեզ կը տխրեցնէ յաճախ. և նոյն իսկ այն ատեն, երբ վարդն ու սոխակը կը յայտնէին զգացումներ որ չէին զգար բնաւ, այդպիսի ստախօսութիւն մը օգտակար պիտի ըլլար, ինչպէս շատ պարագաներու մէջ:

ԻԲ

Քեզ սիրելու համար է որ ստիպուած իմ փախուստ տալ քեզմէ և խուսափիլ դէմքէդ... Մի բարկանար: Այդքան գեղեցիկ, այդքան պաշտօն դէմքդ ինչպէս պիտի չարմարէր իմ տխուր դէմքիս:

Քեզ սիրելու համար է որ այսքան տժգոյն է դէմքս, այսքան գէշ կերպով նիհարցած... յետոյ իս տգեղ պիտի գտնէիր. կ'ուզեմ խուսափիլ քեզմէ... Մի բարկանար:

ԻԳ

Թափառական կը գնամ ծաղիկներու մէջէն, և ես ալ կը փթթէի անոնց հետ, թափառական կը գնամ կարծես երազի մը մէջ, և կը դեղեւիմ իւրաքանչիւր քայլիս:

Ո՛հ, օգնէ ինձի, սիրելիս, ապա թէ ոչ սիրոյ գինովութիւնը ոտքերուդ տակը պիտի ձգէ իս. ու պարտէզը բաղմունքեամբ լեցուն է:

ԻԴ

Ինչպէս որ կատաղի ալիքներուն ծոցը կը դողայ լուսնին պատկերը, մինչ ան կը քայլէ հաստատ և հանդարտ քայլով մը, երկնային կամարին վրայ,

Այնպէս դուն, սիրելիս, ճամբայ կ'երթաս հանդարտ ու զւարթ և քու պատկերդ է միայն որ կը դողդղայ սրտիս խորը, որովհետև սիրտս յուզուած է:

ԻԵ

Մեր սիրտերը սուրբ-ուխտ կնքեցին. մէկը միւսին վրայ սեղմուած, իրար աղէկ կը հասկնային:

Միայն, ափսոս, թարմ վարդը որ կուրծքդ կը զարդարէր, այն խեղճուկ խնամին, գրեթէ ճզմեցաւ մեր սիրալիր սեղմումովը:

ԻԶ

Ըսէ ինձի ժամացոյցները, ժամանակին բաժանումները, վայր կեաններն ու ժամերը ո՞վ հնարեց: Տխուր և պաղ մարդ մըն էր: Զմեռ գիշեր մը նստեր կը խորհէր և կը համբէր մուկերու սովորական վազվզելն ու միաձայն աղմուկը որդին, որ փայտը կը կրճէ համաչափութեամբ:

Ըսէ ինձի, ո՞վ հնարեց համբոյցները: Երջանկութեամբ բոլորովին վառւած բերան մըն էր: Իր համբոյցները կը նետէր ան՝ առանց ուրիշ բան մտածելու: Գեղեցիկ մայիս ամսի մէջն էր. երկրէն ծաղիկներ կը բուսնէին, տրեւը կը ժպտէր, և թռչունները կ'երգէին:

ԻԷ

Մեխակները ինչպէս անուշ կը բուրեն. աստղերը, ոսկի մեղուներու այդ պարը, ինչպէս կը փայլին և կը շողշողան՝ մանիչակագայն երկնքի մը մէջէն:

Շագանակենիներու շուքին մէջ կը փայլի բոլորովին սպիտակ և հրապուրիչ ամառանոցը. կը լսես՝ ապակիով դռան աղմուկը, կը լսեմ ամենէն քաղցր ձայնին շշուշը:

Հեշտանքով լի սարսուռներ, զարմանալի յուզումներ, գորովագին և երկչոտ գրկախառնութիւններ: Ու մատղաշ վարպերը մտիկ կ'ընեն, և սոխակները կ'երգեն:

ԻԸ

Ատենով նոյն երջանկութիւնը չեմ երազած. նոյն ծառերը, նոյն ծաղիկները, նոյն համբոյցները, նոյն նայւածքները չէին ասոնք:

Նոյն կերպով լուսինը չէր շողար մեր սէրը պատուարող օրորոցի տերևներուն մէջէն: Սեմին վրայի մարմարիտնէ ասուածները մեծ լուութիւն չէին պահեր, ինչպէս այսօր ալ:

Ափսոս, գիտեմ թէ ինչպէս կը փոխին այն շատ սքանչելի

երազները, և ինչպէս կը թողնին ծաղիկները, ու ինչպէս ձիւնի պաղ վերարկուով մը կը ծածկւին ծառերը:

Գիտե՛մ թէ ինչպէս իրարմէ պիտի ցրտանանք, իրարմէ պիտի փախչինք, իրար պիտի մոռնանք, մե՛նք որ այսօր այնքան գորովագին կը սիրենք իրար, մե՛նք որ այնքան գորովագին սիրտ սրտի վրայ կը սեղմենք:

Իթ

Մութին մէջ զողցւած և մութին մէջ տրւած համբոյցները, ախ, ինչպէս երջանկութեամբ կը գինովցնեն սիրող հոգին:

Անուշ յիշատակներով և ալ աւելի անուշ նախազգացումներով օրօրւած մեր հոգին կը խորհի այն ատեն ապագայ օրերու ալ շատ մը բաներու վրայ:

Բայց տաղտկալի է շատ մտածելը, երբ իրար կը համբուրեն, գոնէ լնց, սիրելի հոգի, և արցունքներով մխիթարէ:

!

Ծերուկ թագաւոր մը կար. սիրտը յոգնած էր, գլուխը՝ ճերմկած: Ծերուկ թագաւորը դեռատի կին մը առաւ:

Գեղեցիկ մանկլաւիկ մը կար, խարտեաշ գլխով, զւարթ հոգիով: Գեռատի թագուհին մետաքսէ շրջազգեստին ետեւն կը պտըտէր ան:

Հին երգը գիտես: Այնքան մեղմ կը հնչէ. կը հնչէ այնքան տխրօրէն: Երկուքն ալ մեռան. իրար շատ կը սիրէին ան:

ԼԱ

Սրտիս մէջ երկար ատենէ ի վեր մարած պատկերները կը ծաղկին... Ձայնիդ մէջ ինչ կայ որ կը դողացնէ հոգիս:

Մի ըսեր թէ իս կը սիրես: Գիտե՛մ, երկրի վրայ ինչ որ կայ ամենէն գեղեցիկ, գարուն և սէր, պէտք է խեղճ կերպով կորսւին:

Մի ըսեր թէ իս կը սիրես: Միայն համբուրէ իս և լռէ. լռէ ու ժպտէ և վազը կը ցուցնեմ քեզի վարդերու այս փունջը, թողմանձ ու չորցած:

ԼԲ

Լուսնին լոյսովը գինովցած, թմբիի ծաղիկները անուշ բոյրեր
կը սփռեն և անտառներն ու օդը կ'արձագանգեն սոխակին երգը:

«Հաճելի է նստել, սիրելիս, այս թմբիին տակը, երբ լուսնին
ոսկի շողերը կը փայլին՝ անոր պաշտպանող տերեւներուն մէջէն:

«Բիտէ սա տերեւը. տես սրտի ձև ունի ան, ասոր համար է որ
սիրահարները բոլոր ծառերէն թմբին կը նախընտրեն և կը սիրեն
անոր շուքին տակ խօսակցիլ:

«Բայց կը ժպտիս դուն, կարծես հեռաւոր երազներու մէջ կոր-
սըլած: Խօսէ, սիրելիս, ինչ են այն բաղձանքները որ կը ծլին
սրտիդ մէջ:

«—Ա՛հ, սիրայօժար կը խոստովանիմ, սիրունիկս: Կը փափաքէի
որ հիւսիսէն եկած ցուրտ հով մը յանկարծ զրկէր մեզի ձիւնի
տարափ մը,

«Աւ գոյնզգոյն նկարած բալխիրներ, հնչուն զանգակներու ազ-
մուկով, խարազաններու շափշափիւնով, տանին մեզ, մուշտակներով
լաւ ծածկւած, դաշտերու և սառած գետակներու մէջէն:

ԼԳ

Անտառին մէջ, վերջին գիշերը, լուսնակ լոյսով, անտառային
դիցուհիներուն անցնիլը տեսալ: Անոնց փողերուն ձայնը կը լսէի,
անոնց զանգակներուն հնչիւնը կը լսէի:

Հեծած էին պզտիկ սպիտակ կենդանիներու վրայ որ ոսկի եղ-
ջիւրներ կը կրէին, և օդը կը ձղքէին այնքան արագ, որքան վայրի
կարասիներու խրտչած երամ մը:

Քագուհին, սրարշաւ անցնելու ատեն, գլխով նշան ըրաւ ին-
ծի և ժպտեցաւ: Իս անգամ մըն ալ սիրահար տեսնելուն կը ժպտէր
թէ իր ժպիտը մտհւան նախադուշակ մըն էր:

ԺԴ

Առաւօտուն, անտառին մէջ արշալոյսով գտած մանիշակներս
կը զրկեմ քեզի, և իրիկունն ալ վերջալոյսին քաղած վարդերս
կը բերեմ:

Գիտես թէ այս ծաղիկները ինչեր պիտի կրնային ըսել քեզի իրենց խորհրդանշանական լեզուովը: Հաւատարիմ եղիր ինձի առաւօտէն սկսած, և սիրէ իս ամբողջ գիշերը:

1,6

Ինձի գրած նամակդ բնաւ չի վրդովեր իս: Ձեռ ուզեր այլևս սիրել իս, բայց նամակդ շատ երկար է:

Տասներկու էջ, սեղմ և սքանչելի գիրով մը. պզտիկ գրքից մը: Այդչափ խնամով չեն գրեր հրաժեշտ տալու համար:

1,9

Մի վախնար որ սէրս աշխարհի առջև կը մատնեմ, երբ շըրթունքներս, գեղեցիկութեանդ անձնատուր, խօսքեր փախցնեն:

Ծաղիկներու անտառի մը տակը խորունկ և խնամով պահուած է այն այրող գաղտնիքը, այն խոր և ծածուկ կրակը:

Եթէ ատեն-ատեն կասկածելի կայծեր ցայտեն վարդերուն մէջէն.— մի՛ վախնար. մեր օրերուն աշխարհը չի հաւտար ճշմարիտ բոցերուն, և բոլոր ասոնք բանաստեղծութիւն կը համարի:

1,1

Պարնան օրերուն աղմուկներովը կը լենան իմ գիշերներս ալ. իր արձագանգներն ու ցոլքերը կը սպրդին մինչև երազներուս մէջ:

Միայն, կարծես հիւրիներու երկրի մը մէջ, թռչունները աւելի շնորհալից մելոտիներ կ'երգեն. օդը աւելի քաղցր է և մանիշակներուն բոցը կ'ելլէ աւելի սաստիկ, աւելի հեշտալի:

Վարդերն ալ կը փալփալն աւելի կենդանի պայծառութեամբ մը. ոսկի ճառագայթներ կը կրեն, ինչպէս եկեղեցիի նկարներուն մէջի հրեշտակի փոքրիկ դուխները:

Այն ատեն ինձի կը թւի թէ սոխակ մըն ալ ես եմ, և սէրս կ'երգեմ պսակազարդ այս վարդերուն: Կերգեմ՝ սքանչելի մելոտիներ երազելով:

Ու այս բոլորը կը տես մինչև այն վայրկեանը, երբ կ'արթընամ արևու ճառագայթներէն կամ պատուհանիս դէմը թռչող սոխակներուն սքանչելի ժխորէն:

ԼԸ

Երկնքի կամարին վրայ, աստղերը իրենց ոսկի պղտիկ ոտքերով կը քալեն կամաց, շատ կամաց. կը վախնան արթնցնելէ երկիրը, որ խաղաղ կը քնանայ գիշերւան գիրկը:

Լռիկ անտառները հոն մտիկ կընեն. ամէն մէկ տերև կանաչ սկանջ մըն է, ու լեռը երազելով, սուերէ իր երկար բազուկը կը տարածէ:

Բայց ո՞վ է որ կը կանչէ: Այս ձայներուն արձագանգը խօսեցաւ սրտիս մէջ: Սիրելիիս ձայնն էր աս թէ սոխակը միայն:

ԼԹ

Գարունը լուրջ է. իր երազները տխուր են, ամէն ծաղիկ վշտի մէջ խրած ըլլալ կը թուի. ծածուկ մելամաղձութիւն մը կայ սոխակին երգին մէջ:

Ո՛հ, մի՛ ժպտիր. սիրելի աղւորս, այդքան զւարթ, այդքան ուրախ մի՛ ժպտիր: Ո՛հ, լաց գոնէ, կը փափաքէի համբոյրով մը այտիդ վրայ արցունք մը սրբել:

Խ

Արդէն պէտք է խլիմ այն սրտէն որ կը սիրեմ այնքան սիրով. արդէն պէտք է խլիմ անկից: Գիտես թէ ինչ կնշանակէ մեկնիլս:

Կառքը կը թաւալի կամուրջին վրայ որ կը շառաչէ, գետը կամուրջին տակ կը հոսի մութ և տխուր: Անգամ մըն ալ երջանկութեանս մնաս-բարով կ'ըսեմ, մնաս-բարով կ'ըսեմ այն սրտին որ գորովագին կը սիրեմ:

Երկնքի վրայ՝ աստղերը կը սրանան, կարծես խոյս տային վիշտէս: Մնաս-բարով, սիրելիս, հեռակայ երկիրներու մէջ, ամէն տեղ ուր որ լինիմ, պատկերդ հոգիիս մէջը պիտի ըլլայ:

ԽԱ

Հիանալի բաղձանքները կը ծաղկին և յետոյ կը թողնին. նորէն կը ծաղկին ու նորէն կը թողնին. իրերը այսպէս կը գնան մինչև գերեզման:

Գիտեմ ինչ որ բոլորովին սէրով և բոլորովին ուրախութեամբ

երես կուտայ ինձի: Սիրտս այնքան խելացի է որ ատոր համար ամբողջ արիւնոտած է կուրծքիս մէջ:

ԽԲ

Երկինքը ծերունիի մը դէմքն ունի կարծես, միակ կարմիր աչքով մը և գորշ ամպերով ծփուն մազերով:

Երբ իր միականի նայւածքը դէպի երկիր ձգէ, ծաղիկներն ու տերեւները կը թարշամին, և սէրն ու երգերն ալ պիտի թարշամին մարդու սրտին խորը:

ԽԳ

Չանձրացած, տխուր, սառ սրտով, կը վազեմ կ'անցնիմ նոյնքան սառ և տխուր աշխարհէն: Աշունը վերջանալու մօտ է: Մառախուղ մը՝ խոնաւ պատանքի մը պէս՝ կը ծրարէ կէս-մեռած երկիրը:

Հովերը կը փչեն՝ խարազանելով մէկ կողմէն միւսը ծառերէն թափող կարմիր ու դեղնած տերեւները: Կը հեծէ անտառը. ծխացող շոգիով մը ծածկւած է թաւուտը: Ահա հիմա ամենէն գէշ բանը. անձրև՝ կուգայ:

ԽԴ

Աշնանավերջի մառախուղները, սառած երազներու պէս, կ'իջնեն ձորին ու դաշտին վրայ: Փոթորիկը կը թափէ տերեւները ծառերուն, որ ուրուականներու պէս մերկ են ու ճաղատ:

Մէկ ծառ մը միայն կայ, ծառ մը լռիկ ու տխուր, որ կը մնայ հոն՝ իր տերեւներովը ծածկւած. վշտի արցունքներով թաց, ատեն ատեն կ'երերցնէ իր կանաչ զլուխը:

Ա'իս, իմ սիրտս այս ամաչի դաշտանկարին կը նմանի. ու այս ծառը որ կը տեսնեմ հունա, կանաչ որչափ ամառ օրերու մէջ, ձեր պատկերն է, տիկին, պատկերը ձեր անեղծ գեղեցկութեան:

(Շարունակելի)

ԵՐԿՈՒ ՈՔԻ

(ՆՈՐԱՎԷՊ)

Կ. Ս. ԲԱՐԱՆՑԻՎԻՉԻՑ ¹⁾ Թարգմ. Յ. Մուրադեանցի

I

Մի մութ գիշեր վերևի անօդ տարածութիւնից երկու ասող քնկաւ երկրի վրայ. մէկը՝ պայծառ, միւսը՝ կարմիր: Երկրի բնակիչներից քերքը տեսան աչք երկու ընկնող ասողերը. մեծ մասը քնած էին, մի քանիսը իրանց բանի ու զւարճութիւնների յետևն էին, իսկ այն մի քանի տեսնողների կարծիքներն էլ բոլորովին մէկ մէկու չէին գալիս Նրանք՝ որ բարձր աշտարակներում նստած՝ զիտելիս են լինում երկինքը տեսակ-տեսակ զիտակներով ու գործիքներով, համոզուած էին որ տեսել են երկու մէտէօր. ուրիշները որ իսկի չէին էլ իմացել, թէ ինչպէս, ինչով և ինչի են զիտում երկինքը և ինչ բան են մէտէօրները, ասողերի ընկնիլը, աւելի կարմրինը—մի բանի նշան էին համարում:

Նրանք բոլորն էլ սխալւում էին՝ Երկրի վրայ ընկնող այն երկու ասողերը—երկու ոգի էին. Պայծառը—բարի, կարմիրը—չար: Շատ հին ժամանակից, երբ երկիրը դուրս եկաւ քաօսից, ասուեց, վրան երևացին բոյսեր, կենդանիներ ու մարդիկ, այդ երկու ոգիները սրարշաւ իջնում էին երկրի վրայ, ուղենալով իրարից առաջ անցնել և, զիպչելով նրա երեսին, մարդկային կերպարանք էին ստանում: Երբեմն բարին էր առաջ ընկնում և նրա անցած

¹⁾ Կր. Ջանիէվի „Братская Помощь Армянамъ“ յողովածուից:

բոլոր տեղերում, ուր նա եռանդով ցանել էր բարի զգացմունքներ ու սկզբունքներ, մարդիկ աւելի լաւացած էին լինում, արդար ու աղնիւ: Բայց աւելի չարն էր առաջ անցնում, նենգն ու համարձակը, որ դիպչելով երկրին ցանում էր վրդովմունք, թշնամութիւն ու յանցանքներ: Մինչև անգամ այն տեղերում, ուր նրանից առաջ բարին էր անցել, նա յանդգնում էր ոչնչացնել նրա հետքերը, դալթակղեցնելով ու ճանքից հանելով՝ մարդկանց կորցնել: Նոր մէկանց յետ էր դառնում բարի ոգին և կրկին ձեռք զարկում իր ծանր աշխատանքին:

Այդ սարսափելի կռիւը սկսեց այն ժամանակից, երբ երկրի վրայ երևաց առաջին մարդը, և կը վերջանայ այն ժամանակ, երբ նրա երեսից կ'անհետանայ վերջինը: Այս երկու տարրերի յաւիտենական ու անվերջ կռիւ պատճառով տեղի էին ունենում մարդկանց մասսային կոտորածներ, արեան զետեք էին թափւում, ամբողջ երկիրներ էին ամաչանում, սոփն ու վարակիչ ցաւերը լրացնում էին պակասը, և մարդկութիւնը կորչում էր տասնաւոր, հարիւրաւոր հազարներով:

II

Եռնային մի նեղ կաճանով մենաւոր ճանապարհորդ էր գնում: Նա ջահիլ էր ու վայելչակազմ: Սև մազերի գանգուրները ալիքանման իջել էին նրա ուսերը: Նրա մեծ-մեծ, լուսափայլ աչքերը տխուր-արտում նայում էին: Հագին ունէր հասարակ գեղջկական հագուստ կոշտ կոորից, ուսին էլ պարկ էր գցել: Մերկ ոտները չէին վախում փշերից ու սուրուլիկ քարերից, որ այնքան շատ կային լեռնային կաճաններում: Եւ որ կողմը նա անցնում էր, կեանք և ուրախութիւն էր տալիս. արևն աւելի պայծառ էր փայլում, աւաակներն աւելի կարկաչում, ցերեկւայ տապից թորշումած ծաղիկները կախ ընկած գլխիկներն էին վեր վերցնում ու անուշ բուրում, թռչուններն էլ իրանց քաղցրիկ ձայներով նրանց հետ միանում:

Ճանբորդը հասաւ երկու կաճանների իրար կտրած տեղը և նստեց մի մամռապատ քարի վրայ: Մի ուրիշ կաճանով՝ մոխրագոյն օձի նման, քշում էր դէպի խաչմերուկ տեղը մի ձիաւոր, չալմայով

և ճոխ ու ոսկեթել բաճկոնով: Նրա սև ու փառահեղ ձիու արծաթէ ասպանդակները հնչում էին բարձր, յարմարելով ղեղեցիկ կենդանու կառապային վզին զցած մանեակների ձայնին: Ձիու թամբի ու սարքի մէջ զրած թանգ քարերն և արծաթէ պատեանով կողքից քարշ արած կեռ սուրը պլպլում էին արևի տակ:

Ջլուտ ձեռքերը կրծքին զրած, սևցած ու աչքերը կախած, հեծած էր ձիաւորը: Արևից բրոնզի գոյն ստացած երեսին, խիտ, իրար կպած յծեքերի տակից փայլում էին նրա չար աչքերը:

Քարի վրայ նստած մարդուն տեսնելով, սև ձին խրտնեց, ականջները ցցեց ու կանգնեց: Ձիաւորը նայեց երիտասարդի վրայ և մի թեթև սարսուռ անցաւ նրա մարմնի միջով:

III

—Պուն այստեղ ես, հարցրեց նա, աչքը չբարձրացնելով երիտասարդի վրայ.— Էլի եկել ես ինձ խանգարելու:

—Այո. հանգիստ պատասխան տւեց երիտասարդը.— ես քեզ ամեն ժամանակ և ամեն բանում պիտի խանգարեմ:

—Գիտեմ, շնջաց ձիաւորը, բայց այստեղ քո ջանքերը զուր կ'անցնեն: Մէկ նայիր ներքեւ, այն հովիտների վրայ, ուր այնքան գիւղեր ու փոքրիկ քաղաքներ կան. այնտեղ է ապրում այն ժողովուրդը, որին դու ուզում ես պաշտպանել: Այն հովիտները մի լաւ ակնատ են: Նայիր էլի հեռու. չէ որ դու շատ հեռուն ես տեսնում. բացի ինձանից ուրիշ ոչ մէկը չի կարող քո չափ հեռուն տեսնել. ասա ի՞նչ ես տեսնում:

—Տեսնում եմ ուրիշ ժողովուրդ, ուրիշ ցեղից, ուրիշ հաւատի ու սովորութիւնների:

—Եւ այն ժողովուրդը սրանից աւելի բազմաթիւ է և ուժեղ: Նա արդէն իշխում է քո փոքրիկ ազգի վրայ. ի՞նչ մեծ բան է նրա համար ջնջել նրան երկրի երեսից:

—Մոռանում ես, որ կան ուրիշ ազգեր, որոնք չեն թողնիլ այդ անելու:

Ձիաւորը քրքջաց և այնպէս բարձր, որ մտակայ մութ ու խոնաւ անձանների արձագանքը երկար կրկնում էր նրա ղիւակաւն քրքիջը:

—Ուրիշ ազգեր, հա. թն. բան ունեն նրանք քո փոքրիկ ազգի հետ: Կամ թէ չլինի կարծում ես—ես չեմ միտք արել պղտորել նրանց զիտակցութիւնը, մուսացնել տալ նրանց, որ այս փոքրիկ ազգն էլ իրանց հաւատիցն է: Կամ թէ երևի կարծում ես, որ եսեկանութիւնը այնքան էլ զօրաւոր բան չէ: Ես նրանց առջև լաւ հրատարանք եմ գցել, և մինչև որ ամենքը նրան կը նայեն, մինչև որ առաջինը կ'որոշէ որ կողմից գջլել իր համար, ես արիւնով կը հեղեղեմ այս ծաղկաւէտ հովիտները:

—Ես էլ մարդկանց կը յիշեցնեմ, որ իրանք մարդ են և այդ տեսակ բան չի լինիլ:

Ձիաւորի մութ յօնքերը աւելի կիտւեցան և չարութեան կայծեր փայլեցին նրա աչքերում:

—Մի խանգարիլ ինձ, ասաց նա խուլ ձայնով. բաւականացիր նրանով, ինչ որ խել էս ինձանից: Երկիրներ կան, ուր ցեղական թշնամութիւնը վերացել է ընդմիշտ... Նոյնպէս և հաւատի կռիւր: Երկիրներ կան, ուր վաղուց է չեն գնացել ոչ սովը և ոչ տարափոխիկ ցաւերը: Երկիրներ կան, ուր կուլտուրան ու զիտութիւնն այնքան բարձր են կանգնած, որ սկսել են կուսել նոյն իսկ մահւան դէմ: Ժամանակ կը դաչ, որ այդ երկիրներում միմիայն բարին, արդարութիւնն ու եղբայրութիւնը կը տիրեն: Քնդ տուր ինձ այս վայրենի անկիւնը: Ով է սրան ճանաչում. ո՞ւմ ինչ բանի պէտք է սա:

—Սրան ճանաչում է Նա, Ով որ ինձ զրկեց, պատասխանեց երիտասարդը, և եթէ այս հովիտներում միայն մէկ հոգի մնար, ես նրա մօտ էլ կը գնայի:

Ձիաւորը բարկացած շարժեց երասանակը և հպարտ ձին ձգեց իր կառապային վիզը:

—Այստեղ էլ մինչև անգամ գու չես ուզում ինձ մենակ թողնել, կանչեց ձիաւորը:

—Ամեն տեղ ուր որ դուն ես, այնտեղ էլ պիտի լինեմ, զոչեց երիտասարդը:

—Ելի՛ կռիւ:

—Հիմա էլ, միշտ էլ ու յաւիտեանս յաւիտենից, ասաց երիտասարդը: Ձիաւորը քաշեց երասանակը: Սև ձին կանգնեց առաջին ոտների վրայ: Արիւնտ փրփուրը կարմրեցրեց սանձը: Ձիաւորի սուր

ասպանդակները խրւեցան ձիու կողքը. կայծեր զուրս թռան արծաթէ պայտերից և, մի բուսից յետոյ մռայլ ձիաւորը քամու պէս սլանում էր դէպի հովիտները:

IV

Արակի ահագին, կարմիր բոցը բարձրանում էր դէպի մութ երկինքը: Աեռնային արձագանքը կրկնում էր հրացանների ճարճատինը և սրտածմլիկ աղաղակները, որ լսում էին չարչարուող, գութ աղերսող մարդկանցից: Մարդկանց սև ուրականները տնից²¹ տուն էին փախչում աւերած դիւղի միջով. քաշքշում էին կանանց, երեխաներին և նրանց սրտածմլիկ հեծեծանքները շուտով լսում էին պսպղուն սրերի հարւածների տակ:

Ողջ մնացած մի երկու տասնեակ տղամարդկանց, կանանց ու երեխաներին իրար վրայ քշում են գիւղի հրապարակը: Այդտեղ կրում են չարդ, տախտակներ, տան կահ-կարասիքը, մի խօսքով ամեն բան, ինչ որ կարելի էր վառել. և լցնում են նաւթը: Նահատակներին այրելու պատրաստութիւնն են տեսնում:

Այդտեղ է գալիս և երիտասարդը՝ ուսերին իջած ալիքանման մազերով, և կանգնում է մէջները: Ոչ ոք չէր իմանում, թէ որտեղից եկաւ երիտասարդը և ո՞վ է նա. բաց երբ նրան տեսնում է սև ձին հեծած խմբի մեծաւորը, որ գալիս է տեսնելու, թէ ինչպէս են այրւում կենդանի մարդիկը, ցնցւում ու ձին դարձնում է միւս կողմը, որպէսզի չտեսնի նրա փայլիտուն աչքերը:

—Վառեցէք, գոռում է խմբի մեծաւորը. շուտ վառեցէք. նաւթ աւելացրէք, յարդ լցրէք: Չլինի թէ մէկը փախչի. բոլորին պէտք է այրել. շուտ. շուտ:

Երիտասարդը սիրտ էր տալիս սարսափելի տանջանքներ կրող դատապարտաւճներին: Նա լուռ ու ազդու կերպով խօսում էր ամեն մէկի հետ, ցոյց տալով երկնքի վրայ. ձեռքերը դնում էր մարդկանց ուսերին և շոյում էր երեսանց գլխները:

Հէնց նոյն բուսիին, երբ վառւում է խարոյկը, ուր կապած էին մարդիկ, լսում է մի սարսափելի որոտմունք: Կայծակը խփում է չարագործներից մի քանիսին. կուրացած, ձեռքերով աչքերը ծածկելով՝ նրանք վազէվազ ընկնում են ձիերի յետևը:

Ձիու բաշին յենւած, մեծաւորը սլանում է դէպի լեռները: Փոթորիկը վեր է վերցնում նրա վերարկուն, իսկ անձրևը լւանում է նրա ճոխ զէնքերին կպած արեան սևացած բծերը...

V

Ամբողջ հովիտը բարբարոսների ձեռքին էր: Լեռնային գետակների նման՝ զինւորւած մարդիկը սրարշաւ իջնում էին բարձրերից, այրում էին գիւղեր, սպանում էին խաղաղ, անզէն բնակիչներին, սարերն էին քշում նրանց կանանց ու մալերը և թալանում կայքը: Ժողովուրդը հառաչում էր բռնաւորների անտանելի լծի տակ և բան չէր կարողանում անել իր պաշտպանութեան համար: Մի քանի անգէն հովիւների ամենափոքրիկ ընդդիմութիւնը նորանոր սպանութիւնների և ողջ գիւղի բնակիչների տանջանքի պատճառ էր լինում: Բանտերը լցւել էին կալանաւորներով, ուր տանջւում էին նրանք, սպասելով պատժին ու սարսափելի չարչարանքներին: Երկիրը աւերւում էր բարբարոսների հարւածների տակ...

Այդ միջոցներում քաղաքներով ու գեղերով ման էր գալիս մի մարդ, որ պատկանում էր արևմտքի ազատ ազգերից մէկին: Նա չէր խուսափում ոչ մի վտանգից, որովհետև նրանցից չէր վախում: Իր մէկ անուն տալը հերիք էր, որ մահացու հարւած տալու համար նրա վրայ բարձրացրած ձեռքը իջնէր: Եւ թէ որ սխալմունք էր պատահում, նրան բանան էին ձգում, նրա ազգի ներկայացուցչի մէկ խօսքը հերիք էր գալիս—նրան անմիջապէս բանտից հանելու:

Նա մի ջահիլ մարդ էր՝ եւրոպական հագուստով, նրա գրսյանները լիքն էին յիշատեւորներով: Նրա շէկ մօրուքով դէմքը բաց ու քաղցրաբարոյ հայեացք ունէր. նրա սլաքառ, խոշոր աչքերում փայլում էր սէրը դէպի մերձաւորը:

Նա ման էր գալիս քաղաքից քաղաք, գիւղից գիւղ. հարցնում: Խօսեցնում էր ամեն մի տանջւածին ու վկային և մէկ-մէկ գրում էր նրանց բերանից լւած, հոգին քրքրող սարսափների լիակատար պատմութիւնները սպանութիւնների ու բռնութիւնների մասին: Գիշերներով նա նստում գրում էր երկար նամակներ և ղրկում նրանց իր հայրենիքը: Այնտեղ նամակները տպւում էին լրագրերում, իմաց էին տալիս ամբողջ աշխարհին բարբարոսների կատարած չը

չաւած չարագործութիւնների մասին և հրաւիրում էին քրիստոնեաներին—համակրութիւն ու օգնութիւն ցոյց տալու իրանց քրիստոնեայ եղբայրներին:

Մէկ անգամ այդ մարդը գնում է մի գիւղացու տուն, որ մի ժամանակ հարուստ էր եղել, իսկ հիմա թալանած ու բոլորը կորցրած: Այն տանը շատ կին ու տղամարդ է լինում: Նրանք թէև ապառուել էին սպանելուց, բայց գլխները գնելու տեղ չեն ունենում: Յիշել էին այդտեղ, որ գիշերը անցնեն: Տանտէրը ամենքին ընդունում է և տալիս է ամեն մէկին իր ունեցածից: Նա այնպէս էր վարւում, կարծես ինքն էլ մի հիւր լինէր իր տանը: Մի գլուխ աչքերից վազող արտասուէնքները ակօսում էին այդ մարդու նիհար այտերը:

—Մի լար, ասում է նրան եւրոպական հազուստով մարդը. այսօր ձեր մալը քշեցին, հացն այրեցին, բայց բոլորը նորից յետ կը գաջ:

—Կարծում ես դրս համնր եմ լալիս, ասում է տէրը. օ, թէ այդպէս լինէր, իրաւունք կ'ունենայիր անարգելու ինձ, ինչպէս անարգում են մեզ շատերը մեր ընտանիքների ապահովութեան վրայ աշխատելու համար: Բայց ինձանից խլեցին այն, ինչ որ ոչ մէկը չի կարող ինձ յետ դարձնել. ոչ ոք, մինչև անգամ ինքն Աստուծը... Արի տես:

Նա տանում է նրան միւս սենեակը: Այնտեղ մութն է լինում, բայց մի անկիւնում ապիտակ ծածկոցի տակ մի ինչ որ բան է երեւում: Խանութիւնը վառում է մի բարակ մոմ և, վեր քաշելով ծածկոցը, ասում է.

—Ահա տես, թէ ինչ խլեցին ինձանից:

Գորգով ծածկւած տախտակների վրայ դրւած էր մի հինգ տարեկան մեռած տղայ: Նրա կոկորդի վրայ մի սարսափելի վէրք կար բացւած, սև արիւնը վրան չորցած:

—Նրանք մորթեցին սրան, նրա համար որ չուզեցի տալ նրանց իմ մեծ աղջիկս: Տղան լալով կպաւ իր քրոջ փէշին, երբ նրան տանում էին, և աւազակներից մէկը կտրեց սրա ճիտը:

Եւրոպական հազուստով մարդը ցնցւում ու գլուխը խոնարհեցնում է:

—Սա իմ միակ որդին է, ասում է տանտէրը.— եթէ նա հիւանդանար ու մեռնէր, ինչքան ծանր կը լինէր ինձ համար յանձնել նրան Աստծուն: Բայց մանուկը առողջ էր և ուրախ: Սպանելուց մի կէս ժամ առաջ նա խաղում, կաշտում էր: Նա խաղում էր արևի տակ, վազվզում էր մեր փոքրիկ պարտէզի շաւիղներով. կռացնում էր ծաղիկների զլխիկները և հոտ էր քաշում. ինձ անգագար կանչում էր, երբ նրան հետաքրքրում էր մի որևէ միջատ, թիթեռ. նա վայելում էր կեանքը: Սղոն, Աստծու շնորհք կար վրան. նա ուզում էր ապրել, և այն միջատից պակաս իրաւունք չունէր ապրելու, բայց մարդիկն եկան և խլեցին նրա կեանքը: Այդ բաւական չէ. նրանք խօսք ունեն, որ գան այս գիշեր աղջկանս վերցնեն: Մինչև անգամ այս մանկան մահը չկարողացաւ փրկել աղջկանս անարգանքից ու անբախտութիւնից:

VI

Եւրոպական հագուստով մարդը այն գիշերը մնում է նրա տանը: Նա գիտէր, որ չարագործները նորից գալու են և սպասում էր, որ նրանց հանդիպի: Տունը լիքն էր կանանցով ու երեխանցով: Նրանք չէին համարձակում աչք խփել և վրդոված ականջ էին դնում մութ փողոցից լսուող ամենափոքրիկ շշուկին: Զորս կողմը լուռթիւն էր: Երբեմն ուռնում էին բացօդեայ մնացած շները, և կամ թռչում էին կայծերը ծխացող սներից:

Խուլ կէսգիշերին գիւղի փողոցում ձիաների դոփիւն է լսուում: Զէնքերը խաղցնելով և իրանց կոկորդային լեզուով իրար հետ դէսից դէնից խօսակցելով, աւագակները մօտենում են տան: Նրանցից մէկը դուռը խփում է ու պահանջում, որ բացուի: Տանտէրը նայում է եւրոպական հագուստով մարդու վրայ, և երբ նա մի քանի խօսք է շնչում նրան, մօտենում է դռանը:

—Ես չեմ կարող ամեն անցորդի առաջ դուռս բանալ, ասում է տանտէրը. ասա, ո՞վ ես՝ որ բանամ:

—Ա՛յ, դուն դեռ առուտուր էլ ես անում, շնն. գոռում է աւագակը.— կը տեսնես. իմացած լինես, որ գնդի մեծաւորը քեզանից իջեանելու տեղ է ուզում:

—Թող ինքը մեծաւորը գալ այստեղ. ես նրա համար կը բանամ, պատասխանում է տանտէրը:

Վերարկուի մէջ փաթաթեալ՝ մենաւորը նստած էր իր սե-
ծիու վրան: Զինւորը հաղորդում է նրան տանտէրի ասածը: Սուս
ու փուս՝ երասանակը ձգելով զինւորին, գնդի մեծաւորը ձիուց իջ-
նում է և ուղղում գէպի տուն:

— Բնաց արա, կանչում է նա. շնւտով:

Դուռը բացում է. շէմքի վրայ կանգնած է լինում եւրոպա-
կան հազուստով մարդը, տանտէրի ուսի վրայ յենւած: Մուսլ ձիա-
ւորի ու եւրոպական զգեստ հազածի հայեացքները իրար են զիպ-
չում: Մէկի մէջ վառում էր դիւական շարութիւնը, միւսի մէջ —
լուսապայծառ փայլում էր հեղիկ սէրը գէպի մերձաւորը:

Եւ մուսլ ձիաւորը՝ չկարողանալով տանել իր հակառակորդի
հայեացքին, լետ է քաշւում:

— Ե՛լի ճանքիս վրայ, խուլ կերպով մրթմրթում է ձիաւորը.
այս տունը ինձ հարկաւոր է. ուղում եմ այստեղ սեղաւորել:

— Դու այդ չես կարող անել, որովհետեւ այս տունը իմն է,
հանգիստ կերպով պատասխանում է եւրոպական հազուստով մարդը:
Անցիր գնա:

Թէ ձիաւորը և թէ նրա հետի բոլոր մարդիկ անհետանում են
գիւղից...

VII

Իսկ նամակները ոչ միայն եւրոպական հագուստով մարդու,
այլ և շատ ուրիշներինը, որոնց մէջ թափանցել էր նրա՝ բարու և
մերձաւորին կարեկցելու բարձր-քրիստոնէական ոգին, զնում էին
ու զնում աշխարհի զանազան կողմերը և իմաց էին տալիս նրան—
անբախտ երկրի մէջ պատահած չլուած շարագործութիւնների մա-
սին: Հեռագիրը արագ արագ խփելով, հաղորդում էր երկար լուրեր՝
սարսափելի ճշմարտութիւնով լիքը: Շոգենաւերն ու երկաթուղի-
ները տանում էին աշխարհի ամեն կողմը XIX դարի վերջին քրիս-
տոնեաների կոտորածի ականատեսներին և աշխարհը ցնցւած, վըշ-
տացած սկսեց ականջ զնել անմեղ նահատակների հեծեծանքներին...
Նրանք մինչև այսօր էլ հեծեծում են:— Եթենութիւն ու զթու-
թիւն, հեծեծում են նրանք.— զթութիւն գէպի մեր՝ ոչ մի բա-
նում մեզք չունեցող կանայք, քոյրերն ու երեխաները: Զայն աւէք:

ու օգնեցէք ամենքդ, ովքեր որ ունիք գէթ մի կաթիլ կարեկցու-
թեան զգացմունք զէպի տանջւող մարդկութիւնը: Յիշեցէք Քրիս-
տոսի կտակը և մի լուծէք Նրա պատւիրանքները: Թող պաղսիրտ
Ֆիլիստէր-փիլիստիաները պնդեն, թէ բարին ու չարը միասին կազ-
մում են անհրաժեշտ տարր երկրիս վրայ ապրող բոլոր կենդանի
արարածների. թող նրանցից մի քանիսը նոյն իսկ այնտեղ հաս-
նեն, որ ընդունեն, թէ չարը առաջադիմութեան գործոն լծակնե-
րից մէկն է. թող պոլիտիկոսները հոգան իրանց սիրած հաւասա-
րակշռութեան վրայ: Մենք սոսկ մարդիկս պիտի գործ չունենանք
ոչ սրանց, ոչ նրանց հետ: Մենք պէտք է մի բան գիտենանք. այն
է՛ որ մենք մարդ ենք, խօսքով էլ, գործով էլ պարտաւոր ենք օգ-
նել մարդկանց. չէ որ եւոզ հրէայ կայ, ոչ էլ չոյն, ոչ էլ հայ, մին-
չև անգամ նա ինքը, թիւրքերի անիրաւութեան ու թալանի լծի
տակ տանջւողը:

Եւ մենք ամենքս, ինչքան էլ թէ ցեղով տարբեր լինենք, մէկ
մեծ ազգի պատկանողներս, որի բարերար ձեռքը շատ անգամ է
պարզւել պաշտպանութեան համար, — մենք ամենքս իրաւունք ու-
նինք սպասելու, որ այս հզօր ազգը՝ ականջ դնելով հարիւր հազա-
րաւոր անարգւած մայրերի և քաղցած, սառած երեխանց հեծե-
ծանքներին, իբրև մէկ մարդ՝ կը բացականչի.

«Բաւական է. ես էլ չեմ թոյլ տալ!»

Փ Ո թ Ո Ր Ի Կ

Դ Ե Ր Ե Ն Ի Կ Դ Ե Մ Ի Ր Ծ Ե Ա Ն Ի

Օ, ի՞նչ ուժգին յուզեցիր,
Ահեղաշունչ փոթորիկ.
Ի՞նչ, որ իրար խառնեցիր
Սար, ձոր, անտառ ու երկինք...
Այդ զայրացկոտ շանթերով,
Հսկայական վազքերով,
Այս վե՛հ սրտում բնութեան
Ձկան ոչինչ քեզ նման:
Ի՞նչ ես պտրում դու երկար,
Ի՞նչ ես թողել յետևից,
Որ բարկացկոտ դու եկար,
Հեռու, անտես կողմերից:
Քո մէջ վաղուց գուցէ կար
Մի ցաւ խոշոր, ամենի,
Քափառել ես դու երկար
Անպատում ամսջի.
Պուցէ անեղ շանթերով
Ամսերն իրար խառնեցիր,
Հսկայական թևերով
Լայն ովկիանը գրկեցիր,
Ե՛ւ չնչին ուժն ովկիանի,
Ե՛ւ քծնանքը դու տեսար. —
Հպարտ հողիդ ամենի

Վիրաւորւեց. հեռացար...
 Ուժիդ զէմ ուժ էլ չկայ.
 Չունես ընկեր հաւասար.
 Մենակ, ազատ ու հսկայ
 Չափում ես զաշտ, ձոր ու սար:
 Դու մորակն ես բնութեան.
 Դու անէծք ես շանթահար.
 Եկար ու այս վարանման
 Վախճան տւիր զողահար:
 Վիշտդ ազատ դարձրիր
 Անձրե-արցունք, մի հեղեղ,
 Հուր ու կայծակ շինեցիր
 Բարկութիւնդ խելայեղ.
 Ամպերն իրար կուտելով՝
 Դաժանացար, սևացար,
 Անտառները փետելով՝
 Դու վեր ու վար սլացար.
 Հեղեղ-հեղեղ չորդելով՝
 Անդունդները խուժեցիր,
 Յասկոտ ձայնդ թնդելով՝
 Դէպ լեռնիվեր վազեցիր.
 Հարւածեցիր շանթահար
 Լեռան խոհերն հնացած,
 Հսկայ լեռը զողահար
 Չարթնեց քեզնից սորսափած...
 ...Ս ինչ ուժգին շանթեցիր
 Ահեղաշունչ փոթորիկ.
 Դնւ, որ իրար խառնեցիր
 Սար, ձոր, անտառ ու երկինք...
 Ես էլ քեզ պէս կուզէի
 Բարդ ու կուտակ յոյզերով
 Սրտիս մրրիկն ամէհի
 Ժայթքել ուժգին շանթերով.
 Բայց նա ամուր վանդակաձ

Գալարուժ է սրտիս մէջ,
 Որպէս ափով բանւած
 Ալիքների ելեէջ,
 Ինչպէս հեղեղ՝ լեռներից
 Անդունդն ընկած խորավիհ՝
 Ել չի կարող խորքերից
 Հանել մի ձայն կորովի,—
 Այնպէս խուլ է ու անձայն
 Իմ փոթորիկն հոգեկան,
 Գալարուժ է անվախճան
 Յուզումներով մոլեկան...
 ...Ինչո՞ւ շուտով լռեցիր
 Ահեղաշունչ փոթորիկ,
 Ի՞նչ, որ իրար խառնեցիր
 Սար, ձոր, անտառ ու երկինք...

ՓՈԹՈՐԿԻ ԺԱՄԻՆ

Դ. ԴԵՄԻՐՇԵԱՆԻ

Փոթորիկն ուժգին աղմուկ է հանում...
Լսում եմ նրան՝ քաշում սենեակս...
Ա՛խ, տեսնես հիմաչ նա ինչ է անում,
Նա՛, գարունքւանից կորած թռչնակս...

Գուրգուրեց նրան գարունը արգեօք՝
Գրկած տանելով ամեն տեղ իր հետ.
Ունի՞ իր սրտին մտերիմ մի ոք.
Խաբէ՞լ է նրան սիրոյ մի վարպետ...

Գուցէ նա ինչպէս մի ծաղիկ աշնան՝
Հողմահարելով անապատն ընկած,
Գողում է գունատ և քնքոյշ գարնան
Նախկին ջերմ հուրը աչերումն հանգած...

Ա՛խ, գուցէ հոգին յուզուում է վշտոտ՝
Այս փոթորկից էլ սաստիկ և ուժգին.—
Ուզում եմ հաշտւած երթալ նրա մօտ,
Եւ սիրով թեքել զողահար կրծքին...

ԳԻՒՂԱԿԱՆ ՑԱԻԵՐ

ՅՈՎՀԱՆՆԵՍ ԽՈՋԱԷՅՆԱԹԵԱՆՅԻ

(Շարունակութիւն և վերջ ¹)

Վերջին քսան տարիներում 2—3 անգամ ականատես եղանք հացահատիկների չանկարծակի թանգանալուն, իսկ երբ մեղանում սկսեց զարգանալ բամբակացանութիւնը, աջնունտն մինչև այժմ հացահատիկների արժէքը մի որոշ գնից չէ իջել, ինչպէս լինում էր առաջ: Գիւղացուն ամենականիսիկ փող տուող բամբակն է, որից դաշտեցիները չափշտակած ցորենի ցանքը պակսեցրին՝ մեծ տեղ տալով բամբակին: միևնույն ժամանակ ընտելեան մի քանի չարիքները միմեանց չետևից մնասեցին լեռների ցանքերին, որտեղ բացառապէս հացարուց է ցանում:

Գաշտալին գիւղերի հողերը շատ սակաւ են համեմատելով լեռնալին գիւղերի հողերի հետ, աչնպէս որ դաշտեցին չի կարող հաւասար քանակութիւնով բամբակ և ցորեն ցանել, ալ պէտք է առաւելութիւն տալ աչն բերքերին, որոնք աւելի արդիւնաւոր են և միշտ ընթացք ունին վաճառանոցներում: իսկ լեռներում պէտք է բացառապէս վերին կատարելութեան հասցնել հացարուսերի ցանքը, որը աճեցնելու ընդունակութիւն ունի կլիման:

Նրբ դաշտալին գիւղերում ևս առատութեամբ ցանում են ցորեն և գարի, աչն ժամանակ թէ դաշտեցիների և թէ լեռնցիների մէջ հացահատիկների գները սաստիկ ընկնում են, որով դադարում է առևտուրը, ասարանքների փոխանակութիւնը, և երկու կողմն էլ սաստիկ մնասում են:

Վերջիչեալ պայմանները ի նկատի ունենալով, ինչպէս վերևում նկատել ենք, այժմ էլ կրկնում ենք, որ լեռնալին տեղերում պէտք է վերին կատարելութեան հասցնել հացարուսերի մշակութիւնը և ապա կաթ-

¹) Տես Մուրճ 1897 թ. № 7—8, 10, 11—12 և 1898 թ. № 1:

նատնտեսութիւնը, անասնապահութիւնը, մեղապահութիւնը, թռչնապահութիւնը, իսկ դաշտալին գիւղերում մեծ զարկ տալ բամակին, բրնձին, քնջութին, ալգիգործութեանը և այլն:

Վերջին տեսակի բերքերը մեծ հրապարակներում ընթացող են, որով դաշտեցիների ձեռքը փող կանցնի և որոնք իրենց ձեռք բերած փողով հաց կառնեն լեռնցիներից: Այս կերպ վստիւղով հաւատարակչութիւն կը պահպանւի ժողովրդի երկու կողմերի — լեռնացու և դաշտացու աշխատութեան, ապրանքների փոխանակութեան և վարձատրելու մէջ:

Սրանով մենք չենք կամենում պնդել, թէ դաշտեցիները բոլորովին անտես պէտք է անեն հացաբոստերի մշակութիւնը. ոչ, նրանք պէտք է ցանեն միաջն փոքր քանակութեամբ: Սրինակ Սուքի և Ագարակ գիւղերը, որ բացառապէս տեղական թուխունի մշակութեամբ են զբաղւած, թուխունը փոխարինում են դրացի գիւղացիների արդիւնաբերած ալլ բերքերի հետ և լեռնալին գիւղերի մէջ ամենահարուստն են, բայց միևնոյն ժամանակ զգուշութեան համար ամեն տուն մի փոքր հողի տարածութեան վրայ ցորեն, դարի կամ կորեկ է ցանում:

Եթէ մեր երկրում մեծ պահանջ կալ հացաբոստի, պատճառն այն է, որ մեր գիւղական դասը բացառապէս ցամաք հացով է կերակրւում: Դաշտալին գիւղերում երբեմն ուտում են մտղէն կերակուրներ, իսկ լեռնալին գիւղերում, ուր աւելի զարգացած է անասնապահութիւնը, միս գործ են ածում երբ անասունը սատկելու մօտ է, ուստի բացառապէս կերակրւում են գարու և ցորենի հացով, մասամբ էլ կաթնեղէնով: Թուրքերը և քիւրդերը ձմեռւան համար ուտելիքի ոչ մի պատրաստութիւն չեն տեսնում:

Մեզ պատահել է Սիջանու թրքաբնակ գիւղում 40 կուպէկով 8 հատ ձու միաջն առնել, որը ամբողջ գիւղում հազիւ է ձարւել, չը նալւած, որ այդ քսան տնից բաղկացած գիւղը ունի 1800 ղեսեատին հող, որի մեծ մասը հիանալի ծաղկաւէտ արօտատեղի է, ուր կարելի է մեծ աջոգութեամբ զարգացնել անասնապահութիւնը, մեղապահութիւնը, թռչնապահութիւնը և այլն:

Մեզանում մի ղեսեատին տարածութեամբ հողից կարելի է ստանալ 500 փութ կարտոֆիլ: Ուստի այն տունը, որ ցանում է տարեկան դիցուք 4 ղեսեատին հող և ստանում 420 փ. ցորեն՝ բոլորը ուտում է. եթէ նա կէս ղես. հողի վրայ կարտոֆիլ ցանի՝ կը ստանալ 250 փ. որը գործ ածելով՝ անշուշտ մեծ քանակութեամբ ցորենից կը սնտեսէր և կը ծախէր:

Դաշտալին գիւղերում երկրագործութեան մէջ արդէն նկատելի է փոփոխութիւն դէպի կատարելագործութիւնը, թէև քիչ ծաւալով, իսկ լեռնալին տեղերում ոչ մի փորձ չի լինում հողագործութիւնը զարգացնելու համար և բոլորովին բնութեան կամքին է թողւած, առանց ոչ մի արհեստական միջոցների դիմելու:

Գաշտալին գիւղերում տեսնում ենք, որ մուտ է գործել եւրոպական գութանը, էրանելու մեքենան, նոյն իսկ կալսելու մեքենաներ: Հողը պարարտացնելու համար երբեմն աղբ և մոխիր են խառնում. շատ տեղեր արտերի զրաղները թումբ բարձրացնելով մէջը ջուր են թողնում դարնան տղմի ժամանակ, իսկ լեռնալին տեղերում հողը ուժեղացնելու համար ոչ մի արհեստական փորձ չեն անում:

Որովհետև դաշտալին տեղերում բնութիւնը ինքը նպաստում է պղտղաբերութեանը, ուստի, իմ կարծիքով, լեռնալին հողերի պարարտացնելու վրայ աւելի պէտք է ուշ դարձնել, որտեղ տաք կլիմայի բուսեր չեն աճում, սակայն մեծ աջողութիւն կարող են ունենալ հացահատիկների արդիւնարբերութեան մէջ:

Առանց չափազանցնելու կարող եմ ասել, որ եթէ բոլոր դաշտալին հողերն էլ ցորենով ցանեն՝ դարձեալ հացի արժանութիւնը ապահոված չի կարելի համարել, եթէ լեռնալին տեղերում հացի բերքը սակաւ լինի:

Թէ ժողովրդի տղիտութիւնը սրբան է մեատում գիւղացիներին նիւթականապէս՝ կարելի է եզրահացնել հետեւեալ անհերքելի ֆակտերից: 1893 թւին Ալիդամարու գիւղը ստացաւ իր ալգիներէից 1500 կարաս գինի, բայց մասներով կարող ենք հաշուել թէ ով և որքան է ծախել: 1500 կարասից միայն 14 կարաս ծախուց և ստացուեց 126 ու. (ընթացակարգը 9 ու.). բայց եթէ հնար լինէր 1500 կարաս գինին փշանալուց պահպանել և թէկուզ ալջ չնչին 9 ու. դնով վաճառել՝ կը ստացուէր 13.500 ու. որը քիչ ապահովութիւն չէ 125 տնից բաղկացած մի գիւղի համար:

Այդքան գինին ալիդամարուցիները խմեցին ոչ թէ աչն պատճառով, որ նրանք ոչ պատրաստել զիտեն և ոչ էլ փշանալուց պաշտպանել: Նրանք լաւ գիտեն, որ դեռ մարտ ամիսը չհասած՝ իրենց բոլոր գինիները կը թթան կամ ջուր կը դառնան, ուրեմն ֆինչու չլամել և քէֆ չանել ալիդամարուցիներէից ու տանջանքից ազատ՝ ձմրան:

Յրևանայ նահանգի բոլոր լեռներում ահագին քանակութեամբ անուշահամ և անուշաբուր ծաղիկներ թառամում և ի զուր կորչում են, որից լաւ մեղր կը ստացուէր և նիւթապէս կ'օգտուէր գիւղացին. բայց նա զուրկ լինելով ալջ գիտութիւնից՝ ոչինչ օգուտ չէ ստանում: Նոյն լեռներում սրբան անօգուտ կորչում են ամեն գարնան բուսնող սոկոնները, որի ֆունտը քաղաքացիները առնում են 60 կոպէկից մինչև մի ուրբլի. հաւանական է, որ մեր գիւղացիները չը գիտեն թէ ալջ բերքը կարելի է չորացնել և ծախել:

Յրևանայ նահանգի լեռնցու կովը զով օչի մէջ՝ պաղ աղբիւրների

Ջուրը խմելով, հիանալի արօտատեղերում արածելով հանգերձ՝ փոքր է ու վտիտ և տարեկան մի աննախանձելի քանակութիւն իւղ է տալիս, այն է՝ 24-30 ֆունտ. միթէ այդ անասնապահութիւն և կաթնատնտեսութիւն է:

Մեծ արգելք է նաև ճանապարհների գլխովին բացակայութիւնը.— լեռնային տեղերում գիւղից գիւղ ոչ թէ սալ չի բանում, այլ նաև միայնակ ձին կամ եզը չէ կարողանում անցնել ճանապարհների վատութեան պատճառով, մանաւանդ ձմեռ ժամ սնակ, երբ ամեն մի քար ու փոս հաստ ձնով է ծածկուում: Դիցուք լեռնակաճը կամենում է տեղափոխել դէպի դաշտ կամ մի շուկա, 40 վերստ հեռաորութեան վրայ 60-100 փ. ապրանք-ցորեն, գարի և այլն, որը երկու և զ ունի միայն: Երկու եզնով, բարձած, հազիւ կարելի կը լինի տեղափոխել 15 փ. ապրանք. ուրեմն 60 փ. ապրանք տեղափոխելու համար նա չորս անգամ պէտք է տեղափոխութիւն կատարի: Իւրաքանչիւր անգամ նա գործ է դնում երեք օր (մէկ օր գնալը, միւս օր գործը աւարտելը, երրորդ օր վերադառնալը). հետևապէս 60 փ. ապրանք տեղափոխելու համար նա գործ է դնում տասն և երկու օր: Եթէ նա տարւան մէջ երկու երեք անգամ այդքան օրեր վատնի՝ ահադին վնաս կ'ունենայ:

Եթէ մի անգամ գիւղացիներին ստիպելով ամեն կողմի վրայ բաց անել տան սալագնաց հասարակական ճանապարհներ, աչն ժամանակ գիւղացին հեշտութեամբ 60 փ. ապրանք մի սալի բարձելով և երկու եզ միայն լծելով՝ երեք օրում կը տեղափոխի, կը վերադառնայ և ժամանակի ահագին վաստակ կուեննայ, որը մեծ նշանակութիւն ունի գիւղացու համար: Մի անգամ, 1889 թվին, ստիպած էի Խզդիր գիւղից խալֆալու գիւղը անցնել, որի ճանապարհը ճահճային տեղերով է անցնում. աչնպէս խրեցի ցելսի և տլի մէջ, որ 40 ուռլի վնաս ունեցաւ միայն շորերիս փչանալուց:

Ի՞նչպէս պէտք է գիւղացին այդպիսի ճանապարհներով անցկացնի իր բամբակը, գինին, ցորենը — և չը վնասի:

Չորս տարի առաջ, գաւառապետ պ. Փիրումեանը, ժողովրդին մի քանի օր ստիպմամբ բանացնելով՝ մի քանի կողմերի վրայ կանոնաւոր ճանապարհներ բաց արաւ, ի միջի ալոց և փշեալ խալֆալուի ճահճային ճանապարհը, որի վրայով ալժմ կարելի է քառալոծ կառքով անցնել առանց ակներն նույն իսկ ցելսոտելու և հազարաւոր փթերով ապրանք տեղափոխել առանց վնաս կրելու:

Աչն գիւղացիները, որ ստիպմամբ բանելուց անէծք էին թափում պ. Փիրումեանի գլխին, ալժմ առանց նրան օրհնելու չեն անցնում փշեալ ճանապարհով:

Չողագործութեան զարգացմանը մեծ արգելք է նաև ներկայիս նրա անպաշտպան դրութիւնը, որ առ ալժմ պետական օրէնքի խիստ հո-

վանաւորութիւնն է պահանջում, որպէս զի խաղաղ, կուրտուրական ժողովրդի աշխատութիւնը զո՛հ չը գնալ բարբարոս և անխիղճ մարդկանց չարակամութեանը: Օրինակ՝ հալը մեծ չարչարանքով ցանում է բամբակ, ցորեն և ալլն. ջրում, քաղհան է անում, աճեցնում է, խոկ թուրքը չի խղճահարում և գիշերով իր անասունները աչդ արտերի մէջ արածացնելով ոչնչացնում է ամբողջ տարւան աշխատութիւնը, մի ամբողջ ընտանիքի յոյսն ու ապաւէնը:

Հալը ծառ է տնկում և մեծ խնամքով աճեցնելով՝ պատւաստում է, պողպաքերութեան է հասցնում, խոկ թուրքը գիշերով կոտորում է աչդ ծառերը և սալներով տանում է հրապարակ վաճառելու, որը մի հատ էլ ծառ չի տնկել:

Լեռներում զիցուք հալը աճեցրել է ցորենի արտեր, և մօտեցել է քաղելու ժամանակը, ոսկու նման էլ փալ է տալիս: Քիւրդը որ մեծ օգուտ է վերցնում անասնապահութիւնից՝ և ալժմ էլ սկսել է ցանքով պարապել, իր ցանքը վերջացնելուց լետոյ՝ ամբողջ ամառը չուտ է լեռները իր ոչխարները պարարտացնելու. և աչդ միջոցում չի խղճահարում ուտացնել ոչխարներին իր դրացի հայի՝ քաղելու հասցրած ցորենի արտերը, խոտերը և արօտները: Աչդ վարմունքը ամենաանմեղ սովորութիւն է համարում մեզնում, չնայած որ դրանից անազին վնաս է կրում խաղաղ երկրագործը:

Ուրիշի աշխատութիւնը ոչնչացնելը շատ աննշան բան է համարում զրանց մէջ. և անա օրինակներ. — Սիչանլու զիւղում պարապելով հողագործութեամբ՝ ամենից շատ զգալի էր ինձ փալտի պակասութիւնը. ուտտի սկսեցի փոքրիկ անասու տնկել: Չորս տարի շարունակ, ամին տարի մօտ 1000 ծառ էի տեղափոխում դաշտալին գիւղերից և վերատնկում էի անազին տանջանքով. բայց մէկ ամսից լետոյ մի ծառի հետք անգամ չէր երեւում, որը ոչնչացնում էին իմ դրացի քրդերն ու թուրքերը: Նրք ես սկսեցի սաստիկ բողոք բառնալ և պահանջ անել աչդ բարբարոսութեան դէմ, նրանք միանգամայն ապշել էին իմ անխղճութեան վրայ, որ ես հասարակ փալտի համար աչդպիսի միջոցների եմ դիմում:

Մի քիւրդ հովիւ ունէի, 1887 թւին, որը արածացնում էր ոչխարներ: Դրացիներս սաստիկ բողոք բարձրացրին, որ հովիւն ոչխարները արածացնում է իրենց արտերում. մի քանի անգամ զգուշացրի նրան, որ աչդպիսի վնասներ չպատճառի. նա երզում էր Մուսամեղի բոլոր օրէնքներով, թէ ինքը չէ վնասում նրանց արտերին: Բողոքները շարունակեցին. և ստիպեցի դադարի հսկողութիւն անել և տեսալ, թէ ինչպէս հանդիստ խղճով երզելուց լետոյ շարունակում է ուրիշների արտերը ուտեցնել ոչխարներին: Բարկացած՝ նրան դուրս վաճակեցի հովուութիւնից. նա զարմացել էր իմ վնասարթիւնից և հայտնում էր ինձ, որ ինքը աչ-

լրատում է ոչխարներս պարարտացնել, իսկ ես այնքան չիմար եմ, որ չեմ գնահատում նրա այդ բարերարութիւնը!

Կարծեմ վերոգրեալ ֆակտերը բաւական պերճախօս են:

Այդ հակակոլտուրական քրդերն ու թուրքերը իրենց անկիրթ բնաւորութեամբ որքան վաչրագ ու բարբարոս են դրացիների նկատմամբ, նոյնքան էլ երկչոտ են օրէնքի առաջ: Բաւական է գիւղական տանուտէրներին և աղսախկաչներին (սպիտակամորուքներին) մի փոքր սղմել օրէնքի անունով—և նրանք անձամբ միջոցներ ձեռք կ'առնեն այդ վնասակար սովորութիւնների դէմ:

Եթէ քսան կոպէկանոց պարանք գողացողները պարտաւոր են պատժւել իբրև քրէական չանցաւորներ, ինչու հարկւր ոււրլիանոց ցորենի արտ փչացնողները չպէտք է պատժւեն նոյնպէս իբրև քրէական չանցաւորներ:

Քողնելով զուտ մասնագիտական խնդիրները, մենք աշխատեցինք քննել այն կողմնակի պատճառները, որոնք արդիւք են եղել մեր գիւղացիների բարօրութեանը և գիւղատնտեսութեան զարգանալուն, ալժմ մեզ մնում է թւել, համառօտ կերպով, այն միջոցները, որոնցով կարելի է զարգանալ և առաջադիմել:

Աւելորդ ենք համարում երկար բացատրել, որ ամենահիմնական միջոցն է ուսումնարանը—ժողովրդի մէջ գրագիտութիւն տարածելը, որին իբր օժանդակ՝ գիւղական գրագրանների կազմակերպելը. իսկ ամենագլխաւորն է՝ տարրական ուսումնարաններին կից՝ կամ առանձին՝ գիւղատնտեսական փորձնական կադրաններ հիմնելը ամենաընդարձակ ծաւալով. «Տեսնովի է՝ ուսնովի, ցանովի չէ՝ բուննովի» ասում է ժողովրդական առածը:

Յայտնելով մեր խորին երախտագիտութիւնը մեր բարեխնամ կառավարութեանը, որ այժմ ամեն հնար գործ է դնում գիւղերում տարրական ուսումնարաններ բանալու համար, ցաւելով պէտք է ստենք, որ այդ ուսումնարանները չեն ծառայում ժողովրդի կարիքներին: Այդ տարրական ուսումնարանների չրջանն է 3—5 տարի, որի չաճախողներն են զլխաւորապէս հալեր և թուրքերի մի չնչին սոկոս, որոնք ուսումնարանում անցեն կացնում օրական 3—4 ժամ: Տարւալ ընթացքում երեխան սովորում է հազիւ կմկմալով կարդալ և մի 20—30 խօսք պետական լիզւից: Ամառւան արձակուրդներին նա մոռանում է ամեն բան. հետեւեալ աշնանը նորից սկսում է նախկին դանդ ու զբաւը: Եւ այսպէս չորս հինգ տարի ուսումնարանում քաշ գալուց լեսոյ երեխան ուսումնարանից դուրս է գալիս առանց նոյն իսկ վարժ կարգալ գիտենալու: Նա սէր չի տաճում նաև դէպի ընթերցանութիւնձ, որ զոնէ ուսումնարանը աւարակուց լե-

սող ընթերցանութեամբ, ինքնօգնութեամբ կարողանալ սովորածը լրացնել և չմոռանալ:

Խօսքս գիւղական տարրական ուսումնարանների մասին է:

Կերկալուձս գիւղերի պետական տարրական ուսումնարանում աւարտած աշակերտը ոչ պետական լեզուն գիտէ և ոչ էլ մալրենի լեզուն, Բնականարար էլ աչդպէս կը լինի, քանի որ պետական լեզուն 3—5 տարում բնական պայմանների շնորհիւ չի արմատաւորում աշակերտի մտքում, իսկ մալրենի լեզուն էլ սովորում են հետեւեալ նեղ ծաւալով, աչն տարրական ուսումնարանում՝ ուր ծախսում է տարեկան 5 հազար ռուբլի, դրա մէջ տեղական լեզու ուսուցման ծախքն է ընդամենը 120—180 ռ.: Եղբակացութիւնը ընթերցողներին ևս թողնում:

Անհրաժեշտ է, որ գիւղական տարրական ուսումնարանները հեռու լինեն քաղաքական զիտումներից և տեղական լեզուներն էլ պետական լեզու հետ հաւասար տեղ բռնէին ուսումնարաններում, որով միայն կը ծառայէին ժողովրդի զարգացմանը և բուն պէտքերին:

Մարենի լեզու գիտութիւնը ժողովրդի մէջ տարածելու չարմարութիւնը աչնպէս ապացուցած է, որ հազիւ թէ հակառակողներ լինեն, եթէ լոկ հակառակելու ցանկութիւն չունենան:

Թուրքերի մէղրեւելից մենք ոչինչ օգուտ սպասել չենք կարող, քանի որ բացի կրօնից, աչն էլ անհասկանալի լեզուով, ուրիշ ոչինչ չեն աւանդում, իսկ հաւոց ծխական-եկեղեցական ուսումնարաններից աւարտում էին աւելի ընդարձակ, մասամբ տարրական տեղեկութիւններ ձեռք բերած, ընթերցասէր և դէպի կուլտուրան հակող մարդիկ:

Աւելի օգտաւէտ կը լինի, եթէ իւրաքանչիւր նահանգի մի չարմարաւոր կենտրոնում բացել միջնակարգ գիւղատնտեսական ուսումնարան, իսկ իւրաքանչիւր գաւառում, կլիմայի համեմատ, բացելն ստորին կարգի և փորձեականին մօտեցրած ուսումնարաններ, որոնց անպատճառ պէտք է աջակցեն կալւածատէրերը:

Աչսպիտով միայն կը տարածւի կատարելագործւած գիւղատնտեսական ձեւերը և կը զարդանալ գիւղատնտեսութիւնը:

Բացի աչք բոլորից անհրաժեշտ է, որ պետութիւնը նշանակի մի մի մասնազէտ իւրաքանչիւր նահանգում, որոնց պարտքը լինի միշտ ման գալ նահանգի ամեն մի գիւղը, ուսումնասիրել տեղական գիւղատնտեսական պայմանները և դրանց միջոցով հիմնէին գաւառական գիւղատնտեսական խորհուրդներ: Խորհրդին մասնակցողները պէտք է լինեն գիւղերից ընտրւած պատգամաւորներ, կալւածատէրերը, ազարակատէրերը ¹⁾ և գաւառական վարչութիւնն պաշտօնեաներից մէկը:

¹⁾ Կապալով վերցրած ուրիշի հողի վրայ ցանք անողներ (Քերմէլ):

Այդ խորհրդին մասնակցողներն պարտքը պէտք է լինի՝ ուսումնասիրել ամեն մէկը իր շրջանի գիւղատնտեսական պայմանները, դրուժիւնը, տեղեկութիւն տալ խորհրդին, թողուտ գիւղատնտեսութեան կաշաղցնել վճիռներ և այլ վճիռները օրէնքի ուժով գործադրել տալ գիւղացիներին այնքան ժամանակ, մինչև որ մեր գիւղացիները կը սովորեն իրենց օգտին մտածել և հողալ:

Որպէս զի մեր վերոգրեալ նկատողութիւնները լոկ տեսական և անիրագործելի խօսքեր չնկատուեն, չալտնում ենք ի գիտութիւն, որ ձեռնարկել ենք մեր առաջարկած խնդիրներից մի քանիսի իրական օրինակը տալու, որի հետևանքի մասին իր ժամանակին տեղեկութիւն կը տանք ընթերցող հասարակութեանը:

Ն Ի Է ր Ը Ն Կ Ե Ր Ի Ս

ԱՐՇԱԿ ԱԹԱՅՆԱՆԻ

Մենք ծեր ենք, ընկեր, թոյլ, անօգնական:
Թէև լիովին, զիտես՝ չենք ծաղկել—
Դեռ կեանք չը տեսած՝ անն գերեզման,
Եւ կարծես թէ կեանք չենք էլ երազել:

Վաղ վերայ հասաւ խարդաւանանքը,
Մեր ոյժը հատաւ ճանր գործերում,
Միայն պահեցինք մեր դաւանանքը,
Սակայն նա մնաց թաղւած մեր հոգում:

Հաղիւհաղ ելանք մենք արշալուսին,
Կամեցանք տեսնել նոր արև, նոր լոյս,
Բայց մեր երազը մարդիկ ծաղրեցին
Եւ մեզ թողեցին միայնակ, անյոյս.

Ոչ ոք մեզ չասաց. «Ես էլ ձեզ ընկեր,
Ես էլ ոյժ ունեմ, արբք միանանք,
Ես ձեզ կը բանամ՝ երկնքի դռներ,
Այնտեղ միասին կը գանենք նոր կեանք»:

Ոչ ոք այդ չասաց, այլ արհամարհեց
Մեր իդէալը անսարբեր հոգով—

Ձէ, չարհամարհեց, այլ նա խորտակեց
Անարգ կեղծութեան զազիր զիմակով:

Եւ ահա կրկին միայն ենք, ընկեր,
Որպէս եղել ենք ծնւելու օրից.
Թող ծովի նման յուղեն մեր մտքեր,—
Բայց զուր է սպասել, զուր յուսալ նորից.

Թող նաւի նման մեր կեանքն օրօրւի
Մոլի կատաղի արհաւիրքներում,
Թող մեր միտքը, հոգին վրդովւի,
Եւ այսպէս անվերջ, մինչև դադարում... 11

Լսում եմ, ինչպէս մարող հնչիւնով
Ինձ ես ձայն տալիս, ընկեր անմեկին,
Տեսնում եմ, ինչպէս կարկառած ձեռքով
Ինձ ես որոնում տանջանքի ժամին.

Ձգում եմ, որպէս տենչով փշրած՝
Կարօտել ես իմ անյոյս օգնութեան,
Արցունքն աչերիդ խորքերում պահած՝
Լալ ես երազում ինձ հետ մի վայրկեան,

Բայց... արցունք չունեմ!.. Ես էլ եմ թշուառ.
Անվերջ հոգսերը հոգիս մաշեցին,
Շատ վաղ հանգցրին սիրտս սիրավառ
Եւ դուրս կորզեցին արցունքս վերջին.

Այժմ էլ եմ լալիս, բայց առանց արցունք,
Ձոր են աչքերս, չոր ու անկենդան,
Էլ արցունք չը կայ, որ վիշտ, մոորմունք
Նորա հետ թափեմ, մատնեմ մոռացման

Եւ խաւար միտքս լուսով զարգարեմ,
 Նոր կեանք ստանամ, որպէս վառ մանուկ,
 Աշխարհն ինձ թւայ նորաստեղծ եղեմ,
 Ծիծաղով չիշեմ օրերս խղճուկ:

Ես էլ եմ քեզ պէս վհատուած հոգով.
 Էլ ուր է հաւատ, ուր վառ երազներ,—
 Սլացան, կորան անհետ թողնելով
 Հոգուս մէջ կրակ, սրտիս մէջ վերքեր:

Դու շղթայուած ես?—Ես... աւելի վատ!...
 Զարկախարզ վիշաբ զիշեր ու ցերեկ
 Կրճուճ է սիրսս, կրճուճ անընդհատ,
 Եւ կարծես թէ նա վերջ չունի երբէք:

Ի՛նձ ես բաց անում վերքերը սրտիդ!
 Բայց ի՞նչ կը գտնես չորացած հոգում.
 Տուր, եթէ ունես, արցունքի մի շիթ—
 Ես տառապում եմ, ես լալ եմ ուզում...

4 նույնը. 97 Բաբու

ԷՒՈԼԻԻՑԻԱՅԻ ԳԱՂԱՓԱՐԸ

ՄԻՔԱՅԷԼ, ՅՈՎՀԱՆՆԻՍԵԱՆԻ

(Շարունակութիւն ¹)

Կեանքի ծագման հարցը վերջացնելու վրայ ենք. նա շատ զբաղեցրեց մեզ: Ամփոփենք:

Ի՞նչ սովորեցինք ուրեմն: Ընդունել արդեօք տիեզերական ծագման հիպոթեզը և պնդել, որ օրգանական, կենսունակ սաղմերը եղել են յաւիտենականութիւնից ի վեր տիեզերքի անվերջ տարածութեան մէջ և նպաստաւոր մոմէնտում սկսել են զարգանալ. (այդ ենթադրութիւնը, որ առաջին անգամ հրատարակել է Բիւլիները 1855 թւին իր «Ոյժ և Նիւթ» գրաւածքում, ունեցել է պաշտպտներ. յամենայն դէպս նա աւելի հաւանականութիւն ունի, քան «Եւասէ Աստուած...»-ի հիպոթեզը) — թէ պէտք է նախ ընդունել ինքնաբեր ծագումը... Բայց դուքէ այստեղ ևս աւելի լաւ կը լինէր ագնօստիկ մնալ, (ինչպէս Հէքսլին էր անում նոյնօրինակ դէպքերում), քանի որ, ինչպէս տեսանք, ոչ մէկը այդ հիպոթեզներից ֆակտային ապացոյց չունի: Ինքնաբեր ծագումը աւելի խելքի մօտ է թւում: Թէ որքան հաւանականութիւն ունի նա — ընթերցողին ենք թողնում եզրակացութիւն անել, հիմնելով մեր բոլոր նախընթաց տեսութեան վրայ: Մենք տեսանք, որ նա իրողութիւն չէ. մեր օրերում բնագիտութիւնը անխնայ դուրս է գցում իր շրջանից այն ամենը, ինչ որ փորձի, ստույգ պիտողութեան վրայ չէ հիմնւած:

¹) Տես Մուրճ 1897 թ. № 2—3, 5, 7—8, 9, 11—12, և 1898 թ. № 1:

Սակայն գիտութիւնը կարող է ընդունել այս կամ այն հիպոթէզը ժամանակաւորապէս: Նա ընդունում է այնպիսի հիպոթէզներ, որոնց միջոցով կարող ենք լուսաբանել այս կամ այն երեւոյթը և որոնք ներդաշնակ են գտնուում մեր զիտած բոլոր ուրիշ երեւոյթների ու օրէնքների հետ: Եւ միայն լայն փաստական հիմնաւորութիւն ստանալով՝ նրանք դառնում են [թէօրիալ Ծագման թէօրիան Լամարկի օրով միայն հիպոթէզ էր. Դարւինի օրով նա դարձաւ [թէօրիալ՝ Կանտ-Լապլասեան արեգեղբաճնութիւնն անգամ, թէև փաստեր ունի իր ետևում, գիտութիւնից ընդունուում է ժամանակաւոր կերպով, իբրև մի հիպոթէզ, որ ամենից աւելի լաւ է բացատրում արեգեղբական շինւածքի ծնունդն ու էոլոլուցիան:

Ինքնաբեր ծագումը ևս ժամանակաւորապէս կարող է ընդունուել ոչ իբրև [թէօրիալ, այլ իբրև à priori կառուցած մի հիպոթէզ (մի օգտակար հիպոթէզ, որ լոյս է սփռում կեանքի ծագման վրայ), ոչ իբրև փաստ, այլ իբրև մի հաւանականութիւն: Աւելին ասենք. ինքնաբեր ծագումը մի փիլիսոփայական-տրամաբանական հնարաւորութիւն է:

*
* *

Մեր տեսութիւնը երկարեց: Ինչ որ մենք ծրագրել էինք, նրա կէսն անգամ դեռ ևս չենք անցել: Այսուհետև քիչ աւելի արագ կը քայլենք: Դա [թերևս լինի ի փնաս յօդւածին, բայց ընթերցողը կը ներէ և խստապահանջ չի լինի դէպի մեզ. այսպիսի մի ընդհանուր տեսութեան մէջ չի կարելի ընդարձակել ամեն վայրկեան սունկի պէս բննող հարցերի ու [թէօրիաների վրայ:

Կեանքը սկիզբ առաւ: Կենդանի էակները աճեցին, բազմացան ու սարածւեցին երկրագնդի շուրջը: Կեանքի աղբիւրը մեզ համար անըմբռնելի եղանակով ճիւղաւորեց երկուսի՝ կենդանական ու բուսական աշխարհների: Արդեօք ի սկզբանէ երկու զանազան տեսակի մտերներ են երևացել, մինը՝ կենդանական, միւսը՝ բուսական աշխարհի համար: Հէկկելը պատասխանում է՝ հաւանօրէն, ոչ: Որովհետև այդ դէպքում բոյս և կենդանի բոլորովին զատ ու անկախ կը լի-

նէին իրարից. բայց չէ որ կան այսօր այնպիսի շնչաւոր արարածներ (Protist), որոնք ոչ բոյս են, ոչ կենդանի և որոնք կարող են ընդունել և իբրև բոյս, և իբրև կենդանի:

Նրկորոզ հնարատրութիւն:

Մրդեօք միմիայն մէկ տեսակ մոներ է ծնունդ առել առաջին անգամ և ապա գիՖիՖերենցիացիայի ենթարկել:

—Այդ էլ՝ ըստ Հէկկելի՝ հաւանական չէ:

Նրրորոզ հնարատրութիւն:

Ուրեմն սկզբում մոներների շատ տեսակներ են առաջացել:

Այդ երրորդ ենթադրութիւնը Հէկկելի համար ամենահաւանականն է. Հաւանական է, ասում է նա, որ սկզբներում, երբ երկրագունդը հրահեղուկ դրութիւնից սկսել է աստիճանաբար սառչել, ներքին ոյգերի բռնկման շնորհիւ անհարթութիւններ են գոյացել նախածովի չառակում, տեղ-տեղ տարբեր ֆիզիկօ-քիմիական պատճառներ են ստեղծւել, և ուրեմն ծնունդ են առել այդ տարբեր պայմաններին համապատասխան նաև տարբեր մոներների տեսակներ: (Թէև մոներները ամենապարզ էակներն են, այնուամենայնիւ թեթև տարբերումներ կարող են մտցնել նրանց մէջ նրանց բաղկացնող քիմիական տարրերի, մանաւանդ ածխածնի, տարբեր միաւորումները, ապա ծծումբի ու ֆոսֆորի աւելի կամ պակաս խառնուրդը և այլն):

Ինչով է տարբերում բոյսը կենդանուց: Առաջին հայեացքից թւում է, թէ տարբերութիւնը արմատական է: Ի՞նչ նմանութիւն կարող է լինել մի կաթնասուն կենդանու և մի ծառի, մի կառւի և մի խնձորենու միջև: Կատուն ունի բարդ գործարաններ, ունի սիրտ, մկաններ, ջղային սխտեմ, և այլն. իսկ խնձորենին զուրկ է այդ ամենից: Բայց այդպէս չեն դատում. մենք պիտի համեմատենք բոյսն ու կենդանին իրենց ամենասկզբնական դրութեան մէջ, պիտի իջնենք կենդանական սանդուխքի ամենաստորին աստիճանները. և այն ժամանակ կը տեսնենք, որ տարբերութիւնը էական չէ: Տարէք երեսային կամ չափազանց տգէտին զօոլոգիական լաբորատորիա և ցոյց տւէք նրան մի շարքում զետեղած ծովասողը, կենդանի սպունդը և ամենապարզ բոյսերը: Անկարելի է, որ նրանք կարողանան ջոկել բոյսը կենդանուց: Բոյսն էլ, կենդանին էլ նոյն բջիջը, նոյն քիմիական բաղադրութիւնն ունին, այսինքն՝ ածխածին, թթւածին, ջրա-

ծին, աղոտ, քիչ էլ երկրորդական տարրեր՝ ծծումբ, ֆոսֆոր, և այլն: Միևնույն պրոտոպլազման է, շարժուն, կենսունակ, կաշուով պատած, կորիզը ներսում: Նմանութիւնների թելը դեռ շատ հեռու կարող է ձգուել:

Վաղեմի ժամանակներում բոյսն ու կենդանին խիստ կերպով զատում էին իրարից, իբրև, հիմնականապէս տարբեր էութիւններ: Արիստոտելը ընդունում էր «հոգի ունեցող» կենդանի և «անհոգի» բոյս: Լիննէյը ևս այդ թիւրիմացութեան մէջ էր: Մեր դարու միկրոսկոպը ջնջեց կենդանիների այդ արտօնութիւնը: Յոյց արեց, որ ոչ զգայնութիւնը, ոչ ջղային սխաեմն ու գիտակցութիւնը, ոչ շատ ուրիշ բաներ անսպասան յատուկ չեն կենդանիներին, որ նրանք կամ բոյսերի մէջ էլ գոյութիւն ունին, կամ թէ բացակայում են ամենատար կենդանիների մէջ: Իրաւամբ, ուրեմն, շեշտում է սուս բուսաբանը, որ «իրօք չըկայ ոչ բոյս, ոչ կենդանի, այլ մի անբաժանելի օրգանական աշխարհ»: (Гимирязевъ, „Жизнь растенія“):

Կան, այնուամենայնիւ տարբերութիւններ, որոնցից ամենաէականն է նիւթի փոխանակութեան (աննդառութեան) և նրա հետ կապւած ոչթի փոխանակութեան հակասութիւնը բոյսի ու կենդանու մէջ: (Հակառակութիւնը բացարձակ հիմնական չէ): Բոյսը սնւում է հեղուկ ու զազակերպ նիւթերով (ջուր, ածխաջին թթու, ամիակ, աղեր և այլն): Այդ պարզ էլեմենտները իր ներսն ընդունելով՝ բոյսը սինթեզի է ենթարկում նրանց (Synthèse, Réduction), այսինքն կազմում է նրանցից բարդ օրգանական միաւորումներ՝ (այդ պրոցէսը կատարւում է արեղակի լոյսի ու ջերմութեան օգնութեամբ), ճարպ, սպիտակուցային նիւթեր և այլն: Այդ պրոցէսի ընթացքում (Reduktionsprozes) բոյսը կապում է (թագցնում է) ջերմութիւնը և զարգացնում է շատ քիչ մեքենայական աշխատանք:

Կենդանին սնւում է բոյսերով: Բոյսերից առած ածխածնի բարդ բաղադրութիւնները նա անալիզի է ենթարկում իր ներսում, կազմալուծում է նրանց, նորից զատում է իրարից պարզ էլեմենտները: Այդ պրոցէսի ընթացքում (Oxydationsprozes) կենդանին արձակում է ջերմութիւն և զարգացնում է շատ մեքենայական աշխատանք:

Աւրիշ խօսքով՝ բոյսը, կազմելով անօրգանական պարզ էլեմենտներից բարդ օրգանական միաւորումներ, ընդհանրապէս կլլանում է կենդանի ոյժը (lebendige Kraft) և դարձնում է նրան թազուն, լարւած ոյժ (Spannkraft): Կենդանին ընդհակառակը՝ կազմալուծելով այն բարդ միաւորումները, որ նա ստանում է բոյսերից, վերածում է թագցրած ոյժը նորից կենդանի ոյժի:

Այս որոշումը, թէպէտ և ոչ անպայման ճիշտ, աւելի բնական է, քան հոգւոյ, զգայնութեան ներկայութիւնը կամ բացակայութիւնը:

* * *

Եւ առաջ գնաց բիօլոգիական էւոլիւցիան մօներների աստիճանից ղէպի ամենաբարձր անասնական ու բուսական տեսները, առաջ գնաց նա դանդաղ, բայց հաստատուն քայլերով, համաձայն գոյութեան կուրի և բնական ընտրողութեան անշեղ օրէնքներին: Այդ օրէնքների մասին խօսել ենք արդէն, այլ ևս չենք կանգ առնի:

Բիօլոգիական գիտութիւնները, որոնք համարեա գոյութիւն չունէին հին և միջին դարերում, 17-րդ դարից սկսեցին ծաղկել: Գտնուեց խոշորացոյցը, որի մեծ կոչումն էր բաց անել մարդու առաջ մի անյայտ աշխարհ, —ինֆուզորիաների, մոներների, բջիջների փոքրիկ, հրաշալի աշխարհը: 1675 թւին Հոլլանդացի Կեւեհնոկ դատաւ խոշորացոյցի տակ ինֆուզորիաները ¹⁾: Աշխարհը

¹⁾ Վերոյէք ճահճալին տիղմից մի փոքրիկ ջրալին կաթիլ, զետեղեցէք ապակէ փոքրիկ թիթեղի վրայ և զննեցէք խոշորացոյցով: Մի գեղեցիկ տեսարան է բացուում ձեր առջև. ջրի փոքրիկ կաթիլը մի ամբողջ ծով է թւում ձեզ, ուր զէս ու զէն լողում են անհաշիւ մանրիկ էակներ: Առաջներում զրանց բոլորին անխտիր ինֆուզորիա անունն էին տալիս: Իսկ այսօր ինֆուզորիաների տեղը աւելի որոշած է: Ինֆուզորիա ընդհանրապէս կոչում են այն միաբջիջ մարմինները, որոնք շարժում են արտանոնքների (cil), շնորհիւ: Շարժողութիւնը կամաւոր, ազատ չէ, այլ միայն համապատասխան չրջապատող միջավայրի գոգիւններին: Պրոտոպլազմի մէջ լինում են մէկ կամ մի քանի կորիզներ, նալած ինֆուզորիայի տեսակներին: Ինֆուզորիաների գիրքը կենսաբանութեան մէջ որոշեց շնորհիւ Մալպիգիի, Միւլլէրի, մանաւանդ Էրենբերգի, Նան ուրիշների գիտողութիւններին: Տեղը չէ աւելի ընդարձակ խօսելու:

դղրդաց, զարմացաւ, ժամանակիցները սատանայական գործ հրատարակեցին այդ գիւտը, իսկ Լէօէնհոկին հռչակեցին կախարդ, խաբէբայ:

Միկրոսկոպի գործածութիւնը դիտուում էր իբրև անասուած, աններելի հետաքրքրութիւն: «Ասուած չի ուզի, յայտնի բան է, որ մարդը երևան հանէ աներևոյթ, փոքրիկ աշխարհը, ապա թէ ոչ էլ ուր է նա թագցրել այդ աշխարհը մարդկային աչքերից...»

Թէ որ աստիճանի նախապաշարած էր ժողովուրդը դեռ անցեալ 18-դ լուսաւոր զարում, վկայում է հետևեալ կուրիոզը: Մեռել էր մի բժիշկ իր ճանապարհորդութեան. միջոցին բաւարական մի գիւղում: Թաղումը արգելել էին, որովհետև կախարդ էին կարծում հանգուցեալին: Գիւղացիք գտել էին նրա մօտ մի խողովակ երկու ծայրից ապակով փակած (խոշորացոյց) և երբ ապակիից ներս էին նայել, սարսափով նկատել էին մի ահագին հրէշ, սև, մազմազոտ, և կարծել էին, որ դա դև է, որին հանգուցեալը պտտեցնում է եղել իր հետ: Բայց երբ քաջին մէկը սիրտ է անում փշրել խորհրդաւոր գործիքը, ապշած են մնում, տեսնելով, որ կարծեցեալ հրէշը մի սովորական լու է... (Bommeli, die Thierwelt):

ՏԻՐՈՋ ՍԿԻՅԸ

(ԼԵԳԵՆԴԱ)

Ս. ՓՐՈՈՒԳ՛ԻՅ, Թարգ. Յ. Յակոբեանի

I

Ասան ինձ, մայրիկ, ճշմարիտ էին,
Ինչ որ պապիկը այսօր ինձ ասաց.
Իբր երկնքում սկիհն անապին
Աստույ Գահի առաջ կայ դրած,
Եւ ամեն անգամ որ և է հարւած
Երբ մեզ է հասնում անխիղճ մարդկանցից,
Այդ սկիհի մէջ արցունք է կաթում
Վշտահար Տիրոջ տխուր աչքերից.
Ու երբ կը լցւի սկիհն արցունքով
Այն ժամանակը միայն Մեսիան
Կ'իջնի երկնքից.
Նա, որի փռուքը սրբագործւում է
Աղօթքների մէջ
Նա, որին այսքան դար սպասում է
Մեր խեղճ ամբօխը, բայց չէ յայտնւում հէջէ:

Այո, զաւակս, ճշմարիտ է այդ,
Մայրիկը տխուր պատասխան տւեց.
Ու լռեց որդին... խորհում էր անթարթ...
Բայց շուտով մօրը նորից հարցրեց—

Ասան, ժայրիկ ջան, բայց Թրբ կը լինի,
Որ այդ սկիհը մինչ ծայր լքցւի.

Գուցէ նորա մէջ արցունքն է գամքում
Յաւիտեան, դուցէ... նա չառանկ չունի,
Եւ քնքոյշ դէմքով ու լի հեղութեամբ
Նա իւր աչերը մանկան պարզութեամբ
Մայրիկին ուղղեց.

Բայց նա զլսակոր ու անպատասխան
Մանուկին թողեց.

Եւ միայն լռիկ մի կաթիլ արցունք
Յանկարծ թաց արաւ նորա թերթեւունք...

Այդ ջերմ կաթիլը, նման գոհարին,
Փայլելով դիպաւ մանկան գանգուրին
Ու թաւարելով ճակատին մարեց...
Օ, վշտի Ասուած, մայրը հառաչեց,
Թող այս արցունքն էլ զլորւի քո խեղճ
Սուրբ սկիհի մէջ:

ՕԳՏԱԿԱՐ ԵՒ ՎՆԱՍԱԿԱՐ ՄԻԿՐՈՐՆԵՐ

(ԼՈՒՒ ՊԱՍՏՏՕՐԻ ԳՈՐԾԵՐԸ)

ԳՐԵՑ ԳՈՒՍՏԱՆ ՓԻԼԻՊՊՍԸ

Գլխուժիւնների դոկտոր

Թ. արգ. Ֆրանսերէնից ԲՓ. Գ. ՍԱՐԳՍԵԱՆՅԻ

Ա. Գլուխ.

ԽՄՈՐՈՒՄԸ ԸՆԳՀԱՆՐԱՊԵՍ

Պատմական. — Պաստէօրի նախորդները. — Պաստէօրը եւ խմորումը. — Սպիրտի խմորումը:

«Ով կարողանայ խորը զննել խմորիչների և խմորումների բնութիւնը, նա անկասկած ամենաընդունակը կը լինի զանազան ախտային երևոյթների, ինչպէս տաքութեան, նոյնպէս և ուրիշ հիւլանդութիւնների, իսկական բացատրութիւնը տալ: Այդ երևոյթները երբէք լաւ չեն հասկացւի, մինչև որ չը բացատրեն հիմնապէս խմորման պատճառները»:

Այս սողերը պատկանում են XVII դարու բնագէտ անգլիացի Ռոբերտ Բուալլին: Մենք չետոյ կը տեսնենք որ այդ մարգարէական սողեր էին, և ինչպէս Լ. Պաստէօրի անմահ գործերը համապատասխան եղան այդ մարգարէութեան.

Այս վերջին գիտնականը ցոյց տւեց իւր փորձերով, որ խմորման երևոյթը իսկապէս մի անխզելի կապ ունի մանրադիտական (միկրոսկոպային) կենդանի էակների աճման հետ և որ առանց այդ

էակների ներկայութեան, որոնք կոչուում են խմորիչներ (Ֆերմենտներ), երբէք խմորումը տեղի չէ ունենում:

Անցեալում առաջարկել են թէօրիաներ, օրինակ խազողի խմորումը բացատրելու համար, բայց բոլոր մեկնութիւնները վարակած էին մոլորութիւններով:

Ալիսիմիկներ (ոսկեփոխներ) կարծիքով զինու եփուիլը և կաւիճի Ֆշֆշալը, երբ վերջինիս վերայ գցում ես մի կաթիլ թթու, համանման երևոյթիւն էին:

Լաուազէն (1743—1794), Ֆրանսիայի քիմիկոսը, առաջինը ապացուցեց որ շաքարը խմորելով բաժանուում է ալկոհոլի և ածխածնի թթուի և թէ այդ քակման արդիւնքների՝ ալկոհոլի և ածխածնի քաշերը, զումարած միասին, ներկայացնում են իսկ և իսկ շաքարի քաշը խմորումից առաջ:

1860 թւականին, Պաստէօրը, որը այդ ժամանակ Լիլլի գիտութեանց ճեմարանի ուսուցչապետ էր, պնդում էր, որ Լաուազէի քիմիապէս բացատրած երևոյթը կենդանական բնութիւն ունի և, իւր գոյութեամբ պարտական է խմորի ներգործական մասնակցութեան, հակառակ Լիբիխի յայտնած մտքերին, որը վերագրում էր խմորին զուտ քիմիական ներգործութիւն, և Բերցելիուսի զաղափարին, որը «Բանաստեղծագիտական զաւանցանքով» բացատրում էր թէ իբր այդ տեսակէտը նշմարել էր արդէն Կանեար դը Լատուրը 1828 թւականին և Նանը 1837 թ.:

Խմորիչների մէջ ամենալաւ ուսումնասիրւածն է զարեջրի խմորիչը, որը մտում է զախէ թղթի երեսին, երբ խմորումով առաջացած զարեջրի քաղցուն (շիրա) քամում էք նորանով:

Դա մի սպիտակագոյն զանգւած է, թթւաչ և անախորժ հոտով: Մանրադիտակի տակ մաքուր ջրի մէջ (անհրաժեշտ է որ այդ ջուրը երբէք շաքարեղէն չը պարունակի իւր մէջ), նա նմանում է սերմերի, գնդակի ձևով, քիչ թէ շատ անկանոն, մեծութեամբ 8-ից մինչև 9 հազարական միլլիմետր, լցւած մանրիկ հատիկներով. այդ սերմերը կամ հատ-հատ են կամ երկուսը միասին կցւած:

Քիմիապէս խմորը կազմւած է հետևեալ կերպով.

Ածխածին	48%	մինչև	49%
Ջրածին	6%	—	6,5%

Բորակածին	9 ⁰ / ₀	—	12 ⁰ / ₀
Քիթլածին	31 ⁰ / ₀	—	36 ⁰ / ₀
Մոխիր	2 ⁰ / ₀	—	4 ⁰ / ₀

Այդ մարմինները չեն փոխում իրանց ձևը, մինչև որ գտնուում են մաքուր ջրի մէջ. նոքա ապրում են միասին զատ-զատ, պահպանելով միայն քնած կեանք: Բայց երբ ջրի հետ խառնուում են մի պատշաճաւոր հիւթ, որը պարունակում է իւր մէջ պողպային շաքար, և երբ այդ հեղուկի տաքութիւնը հասնում է 20⁰ (Յելսիուսի ջերմաչափով) այդ մարմինները արթնանում են և խմորը սկսում է աճել:

Ամեն մի սերմը դառնում է կանոնաւոր ձևաձև. յետոյ նորա վերայ սկսում է բուսնել մի փոքրիկ հատիկ, որը արագ մեծանալով և դառնալով բոլորովին նման այն սերմին, որի վերայ նստել է, բաժանուում է նրանից և սկսում է ապրել արդէն առաջինի նման: Միւս հատիկները կարող են աճել թէ առաջի սերմի վերայ և թէ երկրորդ, նոյն իսկ իրանց բողբոջման ընթացքում: Այն ժամանակը, երբ մայր-բշտիկը արտադրում է սղջիկ-բշտիկ, առաջինի մէջ գոյանում է գասարկութիւն: Այն նիւթը, որը անհետանում է, բողբոջների սնունդի համար է գործադրուում, եթէ միջավայրի պայմանները նպաստաւոր են ¹⁾: Մի բջիջը կարող է արտադրել մի ժամուում 4—5 ուրիշը: Այդ գործողութեան ժամանակ հեղուկի միջից արձակուում է ածխաթթու, և շաքարը փոխուում է ալկոհոլի:

Մենք տեսանք որ ալկոհոլի (գինու, գարեջրի) եւման մայր-խմորը մի կենդանի էակ է, մի բոյս է, որը ունի ամենահասարակ կազմ, մի շատ անկատար սունկ է. և եթէ մենք նրան չբնակեցնենք խմորուղ հեղուկի մէջ, այլ դնենք մի համապատասխան հողի մէջ, նա այս չատուկ պայմանների մէջ չի կարող այլ ևս բողբոջել այնպէս ինչպէս մենք նոր տեսանք մի քիչ վերև, այլ կը բողբոջի այնպէս ինչպէս բոլոր միւս սունկերը:

¹⁾ Պատէօրը պատրաստեց մի տեսակ արեւոտական հեղուկ, որը շատ նպաստաւոր է խմորի աճման համար. Ահա նորա բաղադրութիւնը.

Չտած ջուր (Aqua destillata)	100 կամ.
Վաճառաքար (sucre Candi).	10
Խմորի մոխիր	1
Ապակի ածխաթթու (carbonate d'ammoniaque).	1

Գառնանք սակայն խմորի բողբոջման խմորեղ հեղուկի մէջ: Խմորը մի կենդանի էակ է. ուրեմն, ինչպէս բոլոր կենդանիները, շնչում է. և շնչառութեան համար նա պիտի կլանի թթւածին: Քաղցրացրած հեղուկի մէջ գտնուող խմորը փոխ է առնում թթւածինը շաքարից. այդպիսով շաքարի քիմիական տարրական կազմը կերպարանափոխուում է և խմորի շաքարից թթւածին առնելու հետևանքը լինում է այն, որ շաքարը փոխուում է ալկոհոլի:

Բայց եթէ խմորը և խմորիչը իրանց անման պատճառով առաջանում են խմորումն, չպէտք է կարծել որ նոքա զանազանուում են միև բուսական կամ անասնական բջիջներից. օրինակ, նոցանից, որոնք կազմում են հիւսք (tissus, ткань):

Բոլոր բջիջները ապրում են միակերպ:

Ահա ինչպէս Պարիզի Գիտութեանց ճեմարանի ուսուցչապետ Շիւտցենբերգեր երկու հանձարեղ փորձով, որոնցից մէկը ստուգում է միւսին, ապացուցեց որ խմորի մասնիկները գործում են նոյնպէս, ինչպէս կենդանու հիւսքը կազմող մասնիկները:

Առաջին փորձ.—Մ. Շիւտցենբերգերը անցկացրեց շնչերակի արիւնը (le sang artériel, артериальная кровь) խողովակի միջով, որը չափաւոր աստիճանի տաքացրած էր և միջից ծածկած էր խմորով: Արիւնը դուրս եկաւ խողովակից երակային արեան (veineux, венозный) դրութեան մէջ: Հարուստ թթւածինով մանեխիս, նա, դուրս գալիս, փոխարէնը բեռնաւորւած էր ածխածինով:

Երկրորդ փորձ.—Միւսնոյն դիտնականը անցկացրեց շնչերակի արիւնը մի ուրիշ խողովակի միջով, որը ամեն կողմից նման էր առաջի փորձում գործադրած խողովակին, այն տարբերութեամբ միայն, որ միջից չէր ծածկւած խմորով: Շնչերակի արիւնը դուրս եկաւ խողովակից անփոփոխ, ինչպէս մտել էր:

Առաջի փորձում ուրեմն խմորն էր, որ խլել էր շնչերակի արիւնից թթւածինը, իսկ և իսկ այնպէս ինչպէս անում է անասնի կենդանի հիւսքը:

Բուսական հիւսքի բջիջները վարւում են նոյնպէս ինչպէս անասնականինը:

Ճակնդեղի (la betterave) արմատի մէջ ամբարած շաքարը

սնունդ է հասցնում բոյսի բոլոր մասերին, ճիւղերին, տերեւներին և այլն: Բայց որպէս զի այդ բոլոր մասերը կարողանան աճել, անհրաժեշտ է որ թթւածինը շրջի նոցա մէջ: Եւ ահա տերեւները ծծում են այդ անհրաժեշտ դաղը և միւս կողմից արտադրում են ածխաթթուէն, որը բոյսի մէջ կատարուող քիմիական փոփոխութեան արգասիքն է:

Եթէ ճակնդեղի վերի մասերը, թթւածինի մթնոլորդի փոխարէն, պահած լինեն ածխաթթւի մէջ, այն ժամանակ կը տեսնէք որ նրա աճումը կանգ առաւ, ստեղծ չի մեծանում, տերեւները դադարեցին բուսնել: Այն ժամանակ շաքարը չի գտնի բոյսի խորին մասերում անհրաժեշտ թթւածին իւր խմորման համար և արմատի մէջ նա կը փոխւի ալկոհոլի:

Ուրեմն ճակնդեղի արմատի հիւսքը կազմող բջիջները անում են նոյնը ինչ որ զարեջրային խմորի առանձնացած բջիջները:

Իրանց բնական դրութեամբ վերջիններս գտնուում են պտուղների երեսին, մնից կաշուով բաժանւած. օրինակ սալորը, այն ազոտ գոյնը, որով ծածկւած է նա, պարունակում է իւր մէջ զարեջրային խմորի բջիջներ: Մինչև որ պտուղը կը հասնի, նոքա մնում են պտուղի երեսին, ծածուկ պահպանելով իրանց կեանքը, ինչպէս մենք նկարագրեցինք նոցա մաքուր ջրի մէջ: Բայց ահա պտուղը լցում է քաղցր ջրով, նորա կաշին ձգւում է, բարակում և, վերջապէս ձեղքւում: շաքարը դուրս է ծորում և պատահում է խմորի բջիջներին, որոնք գտնուում են ձեղքի մօտ. խմորը սկսում է բողբոջել շաքարի հաշուով, և վերջինս կերպարանափոխուում է ալկոհոլի:

Արդեօք դուք չէք նկատել զանազանութիւն հասած և ձեղքած պտուղի մէջ և հասած ու ձեղքածի մէջ: Առաջինը ջրալի և համեղ է. նա քաղցր և ընտիր համ ունի: Իսկ պայթած պտուղը փոքրիշատէ լակ է, նրա ծորող հիւթը կծու համ ունի և նրա բաց մնից դինու հոտ է փչում: Այս փոփոխութիւնները երկու պտուղի մօտ յատկութիւնների մէջ ծագել են ալկոհոլային խմորման պատճառով: Իսկ վերջինս առաջ եկաւ նորանից որ խմորի բջիջները հնարաւորութիւն ունեցան կպչել պտուղի շաքարին:

Յայտնի են զանազան տեսակ խմորիչներ:

Այն որ շատ յաճախ գտնուում է պտուղների երեսին կոչւում

է խմորիչ-ապիկուլէ (sarpozym apiculatum): Նոքա նման են կիտրոնի սերմի, այսինքն ձևաձև են և իրանց ծայրերին ունեն փոքրիկ պտուկներ: Երբ նոքա սկսում են աճել, նոցա ծայրերին բուսնում են փոքրիկ բողբոջներ, մինչդեռ շատ սակաւ է պատահում որ գարեջրային խմորիչի բողբոջումը սկսի նորա սերմերի բևեռներից:

Գինու սովորական ալիոնոլային խմորիչ, խմորիչ-էլիպսոիդ (Saccharomyces elipsoides de Rees), շատ նման է գարեջրային խմորին:

Խմոր-միկոսերմը (Saccharomyces mycaderma), որը շատ մեծ քանակութեամբ գտնուում է աղար գինու մէջ, կողմաձև է երկար և իրանց մեծ առանցքի երկարութեամբ փոքր ինչ ճոււղ սերմերից:

Ալիւրի խմորը (Saccharomyces minor) կազմւած է կոլոլ սերմերից, աւելի փոքր քան վերջիններս: Նոքա բազմանում են գարեջրի խմորի նման:

Մեր նախագծած շրջանի մէջ չէ մտնում խմորիչների համեմատական ուսումնասիրութիւնը. մասնաւորապէս, խաղողի հիւթի գինու վերափոխելը խմորման շնորհիւ, ինչպէս և ալիւրի՝ հաց դառնալը: Մենք միայն տալիս ենք այստեղ խմորիչների ընդհանուր ուսումնասիրութիւնը: Ուրեմն մենք կը բաւականանանք նրանով, որ մինչև հիմայ նկարագրածին կ'աւելացնենք յետագայ հիմնական բաները:

Ըստ Պաստէորի 105 գրամ խաղողի շաքարը խմորելով արտադրում է.

Ալիոնոլ	51
Ածխածնութու	49
Գլիցերին	3
Սաթային թթու	1
Նիւթեր իւրացրած խմորի կողմից	1
	105

100 գրամ եղեգնային շաքարը ունի միևնոյն արդիւնքը, ինչ որ 105 գրամ. խաղողի շաքարը:

Իւր աճման համար խմորը, ուրիշ կենդանի էակների նման, արտաքոյ աշխարհից պիտի ստանայ այն քիմիական տարրերը, որոնցից նա կազմւած է, այսինքն՝ իբրև հիմնական տարրեր, նա պիտի ստանայ ածխածին, թթւածին, ջրածին և բորակածին: Բայց շա-

քարը բաղկացած է միայն առաջի երեք տարրերից, որոնց խմորը իւրացնում է. ապա նրանցից է նա ստանում բորակածինը:

Պաստէօրը փորձեց թողնել որ բողբոջի խմորը լուծւած վանաշաքարի մէջ, որի վերայ աւելացրել էր աւշարի աղ (tartarte d'ammonoque) և նկատեց որ վերջինս անհետացաւ բողբոջման ընթացքում: Յայտնի է որ աւշարի աղը բորակածին պարունակող մարմին է. սորանից կարելի է եզրակացնել որ խմորը, իւր խմորման ժամանակ, ածման կարիքը լրացնելու համար անհրաժեշտ բորակածինը վերցնում է բնական շաքարի մէջ գտնուող աւշարից:

Եթէ յայտնի նիւթեր զօրեղացնում են խմորումը, ընդհակառակը կան և այնպիսիք, որոնք նսեմացնում և անգամ դադարեցնում են նրան:

Չուրը, մի անհրաժեշտ և հիմնական պահանջ լինելով բոլոր կենդանի մարմինների համար, շաքարի հետ միասին մի ամենաանհրաժեշտ տարր է նաև խմորիչի սնունդի համար: Բայց յայտնի պայմաններում այս երկու մարմինները կարող են արգելք դառնալ խմորի բողբոջման համար:

Օրինակ. եթէ շաքարը չափից դուրս շատ է, չիշած բջիջները չեն կարող ստանալ իրանց սննդարար մասերը, որովհետև շաքարը, իբրև ազահութեամբ շուրը ծծող մի մարմին, կուռում է կենդանի տարրի հետ, խլելով նրանից իրան անհրաժեշտ շուրը և պահելով իւր մէջ: Եւ այսպիսով, այս սնունդով լիքը միջնավայրում, խմորը քաղցած, ծարաւ և անշունչ մնալով մեռնում է:

Յայտնի է որ քաղցրաւենիները և շաքարով պատրաստած պտուղները խմորեւելուց (թթւելուց) ազատ պահելու համար չափազանց շաքար են դործ ածում և թանձրացնում շուրը:

Թանձր ալկոհոլը զսպում է խմորումը. այդ է պատճառը, որ օդի մէջ զրած մրքեղենները պահւում են բաժակներում, որ նոքա լողում են ալկոհոլի և շաքարի սիրուպի մէջ:

Թթուները, եթէ, մի քիչ թանձր են. նոյնպէս արգելք են լինում խմորի բողբոջման. մանրիկ կամ խոշոր վարունդները, քացալի մէջ պահած, շատ համեղ ուտելիքներ են, մինչդեռ, եթէ նոցա թողնենք օդի մէջ, խմորման ազդեցութեան տակ, շատ շուտ կը փոխեն իրանց համը:

Մովի աղը կամ բորակը աննպաստաւոր են ալիոհոլային խմորման համար:

Վերջապէս, չը մոռանանք աւելացնել, որ բնական գործոնները, տաքութիւնը մանաւանդ, նոյնպէս ունեն իրանց ազդեցութիւնը:

Ձերմութեան ամենանպաստաւոր պայմաններն են խմորման համար 25°—35° աստիճանները ըստ Ֆելսիուսի: 10°-ից դաժ կամ 60°-ից բարձր աստիճանները մահացու են խմորի բջիջների համար:

Ներակացութիւն. խմորումը է ամի շարք քիմիական երևոյթների, որոնք ծագում և զարգանում են կենդանի մարմինների ներգործական ազդեցութեան շնորհիւ (Dr. Dubief 1):

Ալիոհոլային խմորումը պարզում է այդ երևոյթը ամենատարական կերպով:

Մնում է մի կէտ ևս, որը մենք կամենում ենք հաստատ ապաւորել մեր ընթերցողների մտքի մէջ. այդ այն է որ կենդանի բջիջների ներկայութիւնը խմորման գործողութեան մէջ ամենստանհրաժեշտ պայմանն է: Եթէ կենդանի բջիջը այստեղ խմորման գործոն է, ապա ուրեմն և, ընդհակառակը, չըկայ խմորում առանց բջիջի գործողութեան:

Գարձեալ Պաստէօրն է, որը տեղ գիտնական ապացոյց այդ բանի համար, որովհետև, երբ նա զուտ միներալային հեղուկի մէջ (տես յօդածի 3-րդ երեսը, ծանօթ.) ցանեց զարեջրի խմորը, վերջինս առաջացրեց խմորման երևոյթ:

Մենք կը տեսնենք IV՝ զլխում և մանաւանդ Մ. Կամբիէի աշխատութեան մէջ՝ «Սոյալին Միկրոբների մասին» 2), ինչպէս Պաստէօրը ապացուցեց որ նրա արեեստական հեղուկի (boullon de culture) նման հեղուկի մէջ ոչ մի խմորում չի կարող ծնել ինքնիշխան:

1) Dr. Dubief.-Manuel pratique de micro. biologie.

2) „Des microbes de l'air“, par M. Cambier, որը մենք մտադիր ենք թարգմանել:

Բ. գլուխ.

ԽՄՈՐՈՒՄՆԵՐԸ ՄԱՍՆԱԻՈՐԱՊԷՍ

Քացախի գոյանալը կամ քացախային խմորում.—կաթնային խմորում, թան.—խլ-
դային խմորում.—Մէզի աւշային խմորում.—Փտիլը:

Գինուց քացախ ստանալու համար, շիշերը լցնում են զինով
և բերանները բաց թողնում: Մի քանի շաբաթից չետոյ, եթէ
շիշերի մէջ վաղօրօք մի քանի կաթիլ պատրաստի քացախ է դցած,
զինին բոլորովին կերպարանափոխուում է: Այս գործողութեան ընթաց-
քում ալկոհոլից առաջ է գալիս քացախային թթու (քացախի քի-
միական անունն է): Իմորումն է դորա պատճառը: Մի խմորիչ, այ-
սինքն կենդանի բջիջների մի դաղութ, ցրելով զինու մէջ, սկսեց
կերակուել, ապրել և բազմանալ անկոհոլի հաշուով: Սակայն այստեղ
միջամտեց մի այլ օժանդակիչ գործոն, որ է օդի թթւածինը:

Մինչդեռ գարեջրի խմորը իրան հարկաւոր թթւածինը գըս-
նում է նոյն շաքարի մէջ և միմիայն շաքարի մէջ, քացախային
խմորիչը (mycoderma aceti), ընդհակառակը, զինին քացախ դարձ-
նելու համար թթւածինը վերցնում է օդից և շնորհում ալկոհոլին:

Առաջ ծանօթանալք քացախային խմորիչի հետ, որը բակտե-
րիաների խմբին պատկանող մի մանր էակ է (միկրոբ):


Երևակայեցէք թափանցիկ հատիկների մի շարք իրար կպած,
ամեն մի հատիկը զլանաձև երշիկի նման, որոնցից իւրաքանչիւրի
տարածութիւնն է 15—25 միլիմետր (մի միլիմետրը — մետրի հա-
զարերորդ մասն է կամ մի սանտիմետրի տասներորդ մասը): Այսպէս
երևում են քացախային խմորիչները այն մաժուցիկ թաղանթի
մէջ, որը լողում է քացախի երեսին:

Այդ խմբի անհատները (քացախի խմորիչները) չեն բազմա-
նում բողբոջմամբ, ինչպէս գարեջրային խմորի անհատները, այլ
բաժանմունքով. նախ կազմակերպւած բջիջի շուրջը երևում է մի
հասարակածային դիժ, չետոյ այդ ախտը սկսում է խոր ընկնել մին-
չև որ առաջի բջիջը բաժանուում է երկու աղջիկ-բջիջի, որոնք
մեծանալով հասնում են իրանց մայր (առաջի) բջիջի մեծութեան:

Այժմ տեսնե՛ք թէ ինչպէս է այդ մարմինը, որի մասին խօ-

սում ենք, կատարում զինու խմորումը, երբ նա ցանած է լինում վերջինիս մէջ:

Խմորիչը օդից կլանում է յայտնի քանակութեամբ թթւածին և միւլենոյն ժամանակ զինուց վերցնում է այնքան ջրածին, որքան հարկաւոր է, որ ջրածինը և թթւածինը քիմիապէս միաւորելով կազմեն ջուր, որ ասել է թէ քաշով մի մաս թթւածինին հարկաւոր է երկու մաս ջրածին: Այդ միւլենոյն մանրամարմինը վերցնում է օդից էլի մի մաս թթւածինի, որը ծառայում է քացախային թթու գոյացնելուն: Այսպէս ուրեմն քացախային թթուն պարունակում է իւր մէջ երկու մաս ջրածին և մի մաս թթւածին աւելի քան ալկոհոլը: Ահա հակազդեցութեան (réaction) ցանկը.



Քացախը կարող է ստացել և առանց խմորիչի միջնորդութեան. ահա այն դասական փորձի «կզբունքը որով ալկոհոլը փոխում է քացախային թթւի սև լանոսկու¹⁾ միջոցով (l'amousse de platine):

Ալկոհոլի գոլորշին օդի հետ խառը անց են կացնում սև լանոսկու վրայով առանց տաքացնելու: Այդ ժամանակ ալկոհոլը կորցնում է իւր թթւածինի մի մասնիկը երկու մասնիկ ջրածինի հետ (ջուր) և, փոխարէնը օդից ընդունելով երկու մասնիկ թթւածին, փոխում է քացախային թթւի: Այսինքն կատարում է միւլենոյն բանը, ինչ որ անում են մանրամարմինները:

Բայց այդ չէ սովորական միջոցը արևեստական քացախ պատրաստելու համար:

¹⁾ Սև լանոսկին ստացւում է հետևեալ կերպով. երբ ջրի մէջ լուծւած խլորային լանոսկին մաքրելու համար եփում են անկաղի և շաքարի հետ, ստացւում է մի սև փոշի, որը և անւանում ենք սև լանոսկի (la mousse de platine կամ noir de platine): Այդ գրութեան մէջ լանոսկին կլանում է իւր մեծութիւնից 740 անգամ աւելի ջրածնային գազ: Առհասարակ ընդունւած է որ այդ գազը գոնւում է այնտեղ ճնշւած գրութեան մէջ, հազար ատոմսֆերայից աւել:

Ման. Հեղ.

Այն նիւթը, քացախի մայր անունով, որը մրուրի նման գուն-
ւում է քացախի տակաւների մէջ, կարող է ալիոհոլը քացախ դարձ-
նել, որովհետեւ նա պարունակում է իւր մէջ քացախալին խմորիչ:

Ալիոհոլից քացախ ստանալ կարելի է նոյնպէս, երբ, քացախի
մայրի տեղ, գործ ամենք ուրի տաշեղ, որովհետեւ, ինչպէս ասպ-
ցուցեց Պաստէօրը, այդ տաշեղը ծածկւած է նոյն խմորիչներով:

Այս դիւրի սկզբում ասացինք որ զինին քացախ դարձնելու հա-
մար հարկաւոր է փաղօրօք նորա մէջ զցել մի քանի կաթիլ քացախ:
Նա միայն նորա համար չէ որ այլալիսով խմորման բողբջում ասա-
ջացնենք, այլ և նորա համար, որ թթու հեղուկի մէջ քացախալին
խմորիչները աւելի լաւ են զարգանում:

Զր թթւացրած զինու մէջ, խկապէս, քացախալին խմորիչը
կարող է հանդիպել մի թշնամու, որի մասին խօսեցինք անցեալ
գլխում. դա զինու միկոգերմն է, որը առաջացնում է խմորում
իւր տեսակին համեմատ և տալիս է այլալիսով տկար զինու խմորում
և ոչ քացախալին խմորում, որին նա հակառակ է: Քացախալին
թթուն սպանում է զինու միկոգերմին. և հաճ ինչու քացախի մի
քանի կաթիլը պատրաստում է զինու մէջ նպաստաւոր կենսական
ասպարէզ քացախալին խմորիչի համար:

Այս վերջին մանրամարմինը (միկրօօրգանիզմը) չէ բաւականա-
նում նրանով որ թթւածին է շնորհում ալիոհոլին, իւր սնունդի
համար փոխելով նրան քացախի, այլ նա ապրում է նոյնպէս և իւր
պատրաստած քացախի հաշուով, երբ այլ ևս չէ գտնում ալիոհոլ:

Ալիոհոլի խմորման այն վերջին աստիճանում, խմորեղ հեղուկը
բոլորովին սպաւում է, փոխադրելով զազալին թթւածինի և
ջրի: Այն միևնոյն ալիոհոլալին վերջնական կերպարանափոխ ին է
տեղի ունենում, երբ ալիոհոլը այրում են օդի մէջ:

Այրելով ալիոհոլը մենք քիմիապէս նրան արագ քայքայելով վե-
րափոխում ենք իւր թուուցիկ մասերի. մի բան որ խմորը կառու-
րում է նոյնպէս միայն շատ դանդաղ կերպով, նախապէս ալիոհոլը
քացախ դարձնելով: Ալիոհոլի կապոջա բոցը մի լուսալին և գունա-
ւոր երևոյթ է, որը ուղեկցում է ամիւսածինի գոյանալուն ալիոհոլի
արագ այրելու ժամանակ:

Այժմ անցնենք միւս խմորումների արագ տեսութեան, վերցնելով միայն ամենայայտնիները նոցանից:

Թթւած կաթը կամ թանը (մաճոն), որից Նէէլը առաջինը ստացաւ կաթնային թթու (l'acide lactique) 1780 թւին խմորման արգասիք է, որը պարտա՛յան է կաթի բացիլլին (bacillus lacticus), ինչպէս այդ ապացուցեց Պաստէօրը:

Կաթնային խմորման հետեանքն է նաև կանաչ կաղամբի թթու կաղամբի փոխելը և բրինձի ջրի թթւելը:

Այն տարբեր երևոյթների մէջ կենդանի տարրերը չարձակուում են շաքարի վերայ, վերափոխելով նրան կաթնային թթւի, առանց սակայն փոխելու թթւածինի, ջրածինի և ածխածինի համեմատական չափերը:

Վերջին երևոյթը ըմբռնելու համար, համեմատե՛ք կաթնային կամ խաղողի շաքարը կերպասի հետ, որը հիւսւած է երեք գոյնի թելերից: Երևակայեցէ՛ք թէ այդ գոյները դասաւորւած են մի յայտնի կարգով, որը կրկնուում է այդ կտորի երկարութեամբ շերտերի նման: Մի երևակայական արւեստագործ, դիցուք, քանդում է այդ հիւսքը կազմող բոլոր թելերը, որ յետոյ միեւնոյն թելերից կազմի մի ուրիշ կերպաս, ամեն կողմից նման առաջինին, միայն այն տարբերութեամբ, որ գոյները դասաւորւած լինեն ուրիշ կերպ: Դիցուք նա ամեն մի շերտը կազմելու համար գործադրում է առաջւակ թելերի կէսը, այդպիսով կրկնապատկելով շերտերի թիւը: Այն սպաւորութիւնը որ կը գործի մեր աչքերի վերայ նոր հիւսւածքը, բոլորովին կը տաշբերւի առաջինից, չը նայած որ միեւնոյն տարրերն են միայն դասաւորւած ուրիշ կերպով: Նոյն տեսակի գործ է յանձն առնում կաթնային բացիլլը կաթնային շաքարի (լակտոզ) կամ խաղողային շաքարի (գլուկոզ) տարրային կազմացքի վերաբերեալ՝ նոցա կաթնային թթւի վերափոխելու համար:

Կաթնային բացիլլը բաւականին նման է քացախային խմորիչին, միայն նոքա չեն ապրում շարքով կապւած միմեանցից, այլ մէկը միւսից անկախ:

Ուրիշ մանրէակներ էլ ընդունակ են կաթնային խմորում առաջացնելու: Նոքա զանուում են նոյնպէս մարդուս լորձունքի մէջ: Կէ՛նիւրի ւտեմը, որը շորացրած և փշրած խմոր է, նման գարեջրի

խմորին, ապրում է մի ուրիշ մանրամարմնի հետ միասին և գործ է ածւում Հիւսիսային Կովկասում. նորանով խմորւում է ոչխարի և այծի կաթը, որը, փոխելով թթւաշ և զազով հարուստ հեղուկի, գործ է ածւում իբրև խմիչք:

Կուժիսը, որը յայտնի է իբրև բժշկական միջոց որոշ հիւանդութիւնների դէմ, պատրաստւում է նոյնպէս խմորման միջոցով մատակ ձիւ կաթից:

Բացիլլ ամիլոբակտեր անուևով բացիլլը նման է գլանաձև փայտի. որը մի ծայրում ոււշում է երբ բացիլլը սկսում է սերմ արտադրել: Կա դառնահամ իւղի մանրէակն է, որտեղից և անոււնն է՝ իւղային խմորում. վերջինս տւած է նորա շնորհիւ որ այդ բացիլլի զարգանայն է զլիսաւոր կամ նպաստաւոր պատճառը իւղի քիմիական փոփոխման:

Այդ մանրէակը գեր է կատարում և պանիրի խմորման մէջ: Նա գործում է նոյնպէս և բուսական բջիջի մէջ, որի ներսը նա քանդում է բնախօսական (physiologique) շատ հետաքրքիր հնարքով, նման լորձուկքի կատարած պաշտօնին ալիւրի մարսելուն մէջ:

Լորձային գեղձերի արտադրած լորձուկքը պարունակում է այնպիսի գործոն, որը ընդունակ է ալիւրը կամ օսլան դարձնել շաքար (զլուկոզ): Ալիւրը, ջրի հետ խառնած, չէ կարող այս դրութեամբ անցնել մարսողութեան գործարանի որմերը, որպէս զի մտտակարարի արիւնին հեռաւոր հիւսքերի սնունդի համար անհրաժեշտ հիւթեր, մինչև շաքարի փոխելով նա լուծւում է ջրի մէջ և կարողանում է հեշտութեամբ անցնել մարսողութեան խողովակի ծակոտիները և հարստացնել արիւնը վերանորոգիչ հիւթերով:

Լորձային գեղձերի նման, բացիլլ ամիլոբակտերը արտադրում է մի քիմիական հիւթ, որը ընդունակ է ալիւրը կերպարանափոխել շաքարի: Իսկ ցելլուլոզը, որով կազմւած են բուսական բջիջների որմերը, ալիւրի բնութեամբ մի մարմին է, ուրեմն նա ևս կարող է յիշած մանրէակի ազդեցութիւնից փոխել շաքարի: Ալիւրը շաքարի վերայ փոխելուց յետոյ, բացիլլը առաջացնում է նորա մէջ խմորում, որը օգտակար է իւր աճման համար:

Վան-Տիգհեմը, գիտութեանց ճեմարանի անդամ, Պարիզի թանգարանի ուսուցչապետը, մանրամասն բացատրեց մեզ հետաքրքրող միկրոբի գործունէութեան ձևը, գործունէութիւն, որով մարդս

օգտուում է կանեփը կամ կտաւատը թրջելու համար: Այս վերջին գործողութիւնը կայանում է նրանում որ հիւսելի բոյսը, քաղելուց յետոյ, ածում են կանգնած ջրի մէջ: Այս պայմաններում բացիլլ ամիլոբակտերը քանդում է բջիջային հիւսքերը կապող միջամասը (substratum), վերջինս վերափոխելով շաքարի. յետոյ ջուրը, լուծելով շաքարը, հիւսքերը բաժանում է միմիանցից և հանում է բջիջների մէջ պարունակող հիւթերը. այսպիսով հիւսելի թելերը առանձնանում են:

Երկրախօսական (géologique) ամենահին ժամանակներում ևս գոյութիւն է ունեցել բացիլլ ամիլոբակտերը. այդ երևում է նրանից, որ քարածխային շրջանի բոյսերից մնացել են միայն ոչ-բջիջային մասերը:

Վերջապէս այդ միեւնոջն մանրէակն է, որ որոճող (խոտածարակ) կենդանիների ստամոքսի մէջ մարսում է, ինչպէս լորձուկը մարդու մօտ, բոյսերի օւլային մասերը, որով կերակրւում են կաթնատուները:

Այս երկու հետաքրքրական գիտնական երևոյթները, ինչպէս և նախընթացը, բացատրւած են ուսուցչապետ Վան-Տիգհեմի կողմից:

Մենք չենք կարող փակել բացիլլ-ամիլոբակտերի պատմութիւնը, չիշատակելով այստեղ Լ. Պաստէօրի երևելի գիւտի մասին:

Մինչև այս գործերը, որոնց մասին մենք ակնարկեցինք, կարծում էին թէ առանց օդային թթւածինի ոչ մի կենդանի էակ չէ կարող գոյութիւն ունենալ. բացիլլ ամիլոբակտերը, համապատասխանելով կենդանու բոլոր պահանջներին, սակայն ապրում է առանց օդային թթւածինի:

Պաստէօրը սնւանեց անօդակեաց (anaérobies) մանրէակներ նոցա, որոնց տիպն է իւզային խմորման բացիլլը, որը բուսական և անասնական խորին հիւսքերը կազմող հերցական անատոմիական տարրերի նման, ապրում է առանց օդի:

Խմորիչները կամ մարմինները, որոնք ապրելու համար անմիջապէս պիտի օգտեն օդային թթւածինից—ընդհակառակը, կուտւում են օդակեաց (aérobies):

Մենք նոր տեսանք թէ բացիլլ ամիլոբակտերը արտադրում է

մի բան որը շատ նման է լորձացին գեղձերի արտադրածին և փոխադրում է, ինչպէս այս գեղձերը, ալիւրը՝ խմորելու ընդունակ շաքարի: Համանման կերպով է գործում և մէզի միկրոկոկը միզային հեղուկի խմորումը առաջացնելու համար:

Այս խմորիչը բաղկացած է բջիջներից, որոնք, մեծութեամբ 2 հազարական միլլիմիտր, կազմում են ծամածուած կամ գծկած շղթթաներ. դա կոչու միկրոբների տիպ է ներկայացնում:

Դորա ներգործութիւնը կայանում է նրանում, որ դա վերլուծում է մէզի մի տարրը, որը կոչւում է մէզատարր (МОЧЕВИНА, l'urée):

Մէզատարրը գործարանների չը իւրացրած մասն է կազմում: Ինչպէս յայտնի է, արիւնը մի կողմից սնունդ է մատակարարում կենդանի մարմնի բոլոր մասերին, իսկ միւս կողմից նա մարմնի միջից ժողովում է այն տարրերը, որոնք մնացել են հիւսքերի սնունդից: Մէզատարրը այս վերջինների թւին է պատկանում: Մէզը մէզատարրի հետ միասին հեռացնում է մարմնից այն բոլոր չը իւրացրած տարրերը, որոնք չեն քշւած մարմնից թոքերի միջոցով, ինչպէս ածխաթթուն և ջրաչին գոլորչին, և քրտինքի միջոցով իբրև հեղուկ: Մենք չենք խօսում կղկղանքի մասին, որովհետև նոքա արտաբւում են առանց հիւսքերի մէջ մտնելու:

Մէզը պարունակում է իւր մէջ զանազան աղեր ջրում լուծւած զրութեան մէջ, նոյնպէս և մէզատարր. վերջինս քանակութեամբ մօտաւորապէս 30 գրամ 24 ժամուայ ընթացքում, երբ մարդը առողջ է: Մէզատարրը, որը կարող է ստացւել թափանցիկ ասեղների ձևով, մի գործարանական (օրգանական) մարմին է, որ ասել է թէ նա պատրաստում է կենդանի մարմնների միջոցով, ինչպէս օսլան, ճարպը և այլն... Միայն օգտակար տարր չէ, այլ ընդհակառակը, վնասակար:

Շատ ժամանակ բժիշկը ստիպւած է լինում քննել հիւանդի մէզը, որպէս զի իմանայ թէ արդեօք մէզատարրի քանակութիւնը չէ շատացել մեզի մէջ, որովհետև յաճախ դա է լինում հիւանդութեան պատճառը: Մէզարիւն (l'urémie) կոչւած սարսափելի հիւանդութեան ժամանակ, երիկամուքը չետ է դարձնում արեան այն քիմիական տարրերը, որոնց նա պիտի առնէր մէզ պատրաստ

տելու համար, և այս վերջին հեղուկը (մէզը) մարմնի մէջ կատարում է մահաբեր թոյնի դեր:

Եւ ահա մէզի միկրոկոկը, իբրև խմորիչ, չարձակում է մէզատարրի վերայ և վեր է ածում նրան երկու թուուցիկ մասերի, ածխածթթևի և աւշակի (Ammoniaque), երկու փաստարար գազերի, որոնցից երկրորդը ունի կծու, նեխած և հեղձուցիչ հոտ, որը մտնելով քթապոկերը ծակծկում է յուզաթաղանթը և լացացնում է: Դա այն անտանելի հոտն է, որը փչում է կեղտոտ հրապարակական մէզարաններից:

Իսկ այդ միկրոկոկը միայն օդի մէջ կարող է խմորիչի դեր կատարել և ոչ երբէք մարմնի մէջ. ահա թէ ինչու բնաւ մէզատարրի աւշային խմորում չէ լինում, երբ մարդ պահում է իւր մէզը մշտապահուչութի մէջ:

Վերջին նշանաւոր խմորումը, որի մասին պիտի խօսենք ընթերցողի հետ, է փտիլը. նրան, Պաստէօրի գործերի շնորհիւ, պէտք է դասաւորել մեր նկարագրած խմորման երևույթների շարքում:

Հէնց որ կեանքը անհետանում է մարմնի միջից, վերջինս ժառանգում են անօդակեաց մանրամարմինները, որոնք չարձակելով նրա վերայ, անընդհատ և չաջորդական խմորումներով կամացկամաց այրում են դիակը: Եւ երբ քայքայման գործը կատարելապէս վերջանում է, այն ժամանակ մնում են միայն մեռելակեր մանրէակների սերմերը, որոնք պատրաստ են նորից կենդանանալու իրանց նախկին ձևերով, հէնց որ կը գտնեն համապատասխան հող իրանց զարգացման համար:

Այս, բոլոր մեռած մարմինների տէրերի՝ մանրէակների՝ շնորհիւ, երկրիս մակերևույթը կրկին յետ է ստացել քիմիական տարրերը, որոնք զարգացել են այն բոլորի մէջ, ինչ որ ապրել է մինչև հիմայ, սկսած այն օրից, երբ երկրագնդիս վերայ սկիզբ առաւ կեանքը:

ՏՐԱՄԱԴՐՈՒԹԵԱՆ ԱՏՐՈՒԿ ¹⁾

(Կոմս Լ. Տոլստոյ).

ՎԱՍԻԼ ՎԱՐԴԱՆԵԱՆՅԻ

(Շարունակութիւն և վերջ ¹⁾)

Մի անգամ արդէն ես մէջ եմ բերել Տոլստոյի այն միտքը, թէ բարոյականութիւնը այն հանապազօրեայ ուղեցոյցն է, որ բղխում է կրօնից: Եւ իսկապէս, Տոլստոյի բարոյագիտութիւնը (էթիքա) հաստատում է այդ միտքը:

Ինչպէս յայտնի է, նրա ուսմունքի առաջին և հիմնական պատւիրանն ասում է. «մի ընդդիմացիր բռնութեամբ չարին»: Օրինակ, բան է՝ թէ որ զուլուսը գայ ձեզ մօտ ու աչքներիդ առաջ այրի ձեր որդկերանց՝ միք ընդդիմանայ, որովհետեւ ձեր ընդդիմութիւնը մի եր'րորդ չարիք է, որ օգուտ չի տալ. զուլուսը ուզէք չուզէք ձեր որդկերանց կ'այրի (տես Վնամակ Էնգելզարտին): Եթէ տարականցոց զօրքը գայ խելաւների թաղաւորութիւնն ու սկսի մինչև անդամ հացն այրիլ, անասունը կոտորել՝ խելաւները պաշտպանելու ջանք չպիտի անեն, այլ պիտի լաց լինեն. լաց են լինում ծերերը, լաց են լինում պառաւներն ու մանուկները: Նրանք պիտի ասեն. «ինչո՞ւ էք մեզ նեղացնում, ինչո՞ւ էք Աստծու լաւութիւնն այդպէս փչացնում. թէ ձեզ հարկաւոր է՝ աւելի լաւ կը լինի վեր առնէք, տանէք (Խելաւ Իւանի հէքիաթը, հատ. XII):

¹⁾ Տես «Մուրճ» 1897 թ. № 11—12, 1898 թ. № 1.

Այս հիմնական պատուիրանից սկիզբ են առնում մնացածները. օրինակ նրորորդ պատուիրանն ասում է. «միք դատի և միք դատապարտի. մարդս չի կարող դատաւոր լինել, որովհետեւ յանցաւոր ու մեղաւոր է. դրա համար էլ անվերջ պիտի ամենքին ների: Երաւունքների պաշտպանելը կոխ է, չսրիք, որովհետեւ մարդ չի կարող իր իրաւունքները պաշտպանել առանց ուրիշներին վիրաւորելու և ստորացնելու: Մինչև անգամ թշնամիներին համոզելն էլ չարիք է, չորովհետեւ համոզել թշնամիներին՝ նշանակում է ընդդիմանալ նրանց» (տես «ՌՐՆ է իմ հաւատը»): Հեղինակի կարծիքով այս պատուիրանը ընկերական զոյութեան մի նոր հիմունք է, եւր դատաստան ու պատիժ չկայ չարութեան համար:

Չորրորդ պատուիրանն արգելում է երգել ում կ'ուզի լինի և ինչի համար էլ որ լինի», որովհետեւ երգումը պահպանում է պետական և հասարակական հիմնարկութիւնները, որոնք պաշտպանում են սեփականութիւնն ու աշխատանքը. մինչդեռ պէտք է մարդ իր աշխատանքը կամովին ուրիշներին տայ և աղքատ ու խեղճ կեանք վարի:

Հինգերորդ պատուիրանն արգելում է խորութիւն դնել իր ուստար ազգութեան միջև, որովհետեւ «մարդ պէտք է անխտիր սիրի բոլոր ազգութիւններին և առհասարակ պէտք է մասնակից չլինի որ և է պատերազմի կամ պատերազմի պատրաստութեան»:

Ես ամեն պատուիրանի դէմ առանձին չեմ խօսի, որ չստիպւեմ մի բան մի քանի անգամ կրկնելու, որովհետեւ բոլորի աղբիւրն էլ առաջին պատուիրանն է: Բացի այդ, իմ կողմից ես ոչ մի ընդդիմախօսութիւն չեմ անի, այլ մէջը կը բերեմ հէնց նոյն Տոլստոյի՝ բոլորովին ուրիշ տրամադրութեան տակ ասած խօսքերը և կը յիշեցնեմ Կորոլինկոյի բարձր ոգևորութեամբ լցած տողերը. Իմ կողմից ես միայն ցոյց կը տամ այն աղբիւրը, որից բղխել է Տոլստոյի բարոյագիտութիւնը:

Մտածելով առանց փորձի և դիտողութեան տւած հետեւանքների բացարձակ բարոյականութիւն հիմնադրել, առանց լաւ նկատելու թէ ինչ է անում, Կոմսը սկզբունքի բարձրութեան հասցրեց Նատալիա Սաւիչնայի ստրկական բարոյախօսութիւնը, այն կնոջ՝ որի պատկերը մանուկ օրերից նրա հոգում դրոշմել էր անխախտ:

Բայց ինչո՞ւ սորկի բարոյախօսութիւնը մարդու համար մենք ստորացուցիչ ենք համարում: Արովհետեւ մեր ժամանակը մարդկանց արժանաւորութիւնը հաւասար ճանաչում և նրանց փոխադարձ կտայը այն ժամանակ է միայն բարոյական համարում, երբ երկու կողմն էլ հաւասար են: Բարոյական չի կարող համարուել այն փոխադարձ կապի զղացմունքը, ուր մէկն իշխում է, իսկ միւսը մարդու պատկերը կորցնելու չափ հպատակում. բարոյական չէ՞ որովհետեւ այդ տեսակ կապակցութիւնը ստորացնում է մարդու արժանապատուութիւնը, հետեւագէս մարդկանց շրջանում անարդարութիւն մտցնում: Բացի այդ, իր բարոյագիտութեամբ Կոմսը բացասում է մտքի քննադատութիւնն ու զիտութիւնը, հետեւագէս անհնարին համարում, որ մարդ կարողանայ ըմբռնական համոզմունք կազմել և հէնց զրանով էլ հաստատութիւն է տալիս զարգացման անշարժութեանն ու նրան ընդդիմադրծելուն: Մինչդեռ առանց զարգացման, մտքի քննադատութեան, արդարութեանն ու համոզմունքի ինչ բարոյականութեան մասին էլ ասէք՝ չի կարող խօսք լինել:

Վաղ ինքը Տոլստոյն էլ շատ լաւ էր հասկանում, որ «չարին բռնութեամբ չընդդիմանալու» տեսութիւնը անբարոյական տեսութիւն է: Ղրիմի պատերազմի ¹⁾ ազդեցութեան տակ, պատերազմական, ջերմ հայրենասիրական տրամադրութեամբ բռնաձ, (որ արտայայտում է նաև նրա «Պատերազմ և խաղաղութիւն» վէպում) նա ասում է. «Եւ ոչ թէ երանի այն ժողովրդին, որ 1813 թ. Փրանսիացիների նման, ընդունեա՞ծ բոլոր կանոններով՝ քաղաքավարութեամբ ու նազանքով իր թուրը չանձնում է մեծահոգի չաղթողին, այլ երանի այն ժողովրդին, որ փորձութեան բուռն, առանց հարցնելու թէ ինչպէս են ուրիշներն իրանց պահել նման գէպքերում, միամտութեամբ ու թեթեւակի վեր է առնում ձեռն ընկած կոպայն ու այնքան է աջ ու ձախ գործ զնում, մինչև վիրա-

¹⁾ 1854 թ. ուսաները պատերազմ ունեցան Տաճկաստանի դէմ, որին օգնում էին Ֆրանսիան, Անգլիան, ապա՝ Աւստրիան: Ռուսները մեծ ջարդ էրեցին այդ պատերազմում Ղրիմի Սևաստոպոլ քաղաքի մօտ: Այդ պատերազմը վերջին և ուժեղ հարւածը տուաւ ճորաստիրութեան և աչքարայտ արաւ Ռուսաստանի անզազգացած դրութիւնը:

ւորանքն ու վրէժխնդրութիւնը նրա հոգում փոխուում են դառնում արհամարհանք ու ցաւակցութիւն (Պատերազմ և խաղաղութիւն IV, 168):

Մենք տեսնում ենք, որ Տոլստոյը մի տրամադրութեան տակ մի բան է պնդում, մի ուրիշ տրամադրութեան տակ՝ մի այլ բան: Ո՞ր դէպքումն է սակայն ճիշտ ասում:

Միևնոյն մարդն է հէնց, որ այժմ՝ պնդում է թէ բարոյազիտութեան միակ հիմքը չչարին բռնութեամբ չընդդիմանալու և պատւիրանն է, որովհետև ջուրը ջրով չեն ցամքացնում, այլ՝ կրակով, և ոչ կրակը բոցով հանգցնում, այլ՝ ջրով. այդպէս էլ ուժին ուժով չեն չաղթում, որ չարիք է... Կորուէնկոյի յեսսէների ¹⁾ նման՝ այսպէս են խօսում մեր օրերի յեսսէները:

Տոլստոյի և իր հետևողների այդ պնդումին մենք կը պատասխանենք Մենաքէմի խօսքերով, որ այսպէս էր ասում վաղ ժամանակաց յեսսէներին. «ձեր մտքերը թագնուում են նմանացումների և առակների ետևը, որոնք ձևեր են միայն և զիտութեան ոգի չունեն իրանց մէջ: Դրանք տկեր են, որոնց մէջ կարելի է ամեն տեսակ գինի լցնել՝ լաւ ու վատ. բայց տկին նայելով չի կտրելի միջի գինու լաւն ու վատը՝ իմանալ Գինին գործածութեան մէջ են ճանաչում. այդպէս էլ ոչ թէ նմանացումներով է ճանաչում և սուսացուցում ճշմարտութիւնը, այլ՝ փորձով, որ ճշմարտութեան չարգն է (проба)»: Ձեռքի ուժը ոչ չարիք է, ոչ բարիք. նա ուժ է միայն. չարիքն ու բարիքը նրա գործադրութեան մէջն է: Ձեռքի ուժը չարիք է, երբ գործում է թոյլին նեղելու և կողոպտելու համար. բայց երբ նա վեր է կենում աշխատանքն ու մերձաւորին պաշտպանելու համար, այն ժամանակ բարիք է: Վրակը կրակով չեն հանգցնում և ոչ ջուրը ջրով ցամքացնում. այդ ճիշտ է: Բայց քարը քարով են ջարդում, պողպատը պողպատով անդրադարձնում, իսկ ուժը՝ ուժով!...»:

¹⁾ Յեսսէներ կոչուում էին հրէական մի ազանդի հետևողները, որ ալժմեան հետազօտողների ասելով՝ հին հրէական ազգային կուսակցութիւնն էր կազմում: Նա սկիզբ է առել Բ դարում Ք.-ից առաջ, նրանք շատ էին զբաղում մանաւանդ Աստածաշնչի այլաբանական մեկնութեամբ ու նրա բարոյական վարդապետութիւնով:

Տոլստոյի պատւիրանների մասին խօսելիս, ես երկրորդի մասին ոչինչ չասիւ։ Այդ պատիրանը պահանջում է խառն կատարել զոյգ-զոյգ ապրելու օրէնքը, արգելելով կնոջ հետ ամուսնական կապից դուրս՝ ուրիշ կապ ունենալու ամեն նկրտում։ պահանջում է ապրել մի կնոջ հետ միայն, արգելում է նաև ամուսնուց բաժանուելը։ Բաւական է, որ տղամարդը սեռական կապ հաստատեց կնոջ հետ, կամ կինը տղամարդու հետ, էլ այնուհետև այդ կապը չաւխտեան անփակտելի պիտի մնայ։ Ինչ պակասութեան տէր էլ որ լինի ամուսիններից մէկն ու մէկը, միւսն իրաւունք չունի նրան թողնելու։

Այդ պատւիրանի մասին ես ոչինչ չասի, որովհետև միտք ունէի շատկապէս երկար խօսել նրա մասին։ Եթէ չիշում է ընթերցողը, «Պատանեկութեան» մասին խօսելիս ես ցոյց տւի, որ Վոմսի այն ժամանակէն վերաբերմունքը դէպի սեռական սիրոյ զգացմունքը համարեա բացասական էր։ Խեղճ Աննա Կարենինայի ¹⁾ վիպական անցքի ձակատին նա հետևեալ սպառնական բնաբանն է դնում. «Իմ է վրէժխնդրութիւն և ես հատուցիցս։ Ո՞րն է իմ հաւատը՝ յօլւածում մի շատուկ պատւիրանով նա պահանջում է, որ ամուսինները միշտ փոխադարձ հաւատարմութիւն պահպանեն։ Վերջապէս Վրէյցերեան անատում ²⁾ սիրոյ վրայ հիմնած պատկը նա անւանում է «զագրելի» և նոյն իսկ սեռական սիրոյ զգացմունքը «անբնական» ու «խոզային», ուստի և պահանջում է որ մարդիկ ոչնչացնեն, անհետացնեն այդ զգացմունքը։

Մի քիչ կանգ կ'առնեմ այստեղ, որ Աննա Կարենինայի անցքը դիտելով՝ պարզեմ թէ ով է այն Ատուածը, որ անբախտ կնոջ գըլխին այնպիսի խիստ պատուհաս բերաւ. մի կնոջ, որ խելացեղ սիրելով Վրոնսկուն՝ դուաճանել էր իր մարդուն, որին երբէք չէր սիրած, և ողջ էութեամբ անձնատուր եղել իր սիրածին, աւանց իր զգացմունքները մարդկանց աչքից ծածկելու։ Աննային պատուհասող ասուածը Սէր-անձնուրացութիւնն է։ Աննան չանցանք է գործել

¹⁾ Համանուն վէպի հերոսուհին է։

²⁾ Վոմսի ու զրւածներից մէկն է, ուր իր հերոսի բերանով խիստ քննադատութեան է ենթարկում ժամանակակից ամուսնութիւնն ու նրա պայմանները։

այդ Աստու երրորդ պատերանի դէմ, ուստի և պիտի կորչի՝ «իմ է վրէժխնդրութիւն և ես հատուցից»:

Այդ Ասուածը սեռական սիրոյ վրայ հիմնած պսակը «զազրելի» է անւանում և իսկական համարում միայն այն մարդկանց պսակը, ոյ՞նք նրանում «Աստու առաջ պարտաւորեցնող խորհուրդ» են տեսնում: Այդ Ասուածն ասում է. «Եթէ աղջիկը հասել է, նրան պիտի մարդու ապր: Վաղ ժամանակները հէնց այդպէս էլ անում էին: Ամբողջ մարդութիւնը այդպէս էր անում և մինչև օրս էլ անում է. այդպէս են՝ չինացիք, հնդկացիք, մահմեդականները, մեր ժողովուրդը. այդպէս է անում ողջ մարդկային ցեղը, առնւազն՝ նրա 0,99 մասը: Մարդկութեան մի հարիւրերորդ մասը, կամ դեռ աւելի քիչն է միայն՝ մենք, անառակներս ենք, որ այդ լաւ չենք համարել ու նոր ձև ենք հնարել... Ե՛րբ ամուսնանում են Գոմոսոթոյի համաձայն, այն ժամանակ փետրէ բարձերը, բաժինքն ու անկողինը, այդ ամենը խորհուրդին համապատասխան մանրամասնութիւններ են միայն» («Կրէյցերեան տոնատ»):

Պարզ է արդէն այս քաղաածներից, որ բնական անտեսութիւնը, ճորտատիրութիւնն ու բարոյազիտութիւնը գաղափարացնող Ասուածը գաղափարացնում է նաև ընտանեկան կեանքի գոմոսարօջական հիմունքները: Պաշտպանելով Գոմոսոթոյն ու ճգնակեցութիւնը, իր ցանկութեան հակառակ և առանց նկատելու թէ ինչ է անում, Տոլստոյը դառնում է աշխատանքի հասարակական բաժանման կողմնակից: Խորհուրդ տալով որ մարդիկ անհետացնեն սեռական սիրոյ զգացմունքը, նա առաջուց զուշակում է, որ կարող են ընդդիմախօսել իրան ասելով թէ չէ՛ որ այն ժամանակ մարդկային ցեղը կը վերջանայ: Այդ հակաձառութիւնը նա հերքում է հետևեալ ապացոյցներով. «Եոյն իսկ դատելով որպէս էւոլյուցիոնիստ, ասում է նա, պիտի ընդունենք, որ կենդանիների ամենաբարձր, այն է՝ մարդկային ցեղը, միևս կենդանիների դէմ մղած կռուում դիմանալու համար, մեղդունքի պարի նման պիտի սերտ խմբել և ոչ թէ անվերջ բազմանայ, պիտի աշխատի մեղդունքի նման անսնո անդամներ ղատտիարակել, այսինքն պիտի ձգտի զգաստութեան և ոչ թէ վավաշտութիւն գրգռի, ինչ որ անում է մեր ներկայ կեանքի ամբողջ կազմը»:

Տոլստոյի այս մտքերը հենց իր տաճ ապացոյցներով կը հերքէինք: Սկսենք «Աննա Կարենինայից»: Ի՞նչն էր նրա անբախտութեան իսկական պատճառը: Վէպից այն ենք իմանում, որ այդ պատճառը նախ աստուծոյն ամուսինն էր, որ սկզբում համաձայնել էր նրանից բաժանել, իսկ ապա հրաժարւեց, պատճառ բռնելով պատկի մասին իր ունեցած հայեացքը թէ ընա մի խորհուրդ է, որ մարդկանց պարտաւորեցնում է Աստու առաջ: Նոյն ամուսինն էր դարձեալ, որ չէր տալիս Աննային նրա ջերմ սիրած որդուն, թէև ինքը որդու վերաբերմամբ սառն ու անկարեկից դիրք ունէր բռնած:

Աննայի մահուան երկրորդ պատճառը, որ համարեա համազօր է առաջին պատճառին՝ նրա շրջապատի անառակ հասարակութիւնն էր. մի հասարակութիւն, որ ամեն բան կը ներէր, բայց ոչ Արոնսկուն խելացիդ և, որ գլխաւորն է, աշկարա սիրելը: Սրանց առաջ Աննայի սխալը, որպէս նրա անբախտութեան պատճառ, բոլորովին աղօտանում է: Եօշափելով երևոյթի անհատական կողմը, բարոյախօս-Տոլստոյը լիովին աչքաթող է արել նրա հասարակական կողմը, թէև որպէս արևատաղէտ նա այդ կողմը շատ լաւ է նկարագրել:

Կոմսի խորհուրդը՝ թէ անհետացրէք սեռական սիրոյ զգացմունքը, կարելի է հերքել նրա տաճ մի այլ խորհուրդով, որ նոյնպէս կանանց է վերաբերում. այն է՝ որքան կարելի է շատ երեխայ բերէք ու դաստիարակէք. կարելի է հերքել նաև շրջանական բախտաւորութեան 1) բազմութիւն նկարագրութիւններով, որ արել է նա և Նատաշա Բեզուխովայի 2) նման մի բեզմնաւոր էգի պատուին երգած օրհներգներով: Բացասելով սիրոյ ազատութիւնն ու այդ զգացմունքը սղմելով Գոմոստրօյի հնցած շրջանակի մէջ, Տոլստոյը մի անգամ ևս հաստատութիւն տալով մարդու արժանապատուութեան տևողակի ստրկացմանը չանուն կեանքի կենսաթափ ձևերի: Երկու սեռի փոխադարձ վերաբերմունքի խնդրում Տոլստոյը մի անգամ ևս ցոյց տալով, որ ինքը տրամադրութեան ստորուկ է: Մի տրամադրութիւն նրան օրհներգներ է երգել տալիս սեռական սիրոյ զգաց-

1) Այդ խորագիրն ունի Տոլստոյի վէպերից մինը:

2) «Պատերազմ և խաղաղութիւն» վէպի գործող անձերից մէկն է:

մուկներն, մի ուրիշ տրամադրութիւն անէ՞քներ է ուղղել տալիս զէպի նոյն զգացմունքը:

Տոլստոյի պատմական փիլիսոփայութիւնը, որին Շելգու.նովն ¹⁾ իրաւամբ կոչում է անշարժութեան փիլիսոփայութիւն, նրա կրօնի պատկն է կազմում, մի կրօն, որին շատ հիմնաւոր կերպով կարելի է անշարժութեան և ճորտատիրական ժամանակի հասարակական կրօն անւանել: Այդ փիլիսոփայութեան արժանիքներն ու պակասութիւնները լիովին կշռել է ուսուցչապետ Կարէլը ²⁾ իր «Կոմս Լ. Տոլստոյի պատմական փիլիսոփայութիւնը» յօդւածում ³⁾. Նաև իր «Պատմական պրոցեսի էութիւնն ու անձնաւորութեան դերը պատմութեան մէջ» գրքում: Բայց մինչև օրս էլ պարզ չէ այդ փիլիսոփայութեան ծագումը, և կը պարզւի այդ ծագումը, եթէ նրա պատմական փիլիսոփայութեան վրայ նրա ինքնակենսադրութեան տեսակետից նայենք: Նս ցոյց կը տամ Տոլստոյի բնաւորութեան այն առանձնայատկութիւնները, որոնք ընկած են նրա պատմական փիլիսոփայութեան հիմքում: Գրանք են. նախ՝ տարրային անդիտակցական զգացմունքի ղեկավար դերը, և ապա՝ նրա աքիլլեսեան զարշապարը:

Ինչպէս և ճիշտ ցոյց է տւել իր «Կոմս Տոլստոյի փիլիսոփայութիւնը» յօդւածում պ. Պրոտոպոպովը ⁴⁾, «Պատերազմ և խաղաղութիւն» վէպի հիմնական միտքը այս խօսքերի մէջ է ամփոփած. «Եթէ ընդունենք, որ բանականութիւնը կարող է կառավարել մարդկային կեանքը, այն ժամանակ կեանքի կարելիութիւնը կ'ոչնչանայ»: «Անդիտակցական գործունէութիւնն է միայն, որ պտուղ է տալիս. և պատմական անցքում դեր խաղացողը իսկի չի հսկանում այդ անցքի նշանակութիւնը»: Ուրիշ ինչ որ ասում է, բո-

¹⁾ Ռուս համակրելի ժուռնալիստ, որ մեռաւ 1892 թ., մինչև մահը թարմ պահելով երիտասարդական հասակին շատուկ ոգևորութիւն, ազնուութիւն ու անկեղծութիւն:

²⁾ Պատմաբան ընկերաբան, որ լապտնի աշխատութիւններ ունի տաճ ուս զրականութեան:

³⁾ Вѣстникъ Европы, 1887 г. Июль.

⁴⁾ Գրական քննադատ, տաղսնդատր գրչի տէր:

լորն էլ այս մտքերի զարգացումն է: Բոլոր պատճառների միա-
ժամանակեայ պատճառից դուրս՝ պատմական անցքը պատճառ-
ներ չունի և չի էլ կարող ունենալ, քայց կան անցքերը կառա-
վարող օրէնքներ, որոնք մասամբ յայտնի են և մասամբ շոշափելի
մեզ համար: Յայտնի է արդէն որ բոլոր պատճառների միաժամա-
նակեայ պատճառին նա Սէր է անւանում: Օրէնք կարելի է կոչել
այն ընդհանուր վերացական բանաձևը, որ ընդգրկում է որ և է
բնագաւառի երևոյթների միջև եղած հաստատուն կապը: Այս
մտքով առած՝ օրէնքները պատմութիւն չեն կառավարում, քանի որ
նա չի կրկնում: Պատմութեան միջի կրկնող սարքը վերաբերում
է ընկերաբանութեան, հոգեբանութեան և այլ գիտութիւնների,
որոնք պատմութիւնը բացատրող օրէնքներ ունեն:

Օրէնքները չեն կարող պատմութիւն կառավարել, որովհետև
նրանք ըմբռնումներ են (понятия), որոնք իրական գոյութիւն չու-
նեն: Տոլստոյը, առարկայացնելով սէր, օրէնք, ընտրութիւն և
նոյնատեսակ ուրիշ ըմբռնումներ ու նրանց իրական գոյութիւն
վերագրելով, ոչ-գիտական մտածութեան մի տիպար սխալ է գոր-
ծում: Իսկ որ նա ըմբռնումին իրական գոյութիւն է վերագրում՝
կարելի է համոզուել հէնց հեռեկալը կարգալով. «Սէրը հարկադրեց
ժողովուրդներին սկզբում շարժել արեւմուտքից արևելք, իսկ ապա՝
արևելքից արեւմուտք, և այդ բանը ճնունդ տուա դժար նկարագ-
րելի և անհամար գազանութիւնների ու սպանութիւնների»:

Տոլստոյի՝ պատմական ճակատագիր ընդունելու պատճառներից
մէկն էլ, ըստ իս, վերացական ըմբռնումի այս գաղափարացնելն է:
«Ոչ բանական երևոյթները բացատրելու համար անհրաժեշտ է պատ-
մութեան մէջ ճակատագրութիւն ընդունել»: Իսկ ճակատագրի ըն-
դունելն էլ նրան հարկադրում է էմպիրիք իրողութիւնները սկզբունք
դարձնել: Տոլստոյի պնդումին նայած՝ Նապոլէօնի 1) արշաւանքը

1) Ֆրանսիայի կայսր, նոր դարերի կեսար, որ 1812 թ. արշաւե-
րուսաստան: Ռուսները Բորոգինս գիւղի մօտ (Մոսկուային մօտիկ) կռից
ուներցան և շատ մեծ ջարդ ստացան: Զօրքերն սկսեցին նահանջել
ժողովուրդը ալրեց Մոսկւան. աչնպէս որ Նապոլէօնը տաք ու ապահով
ապաստանի տեղ՝ մոխրակոյտ գտաւ միւսն: Ցրտից ու քաղցից նրա զօրքը
վնասեց: Այս դէպքից կետու Նապոլէօնի լաջողութեան աստղը թեքեց:

դէպի Ռուսաստան ոչ այն պատճառով եղաւ, որ նա այդպէս ուզեց, այլ այն՝ որ այդպէս պիտի լինէր: Խօսելով Նապոլէօնի և Սլէքսանդր առաջնի մասին, նա ասում է. «անկարելի է երևակայել երկու ուրիշ մարդ, որոնք իրանց ամբողջ անցեալով և նոյն իսկ բնաւորութեան ամենաչնչին գծերով համապատասխան լինէին իրանց կատարելիք կոչմանն»: «Մոսկւան թողնելն ու այրելը նոյնքան անհրաժեշտ էր, որքան անհրաժեշտ էր, որ Բորոզինօյի մարտից յետոյ զօրքն առանց կռի հեռանար»: Խմբերի տարրային, ճակատագրական ուժին երկրպագելը հարկադրում է նրան բացասել անձնաւորութեան զերը պատմութեան մէջ, բացց յատկապէս՝ մեծ մարդկանց դերը, որոնց նա անւանում է «անցքերի ցուցանիչ»: «Հէնց մի այնպիսի պատճառ էլ 1812 թւ. պատերազմի, որպիսին Նապոլէօնի մերժումն է զօրքերը յետ տանել Վիսլայից այն կողմը և վերադարձնել Օլդենբուրգի հերցոգութիւնը, մեզ թւում է առաջին պատահած Փրանսիական կայրալի երկրորդ անգամ ծառայութեան մտնելու ցանկութիւն չունենալը, որովհետև եթէ ըղլոռ սերժանտները չուզենային կրկին ծառայութեան մտնել, այն ժամանակ չէր կարող պատերազմ լինել»:

Ինչպէս նկատում է ուսուցչ. Կարէւը, Տոլստօյի ապացոյցը մեզ հասցնում է հակառակ եղբակացութեան, որովհետև՝ եթէ Նապոլէօնի կամքը հաւասար է ըղլոռ կայրալների կամքին, շատ պարզ է ուրեմն, որ նա չի կարող հաւասար լինել իւրաքանչիւր կայրալի կամքին առանձին առած, որովհետև ամբողջը չի կարող հաւասար լինել իր մի մասին:

Կոմսի Աքիլէսեան գարշապարը մասնաւոր և հրապարակական կեանքի միջև եղած կապի մասին պարզ գիտակցութիւն չունենալն է. այս հանգամանքը իր դրօշմը դրել է նրա պատմական փիլիսոփայութեան վրայ: Այստեղ էլ է երևում նրա՝ կեանքի մասին ունեցած երկուական հայեացքը. «ամեն մարդու մէջ կեանքի երկու կողմ կաջ, ասում է նա. «անձնական կեանք, որ այնքան աւելի ազատ է, որքան վերացական են նրա շահերը և տարրային, պարային կեանք, ուր մարդ անխուսափելի կերպով կատարում է նրա համար դրւած օրէնքները»: Այդ դրութիւնը Տոլստօյին բացասել է տալիս հանրակեցութեան ձևերի յառաջադիմութեան նշանակու-

Թիւնը: Այդ բացատումը շատ խիստ է արտայայտուած մանուանդ նրա ամենաուշ գրեածներինց մէկում. «Թող կատարեն, ասում է նա, այն բոլոր արտաքին կատարելագործութիւնները, որ կարող են երազել զխոսական ու կրօնական մարդիկ, Թող բոլոր մարդիկ քրիստոնեայ գաւնան և Թող կատարեն ամեն տեսակ լրացումներով և ուղղումներով այլ և այլ Ռիշէ'ների ու Բէլլամի'ների ¹⁾ ցանկացած բոլոր բարեօրումները, բայց և միաժամանակ Թող մնաց այժմեան կեղծաւորութիւնը, Թող մարդիկ չգաւանեն իրանց ընդունած ճշմարտութիւնը և շարունակեն ձևացնել իբր Թէ հաւատում են այն բանին, ինչին չեն հաւատում և յարգում են այն, ինչ չեն յարգում, և մարդկանց վիճակը ոչ միայն չի լաւանալ, այլ և տարեցտարի կը սկսի աւելի ևս վատանալ: Տօլստօյն, ըստ իր սովորութեան, այստեղ երկու փոխադարձաբար իրար հերքող ենթադրութիւն է անում: Նա չի ուզում, կամ աւելի ճիշտ՝ չի կարողանում հասկանալ, որ այլ և այլ Բէլլամի'ների երազած հանրակեցութեան լաւ պայմանները չքացնում են ստութեան և կեղծիքի raison d'être-ը. նա չի կարողանում հասկանալ, որ հէնց հանրակեցութեան վատ պայմաններն են այդ մոլութիւնների գլխաւոր դրօշի պատճառները, որ երբ չքանայ պատճառը՝ հետեւանքն էլ կը չքանայ: Աէ՛ որ Վոմսի կրօնը, բարոյագիտութիւնը, անտեսական և ընտանեկան իդէալները, ինչպէս վերն էլ ցոյց աւինք, սկզբունք են դարձնում սխտեմական կեղծաւորութիւնը ոչ այլ պատճառով քան այն՝ որ այդ իդէալներին ծնունդ են տւել հանրակեցութեան այնպիսի վատ պայմաններ, որոնց տիրապետութեան ժամանակ իր նման մտրդու ստրուկն էր...»

Մեր աչքում Տօլստօյի կրօնը լոկ մի՛ ծառայութիւն է մատուցել. նա ինքնասպանութիւնից վրկել է մի մարդու, որի կեանքը Թանկ է ամբողջ քաղաքակրթւած աշխարհի համար: Մինչև այժմ պարզ

¹⁾ Սրկուսն էլ մի նոր տեսակի փրկասաններ են. նրանք պատկերացնում են կեանքի լաւագոյն պայմանները. ցանկալի ընկերական կեանքի պատկեր են նկարում:

չեն այն հոգեկան դրամայի պատճառները, որ քիչ էր մնացել 56 տարեկան հասակում Տոլստոյին ինքնասպան դարձնելին: Այդ դրաման բացատրելու փորձն անող բազմաթիւ ենթադրութիւններից ամենայայտնին այ. Շ-ի ենթադրութիւնն է ¹⁾, որին համաձայն են Եւգ. Սոլովևը ²⁾ և Նիկ. Միխայլովսկին: Նրանց կարծիքով այդ ճգնաժամի պատճառը մահւան երկիւղն էր: Պ. Շ-ի ասելով, այդ շարժառիթը երևաց ճերութեան հասակում և առաջ որպէս թէ չկար: Եւգ. Սոլովևը և Նիկ. Միխայլովսկին կատարելագէտ հիմնովին պնդում են, որ այդ շարժառիթը ուղիղ զծով անցնում է Կոմսի ամբողջ կեանքի միջով:

Ինձ թւում է որ վերը չիշած գրողների ցոյց տաւ շարժառիթը ոչ միայն Կոմսի ճգնաժամի միակ պատճառը չէ, այլ մինչև անդամ գլխատոր պատճառն էլ չէ, թէկուզ հէնց այն պատճառով, որ ճգնաժամն անցել է արդէն, բայց Տոլստոյի մահւան երկիւղը մինչև օրս էլ զօրեղ է, մի բան՝ որ վերոյիշեալ գրողները չեն հերքում: Այդ ճգնաժամի մի քանի պատճառների վրայ էլ կարելի է մտնացոյց լինել: Այդ պատճառներից մէկն է նախ՝ կեանքի իմաստն ու էութիւնը գտնելու տրամաբանական անկարելիութիւնը, որին ձգտում էր Տոլստոյը: Չէ որ նա ուզում էր գտնել կեանքի արտապատճառ էութիւնը: «Պատճառն, ասում էի ինքս ինձ (Տոլստոյն ինքն՝ իրան), մտածութեան նոյնպիսի կոտեզորիա չէ, ինչպէս ժամանակն ու տարածութիւնը: Եթէ ես կամ, ուրեմն պատճառ կայ, որ ես կամ. և ուրեմն պատճառների պատճառ կայ: Եւ ես դադար առայ այդ մտքի վրայ ու ողջ էութեամբ ջանք էի անում այդ պատճառի լինելը գիտակցելը (ւժոտողմանանք): Տրամաբանական մտածութեան համար հարցի այդ տեսակ զբւեղը այնպիսի մեծ դժւարութիւններ է առաջ բերում, որ նոյն իսկ Տոլստոյի համար, որ շատ էլ չի սիրում բանի տեղ դնել տրամաբանական դժւարութիւնները, նրանք դարձան ճգնաժամի պատճառներ և քիչ էր մնում ինքնասպան դարձնին նրան: Ինչպէս տեսանք, զգացմունքն էր, որ օգնեց նրան դուրս պրծնել այդ դժւարութիւնից:

¹⁾ Философія Гр. Толстого, Вѣстникъ Европы, 1887 г. V.

²⁾ Біографія Л. Н. Толстого, изд. Павленкова.

Բացի այդ, ճգնաժամի մօտերը մանաւանդ, սուր կերպարանք առաւ
 ապաշխարող ազնւականի՝ զրաման, որ ինչպէս Մխլապովսկին հա-
 լատացնում է՝ մեր օրերում արդէն վերջացել է: Ինձ թւում
 է, որ ճգնաժամի գլխաւոր պատճառը Տոլստոյի մէջ միշտ ուժեղ
 եղած հաւատի սխալանքն է, որ 56 ա. հասակում մանաւանդ սուր
 կերպարանք առաւ և որին զոհացում տւաւ նրա կրօնը. մի պա-
 հանջ՝ որի չզոհացնելը առաջ է բերում մի ողբերգական տրամադ-
 րութիւն, որ հիանալի կերպով բնորոշել է Վլ. Կորոլենկօն.

«Բաւական չէ անմիջական կեանքով ապրելը. անհրաժեշտ է,
 որ մեր անձնական գոյութեան մէջ զգանք մի օղակ, որ կապւած է
 ինչ որ աւելի վեհ, աւելի մշտակաջ և կայուն բանի հետ: Այդ
 զգացմունքն է հաւատի բովանդակութիւնը կազմում. ձեւերը կարող
 են փոխուել և միշտ էլ փոխւում են. բայց երբ հէնց բովանդակու-
 թիւնն ինքն է չքանում, երբ առանձնակի կեանքը երևում է ողոր-
 մելի պատահականութիւն, երբ ամեն բան վերջապէս յանգում է
 մի կտոր ցեխի, ուր պարփակւում է ողջ լոյս աշխարհը, այն ժա-
 մանակ քո սեփական կեանքն էլ է կորցնում իր գինն ու աղօտանում...»

Գ Ր Ա Ւ Յ Ս Ո Ւ Թ Ի Ի Ն

ՍԻԻՖՏ, Ջոնաթան. — Գուլիվերի ճանապարհորդութիւնը. ռուս. լիակատար թարգմանութիւնից թարգմ. Ղ. Աղայեան, Թիֆլիս, տպ. Յ. Մարտիրոսեանի, 1897 թ. Հրատարակութիւն Թ. Հ. Հրատար. Ընկերութեան, 195 էջ, գինը 50 կոպէկ:

«Բաց կ'ուզէի որ զագաղիս վրայ դնէին սուր, որովհետեւ ես քաջ զինուոր եմ եղել մարդկութեան բարիքի համար մղած պատերազմումս: Հէջնէի աչս խօսքերը ամենաչն իրաւամբ իր համար կարող էր ասել Սելիֆտը: Պատմութիւնը զիտողի առաջ մէկ-մէկ գալիս կանգնում են անպիտի անձեր, որոնք կեանքի չէմքը կոխել են մեծ նպատակներով ու լուսերով, մարդկութեան կեանքը բարելաւելու հզօր տենչով, անընկճելի կամքով ու անսպառ եռանդով, բայց որոնց կեանքն ամեն կողմից ձնչել է, հարւածներ է որ թափել է նրանց հպարտ գլխին, խել է նրանց հանգստութիւնը, զրկել է հացից, խորտակել է նրանց հոգու անդրբութիւնը և վերջը փչրել է նրանց՝ առանց կարողանալու ճկել, աչ կատարի մրցութեան մէջ նրանք՝ դարձնալ նոյն Հէջնէի խօսքերով ասած՝ «ընկել են չլաղմւած, և նրանց զէնքերը չեն կտարած»: Աչ խիղիս

մարտնչողները բարիք են մարդկութեան համար և չարիք իրանց համար, ուրիշի տունը չիճել են ջանում և քանդում են իրանց տները, ձգտելով բարւոքել մարդկանց զրութիւնը՝ ջախջախում են իրանց կեանքը և աչ օրհասական կռոււմ գերիզման իջնում: Մարդկութեան զրժբախտներն են դրանք: Աչ պիտի մի զժբախտ էլ, եթէ ոչ նրանցից ամենամեծը, Սելիֆտն է:

Անօրինակ զժնդակ է եղել Սելիֆտի կեանքը (1667—1745), անսովոր բազդ է ունեցել աչ մեծ մարդը, նրա կեանքը մինչև աչօր էլ քօղի տակ է ծածկւած. և շատ բան չաւտեան գաղտնիք է մնացել: Ծնւած եօթ ամիս հօր մահից չետոյ, որբ ու անօգնական, քեռու ողորմութեամբ զպրոց մտած ու մի կերպ ուսումնաւարտած, կեանք մտնելու առաջին օրից անապաստան ու ստիպւած իր օրական հացն անձամբ ձեռք բերելու, ծառայ մի լորդի մօտ, չետոյ մի

հասարակ քահանայ և մինչև կեանքի վերջն էլ փոքր ի շատէ ապահով գիրքի կարօտ—անա նրա կեանքի մի կողմը:

Շրջապատի վրայ անպայման ու հօր ազդեցութիւն ունեցող, կանանց վրայ իշխելու ընդունակ, սիրող սրտի տէր, բայց մինչև վերջն էլ անսէր ու անընկեր և երկու թանկագին և մօտիկ կնոջ մահուան ու տանջանքի ակամայ պատճառ. երկու կնոջ, որոնցից մէկը նրան շատ էր սիրում, բայց հանդարտ ու հեղ սիրով, առանց բռնկումների. համբերութեամբ սպասում էր Սելֆտի հետ պսակելու օրին և միաջն ոչ-ջահէլ հասակում, ողորմութեան նման, արժանացաւ ցանկալի օրին, սակայն սիրած մարդուց հեռու մնալու, պսակի իրողութիւնը ամենքից ծածկելու և ոչ որպէս կին, այլ որպէս հեռու բարեկամ, կամ ծանօթ ապրելու պայմանով... Իսկ միւսը սիրում է եռանդագին ու խելազեղ, ամեն տեղ հետևում է նրան, սրտաշարժ խօսքերով իբրև ողորմութիւն սիրալին վերաբերմունք է խնդրում նրանից, նրա ոչ-սիրալին վարմունքներից չիւժուում է ու մաշում, և մեռնում անմխիթար. անկարող տանելու սիրած մարդու ամուսնութեան լուրն ու նրա ցուրտ խօսքերը: Ահա նրա տարօրինակ ու դժբախտ կեանքի միւս կողմը՝ սրտի կողմը:

Անդրիմազրեղի եռանդի, հօր կամքի և բուռն կրքերի տէր էր Սելֆտը. նրա սիրտը լի էր մարդկանց կեանքը ղեկավարելու տենչանքով, համարձակ ու անվախ էր կուլի մէջ, գիտակցում էր իր մտային առաւե-

լութիւնները, ուստի և անչափ հպարտ էր ու պատուասէր, զօրեղ խօսքով ընդունակ էր ամբոխը լուգելու, ուստի կուսակցութիւն էր տապալում և պետութեան ըստիպում զիջելու. զինւած սպանիչ ծաղրով՝ նա համարեա միշտ չաղթանակում էր կուլի մէջ—բայց միևնոյն ժամանակ մի հասարակ ժուրնալիստ էր, մի գրող և ուրիշ ոչինչ. մի մարդ՝ որ զուր է ջանք թափում կուսակցութեան պարագլուխը լինելու, թէև անուղղակի նրա զուխն է և ղեկավարը, մի մարդ՝ որ պարզ գիտակցում ու տեսնում էր իր համուշելու ուժն ու մտքի կորովը, բայց և որը մինչև վերջն էլ ստիպած էր երկրորդական, անչան գիրքի մէջ մեռնելու—անա նրա կեանքի մի այլ կողմը:

Նստ չալտնի նպատակներ ունէր, որոնց իրագործելու համար կուռւմ էր. և ամեն բանից առաջ այդ նպատակներն էին թանկ նրա համար. բայց նրան չըջապատում էին մարդիկ, որոնց կուլը գիրքի համար էր, որոնք չաջողութեան չետեղից էին ընկած և ոչ գործի, որոնք ձգտում էին իշխանութեան և ոչ հասարակաց բարիքին, աշխատում էին հառակորդներին տապալել և ոչ հայրենիքի շահերը պաշտպանել: Ամեն տեղ նրա աչքում էր ընկնում կեղծիք, շահամոլութիւն և եսականութիւն, ծածկւած հայրենասիրութեան, քաղաքավարութեան, սկզբունքների և հանրական բարիքի շղարշով: Այսպէս էին Սելֆտին չըջապատող ազգի ղեկավարները:

Եւ այս ամենն իրար չէին չաջողում, այլ իրար վրայ էին բարդ-

ում. քաղաքական ձախողութիւնները նրաթական նեղ կացութեան հետ էին հիւսուում, հպարտ հոգին և պատուասիրութիւնը դրած էին ծառայի սրտում, ծրագիրները և երազները խորտակուում զուգընթաց էր սիրած կնոջ մահուան, անգնահատելի ծառայութիւնները իր պաշտպանած կուսակցութեան հանդիպում էին կատարեալ ապերախտութեան. միևնույն ժամանակ Սևիֆտի միտքը գիտակցում էր աչդ ամենը և սիրտը զգում էր աչդ հարւածները: Նրանք գնալով մեծանում և զօրեղանում էին, աւելի ճնշող ու զգալի դառնում, և միևնույն մարդու գլխին թափուում, միևնույն մարդու սիրտը լօշոտում... Այստեղ ժալոքը չէր զիմանալ, ուր մնաց մի մարդ, ինչքան էլ հզօր և աննըկուն բնաւորութիւն ունենար: Այդ բոլոր գէնքերով կեանքը մրցեց Սևիֆտի հետ, վշտեց նրան ու գարձրեց մի լուսախաբ, փարոսները կորցրած, երազները ցրած, մարտատեսաց ծերունի, որ՝ կենսաթոշակը իր փութակալի գործունէութեան համար խելագարութիւնն էր առաւ... Բայց քանի ուժ ունէր, Սևիֆտը լիտ չքաշեց աչ ձախողութիւնների տարափի առաջ. նա գաղաղեց, լցեց մաղձով, զաւրացաւ սորազան զաւրութիւն, ոտի սակ աւաւ ամեն սրբութիւն, ամեն վեհ ու բարձր բան, ցեխի հետ հասարեց կեանքն ու մարդկանց, սուկալի ծաղրով ոչողեց մարդուն, նրա կրօնն ու դիտութիւնը, խելքն ու բանականութիւնը և իր տանջած, մաշւած ու լօշոտած սիրտը դրաւ «Գուլլիէրում»:

Շատ խառն էր Անգլիայի դրու-

թիւնը Սևիֆտի ապրած ժամանակ: Հրապարակի վրազ գերիշխողը հողատէր լորդերը (լէնդ-լորդ) շահն էր և ամեն ինչ ստորագասուում էր աչդ շահին. քաղաքական իշխանութիւնը դասակարգալին, կամ աւելի լաւ ասած՝ նեղ կուսակցական էր. չունէր մարդը, ինչ տաղանդի և ընդունակութեան տէր էլ որ լինէր, չէր կարող քաղաքական ասպարիզում աւել թռնել. Սևիֆտը, որ մեծ կապեր ունէր սկզբում «վիզերի», լիտոջ՝ «տորիները» կուսակցութեան ղեկավարների հետ, մինչև վերջն էլ չկարողացաւ մի աչքի ընկնող տեղ գրաւել: Տնտեսական քաղաքականութեան մէջ հողատէր լորդերը ղեկավարում էին ոչ ժողովուրդի, ընդհանրութեան, աղգի, ալ իրանց սեփական շահով. աչդ էին, օրինակ, հացի խնդրում. աշխատում էին ոչ թէ մատչելի գնով հաց տալ ընդհանրութեան, ալ ձգտում էին որ իրանց օգուտը չաւտնի աստիճանից չիջնէր: Պետութիւնը և թագաւորները չէին ընդդիմանում աչդալիսի քաղաքականութեան: Աչդ էս վարւելու հետեանքը հարստութեան ծաւրաւեղ անհաւասար բաժանումնէր, որ մի կողմից փարթամ կեանք էր ստեղծել, իսկ միւս կողմից ծաղաւելի աղքատութիւն. Խուանդիպում մարդիկ, մէր ու մանուկ մեռնում էին քաղցից: Նոյն չարաբերութիւնն էր և հոգևոր դասի մէջ. դրութեան տէրերը եպիսկոպոսներն էին, իսկ ստորին հոգևորականութիւնը մի կերպ քաշ էր տալիս իր օղորմելի գոլութիւնը:

Երկրի քաղաքական կեանքում մեծ

փոփոխութիւններ էին եղել: Կարլոս I-ին գլխատելուց չեսող (1648 թ.) հաստատւած պուրիտանների հանրապետութիւնը երկար կեանք չունեցաւ. անգլիական կեանքը չկարողացաւ դիմանալ մոլեռանդ պուրիտանների ստեղծած նեղ սղմիչների մէջ և վիթխարի ուժով պատռեց իր կեղնն ու դուրս եկաւ ամերից: Վերադարձած Կարլոս երկրորդը իր հետ բերաւ Ֆրանսիական արքունիքի ցոփ և անառակ կեանքը, բայց նրա փչացած տունն էլ շատ չապրեց: 1688 թ. չեղափոխութիւնը անգլիական գահի վրայ դրաւ Վիլհելմ III-ին, որի ժամանակ խաղաղացան երկրի ներքին խռովութիւնները և այլ ևս մեծ չափեր չստացան թէ նրա և թէ չաջորդների՝ Աննալի և Գէորգ I-ու II-ի օրերով: Այդ ժամանակներն էր անա, որ մոլորին թաւալում էր Անգլիայի կեանքը. ցոփութիւնն ու անբարոյականութիւնը բռնել էր բոլոր խաւերը վերից վար՝ պալատից մինչև փողոցը. ժողովուրդը անասուն էր կտրել, իսկ զեկավար դասը անառակացել էր. կաշառակերութիւնը, դաւերն ու մատնութիւնը իշխում էին անարդել: Ղեկավարները չէին մտածում ձեռք բերած իրաւունքների ամրացման և շտաղալ դարգացման վրայ. նրանք գո՛չ էին ստացած դափնիներով, և իրանց զիրքից օգտուում էին ազգականներին ու բարեկամներին շահելու համար՝ տալով նրանց անազին ոսծիկներով պաշտօններ: Պաշտօնները առուտուրի նիւթ էին. փողով կարելի էր գնել ընտրողների ձախերը, որ իսկապէս ընտրողներին իրանց չէր պատկա-

նում, այլ նրանց տէր լէնդ-լորդերին. նրանք կատարում էին տէրերի հրամանը, գործում էին նրանց ներչընչումով: «Պալատն ու մասնաւոր անձինք երբէք այսքան հեռու չէին գնացել, գրում է ժամանակի լայտնի գործիչներից մէկը՝ Վալպոր Ընտրողների կաշառակութիւնը հասարակ է թեկնածուների կաշառակութեան, մինչև անգամ նրանից էլ անցել է (1761 թ. ¹):

Տնտեսական և քաղաքական աչքապիսի պայմաններ չէին կարող հարկաւ չազդել բարոյական կեանքի վրայ: Վերը տեսանք թէ ինչքան ընկած էին բարքերը. բայց անա և ժամանակակից մի նշանաւոր մարդու կարծիքը. «Այստեղ ամեն բանից շատ լարգում են փողը, գրում է Մոնտեսքիօ. իսկ պատիւն ու առաքինութիւնը՝ շատ քիչ... Անգլիացուն անհրամբշտ է լաւ ճաշ, կին և լիութիւն... Անգլիացում կրօն չկայ. եթէ որ և է մէկը [սուք բանաւ կրօնի մասին, կը ծաղրեն նրան» ²): Այս էր մտաւորապէս Սելֆտի ժամանակաւ Անգլիայի գրութիւնը:

Ի՞նչ զիրք էր բռնել կեանքի աչք ժխտում Սելֆտը: Բարքերի աչք ընդհանուր անկման ժամանակ նա ուժերը լարած պաշտպանում էր 1688 թ. չեղափոխութեան սկզբունքները և անգլիական եկեղեցին: Նկատենք այստեղ, որ Սելֆտը կրօնի վրայ իւրատեսակ հաւատայք ունէր. նա

¹) Борьба за избирательную реформу в Англии. Р. Б. 97 № 1.

²) Развитие политич. и гражданской свободы в Англии, И. Тэнъ, т. II.

եկեղեցու գոյութեան իրաւունքը տեսնում էր նրա տւած օգուտի մէջ, իսկ աստուածաբանական գորշ ու վերացական դատողութիւնները, մեկնաբանութիւնները և բացատրութիւնները նրա համար դրականապէս ոչ մի նշանակութիւն չունէին, որ և ցոյց տւաւ իր «Տակաւի հէքիաթը» պամֆլէտով: Ենթադրում են, որ անգլիական եկեղեցին էլ նա պաշտպանում էր երկու դրդիչներից հարկադրւած. նախ՝ ալլէ եկեղեցու պատճենան էր ինքը, և երկրորդ՝ ալլէ եկեղեցին զօրկ էր կաթողիկոսեան անհամբեր ոգուց և ազանդների մոլեռանդութիւնից: Նախելով թէ քաղաքական որ կուսակցութիւնն էր ծառայում իր նպատակներին, աչն կողմն էլ անցնում էր. ալսպէս նա սկզբում «վիգերի» (աղատականների) կողմն էր, փոփոջ՝ «տորիների» (պահպանողականների): Նրա գործունէութեան միջով ուղիղ գծով անցնում են ալլէ երկու նպատակները:

Այլ մարդ է Սելֆորդ «Գուլլիւէրից» առաջ, և ալլ մարդ՝ փոփոջ: Սկզբում նա չոյս ունէր, որ կարելի է որ և է կուսակցութեան հետ ձեռք ձեռքի տւած գնալով պաշտպանել իր պաշտած «արի աղատութիւնը» և բարւոքել հալրենիքի կեանքը: Կրա համար էլ իր շանթարձակ պամֆլէտները գրում էր համախոս կուսակցութեան օղտին: Բալլց տարիների փորձը ցոյց տւաւ, որ մարդիկ իր երազած արարածները չեն, որ նրանց աւելի անձնական շահն է հետաքրքրում քան հալրենիքի բարիքը: Նա տեսաւ երկրի շահերը մի խումբ մարդկանց շահերին ստորադաս, երկ-

րի ղեկավարները անձնական բարիքի շնորհից ընկած. նա մարդիկ փրկուողն տեսաւ անասուններ, կին որոնեց՝ պոռնիկ ընկաւ նրա աչքովը. կրօնը տեսաւ կեղծատրների ձեռքում, գիտութիւնը՝ ծանծաղամիտ մարդկանց, պաշտօնները՝ անընդունակների. տեսաւ իսկական արժանիքը չգնահատւած, մտքի ուժն ու բնատրութեան շիտակութիւնը արհամարհւած. և նա հիասթափեց, հեռացաւ ասպարիզից, քաշեց Նրլանդիա և ձեռնարկեց «Գուլլիւէրին»: Կուղղ թողեց ուղղմազատը և դարձաւ մարդատեաց: Նրա չուսահատութիւնը հասաւ իր գաղաթնակէտին և տւաւ աչն Սելֆորին, որին ճանաճում են որպէս «Գուլլիւէրի» հեղինակ: Անքօղ պարզութեամբ նրան երեսցին կեանքի ցեխն ու կեղտը իրանց ալլանդակ գարչատեսութեամբ, և աչա թէ ինչ եղբակացութեան եկաւ. «ես ողջ սրտով ատում եմ և արհամարհում ալլէ կենդանուն, որ մարդ է կոչւում, թէ և ջերմ սիրում եմ Ջոնին, Քոմասին, Պետրոսին և ալլն, գրում է նա Պոպին: (Ճամանակի նշանաւոր բանաստեղծն է): Մարդատեցութեան ալլ մեծ հիմքի վրա է կանգնած իմ ճամբորդութիւնների հրատարակութիւնը (Գուլլիւէրը): Եթէ աշխարհիս երեսին կարելի լինէր միաչն 12 Արքեանոտ գտնել (Սելֆորին և Պոպին մօտիկ բարեկամ գրող), ես կ'ալրէի իմ գիրքը»: ¹⁾ «Մարդուց աւելի միք սպասի, քան ալլէ կենդանին ընդունակ է անելու և աչն ժա-

¹⁾ Д. Сви́фть, его жизнь и литературн. дѣятельность, В. Яковенко, 1891 г.

մանակ դուք օրէցօր կը համոզւէք, որ իմ եահունի նկարագրութիւնն աւելի համապատասխան է իրականութեան, քան այդ թուում է», գրում է նա Շերիդանին (ժամանակի նշանաւոր թատերգակ ²): Այս տողերում ուշադիր ընթերցողը կարող է նկատել բազմաշարչար մեծ գրողի զսպած, խուլ և չուսահատ ճիշդ:

Բայց ահա և եահուն. «Բաշտերում ես տեսա՛ բազմաթիւ կենդանիներ, և նրանցից մէկը թէ երկուսը նստած էին ծառերի վրայ: Նրանք տարօրինակ ու տգեղ կերպարանք ունէին՝ գլուխն ու կուրծքը ծածկուած էր խիտ ջագառով՝ որինը գանգուր, որինը՝ հարթ. մօրուքը ձևով նման էր ալձի մօրուքի, իսկ ամբողջ մէջքի երկալնքովը մէկ և ազդրերի ու գարշապարնների առաջին մասի վրայ բրդի երկալն չերտ էր բուսած: Մարմնի միւս մասերը սակալն մերկ էին... (Տէնը, որից քաղւածք ենք անում, դուրս է գցել շարունակութիւնը), ալնպէս որ ես կարող էի նրանց մուղ կարմրաուռն կաշին լաւ տեսնել: Վկոռչների նման թեթևութեամբ նրանք բարձրանում էին ծառերի կատարները, ամուր, սուր ու կեռ ճանկերի շնորհիւ, որոնք վերջապետում էին նրանց առաջի և չետի ոտները: Էգերի միալն գլխին էր երկալն ու հարթ մաղբուսած, բայց դէմքն ու մարմնի միւս մասերը մերկ էին և ծածկուած հաղիւ նշմարելի աղւամաղով: Նրանց առաջի ոտների արանքում կախ էին ընկած ծծերը, որոնք նրանց մանգալու ժամանակ հասնում էին մինչև գետինը: Մի խօսքով՝ իմ բոլոր ճան-

բորգութիւնների ժամանակ երբէք և ոչ մի տեղ չեմ տեսել ալնպիսի մի զգւելի կենդանի, որի տեսքը աւելի ուժեղ կերպով բնական հակակրանք առաջ բերէր, քան սրանցը»: Այսպէս է, Աւիֆտի ասելով, մարդը մարդիկ ալնպիսի կենդանիներ են երևում նրան:

Եահունները միշտ ստում են իրս ր, շարունակ իրար միս են կրծում. մի հոտած կովի համար, թէկուզ լէշն ամենքին էլ բաւական լինէր, էլի իրար խեղդում, լօշոտում են: Հողից դունաւոր քարեր են հանում և զբժուում են նրանց համար. ու մաշւում, ծխւում են եթէ ալք քարերը խլում են նրանցից: Մինչև տրաքւելն առանց խտրութեան ուսում են ամեն բան, մանաւանդ ամեն գողցած բան: Եթեմ են ինչ որ մի արմատ և ցլում թաւալ տալով՝ հարբում, վերթափում: Այս են մարդկանց կրքերը. բայց ահա և կառավարութիւնը, պետութիւնը:

Նայենների ամեն հօտը մի աւագ ունի, որ նրանցից ամենաչարն ու զգւելին է. նրան ծառայում է մի ֆաւորիտ, որի պարտաւորութիւնն է լիզել նրա ոտներն ու քամակը և նրա որջը էգ եահուներ տանել. դրա համար էլ երբեմնակի նա պարգև է ստանում մի կտոր իշի մսի և ի վերջոյ դուրս խուկում, երբ տէրը մի ուրիշ՝ նրանից շատ աւելի գարշելի կենդանի է գտնում. իր աքսորի ընդհանուր զալրութ է առաջ բերում, որ նրա չաջորդն ու ամբողջ հօտը մի անգամից թափւում են նրա վրայ և իրանց արտաթորութիւններով

գլխից մինչև ոտը ներկում են նրան»։ Ահա թէ մինչև որ աստիճանի ստորութեան է հասցնում մարդկանց, նրանց գործերն ու կարարութիւնները։ Բայց կատարած Աւիֆտը աւելի հեռուն է գնում. նա եահուններին բարձր է դասում մարդկանցից, որովհետև նրանք կենդանիներ են, իսկ «մեր ողորմելի բանականութիւնը ուժեղացրել ու բազմապատկել է այդ մուլութիւնները»։

Կիանքի գառնութիւնները Աւիֆտին հասցրին մինչև այն տեղը, որից այն կողմը էլ տեղ չկար գնալու։

«Պուլիւէրի ճամբորդութիւնը» լուս է տեսել 1726 թ. առանց հեղինակի անւան, ինչպէս և նրա բոլոր գրածները, և անագին տպաւորութիւն է արել։ Այդ ժամանակ Աւիֆտը 59 տ. էր, ուրեմն դա մի տեսակ գումար է անձնական փորձի և երկարամեալ դիտողութեան։ Գիրքը չորս մասն ունի, որոնցից միայն երկուսն են հաշերէն թարգմանած, բայց աւելի հզօր են միւս երկու մասերը, որոնցից մէկում նա անողոք ծաղրի է ենթարկում գիտնականներին և քաղաքական գործիչներին, իսկ միւս մասը մի երգիծանք է, որ վերաբերում է մարդուն ընդհանրապէս. եահուն պատկերով աչտեղ նա ոտի տակ է տալիս մարդուն։ Առհասարակ առաջին երկու մասը լի է ակնարկներով ժամանակակից գործող անձերի մասին։ Ընթերցողները, որոնք կը կարդան այդ գրածքը, կը նկատեն Աւիֆտի

ծաղրելու կերպը. նա չի ծիծաղում. նրա ծաղրը չոր է և դառն ու բղխում է սրբազան բարկութիւնից», տեղ տեղ միայն ձայնի տոնը բարձրացնելով, ինչպէս բրորդինեազցոյ թագաւորի չալոնած կարծիքներում Անգլիայի պատմութեան ու կազմակերպութեան մասին։ Միւս մասերում նա սառն է, հանդարտ. նա չի բաց անում ձեր առաջ իր սիրտը. եթէ թափանցել կարող էք, մտէք նրա սիրտը և տեսէք այն փոթորիկը, որ չուզում է այնտեղ։ Այդպէս է Աւիֆտը և իր միւս պամֆէլտներում։

Թարգմանութիւնը լաւ է կատարւած, հաշերէն է և ինչ խօսք որ պէտք է ձեռք բերել ¹⁾։

Ն. Ազրաւեան

¹⁾ Աւելորդ չենք համարում նկատել մի բան. պ. Ս. Մանդինեան, մէջ բերելով «Պուլիւէրից» Սար-Մարդի դէմ գրած դատապարտութեան թուղթը, «Արձագանքի» 1897-թւ. № 97-ում նկատում է. «արդեօք իրաւունք չունինք ասելու, որ այսպէս թարգմանում են նաև մեր արլակատները» (ինքն է ընդգծել)։ Արպէս զի բանը պարզ լինի ընթերցողի համար, պէտք է ասել, որ այդ թուղթը մի պաշտօնական գրութիւն է, որով Աւիֆտը ծաղրում է ժամանակի պաշտօնական թղթեր գրելու ձևը. պ. գրախօսը կարծում է երևի թէ այդ խրթին ոճը պ. Ազալեանի թարգմանութեան մէջն է միայն. դրանից էլ առաջ է գալիս թարգմանչին կըշտամբելը, թէ «արլակատներն անգամ այդպէս են թարգմանում»։ Պարզ է որ պ. Ս. Մանդինեան չի հասկացել ոչ միայն հ. պ. թարգմանչի ալ և Աւիֆտի դիտաւորութիւնը։

ԺԱՄԱՆԱԿԱԿԻՑ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ԶՈՒԱՅԻ ԴԱՏԻ ԱՌԻԹՈՎ

II

Մինչդեռ անցեալ անգամ, երբ գրում էինք Զուլայի դատի առիթով, նորա դատը միայն նոր սկսած էր և մենք միայն կցկատուր հեռագրական տեղեկութիւններ ունէինք,—այժմ մենք գրում ենք արդէն Զուլայի դատը վերջանալուց յետոյ, երբ հնարաւորութիւն ունինք ինդրի մասին դատելու ամբողջ երկար պրոցէսի արձանագրութիւնները մեր աչքի առջև ունենալով: Մեր ընթերցողներին յայտնի է մեր վերաբերմունքը դէպի ոչ-Ֆրանսիական երկիրների հասարակաց կարծիքը, որ արտայայտեց Զուլայի մեղադրական նամակի առիթով, տպւած «Aurore» լրագրում և ուղղած Ֆրանսիական հանրապետութեան նախագահին: Այդ արտասահմանը (զլիւաւորապէս, ի հարկ է, Ֆրանսիայի դէմ միաբանւած երեք պետութիւնները՝ Գերմանիան, Աւստրո-Ունգարիան և Իտալիան), և մեր խօսքը զլիւաւորապէս այդ երկիրների քաղաքական մամուլի մասին է, ինչ ուղղութեան և լինեն նոքա)—այդ արտասահմանը, ասում ենք մենք, դեռ եւս պրոցէսը չսկսած՝ արդէն դատաւոր էր ուզում հանդիսանալ մի գործի մէջ, որը մեծապէս վերաբերում է Ֆրանսիական զինւորականութեան: —Պարելի է հեշտ ըմբռնել թէ ինչ արամադրութիւններ կարող է ունենալ այդ երկիրների հասարակաց կարծիքը դէպի Ֆրանսիական զինւորական մի գործ, երբ այդ հասարակաց կարծիքը ղեկավարւում է այդ երկիրների «հայրենասիրութիւնով» (հայրենասիրութիւն, որի հիմքը մի խոշոր մասով եռապետական նիզուկակցութիւնն է ընդդէմ Ֆրանսիայի): 1894-97 թուականների ընթացքում մենք հայերս առանձնապէս առիթ ունե-

ցանք ծանօթանալու այդ մամուլի արդարասիրութեան զգացմունքներն հետ, երբ հարկաւոր էր արդարասիրութեան և քաղաքակաշուութեան նժարները կշռքի մէջ դնել! Հարիւր հազարների անմեղ արիւնը այդ մամուլից չկարողացաւ դուրս կորզել զթութեան մի խօսք—և սուլթանը աշխարհքիս ամենաողորմած կայսրն էր!

Եւ ահա մարդիկ դեռ զարմանում են, որ մի լուսաւոր երկրի, ինչպիսին է Ֆրանսիան, հասարակաց կարծիքը մի այնպիսի խընդրում, որը շօշափում է Ֆրանսիական զօրքի գլխաւոր վարչութեանը, դիմետրապէս հակառակն է նորա դրացի նոյնպէս լուսաւոր երկիրների հասարակաց կարծիքին նոյն Ֆրանսիական խնդրի վերաբերմամբ: Երկուսից մէկը. կամ Ֆրանսիան մի անկեալ երկիր է, և կամ նա առեւազն հաւասար է իւր դրացի երկիրներին: Ով առաջինն է ընդունում,—նորա հետ խօսելիք չունինք. ովքեր երկրորդն են ընդունում, ապա թող մերինից տարբեր մի այլ բացատրութիւն տան, թէ ինչպէս կարող է պատահել, որ Ֆրանսիական հասարակաց կարծիքը մի խնդրում այդքան դիմետրապէս հակառակ է գրեթէ ամբողջ մնացեալ Եւրոպայի հասարակաց կարծիքին: Ով կամենում է հետամուտ լինել այդ խնդրին, թող նախ պատասխանէ այս հարցին, թէ արդեօք աշխարհքի այդ ո՞ր օրէնքի հիման վրայ կարելի է մէկի մեղաւորութեան մասին դատաւճիռներ կայացնել՝ առանց սպասելու դատաւարութեան: Եւ սակայն, այդ արտասահմանի «հասարակաց կարծիքը» ահագին գղրղոցով արտայայտեց դեռ եւս Չուլայի դատը չսկսած! Չուլան պնդում էր իւր նամակում թէ Դրէչֆուսը անմեղ է. արտասահմանը կրկնում էր—Դրէչֆուսը անմեղ է. Չուլան պնդում էր թէ Էստերհազին դաւաճան է. արտասահմանը կրկնում էր—այո՛, Էստերհազին դաւաճան է: Չուլան պնդում էր թէ Էստերհազին դատող զինուորական դատարանը արդարացրեց նորան գլխաւոր շտաբի հրամանով,—և արտասահմանը գոչում էր՝ կեցցէ Չուլա, կեցցէ հալածւածի պաշտպանը, կորչի Ֆրանսիական կառավարութիւնը, Ֆրանսիական զօրքը!

Եւ դուրս էր գալիս, թէ ոչ միայն Ֆրանսիական զինուորական վարչութիւնը մի անմեղի դաւաճան էր հռչակել, այլ և մի իսկական դատաւանի, դիտմամբ, զօրքերի շարքում է պահում!

Եւ արտասահմանը կրկնում էր այդ նոյնը...

Թէ Դրէյֆուսը զոր է գնացել մի դատաստանական սխալի, այդ դեռ կարելի էր քննել ու տեսնել՝ Փրանսիայի պէս մի երկրում: Իսկ թէ Ֆրանսիական կառավարութիւնը մի դաւաճանի ղիտմամբ պահում է Ֆրանսիական զօրքերի մէջ,—այդ ինչ բանի է նման? Եւ սակայն ուրիշ բան չէր նշանակում ժողովրդի աչքում Զօլայի այն մեղադրանքը, թէ Էստերհազիին դատող զինւորական գատարանը անպարտ արձակեց նորան՝ գլխաւոր շտաբի հրամանով:

Միթէ պարզ չէ, որ խնդիրը, այդ կերպ դրած, այլ ևս դադարում է դատաստանական մի սխալի (իսկական կամ կարծեցեալ սխալի) վէճ լինելուց, այլ խնդիրը կատարելապէս կերպարանափոխուում է և դնում հայրենիքի ապահովութեան հողի վրայ:

Ո՞վ կարող է իսկոյն ըմբռնել այդ կերպ դրած խնդրի ամբողջ ծանրութիւնը? Նա, ում թանկ է իւր հայրենիքը: Եւ հաւատացէք, որ Ֆրանսիացին չի սկսիլ հարցնել օտար ազգերին, թէ նոքա ինչ կարծիքի են մի խնդրի մասին, որի համար պէտք է ունենալ հայրենասիրութեան թարմ զգացմունք—և ուրիշ ոչինչ!

Մենք զարմանում ենք, որ Էմիլ Զօլան կարող էր վրդովմունք չայտնել դատարանում որ իւր ամբողջ նամակից (տպւած Aurore լրագրում և ուղղած նախագահ Ֆորին) կառավարութիւնը վերցրել էր «միայն երկու տող» և դորա համար նորան դատի ենթարկել: Ինչպէս Էմիլ Զօլան, ձեռքը սրտի վրայ դրած, կարող էր չխոստովանել, որ այդ մի-երկու տողը ասում են ամեն ինչ, և որ բոլոր մնացած մեղադրական կէտերը, որ ինքը Զօլան դրել է իւր նամակում, միմիայն այդ մի-երկու տողի լոգիկական շարունակութիւնն են: Երբ որ մի անգամ ասում էք թէ գլխաւոր շտաբը հրամայել է զինւորական գատարանին արդարացնել «դաւաճան» Էստերհազիին, ապա նոր բան չէք ասում, երբ զորանից յետոյ պնդում էք, թէ

¹⁾ Ամեն իրողութիւնն խեղաթիւրելու սովոր մի հալոց լրագիր մեղնում ձեռնառու համարից խաբել իւր ընթերցողներին, պնդելով թէ ժողովուրդը Ֆրանսիայում և մասնաւորապէս Պարիզում իբր թէ Զօլայի դէմ չէր: Կարող ենք հաւատացնել, սակայն, որ ամբողջ երկրի հասարակաց կարծիքը Զօլայի դէմն էր, և Զօլայի կողմնակիցները ընդհանրութեան շատ աննշան տոկոսն էին կազմում: Եւ Զօլայի մասին երդեալների դատավճիռը ընդունեց ամբողջ երկրում մեծ գոհունակութեամբ:

Մրէշֆուսի և թէ Էստերհազիի գործերում զինւորական վկաները «ստել» են, թէ էքսպերտները «ստել են», և այլն և այլն, որովհետև դատաւորին հրամայողը կարող է համարձակութիւն ունենալ դատավճռի հետ կապ ունեցող այլ հանգամանքներն էլ դիտմամբ սարքել այնպէս, որ դատավճիռը օրինապատշաճ երևայ:

Զուլայի դատի ժամանակ, երգեալների դատարանում, նորա փաստաբան Լաբորի, ապա նոցա գլխաւոր վկայ զնր. Պիքար յայտնեցին թէ Զուլան իւր նամակում առ նախագահ Ֆոր աւելին էր ասել քան իսկապէս ուզում էր ասել:—Նոքա պարզաբանեցին Զուլայի խօսքը այս մտքով թէ զինւորական երկու դատարանները (թէ Մրէշֆուսին դատողները 1894-ին և թէ Էստերհազիին դատողները 1897-ին) ոչ թէ հրաման էին ստացել մէկին դատապարտելու, միւսին արդարացնելու, այլ որ նոքա, դատաւորները, գործում էին զինւորական բարձր վարչութեան ազդեցութեան տակ. իբր 1894-ին զինւորական վարչութիւնը հաւատացած էր Մրէշֆուսի մեղաւորութեան մէջ, և զինւորական դատաւորները, Մրէշֆուսի գործում, այլ ես հարկ չէին համարել դատաստանական բոլոր ձեւականութիւնները պահպանելու, (դադոնի դոկումէնտի ցոյց չտալը Մրէշֆուսին և նորա պաշտպան փաստաբանին) և դատապարտել էին Մրէշֆուսին. իսկ այժմ, երբ իբր թէ դոնւած է շիսկական դաւաճանք, Էստերհազիին դատող զինւորական դատաւորները նորան արդարացնելով, կամեցել էին գլխաւոր շտաբի պատիւը պաշտպանել, քանի որ, նոցա ասելով, գլխաւոր շտաբի մէջ կազմւած համոզմունքն է եղել Մրէշֆուսին դատապարտելու պատճառը:

Ոճի ալդ մեղմացումը սակայն նշանակութիւնից զուրկ է: Կարելի է հաշուել այս մտքի հետ թէ Մրէշֆուսին օրէնքի պահանջած բոլոր կանոններով չեն դատել, (թէև նա իսկապէս մեղաւոր էլ լինի), բայց չի կարելի հաշուել այս մտքի հետ, թէ գլխաւոր շտաբը, դատարանի մի սխալը Մրէշֆուսի նկատմամբ ծածկելու համար, դիտմամբ աշխատած լինի յօգուտ մի իսկական դաւաճանի, քանի որ Զուլան մեղադրում է թէ Էստերհազիի նախնական քննութիւնն էլ նոյն տենդենցիական կերպով է կատարւել. չէ որ այդ նախնական քննութիւնը զինւորական վարչութեան հրամանով է կատարւել:

Կարողացանք արդեօք մեր ընթերցողներին լաւ հասկացնել այս միտքը, թէ Զուլայի մեղադրանքները մի դատաստանական սխալ ուղղելու (օրէնքը պաշտպանելու!) պահանջից շատ ու շատ աւելի հեռու են գնում: Կարողացանք արդեօք հասկացնել, թէ Զուլայի գործը ինչո՞վ էր շօշափում հայրենիքի ապահովութեան...

Եւ ո՞վ կարող էր լաւ զգալ Զուլայի մեղադրանքների այն ծանր կէտը, որ հայրենիքի ապահովութեան է վերաբերում?—Ֆրանսիացիներն Եւ Ֆրանսիացին վրդովեց Զուլայի դէմ, որը խնդրին այդ կերպարանքն էր տւել: Բայց Ֆրանսիական հայրենիքի ապահովութեան խընդիրը ումը չէր կարող վրդովեցնել?—Յուսկետական նիզակակցութեան երկիրներին: Այո, այդտեղ ոչ մի զայլոյթ չէր կարող արտայայտւել այդ կէտի վերաբերմամբ:—Բայց կայ և մի մամուլ, որին այդ կէտը ոչ միայն չէր կարող զայրացնել, այլ որը ուրախութեամբ այդ կէտը մոռացութեան էր տալիս (իրենց կաշին չէր վերաբերում!), խնդրի այլ կողմի վրայ աւելի շեշտելու համար,—հերոսութիւնը մի մարդու, որը զինուում է վիթխարի ոյժերի դէմ: Այդ մամուլը սկզբում միմիայն այդ անհաւասար կռիւ տեսարանով էր հետաքրքրւած: Այդ մամուլը ուրախութեամբ տպում էր Զուլայի ամեն մի դրութիւնը և շտապում արձանագրել նորա օգտին խօսող ամեն մի երևոյթ, նորա հասցէին ուղղած ամեն մի նպատաւոր արտայայտութիւն, առանց այլ և այլութեան: Այդ մամուլը թնթնու վերաբերմունք ցոյց տւեց դէպի Ֆրանսիական հանրապետութիւնը և նորա հաստատութիւնները. Այդ մամուլը որոնում էր հերոսի, թող թէ այդ հերոսութիւնը նստէր Ֆրանսիական հանրապետութեան կեանքը: Այդ մամուլը ոչ մի ծափահարութիւն չէր վերապահում գէթ այն դէպքի համար, եթէ երգեալների դատարանում Ֆրանսիական զինուորական բարձր կառավարութիւնը կատարելապէս հերքէր Զուլայի բարդած մեղադրանքները: Արովհետեւ այդ մամուլը էն զլխից հակառակ տոն էր վերցրել. նա հերոս էր որոնում, մոռանալով, որ իսկական հերոսութիւնը միմիայն խիզախելը չէ:

Մենք ցաւում ենք, որ եւրոպական և գորա մէջ ուսական յառաջդիմական մամուլը մի այդքան աշխարհաշառաչ գործում այդպիսի կանխակալութիւն ցոյց տւեց, և իւր իղէալը մանրաց-

րեց՝ Փրանսիական ազատ հաստատութիւնների վարկը նսեմացնել ջանալով, — միայն թէ մէկին հերոս հռչակելու հաճոյքն ունենար...

Վերը յիշած մամուլի ոչ մի կատեգորիայի մէջ սակայն չեն մտնում մեր հայկական օրաթերթերը Մեր ընթերցողներին, որոնք կամենում են մեր ասածը ստուգել, թող կարգան Նոր-Դարի բազմաթիւ առաջնորդողները էմիլ Զոլայի գործի առիթով և պատասխանեն մեզ, թէ արդեօք ճիշդ չէ մեր զգացմունքը, որ այդ թերթի խմբագիրը միմիայն օգտուում էր հրապարակի վրայ զրած ինդրից, որ ցոյց տայ թէ ժողովրդի կարծիքը ոչ մի նշանակութիւն չունի. ինչպէս ահա, տեսէք, Ֆրանսիայում ճշմարտութեան համար կուտոյ մի Զոլայի դէմ է ժողովուրդը, ամբօխը, — այնպէս էլ, տեսէք, հայոց կեանքում «մե'նք ենք» ճշմարտութեան համար կըուտոյ, «մեր» դէմ ունենալով ամբօխը...

Մի այլ կերպի ծիծաղելի դեր էր կատարում Մշակը: Այդ թերթը երեք անգամ անուղղակի կերպով խոստովանեց, թէ ինքը ոչինչ չի հասկացել Զոլայի գործից և նորա կողմն է բռնել միմիայն այն պատճառով, որ «ուրիշները» այդպէս են արել: Թերթեցէք այդ լրագրի համարները մինչև Զոլայի դատի սկսելը և տեսէք թէ նա ինչ պատճառ էր բերում իւր կողմնակցութեանը Զոլայի համար: Իուք այդտեղ կը գտնէք միայն մի բան, թէ Վրէջֆուսը անմեղ է: Թութակութիւն! Մշակը այնքան քիչ կարեւորութիւն էր տալիս Զոլային իրան, որ նոյն իսկ նորա նամակը նախագահ Ծորին կարծեօք աւելորդ էր համարել տպել իւր էջերում: Եթէ «ուրիշները» մինչև դատի սկսելը կողմնակից են եղել Զոլային, այդ եղել է այլ պատճառներով, որոնց մասին խօսեցինք վերև: Իսկ մինչև դատի սկսելը նա, որ պնդում էր թէ Վրէջֆուսը անմեղ է, պէտք է ոչ միայն ոչ մի յարգանք չունենայ դէպի մի հաստատութիւն, որ դատարան է կոչուում, այլ և խոստովանի, որ ինքն էլ չգիտէր թէ ինչու համար են մեծ թերթերը աղմուկ բարձրացնում: Բայց թէ Մշակը պնդում էր այդ, թող ընթերցողը վերցնի այդ անդուլս թերթի յունար ամսի համարները...

Բայց մի բան. մինչդեռ Մշակը կարծում էր թէ կարող է պնդել թէ «Դրէչֆուսը անմեղ է», Զոլայի պաշտպան փաստաբաններից մէկը («Aurore» լրագրի պաշտպանը) երգեակների գատարանում Ա. Կլեմանսո (հուշակաւոր քաղաքական գործիչ և, գատարանում, Aurore լրագրի և դորա հետ միասին՝ Զոլայի պաշտպանը!) յայտնեց հետեւեալը. «Ես չեմ ասում թէ Դրէչֆուսը անմեղ է, որովհետեւ չգիտեմ թէ իրօք նա մեղաւոր է թէ ոչ...»

Այսպէս խօսեց այն լրագրի (Aurore) պաշտպան փաստաբանը, ուր տպւած էր Զոլայի նամակը նախագահ Ֆորին: Տեսէք որքան զգուշութիւն ոճերի մէջ. Կլեմանսոն, չնայած որ Զոլայի պաշտպանն է, չի վստահանում Դրէչֆուսին «անմեղ» անւանել, նոյն իսկ Զոլայի դատից յետոյ. իսկ Մշակը, մեր տասը գլխանի, որ ասել է թէ անգլուխ Մշակը, դեռ Զոլայի դատից էլ առաջ յայտնում էր թէ Դրէչֆուսը անմեղ է!!!

Ինչ ամօթանք մի թերթի համար, չիմանալ թէ ինչ բանի համար է ոգևորւած խօսում... .

Այժմ, երբ Զոլայի դատը վերջացել է, տեսէք Մշակը ինչից է բռնում. թէ իբր նա, Մշակը, ինկատի է ունեցել այն հանգամանքը, որ Դրէչֆուսին և նորա պաշտպանին 1894 թւականին չեն ցոյց տւած եղել այն գաղտնի դոկումէնտը, «որի հիման վրայ» նորան դատապարտել են:

Սուտ վրդովմունք: Յոյց տւէք մեզ Մշակի այն յօդւածը, ուր, յունւար ամսին, դուք Զոլայի դատից առաջ, երբ այդքան շինծու ոգևորութեամբ Զոլայի կողմն էիք պաշտպանում, յայտնած լինէիք թէ դուք այդ բանի համար էիք Զոլային պաշտպանում! Այն ժամանակ, երբ ոգևորւած խօսում էիք Զոլայի օգտին նորա դատից առաջ՝ դուք ոչ մի խօսքով չհայտնեցիք թէ ձեզ հոգս պատճառողը այդ է. իսկ այժմ, երբ Զոլային չաջողեց ապացուցել իւր այն մեղադրանքը, որը վրդովեցրեց ամբողջ Ֆրանսիան, թէ իբր երկրորդ զինւորական գատարանը արդարացրած լինի Ետտերհազիին (ձեր խօսքերով ասած՝ «գաւաճանին») գլխաւոր շտաբի հրամանատու, — այժմ դուք բռնում էք մի այլ կէտից, որը դեռ մինչև այժմ էլ լաւ պարզաբանւած չէ:

Ինչ ծիծաղելի ոգևորութիւն, երբ մի թերթ ինքը չգիտէ թէ

բանը ինչու՞մն է, և ոգևորում ու զայրանում է, կարծելով թէ այդպէս է հարկաւոր!

Մենք չենք կարող երևակայել մի աւելի յիմար դրուժիւն. որպիսին է մի թերթինը, որը ոգևորած ոճերով խօսում է մի բանի վրայ, իբր թէ հետևելով «ուրիշներին», բայց աւանց հասկանալու թէ այդ ուրիշները ինչ են պնդում: Իբր թէ Մշակ՝ը հետևել է նորեկացի Բէրնստերնէ-Բէօրսէնին. այդ մեծանուն մարդու անունով է այժմ պաշտպանւում Մշակ՝ը, երբ հարկաւոր է պաշտպանել այն Մուրճ՝ից, (տես Մշակ № և № .), որը պախարակեց մեր հայ օրաթերթերի թեթև վերաբերմունքը դէպի մի այնքան յուզիչ խնդիր: Բայց նոյն իսկ Բէօրսէն բնաւ այնքան հեռու չէր գնացել որ պնդէր թէ Ֆրանսիական կառավարութիւնը իւր զօրքերի մէջ դիտմամբ պահում է մի դաւաճանի, ինչպէս այդ պնդում է անգլուխ «Մշակ»-ը. նա, Բէօրսէն, այժմ էլ, նոյն իսկ Զոլայի դատից յետոյ, չի պնդում թէ Էստերհազին դաւաճան է, և Կոպենհագէնի «Politiken» լրագրում միամիտ կերպով դիմումն է անում Գերմանական կառավարութեան, որ սա վերջապէս յայտնի իսկութիւնը, յայտնի այն Ֆրանսիացի դաւաճանի անունը, որից փողով նա պատերազմական գաղտնիքներ է ստացել!

Զգուշութիւն բանեցրեց Ֆրանսիայում նոյն իսկ մի կուսակցութիւն՝ սոցիալիստ կուսակցութիւնը, որը պէտք է տրամադիր լինէր շահագործելու Զոլայի յառաջացրած աղմուկը՝ ընդդէմ մի կառավարութեան, որի դէմ միշտ կատաղի կերպով կռւել է նա: Բայց որքան բնական էր այդ կուսակցութեան կողմնակցութիւնը Զոլայի համար, երբէք սակայն նորա պարլամէնտական պարագլուխը՝ Ժորէս՝ իրեն չմոռացաւ մինչ այն աստիճան, որ պնդէր թէ Դրէյֆուսը անմեղ է, Էստերհազին՝ դաւաճան: Եւ ոչ միայն այդ, այլ և նոյն իսկ կուսակցութիւնը միաձայն չկամեցաւ այդ խնդրի մէջ անպայման կերպով կառավարութեան հակառակ կողմը բռնել: Զոլայի դատից յետոյ, երբ մինիստր-նախագահ Մելինին հարցեր տրւեցին պարլամէնտում, ահա թէ սոցիալիստ Վիլիանի ինչ յայտարարեց. «Ինչպէս ամեն մի այլ կուսակցութեան, ամեն մի այլ հասարակական դրուպպաչի և նոյն իսկ ընտանիքի մէջ, նոյնպէս և սոցիալիստական կուսակցութեան մէջ բաժանում եղաւ Դրէյֆուսի գործի առիթով»:

Այս, տարածայնութիւն չծագեց այդ խնդրի առիթով... մի-
միայն Մշակի և Նոր-Դարի մէջ, — և մենք ընթերցողներին ենք
թողնում դատելու թէ այդ երկու թերթերի այդքան կատարեալ համ-
երաշխութիւնը որքան կարող են գրաւական լինել նոցա վարմուն-
քի ու մտածմունքի շիտակութեան և ազնուութեան...

Զուլայի դատը եկաւ ցոյց տալու ամեն մի թերթի և նոյն իսկ
ազգերի վերաբերմունքի եղանակը դէպի մի այլ երկրի հայրենական
խնդիրը: Դա մի փորձաքար էր և մեծ փորձաքար այն բանի հա-
մար թէ արդեօք որքան է աշխարհքումս ծաւալել ազգերի համե-
րաշխութեան գաղափարը: Ահա մի նշանաւոր դէպք, ուր մի մեծ
երկրի հասարակաց կարծիքը մի գործի համար, որը մեծապէս շո-
շափում է իւր ապահովութեան խնդիրը, դիմետարապէս տարբեր-
ւում է մնացեալ աշխարհի ընդհանուր կարծիքից: Բայց ոչ թէ այն
պատճառով, որ ամենքն էլ թշնամի են այդ երկրին, այլ որովհետև
միևնոյն խնդրի ծանրակէտը մէկի համար մի բանն է, միւսների
համար՝ մի այլ բան: Մինչդեռ Փրանսիացու համար կարևորագոյնը
ներկայ դէպքում Դրէչֆուսը է, որի ազատելու համար դեռ ևս
միջոցներ կան, եթէ նորա անմեղութեան համար ապացոյցներ
գտնւին, այլ կարևորը Էստերհագին է, որի մասին Զոլան պնդում է
թէ «դաւաճան է, բայց զինւորական կառավարութեան հովանաւոր-
ութիւնն է գտնում», — օտար ազգերի համար, ընդհակառակը, զըլ-
խաւոր հետաքրքրութեան կէտը Դրէչֆուսն է, որը, սխալ թէ ու-
զիղ, իբր թէ զոհ է գնացել մի դատաստանական սխալի: Եւ եթէ
դէպքը պատահած լինէր, օրինակ, Խաւիաչում, մենք կը տեսնէինք
նոյնը. իտալացոց համար ծանրութեան կէտը կը լինէր այն, ինչ
այժմ Պրանսիացում նկատեց, իսկ մնացեալ երկիրների համար
ծանրութիւնը կը գնւէր միւս կէտի վրայ: Սչդ մենք բացատրում
ենք ազգերի փոխադարձ յարգանքի պակասութիւնով դէպի ամեն
մի ազգի հայրենիքը: Այս միտքը այլ խօսքերով մենք չայտնել ենք
նաև անցեալ անգամ. իսկ Փրանսիական ներկայիս մինիստր-նախա-
գահ Մելլինը այդ նոյնը յայտնեց Զոլայի դատից յետոյ պատգա-

մաւորների ժողովում: «Այն, ինչ որ պատահեց մեր երկրում, ասաց նա, տխրալի արձագանք գտաւ արտասահմանում: Օտար մամուլի մի մասը ամենայն թեթեւութեամբ սկսեց գուշակել... այն ամեն վատը, ինչ մենք կարող կը լինէինք ասել մեզինքներն իս մասին, մեր դատարանի մասին, մեր զօրքի պետերի մասին: Դա առմիշտ պատիժ կը մնայ նոցա համար, որոնք վատ են խօսում Ֆրանսիայի մասին՝ արտասահմանում հաւանութիւն գտնելու նպատակով»: Մեկինի այդ խօսքերը արժանացան բուռն ծափահարութիւնների պատգամաւորների ժողովում: Եւ արդար էր! Մենք կ'աւելացնենք միայն, որ դա միայն Ֆրանսիացոց արածութիւնը չէ արտասահմանում իրենց մասին վատ խօսել տալ, այլ այդ երեւոյթը ընդհանուր է: Մենք այդ վկայում ենք ցաւօք սրտի, բայց աւելացնում ենք, որ այդ կատարում է ամենամեծ մասամբ թեթեւամտութիւնից և նրանից, (և այդ իսկապէս նոյնն է), որ մամուլի մէջ ամեն մի շնչին գրչակ կամենում է գրող ու մտածող ձևանալ իւր ընթերցողների առաջ՝ ոչ թէ՛ իսկական կրիտիկա բանեցնելով, այլ բռնաւ լինելով կրիտիկոսական ցաւով:

Այդ երեւոյթը իւր ամենամեծ այլասեռութեամբ կարելի է նկատել քաղաքական կեանք չտեսած ազգերի մամուլի մէջ. մի մամուլ, ուր թութակութիւնը դնում է մտածողութեան տեղ, պարծենկոտութիւնը՝ պատասխանատուութեան տեղ: Քաղաքական կեանքին ու քաղաքացու պատասխանատուութեան անսովոր այդ ազգերի մէջ դուք կը գտնէք մեծամտութեան արտասովոր օրինակներ: Վերցնենք իբր օրինակ մեր փոքրիկ ազգը, որը իննը տասերորդով դեռ համակւած է այն զգացմունքով, որ մենք անցեալ ամիս, մի այլ յօդուածում, անւանեցինք «կրկնակի հպատակութեան» զգացմունք. մի ազգ քաղաքացիապէս դեռ ևս այնքան անզարգացած, որպէս ոչ մէկը Ֆրանսիայի կամ Անգլիայի ամենայետնեալ անկիւններից: Եւ վերջէք այդ ազգի մէջ տարածւած մի թերթ. և ահա եթէ մի «Մշակ» այսօր, Զոլայի գատի առթիւ, կը պնդի և կը տարածի մեր խեղճ ազգի մէջ թէ Ֆրանսիան մի ընկած և խաւար երկիր է, որ այնտեղ ժողովուրդը «մարդակերներ» են, այդ նոյնն է, ինչ ամիսներ առաջ՝ նոյն թերթը, Վիկտորիա թաղուհու 60-ամեայ կառավարութեան յօբելեանի առթիւ, վեց թէ տասը համարներում

կաշւից դուրս էր դալիս ապացուցելու համար թէ Անգլիան ոչ այլ ինչ է եթէ ոչ մի բարբարոս երկիր, և որ Անգլիայի այդ 60 տարուայ պատմութիւնը ոչ այլ ինչ է, եթէ ոչ նոյնքան թւով սև էջեր համաշխարհային պատմութեան մէջ...

Մուրճը, այդ տենդենցիաների մէջ վնասակար ուղղութիւն նկատելով, իւր նւիրական պարտքը կը համարի ընդդիմանալ այդ թեթևամիտ և կեղծ արհամարական վերաբերմունքին դէպի լուսաւորութեան ջահակիր ազգերի առաջնորդող սկզբունքները, որոնցով նոքա ղեկավարուում են իրենց առաջդիմութեան շաւղում:

Այս բոլոր խորհրդածութիւնները, սակայն, բնաւ չպէտք է ազդեն ընթերցողի այն եզրակացութիւնների վրայ, որ նա կարող է դուրս բերել Զոլայի գործի դատավարութիւնից: Բոլորովին այլ բան է՝ դատավարութիւնից առաջ շտապել դատավճիռներ կարդալ, ինչպէս այդ թոյլ տւեց իրեն մամուլի մի մասը, և այլ բան է՝ դատավարութեան հետևելով և հարց ու պատասխանները լսելուց յետոյ՝ կարծիք կազմել:

Անցնենք ուրեմն այդ կէտերին:

Զոլան իւր նամակում պնդում էր թէ Դրէյֆուսը անմեղ է. նա պնդում էր թէ դատաւորները նորան դատապարտելով՝ ի նկատի են ունեցել ոչ այնքան բորդըրօն, որքան մի գաղտնի դոկումէնտ (ուր կան այս խօսքերը «Այդ կանտիա Դ...»), որը պատերազմական մինիստրութիւնը (կամ գլխաւոր շտաբը) ցոյց է տւած եղել միմիայն դատաւորներին, բայց որը ցոյց չի տւած եղել Դրէյֆուսին և նորա փաստաբանին (Դլմանժին), և Զոլան պնդում էր նաև, որ նոյն իսկ այդ դոկումէնտը կեղծ է եղել:

Արդ, Զոլայի գործի դատավարութեան մէջ չէր մտնում Դրէյֆուսի գործի վերաքննութիւնը. այդ պատճառով որքան էլ աշխատում էր Զոլայի փաստաբանը (Լաբորի) վկաներին տւած իւր հարցմունքներին այդ ուղղութիւնը տալ, դատարանի նախագահը (Դըլլ-գորգ) արգելք էր լինում, հիմնւելով օրէնքի վրայ, որը արգելում է շեղւել մեղադրական կէտից. իսկ Զոլային պատասխանատուութեան էին կոչել միմիայն ապացուցանելու համար, թէ էստերհազինն ան-

պարտ արձակելով՝ զինւորական դատարանը իբր թէ հետեւել էր գլխաւոր շտաբի հրամանին: Այդ պատճառով Վրէջֆուսի մասին ներկայ դատավարութիւնը բնականօրէն մեծ լոյս չսփռեց: Բայց և այնպէս, գրգռած Զոլայի փաստաբանի ահագին ճիգերից Վրէջֆուսի վրայ բերել խօսքը, գլխաւոր շտաբի պետ զեն. Բուադէֆր, նախկին պատերազմական մինիստր զեն. Մերսիէ և զեն. Պելլիէօ հարկ համարեցին, շեղւելով խնդրից, դրականապէս պնդել և իրենց խորին համոզմունքը յայտնել Վրէջֆուսի մեղաւորութեան մասին, հիմնելով իրենց գիտեցածների վրայ թէ Վրէջֆուսի դատավարութիւնից առաջ, թէ դատավարութեան ժամանակ և թէ դատավարութիւնից յետոյ: Նոյն բանը պնդեց այժմեան պատերազմական մինիստր զեն. Բիլլիօն՝ պատգամաւորների ժողովում վեց անգամ: Իրողութիւնները իմանալու ամեն հնարաւորութիւն ունեցող այդպիսի անձերի վկայութիւններին, որպէս մենք կարծում ենք, պէտք է մեծ պատկառանքով վնասներել: Եւ այդպէս էլ վերաբերեց Ֆրանսիական ազգը: Թէև այդ պատկառանքը անհնարին չի կացուցանում Վրէջֆուսի դործի վերաքննութիւնը, եթէ մի որ և է նոր հանգամանք գտնելի, որը, որպէս օրէնքը պահանջում է և թոյլատրում՝ այդ վերաքննութեան առիթ կարողանայ լինել: Երկնակ, եթէ ապացուցւի թէ Վրէջֆուսին դատապարտել են ոչ թէ բորգըրօի հիման վրայ, այլ մի գաղտնի մնացած զոկումէնտի, այն էլ՝ կեղծ զոկումէնտի: Շատ կարելի է որ գաղտնի զոկումէնտ եղել է, բայց շատ կարելի է նաև, որ բորգըրօի և այլ հանգամանքների վրայ հիմնելով՝ դատաւորները դատապարտել են Վրէջֆուսին, իսկ գաղտնի մնացած զոկումէնտը կկել է միայն ուժեղացնելու դատաւորների համոզմունքը և ոչ թէ այդ համոզմունքին զլխաւոր հիմք ծառայելու:

Գանք այժմ Էստերհազիին: Զոլայի գատից էլ առաջ, երբս զեկոնսմբերին, զեռ. քննում էր Էստերհազիի դործը (Վրէջֆուսի եղբայր Մատթէոսի զանգատի հիման վրայ), յայտնի էր որ այն բորգըրօի ձեռագրութիւնը, որ հիմք էր ծառայել Վրէջֆուսին դատապարտելուն, շատ նման է Էստերհազիի ձեռագրութեան: Բայց չէ՞ որ էքսպերտները գտել էին որ այդ ձեռագրութիւնը ունի նաև Վրէջֆուսի գրութեան յատկանիշները:

Յայտնի եղաւ նաև, որ Էստերհազին մտերմական նամակներու մանրատեսակ կերպով է վերաբերելիս եղել դէպի Ֆրանսիական զօրքի կառավարիչները (նամակներ տիկ. Բուլանսի'ին): Սակայն այդ հանգամանքները չէին կարող ապացոյցներ լինել թէ Էստերհազին նաև դաւաճան է: Եթէ միայն Գրէյֆուսները որոնելիս են եղել մի զինւորականի, որին կամեցած են եղել զոհաբերել՝ Ալֆրէդ Գրէյֆուսին ազատելու համար, ի հարկ է նոքա հետամուտ կը լինէին գտնել մէկին, որի թէ ձեռագրութիւնը նման լինէր բորդըրօ'ին (ուրբմն նմանութիւն ունենար Գրէյֆուսի ձեռագրութեան) և թէ որին կարելի լինէր կասկածելի դարձնել իբր ստորագրեալի: Սակայն այս էլ կայ, որ տիկին Բուլանսի'ն Էստերհազիի գրած նամակները երևան չեկան գատարանում. և բոլորը ինչ յայտնեց այդ մասին, յայտնեց միայն Ձոլայի պաշտպանների բերանացի հազորածովը: Եթէ տիկ. Բուլանսի'ն, Էստերհազիի նախկին բարեկամուհին, այդքան թշնամացել էր նորա հետ, ինչու չհամարձակեց գատարան գալ ու գոկումէնտներով վկայութիւն տալ:

Գանք այժմ զնդապետ Պիքար'ին: Սա է ամենազխաւոր վզան Ձոլայի. նա է, որ գտել էր Էստերհազիին և որից ծագել էր Էստերհազիի խնդիրը: Պիքարը կենտրոնակէտն է այս ամբողջ գործի: Պիքարը եղել է պետ լրտեսութեան բիւրօ'ի պատեհազմական մի-նիստրութեան մէջ, 1896-ին, իբր ստորագրեալ գեներալ Գոնզի (օգնականը շտաբի պետ Բուլայէֆր'ի), երբ սկսեց հետամուտ լինել Էստերհազիին: Նորա վկայութիւնները վճռողական նշանակութիւն կ'ունենային, եթէ միայն նա ինքը իւր մի շարք գործողութիւններով կասկածելի չերևար: Ընթերցողները այդ ամենի հետ կը ծանօթանան Ձոլայի դատավարութիւնից, որի մանրամասնութիւնները զետեղում ենք ստորև: Պիքարի պատճառով է որ Շերեր-Կէստներ սենատորը խառնեց գործին արդարադատութիւն պահանջելու, որի համար և դատեցին Էստերհազիին. և զոքա էին, որ համոզմունք էին ստեղծել Ձոլայի մէջ՝ թէ Գրէյֆուսը անմեղ է, Էստերհազին դաւաճան և այլն:

Որ Ձոլան ասպարէզ գալով, ղեկավարել էր ազնիւ մտածմունքներով, առանց չետին նպատակների, — այդ պէտք է լինի դուրս կասկածից: Ազնիւ նպատակը սակայն չի արդարացնում մէկի ամեն

քայլը. և մարդս պատասխանատու է օրէնքի և խղճի առաջ թէ այն դէպքում երբ լաւ նպատակ ունի, և թէ՛ երբ վատ նպատակ ունի. երկրորդ դէպքում նա իւր անունն էլ հետն է արատաւորում: Զուան, սակայն,—և այդ քաղցր է մեզ համար հաստատել,— շարատաւորեց իւր անունը, բայց պատժեց, իբր պատասխանատու քաղաքացի: Երդեւանների դատարանը վճռեց որ Զուան, չկարողանալով ապացուցել իւր պնդածը գլխաւոր շտաբի իբր թէ դատարանին տւած հրամանի մասին, մեղաւոր է. ձայների մեծամասնութեամբ նա զատապարտեց մի տարի բանտարկութեան և 3000 Ֆրանկ տուգանքի (մամուլի միջոցով արած զրպարտութեան համար որոշւած ամենամեծ պատիժը): Այդ դատավճիռը ընդունուեց մեծ ոգևորութեամբ հանդիսականների կողմից և հաւանութիւն գտաւ ամբողջ երկրում. իսկ այդ առթիւ պատգամաւորների ժողովը՝ վստահութեան քւէ տեց մինիստրութեան ճխլոզ մեծամասնութեամբ՝ 428 ձայնով ընդգէմ 54-ի:

Մի վերջին կէտ ևս—բարոյական կողմից անշուշտ ամենակարեւորը: Գունեցան շատերը, որոնք Զուլուջի քայլի մէջ կամեցան տեսնել մի հակացական կռիւ զինւորապետութեան դէմ, այսինքն այն կարգի դէմ, երբ զինւորականութիւնը, փոխւելով կաստայի, այնպիսի դիրք է հաստատում իւր համար, որ նա կանգնում է վեր քան օրէնքը: Այդպիսի կարգերի մէջ քաղաքացիականը ճնշւում է զինւորականից և մի երկրի քաղաքական կեանքին ուղղութիւն տուողը զաւնում է զօրք յանձին նորա պետերի: Ով Զուլուջի քայլի մէջ այդ ձևի հերոսութիւն է նկատում, մենք աւելի լաւ խորհուրդ չէինք կարող տալ քան առաջարկել կարգաւ Զուլուջի բոլոր վէպերը, այն նպատակով, որ այդպէս մտածողը սովորի Զուլուջից երեւակացութիւնը չդնել իրականութեան տեղ, սովորի իղէալականի մէջ եւս նատուրալիստ լինել: Զուան և Վաբորիի քտնի քանի անգամ դատարանում վկայեցին իրենց կատարեալ յարգանքը գէպի ներկայիս զօրքը. նոքա յայտնեցին նաև, որ ոչ թէ զուա կամաչականութեանն զո՛հ է եղել Ղրէջֆուս, այլ միայն մի ռդատաստանական սխալի, մի լսխալ, որ (նոցա ասելով) յառաջացել է նրանից, որ զինւորական բարձր իշխանութիւնը համոզւած է նղել Ղրէջֆուսի մեղաւորութեան մէջ, թէև (նոցա

ասելով) եթէ գաղտնի դոկումէնտը ցոյց տւած լինէին Դրէչֆուսին և նորա փաստաքանին (որ ասել է թէ գաղտնի դոկումէնտը հրատարակութեան տային) — Դրէչֆուսը իբր թէ արդարացրած կ'լինէր. ուրեմն Դրէչֆուսը իբր թէ զո՞հ է գնացել մի ազատաստանական սխալի: Զոյան աւելի էլ է որոշում իւր միտքը. նա յայտարարում է թէ գլխաւոր շտաբին սխալացնողը եղել է գնդապ. Պատի զը Կլանը, որին յանձնուած է եղել Դրէչֆուսի գործի նախնական քննութիւնը, և որ այդ քննիչը թնթնամտաբար է արել իւր եզրակացութիւնները Դրէչֆուսի մեղաւորութեան մասին:

Ի՞նչ զինտրապետութեան խնդիր կայ այստեղ...

Իսկ գալով Էստերհագի գործին՝ Զոյայի պնդածը սա է, թէ զինւորական երկրորդ դատարանը, թէև համոզուած է եղել որ տուջին դատարանը ազատաստանական սխալ է գործել, բայց վախեցել է այդ սխալը հրապարակ հանել, որովհետև դորանով գլխաւոր շտաբի պրեստիժը կ'նստմանար: Զոյան պնդում էր, որ Էստերհագի գործի նախնական քննութիւնն էլ հէնց նոյն պատճառով անաչառ չի եղել, և որ ինքը, Զոյան, այդ բոլորը կ'ապացուցի երկեւալ դատարանների առջ:

Այս է զինտրապետութիւնը?

Ոչ, պարոններ, զինւորապետութիւն գորան չեն ասիլ: Զինւորապետութեան միակ փորձը Ֆրանսիական այս երրորդ հանրապետութեան 27 տարւայ կեանքի մէջ մենք միայն մէկն ենք ճանաչում, և դա էր հանրապետութեան դէմ լարած այն վիթխարի դաւը, որի գլուխ կանգնեց զենեւալ Բուլանժէն 1888—89-ին: Եւ այդ խաբեբայի դէմ հանրապետական կառավարութիւնը, վստահ երկրի ամբողջ զօրքի օրինական զգացմունքների վրայ, իմացաւ պաշտպանել, առանց մազաչափ անգամ շեղելու օրէնքների արամադրածից...

Ի հարկ է, Ֆրանսիական հանրապետութեան բնաւ փոյթը չէր հետաքրքրել իմանալու թէ այնտեղ, շատ երկիրներից դէնը, թիֆլիս քաղաքում մի հայկական թերթ, «Մշակ» անունով, գեռ բառեր էր գտնում մի տեսակ բողոքելու Ֆրանսիական կառավարութեան ինքնապաշտպանութեան դէմ, գտնելով որ այդ կառավարութիւնը «խիստ է վարւում ազատութեան դաւադիր խաբեբայի և նորա կուսակիցների դէմ և որ դա վայել չէ Ֆրանսիական հանրապետութեան...

Ա. ԱՐԱՍԻԱՆԵԱՆՅ

Ստորև մեր ընթերցողները կը գտնեն 1) Զոլայի մասին մի քանի կենսագրական տեղեկութիւններ, 2) քաղաճք Զոլայի նամակից, ուղղած նախագահ Ֆորին, և ապա 3) Զոլայի դատաւարութեան ընդարձակ մանրամասնութիւնները, որից այս անգամ տալիս ենք մի կարևոր մասը, թողնելով միւս մասը գալ անգամին:

ՋՈՒԱՅԻ ԳՈՐԾԸ ԵՐԴԻԵԱՆՆԵՐԻ ԴԱՏԱՐԱՆՈՒՄ

Էմիլ Զոլա: Զոլայի հայրը մի դալմատիացու որդի էր և թափառում էր ամբողջ Եւրոպա բազմ որոնելու, մալրը նեարդալին հիւանդութիւն և ռեւմատիզմ ունէր: Աղքատութիւնը Զոլայի մանկութեան և պատանեկութեան ուղեկիցն էր, և 20 տարեկանում նորա ապրուստը օրական վեց սու (10—12 կոպէկ) էր. սնուում էր հացով, կոֆէով և ապելսիններով: Մայրը կորցրեց մի դատ, որի վրայ մեծ չուս էր դրել: Զոլան մտաւ մի առևտրական առն, ամիսը 70 ֆրանկով: Նա այդ ժամանակ անց էր կացնում իւր կեանքի ռոմանտիկական շրջանը, հետևում էր Վիկտոր Հիւգօին: Բազմը շուտով ժպտաց նրան.—նա մտաւ Հաշէտի հրատարակչական ֆիրման 1.500 ֆրանկ տարեկան ռոճկով: Ռոմանտիզմի ազդեցութեան ներքոյ նա գրել էր առաջ Contes à Manon: Այժմ նա այլ ուղղութեան հետևեց, բայց Հաշէտը մերժեց տպել իւր գործակատարի գրածները, և Զոլան ստիպւած եղաւ իւր գրածքների համար դիմել բուլւարային լիտնեալ թերթերին: Վիլմեսան սկսեց սակալն ընդունել նորա գրախօսական նկատողութիւնները և շուտով «Ֆիգարօ» լրագրի գրախօսական բաժնի գլուխ կանգնեցրեց: Լրագրութեան հետ անմիջական շփումը փեղաշրջում առաջացրեց Զոլայի հալեացքների մէջ գրականութեան վրայ: Ռոմանտիզմը մի կողմ չըպըրտեց և նորա տեղ կանգնեց նատուրալիստական լալն դրօշակը, և աչնքան եռանդով, որ դորա դէմ կանգնեց Ֆիգարօ'ի խմբագրութիւնը ինքը: Բայց Զոլան աչնուամենաչնիւ ջերմ կպաւ իւր ծրագրին, որ էր վէպերի մի շարք, որ պիտի գար լրացնելու Բալզակի La comédie humaine ռոմանների—Լըկլէրկ. բայց նա ետ մտածեց. Զոլան ապա դիմեց մի աւելի կարող հրատարակի—Շարպանտիէ'ին, որը համաձայնեց: Շարպանտիէն ապահովցրեց Զոլային տարեկան 20.000 ֆրանկով և վերջինս տաք կպաւ գործին, բնակարան վարձելով Պարիզին մօտ մի կալւածքում: Նա գրեց վէպ վէպի վրայ, որոնք դանդաղ բայց հաստատապէս ճամբա էին հարթում գէպի հռչակը. բայց երբ լուս տեսաւ Ռուզոն-Մաքարիների շարքի եօթերորդ վէպը—L'Assomoir - Զոլայի փառքը հաստատուեց: Ռոմանի մէջ չաճախ պատահող անհամեստութիւնները բարձրացրին մեծ փոթորիկ մի

կողմում, մեծ գովեստներ այլ կողմում: Այդ բոլորը շուտով դրամալի փոխադրեց, և հասարակութիւնը հեղեղեց Պարիզի թատրոններից մէկը, որը տալիս էր այդ դրաման. և երբ ներկայացումը կրկնեց 100-երորդ անգամ,—այդ նկատեց որպէս խոշոր անցք: Ի չիշատակ դորա՝ բարեկամները սարքեցին bal-assomoir, ուր հասարակութիւնը եկաւ վէպի գործող անձերի զգեստներով. ցինկագործ կուպօ, դարբին Գուժոն, գրակ շինող Լանտիւ, լւացարարներ Ժերվէզ և Վիրժինի,—բազմաթիւ օրինակներով աչնտեղ էին. միայն Ջոլան էր ֆրակով: Նորա ստեղծած նատուրալիզմը սպառնում էր մտնել բոլոր գրական և արտիստական շրջանները և շօշափել նաև գրականութեան հետ կապ չունեցող աշխարհը: Եւ նա գրեց «Հանրապետութիւնը և գրականութիւնը», ուր նա, Թիերի չալտնի խօսքը՝ «Հանրապետութիւնը պահպանողական պիտի լինի,—այլապէս նա չի լինիլ» պերեֆրազելով ասաց՝ «Հանրապետութիւնը պիտի նատուրալիստական լինի—կամ նա հանրապետութիւն չի լինիլ»: Ջոլան այդտեղ չալտարարում է թէ նատուրալիստական քաղաքականութեան դուռն է Գամբետտա՛ն, մինչդեռ այլ հանրապետականները կամ բողոքական դոքորինետրներ են և կամ աթեիստական ֆանատիկոսներ, որոնց երազն է Ռոբեսպիէր և Մարատ: Գամբետտայի օպպորտունիզմը նա նկատում էր որպէս փորձի տրւածների գործադրութիւնը: Բայց Ջոլան շուտով ետ կանգնեց այդ հալեացքից, գտնելով որ այդ հանրապետութեան մէջ աւելի շատ «տեղ փնտրողներ» կան, քան «աթենացիք»:

Բայց Ջոլան կուտղ էր միայն թղթի վրայ, մասնաւոր կեանքում նա խաղաղ կեանք վարող է: Աւելի ուշ, երբ հարստացաւ, նա շինել տեց Պարիզի կենտրոնում մի շարք պալատներ, բայց ինքը ապրում էր քաղաքի աւելի հանգիստ տեղում Բրիւսելեան փողոցում, բայց տարաւ մեծ մասը անց է կացնում Մեդանո՛ւմ, ուր նա ունի մենաւոր վիլլա, որը ներկայացնում է մեծ շինութիւն երկու թիւերով և մեծ պառկով, որից դէնը ձգւում է մեծ դաշտ, որը նոչնպէս նորա սեփականութիւն է. դա վերջանում է Սեն գետի կղզիներից մէկի մօտ, ուր շինւած է մի խրճիթ շէջարական ոճով և որի մօտ կանգնած են երեք մակուկներ. դոցանից մէկի վրայ, որ «Նանա» է կոչւում, սովորաբար կիրակի օրերը Ջոլան իւր հիւրերի հետ զբօսանք է կատարում: Իւր վիլլայի մէջ Մեդանում կալ եկեքտրական լուսաւորութեան համար մեքենաների փոքրիկ բաժանմունք: Ջոլայի կարինէտը տան ամենամեծ սենեակն է, մի դահլիճ, մեծ բալկոնով, որի վերը, պատի դրեթէ ամբողջ երկարութեամբ, զարդարւած է նկարչութեամբ ապակու վրայ, XV-րդ դարից: Այդ նկարը մի ժամանակ մի վանքի մատուռումն էր և ներկայացնում է սուրբ Մազդազենի պատմութիւնը: Ջոլայի աթոռը մի առաջին միջնադարեան բազկաթոռ է: Ջոլայի կենցաղավարութիւնն էլ պարզ է: Վեր է կենում առաւօտեան 7 ժա.

մին և իսկոչն ընդունում սառը վաննա. ապա ընդունում է մի ձու, դրօսնում պառկի մէջ իւր շան հետ, ժամը 9-ին նստում է պարսպելու, գրելով մինչև ժամ 1 կէսօրից չետոյ: Այդ չորս ժամամ նա գրում է մօտ չորս տպագրական երես: Նախաճաշելուց չետոյ նա հագնում է մի պարզ կոստիւմ և գնում է թափառելու երեք ժամ կամ մանգալու վիլոսիպեզի վրայ. վերադառնալով աչքի է անցնում լրագրերը և գրում է նամակներ, մինչև որ զանգը ճաշի է հրաւիրում: Ուտում է մեծ մասամբ բուսեղէն և շատ քիչ միս. ոչ խմում է, ոչ ծխում. հիւրերի խաթեր ընդունում է մի րիւմկա բենեգրիկտեան լիքէօր: Չի խմում նաև ջուր և ոչ գարեջուր ու սուրճ, այլ միայն երկու թաս թէյ, մէկը ժամը 5-ին կէսօրից չետոյ, միւսը գիշերուայ 11-ին: Ճաշից չետոյ նա խաղում է բիլիարդ իւր բարեկամներից մէկի հետ, և երբ չիւր չկայ—լսում է իւր կնոջ նազելը դաշնամուրի վրայ: Ժամ 9-ին նա նորից իւր կաբլինետումն է, ուր պատրաստում է նիւթեր չաջորդ օրւան համար. 11-ին նա պարկում է անկողին և կարդում մինչև գիշերուայ ժամ 1-ը: Նեարդերը շատ զօրեղ լինելով՝ նա բաւականանում է վեց ժամ քնով:

Ձուան ոչ միայն հռետոր չէ, այլ չունի նոյն իսկ շնորհք քաղաքավարական մի կենացով շնորհակալութիւն չալտնելու: Ահա ինչու Ձուայի բարեկամները շատ անհանգիստ էին այն բանի համար, որ Ձուան պիտի Կրէյֆուսի դատը պաշտպանէր դատարանական ամբիոնի վրայ:

Ձուայի նամակը Փելիքս Փորին: Ահա Ձուայի նամակից՝ տպած Aurore լրագրում և ուղղած հանրապետութեան նախագահ Ֆորին՝ այն կտորը, որի հիման վրայ նա երգեակների դատարանը կանչեց:

«Ձինւորական դատարանը համարձակեց, հրամանով վերեց, արդարացնել էստերհազիին, և այդ դատավճիռը ապտակ է ամեն ճշմարտութեան, ամեն արդարութեան: Գործը, ի հարկէ, թողեց Ֆրանսիայի երեսի վրայ կեղտոտ հետք, և պատմութիւնը կը գրի որ այդպիսի չանցանք կատարեց ձեր նախագահութեան օրօք: Այժմ, որպէս նոքն համարձակեցին, ես էլ կը համարձակեմ: Ես կ'ասեմ ճշմարտութիւնը, և թէ արդարադատութիւնը ամբողջապէս այն չի բացարել: Ես պարտաւոր եմ խօսել այն պատճառով, որովհետև չեմ կամենում չանցակից լինել: Թէ չէ գիշերները ինձ կը սկսէր հալածել ուրականը մի դատապարտւածի, որ մի հեռաւոր տեղում կրում է սարսափելի տանջանքներ, քաւելով մի չանցանք, որ նա չի կատարել: Այդ ճշմարտութիւնը ես կը բղաւսմ ձեզ, պ. նախագահ, իմ բոլոր ոյժերովս: Ի չարգանս դէպի ձեզ, ես համոզւած եմ, որ այդ չալտնի չէ ձեզ: Ո՛ւր առաջ մերկացնեմ իսկական մեղաւորների վնասակար խումբը, եթէ ոչ երկրի առաջին բարձր աստիճանաւորի առաջն»:

Ապա Զոլան ասում է որ դատաստանական այս դարհուրելի սխալի առաջին մեղաւորն էր Գրէչֆուսի գործի քննիչ՝ մալոր Պատի դը-Ալամ, որը բորդըրօրի առթիւ եղած հետախուզութիւնների ժամանակ՝ իսկոյն վճռել էր թէ նորա հեղինակը պէտք է լինի շտաբի օֆիցէր և արտիւբ-րիսա. և, Զոլալի ասելով, այդ ոչ մի բանի վրայ հիմնած վճռին գալով՝ նոյնքան արագութեամբ նա կասկա՝ տարաւ Գրէչֆուսի վրայ:

«Այդ ժամանականից—չարունակում է Զոլա—Գրէչֆուսի գործը դա-ռաւ նորա անձնական գործը: Նա իւր վրայ առաւ մերկացնելու դաւաճա-նին, հասցնելու նորան մինչև կատարեալ խոտտովանութիւն: Նա իւր կողմը քաշեց պատերազմական մինխտր գեներալ Մերսիէին, մի մարդու, որի խելքը ըստ երևութիւն, հեռուն չէ կտրում, ապա գլխաւոր շտաբի պետ գեն. Բուադէֆր'ին, որը, ըստ երևութիւն, ենթարկեց կղերական ազդեցութիւննե-րի, և նորա օգնական գեն. Գոնզ'ին, որի խիղճը կարող էր շատ բաների հետ հաշտել: Բայց սկզբում վճռող դեր կատարում էր միայն Պատի դը-Ալանը, որը ղեկավարում էր ամենքին և ամենքին հիպոստացնում էր: Ոչ ոք չի հաւատալ, եթէ պատմենք այն փորձութիւնները, որոնց ենթարկւում էր Գրէչֆուսը, այն թակարդները, որ դնւում էին նորա առաջ, անմիտ հե-տախուզութիւնները, հրէշաւոր ֆանտազիաները»:

Ապա Զոլան անցնում է մեղադրական աքտին (1894 թ.).

«...Խօսում են չանցանքի 14 նշանների մասին. բայց մենք վերջ ի վերջու գտնում ենք միայն մէկը՝ բորդըրօն, և նոյն իսկ դորա մասին էլ էքսպէրաները միաձայն չէին: Խօսում են 23 օֆիցէրների մասին, որոնք իբր թէ մեղադրում էին Գրէչֆուսին: Մենք չգիտենք թէ ինչպէս էին նոցա հարց ու փորձ անում, բայց լալանի է, որ ոչ ամենքը նորա դէմ են ցոյց տել: Բացի այդ՝ նոքա ամենքը պատկանում են պատերազմական մինխտրութեան բիւրօին: Դա ընտանեկան պրոցէս է, որ կատարւում է իւր շրջանում: Գլխաւոր շտաբը ուղում էր պրոցէս, քննեց այդ այն ժա-մանակ և երկրորդ անգամ քննեց այս օրերս: Եւ այսպէս, մնաց բորդըրօն որի նկատմամբ էքսպէրաները միաձայն չէին: Ասում են թէ խորհրդակ-ցական սենեակում դատաւորները հակում էին մեղադրածին (Գրէչֆու-սին) արդարացնելու, որ շատ բնական կը լինէր: Գորանից Վտոյ հասկա-նալի է այն չուսահատ կամակորութիւնը, որով ալժմ աշխատում են բա-ցատրել դատավճիռը մի ինչ որ գաղտնի զոկումէնտի գոչութեամբ, որը իբր թէ չի կարելի ցոյց սալ, որը ամեն ինչ օրինացնում է, որի առաջ մենք ամենքս պիտի խոնարհենք, որպէս աներևութ և անձանաչելի Աստծու առջև: Եւ հերքում եմ այդ զոկումէնաը, հերքում եմ իմ բոլոր ուղերովս: Դա—սուտ է, նամանաւանդ զաղբիլի և ցինիկական, որ նորա հեղինակները ստում են անպատիժ կերպով, բայց որոնց հնար չկալ մեր-կացնելու:

«...Հետեապէս, եթէ նա (Գրէչֆուս) անմեղ ճանաչէր, ապա մեղաւորը կ'ընէր ամբողջ գլխաւոր շտաբը: Այդ պատճառով սա ամեն երևակալելի միջոցներով—մամուլի միջոցով, հաղորդագրութիւններով, ազդեցութիւններով,—ծածկեց էստերհազրին, որպէս զի Գրէչֆուսին երկրորդ անգամ դատապարտի»:

Ապա լիչելով որ զինւորական բիւրօները օգտուում էին ստոր, կեղտոտ մամուլի ծառայութիւններից, Զոլան ձեռնարկում է իւր մեղադրանքները աչպէս.

«Ես մեղադրում եմ ենթոնդապետ Պատի դը-Կլամ'ին աչն բանում, որ նա կատարողն է եղել—ակամայ, պատրաստ եմ խոստովանելու—աչն սատանալական գործի, որ տարաւ դէպի դատաստանական սխալը, և պաշտպանում էր իւր շարքաստիկ գործը երեք տարու ընթացքում ամենաանհեթեթ և ամենաչանցաւոր մախինացիաների միջոցով: Ես մեղադրում եմ գեներալ Սերսիէին աչն բանում, որ նա մեղսակից եղաւ մեր դարի ամենամեծ անարդարութիւններից մէկին: Ես մեղադրում եմ գեներալ Բիլլիօին (ալփմեան պատերազմական մինիստր) նրանում, որ նա ունէր իւր ձեռքերում Գրէչֆուսի անմեղութեան ապացոյցները, բայց ծածկեց, և որ աչլ չանցանքը նա գործեց ընդդէմ մտրդասիրութեան և արդարութեան, քաղաքական նպատակով և խաւտառակած (comprometté) գլխաւոր շտաբը ազատելու համար: Ես մեղադրում եմ գեներալ Բուաղէֆրին և գեն. Գոնգլին նրանում, որ նոքա գործակից են եղել նոյն չանցանքին, մէկը, անկասկած, կղերական կողմնապահութեան ազդեցութեան տակ, միւսը գուցէ աչն ընկերական ոգու ազդեցութեան տակ, որը զինւորական բիւրօները դարձնում է սուրբ, անձեռնմխելի տապան: Ես մեղադրում եմ գեներալ Պելլիէօին և մալօր Ռաւարիին նրանում, որ նոքա կազմակերպել են ոճիրաչին, աչսինքն ծաւրաչեղ չանցաւոր նախնական քննութիւն, որի անփութ արձանն է լիշածներից երկրորդի գեկուցումը, որը լիքն է միամիտ համարձակութիւնով: Ես մեղադրում եմ երեք էքսպերտ գրչագէտներին՝ Բելոմ'ին, Վարինար'ին և Կուար'ին նրանում, որ նոքա ներկաչայրել են ստախօս գեկուցումներ, եթէ միաչն բժշկական քննութիւնը չի ցոյց տալ թէ նոքա հիւանդ են աչքով կամ խելքով: Ես մեղադրում եմ զինւորական բիւրօները նրանում, որ նոքա մամուլի մէջ, մանաւանդ Eclair և Echo de Paris թերթերում զալրելի արչաւանք էին մղում՝ հասարակաց կարծիքը չչկլացնելու և իրենց սխալը ծածկելու համար: Վերջապէս ես մեղադրում եմ առաջին զինւորական դատարանը նրանում, որ նա խախտեց օրէնքը, դատապարտելով մեղադրւածին մի դոկումէնտի հիման վրայ, որ մնացել էր գաղտնի. իսկ երկրորդ զինւորական դատարանը նրանում, որ նա ծածկեց աչլ ապօրինութիւնները և իւր կողմից չանցանք գործեց, գիտակցաբար արդարացնելով մեղաւորին»:

«Այս մեղադրանքներն անելով գիտեմ, որ կատարում եմ վանցա-
ռութիւն: Ընդդէմ մամուլի օրէնքների, և այդ անում եմ գիտակցաբար:
Մարդկանց, որոնց ես մեղադրում եմ, ես չեմ ճանաչում, երբէք չեմ տեսել
և նոցանից ոչ ոքի դէմ անձնական բան կամ ատելութիւն չունիմ: Այն
աքտը, որ ես կատարում եմ, միայն լեղափոխական միջոց է, որով նպա-
տակ ունիմ արագացնել ճշմարտութեան և արդարութեան բռնկումը: Ես
զեկավարում եմ միայն մի կրքով, կիրք զէպի լուս լանուն մարդկութեան,
որը աչնքան տանջւել է և որը ունի իրաւունք բաղդաւոր լինելու իմ ջերմ
բողոքը միայն ողբն է իմ հոգու: Թող ուրեմն ինձ լանձնեն երդեալների
դատարանին և թող քննութիւնը կատարել բոլորովին բաց: Ես սպա-
սում եմ»:

Կառավարութիւնը Զոլալին դատի ենթարկեց այս գրութեան աչն
կէտի համար միայն, որ վերաբերում է երկրորդ զինուորական դատարա-
նին, թէ՛ իբր Էստերհազիին դատող դատարանը արդարացրեց նրան գըլ-
խաւոր շտաբի հրամանով:

Ա Ո Ա Ջ Ի Ն Օ Ր

Մուտքի տոմսեր: Մուտքը հասարակութեան համար տոմսերով էր.
ստիպւած էին թիւը շատ սահմանափակել. նույնը և ժուրնալիստների հա-
մար. չնայած որ Պարիզի բոլոր թերթերը ցանկութիւն ունէին ներկալա-
ցուցիչներ ունենալ, բայց տոմս տրւեց միայն 36 տեղի համար. այլ եր-
կիրների համար վճուեց այսպէս, —ամեն մեծ պետութեան մամուլի համար
տալ 3—4 տեղ, փոքր պետութիւնների մամուլի համար՝ մի-մի տեղ:

Դատարանի դահլիճը: Աթոռներ երդեալ դատաւորների համար և նըս-
տարաններ հասարակութեան համար. մեղադրողների համար լատկացրած
էր ոչ թէ նստարան, ինչպէս այդ լինում է սովորական մեղադրողների
համար, այլ նստարանի առջև դրւած էին աթոռներ, ինչպէս այդ անում
են Ֆրանսիալում մամուլի գործերի համար մեղադրողների և գրողների
համար: Մեղադրողները երկուք էին՝—Զոլա և պատասխանատու խմբա-
գիրը Aurore (Արշալուս) լրագրի, ուր ղետեղւած էր հանրապետութեան
նախագահ Ֆորին ուղղած Զոլալի նամակը:

Հատարակութիւնը աչնքան շատ էր, որ լքցրել էր ոչ միայն նստա-
րանները, այլ և դատաւորներին լատկացրած տեղերը,—Այդ բազմութեան
միջից մեծ դժարութեամբ է անցնում նույն իսկ Զոլան:

Գործող անձեր: Այս աղմկալի պրոցէսի մէջ ընթերցողները հանդի-
պելու են բազմաթիւ անունների, որոնք դեր են կատարում Կրէչֆուսի,
ասպ Էստերհազիի և վերջապէս Զոլալի գործում: Շփոթութեան դէմն առ-
նելու համար աչտեղ ղետեղում ենք նոցանից ոմանց անունները, վիշա-
տակելով նոցա ով լինելը և նոցա կատարած դերը:

Ալֆրէդ Գրէյֆուս գնդապետ, ծառայող պատերազմական մինիստրութեան մէջ, երբ մինիստրը գեներալ Մերսիէ'ն էր. 1984 թւին զինուորական դատարանի վճռով դատապարտւած իբր դաւաճան հալոհեմիքի և զըրկւած Սատանայի կղզին աքսոր, ուր նա պահուում է մեծակուրծեան մէջ, իրաւունք վաչելելով միայն՝ տարւալ մէջ երկու անգամ ճամակ գրել իւր ազգականներին և երկու անգամ ճամակ ստանալ—միշտ զխտութեամբ աքսորախորի վարչութեան: Գրէյֆուսները Էլզասցի շատ հարուստ ընտանիք են.

Գրէյֆուս Մատթէոս, առաջնի եղբայրը, որ 1897-ին խնդիր ւարուցեց եղբորը անմեղութեան մասին, պնդելով որ այն չանցաւոր գրութիւնը (բորղըր), որի համար իւր եղբայրը մեղադրուում էր երբ դաւաճան,—պատկանում է գնդապետ Էստերհազի'ին:

Գեմանժ—Գրէյֆուսի պաշտպանը 1894 թ.

Պատի դը Կլան, որին չանձնւած էր Գրէյֆուսի գործի նախնական քննութիւնը.

Կնդ. Ռուարի—որին չանձնւած էր Էստերհազիի նախնական քննութիւնը:

Գեն. Պելլէօ—Պարիզի հրապարակի հրամանատարը, որին չանձնեց Ռաւարիից չետոյ նախնական քննութիւնը Էստերհազիի գործի:

Սանդիէր, Պիքար, Հանրի—պատերազմական մինիստրութեան մէջ լըրտեսութեան բիւրօի պետեր, առաջինը երբ ճոր էր սկսւած Գրէյֆուսի գործը 1894-ին, Պիքարը 1895 և 96 թ., Հանրի՝ Նարանից չետոյ մինչև այժմ:

Կատարանի նախագահը է Իլլըգորգ (Delegorgue). Նա համարուում է վարպետ նախագահող, ցոյց է տալիս մեծ քաղաքավարութիւն: Վերջին ժամանակները նա նախադահել է մի քանի ազմկապուղ քրէական պրոցեսներում: Նա աչքի ընկնող տղամարդ է, սակաւ և գրեթէ ախոր մազերով և սպիտակ բակենբարդով:

Պաշտպանները: Զոլային պաշտպանում է փաստարան Լաբորի, մի բաւականին երիտասարդ մարդ (չուրջ 35 տարեկան), որը չալտնի է դառել շնորհիւ իւր պաշտպանութեան Վալեան (Vaillant) անիշխանականին: Իբր փաստարան՝ նա պատկանում է զառամեալ Բարթոլ'ի հետտրական ուղղութեան: Լաբորին բարձրահասակ է, բաց չէկ միտքով և սիրուն ղէմքով: Խօսում է մեծ պաթոսով: Որպէս զի կարողանալ ամբողջապէս նւիրել Գրէյֆուսի գործին, նա հրաժարեց թեկնածութիւնից մօտակալ (1898) պարլամէնտական ընտրութիւնների համար:

«Aurore» (Արշալուս) լրագրի պատասխանա՝ ու-խմբագիր ժորժ Կլեմանսօ'ի պաշտպանն է նորա հռչակաւոր եղբայրը՝ նախկին պատգամաւոր Ալբէրտ Կլեմանսօ'ն: Կ երջինս ունի ճշանաւոր հետտրակտն տաղանդ, մեծ տակտիկա, որի շնորհիւ նա կարողացել էր մի քանի մինիստրութիւնների

անկման պատճառ դառնալ: Հասակ առած մարդ է, միջասակ, ոչ ֆրանսիական դիմագծերով, սպիտակամազ և կարճ ու սև բեխերով: Նորա ծանօթութիւնը կորնելիոս Հերցի հետ և լուրերը թէ նա խառն է Հերցի արարքների մէջ (պանաման գործում) պատճառ եղան, որ նա անցեալ (1894 թ.) պատգաւորական ընտրութիւններին չը վերընարւեց: Գորանից չետոյ նա սկսեց գրել մի ֆիլոսոֆական գիրք: Անցեալ տարի նա հիմնեց *Aurore* լրագիրը, որը դառաւ Գրէյֆուսի դատի գլխաւոր պաշտպանը այն օրից, երբ Ֆիզարո լրագիրը հրաժարւեց ալդ դերից:

Առաջին նիստ (7 փետր. նոր տ.)

Գատախազի մեղադրականը, Գործի քննութիւնը սկսւեց կէս օրից չետոյ մօտ ժամ 1-ին: Սովորական ձևականութիւններից, դատաւորներին երդւեցնելուց, մեղադրողներին հաց ու փորձ անելուց չետոյ նոցա անունի և պարագմունքների մասին, դատախազ (պրոկուրոր) Վան Աաստէլ ոտի կանգնեց:

Նա ընդդիմանում է մեղադրողների գաղտնի գլխաւորութիւններին: Մեղադրանքը վերաբերում է Ջոլալի նամակի աջ կէտերին, որոնցով նա, Ջոլան, մեղադրում է երկրորդ զինւորական դատարանը, որը արդարացրել է Էստերհազիին. ալդ պատճառով դատական քննութիւնը չպիտի դուրս գալ ալդ կէտերի սահմանից: Խնդիրը պարզ է դրած, — զինւորական դատարանը արդարացրեց Էստերհազիին ստացած հրամանի հիման վրայ արգեօք, ինչպէս ալդ պնդում են մեղադրողները: Խնդիրը տեղափոխել և ալլ հողի վրայ դնել — կ'ընչանակի անլուր լանցանք գործել արդարադատութեան դէմ: Ոչ մի կերպ չի կարելի թոյլ տալ, որ մեղադրողները չեղեն ալդ զծից, որպէս դիտաւորութիւն ունին նոքա անելու: Այստեղ կամնում են չեղափոխական միջոցներով սկանդալալին վէճեր առաջացնել: Բայց ալդ հակառակ է օրէնքին. «Նիթէ, ասաց պրոկուրորը, կամնում են Գրէյֆուսի գործի վերաքննութիւնը չաջդեցնել, — թող դիմեն արդարադատութեան մինիստրին, թող ցոյց տան մի նոր հանգամանք, որը, օրէնքի տեսակէտից, կարող է առիթ ծառայել դատաւարութեան վերաքննութեան»: Ալդ հիման վրայ դատախազը բարեխօսում է, որ գործի դատական քննութիւնից դուրս դցեն Ջոլալի բոլոր ալլ մեղադրական կէտերը և որ մեղադրեալներին արդելի ալդ կէտերի մասին որևէ ապացոյցներ առաջ բերել:

Գատախազի աչս ճառը տևեց 1 1/2 ժամ:

Լաբորի. «Նա չեմ կարծում թէ դատախազի պատճառաբանութիւնները հիմնաւոր լինեն. (Ալդպէս սկսեց Լաբորին): Նիթէ դատարանը նոցա չարգի, ապա չի կարելի մերձենալ Խնդրի էութեան: Ալդ, մենք չոյս ունինք ու

համոզւած ենք, որ ներկայ դատավարութիւնը երևան կ'հանէ նոր հանգամանքներ, որոնք ոչ միայն կ'լառաջացնեն Դրէչֆուսի գործի վերաքննութիւնը, այլ և նորա մասին եղած վճիռը կատարելապէս կ'փոխեն: Այդ մենք կամենում ենք աջակցել որ գործը լուսաբանւի, և այլ ես կ'անեմ, երբ կ'դաշ րոպէն: Լիքը հաւատով դիմում եմ ես տասներկու ֆրանսիացիներին, որոնք այս րոպէին ներկայացնում են ամբողջ Ֆրանսիան: Պատերազմական միւստրը կամեցաւ, որ էստերհազիի գործը քննելիս՝ հրապարակականութիւնը որոշ շրջանակներով սահմանափակւի: Այդ՝ նորա իրաւունքն է: Բայց և մենք իրաւունք ունինք հարցնել նորան՝ ինչ հիման վրայ նա աչպէս վարեց: Չեմ կարծում թէ նա կարող լինի խոյս տալ այդ հարցին պատասխանելուց: (Կարծիս կարողմ է Ջոլայի նամակը՝ որ ուղղած էր հանրապետութեան նախագահ Ֆորին): «Ասացէք, չկա՞յ արդեօք ակնչաւտնի կապ մեղադրական բոլոր կէտերի մէջ, որոնք առաջ են բերւած աչ նամակում: Ինչպէս կարող ենք ապացուցել, թէ 1897 թ. ծածկեցին ապօրինի մի գործողութիւն, եթէ մեղսից լուրի կարելիութիւնը ապացուցելու թէ այդ ապօրինութիւնը իրօք կատարւած է: Հասարակաց կարծիքը դեռ բաւականաչափ տեղեակ չէ, նորան պէտք է պարզել գործը, նորա վրայ կատարեալ լուս սփռելով: Օրէնքը տալիս է ինձ այդ իրաւունքը. նա թող է տալիս ինձ ապացուցներ բերել աչն ֆակտերի վերաբերմամբ, որոնք չիշւած են մեղադրական աքտի մէջ, որպէս նաև վերաբերեալ աչն ամենի, ինչ որ կապ ունի նոցա հետ: Եթէ Ջոլան մեղադրուած է թէ նա զրպարտել է զինւորական դատարանը, որը արդարացրեց էստերհազիին, հետեապէս Ջոլային պէտք է միջոց տրուի ապացուցել, թէ էստերհազին մեղաւոր է. իսկ այդ էլ ըստ իւր հերթին պահանջում է որ ապացուցւի Դրէչֆուսի անմեղութիւնը: Ջոլան պէտք է ընդարձակի իւր ապացուցների շրջանակը՝ խօսելով աչն բորդըրօի մասին, որը զրւած էր Դրէչֆուսի և էստերհազիի գործերի հիմքում: Վերջապէս հէնց մեղադրական աքտի իրա մէջ ասւած է թէ Ջոլան զրպարտել է զինւորական զատարանը, պնդելով թէ վերջինս ծածկել է մի ապօրինի գործողութիւն: Պարզ է որ Ջոլային պէտք է իրաւունք տրուի ապացուցել, որ Դրէչֆուսի գործի մէջ կատարել են անկանոնութիւններ, որոնց էստերհազիի գործի քննութեան մէջ դատարանը ծածկել է: Այդ իսկ ապացուցները կ'պարզեն ամբողջ գործը հասարակաց կարծիքի համար, որը հաւատում է կատարւած վճռի հեղինակութեան, որովհետև համարում է որ դատավճիռը կատարելապէս կանոնաւոր կերպով է տրւած:

Հէնց որ կ'ապացուցւի որ դատավճիռը տրւած է անկանոն կերպով, նորա հեղինակութիւնն էլ կը կորչի: Ահա ինչու Դրէչֆուսի պաշտպանները ասպարէզ չեկան նորա գործը վերաքննելու պահանջով: Նոքա լուս ունէին, թէ Ջոլայի պրոցէսից կ'երևալ Դրէչֆուսի պրոցէսի անկանոնու-

թիւնը, և արդիսով պրոկուրորը ինքը հարկադրւած կը լինի զիմել վճռա-
ջինջ ատենանին պահանջով որ Գրէջֆուսի մասին կապացած վճիռը բեկան-
ւի: Չկալ օրինական դատավճիռ աջնտեղ, ուր ապօրինութիւն և անարդա-
րութիւն են կատարւած:

Ալբէրտ Կլեմանսօ միանում է Լաբորիի ասածներին: Նա խօսում է
պարզ, գործին վերաբերեալ և վարպետութեամբ, աշխատելով որ երդեալ-
ները հասկանան բանի էութիւնը:

Կաբան, փատտաբան, կամենում է մասնակցել պրոցէսին, իբր ներ-
կալացուցիչ Բէլմոն, Վարինար և Կուար Էքսպէրտների, որոնց մեղադրել
էր Ջոլան թէ նոքա զիսմամբ անկանոն էքսպերտիզ են կատարել:

Գատարանը, ետ քաշւելով աչս հարցերի մասին վճիռ կապցնելու
համար, կէս ժամից չետոլ չալտնեց, որ մեղադրողներին և նոցա պաշտ-
պաններին արգելում է ապացուցներ բերել որ և է հանդամանքի մասին,
որը չի չիշած մեղադրական աքտի մէջ: Գատարանը կարծիք չալտնեց թէ
Ջոլալի նամակում չօչափւած բոլոր ալ կէտերը ոչ մի կապ չունին աջն
կէտերի հետ, որոնք չիշած են մեղադրական աքտի մէջ: Գատարանը միա-
ժամանակ մերժեց էքսպերտների պահանջը աչս դատավարութեանը մաս-
նակցելու:

Վկաների դուրս կանչելը: Ժամ մօտ 3 ին լինում է մի փոքր դադար,
որից չետոլ նախագահը սկսում է վկաներին դուրս կանչել: Քարտուղարը
կարդում է վկաների ցանկը, որից չետոլ նախագահը չալտնում է փա-
տաբան Լաբորի'ին թէ ստացել է վկաներից նամակներ. ապա սկսում է
կարդալ ալդ 'ամակները. առաջին նամակը պատկանում է գեներալ Լիւք-
սէրին, որը նախագահել էր աջն դատարանում, որը քննել էր Էստերհազիին.
Նա ներողութիւն է խնդրում որ չի կամենում գալ, որովհետև անհրաժեշտ
է համարում ծառայութեան գործի համար լռութիւն պահպանել: Նոյն տե-
սակ է գրում նաև գնդապետ Դըրամէլ, որը Էստերհազիի պրոցեսում դա-
տաւորներից մէկն էր: Temps լրագրի քաղաքական բաժնի խմբագիր
Պրենսանսէ և Փրանսիական ինստիտուտի անդամ Պասսի պատճառ են բե-
րում իրենց հիւանդութիւնը:

Լաբորին համաձայն է հրաժարելու ալդ վկաներին հարց ու փորձ
անելուց:

Նախագահը կարդում է հանրապետութեան նախկին նախագահ Կադի-
միր Պեռիէ'ի նամակը, որով նա չալտնում է թէ չի կարող որ և է ցուցմունք-
ներ անել՝ առանց իւր պարտաւորութիւնների դէմ գնալու: Աջն դէպքում,
եթէ իւր ներկալութիւնը դատարանում հարկաւոր դատւի, նա կը ներկալա-
նայ, բայց միայն նրա համար, որ իւր աչս չալտարարութիւնը կրկնի:

Լաբորի: Վկալ Կազիմիր Պէռիէ'ի նկատմամբ պաշտպաններս իրա-
ւունք ենք վերապահում դատարան հրաւիրել նորան:

Դի Պատի դը Կլան: Նախագահը կարգում է Դի Պատի դը Կլանի նամա՛յը. վերջինս չափոնում է թէ չի կարող գալ դատարան, որովհետեւ նա ունեցել է գործ էստեբլիսակի դատի մէջ զոնփակ նիստերում, և որ հետևապէս պարտաւոր է ծառայական դադարի՛քները պահել:

Լաբորի՛ն սաստիկ բողոքում է դորա դէմ, ցոյց է տալիս որ գնդապետ դը Կլան՛ը եռանկեան քարն է ամբողջ գործի. նա ունեցել է սիրալին չարաբերութիւններ օրիորդ Բլանշ Կոմմէնժի հետ. սորա հալըը, իմանալով ալդ, պահանջել է որ օրիորդի գրած նամակները ետ տրուին. դը Կլանը դորա համար խոշոր գումար է պահանջել. գործի մէջ է մտել գեներալ Դաու, որի պահանջմամբ դը Կլանը ետ է տւել նամակները, բացի մէկից, ասելով թէ ալդ նամակը իրա մօտը չէ և գտնուում է մի տիկ. նոջ մօտ. միևնույն ժամանակ նա առաջարկած է եղել պ. Կոմմէնժին և իւր աղջկան գիշերով դալ Cours de la Reine, Սենալի ակիլն. որոշած ժամին դաման (տիկինը) եկել է ծպտեալ (չղարշով ծածկւած, la dame au voile) և չանձնել նամակը, ստանալով 500 Ֆրանկ, Գնդապետ Պիքարը, Պարիզից Թուսիսիա զնալուց առաջ, ստացա՛ծ է եղել ալսպիսի հեռագիր. «Բոլորը բացւած է. իմացել են որ դուք ինքներդ էք կազմել բաց նամակը. Բլանշ»:

Նախագահ: Ալդ բոլորը գործին չի վերաբերում:

Լաբորի Վերաբերում է. մենք կ'ապացուցենք որ ծպտեալ դաման չի պատկանում Պիքարի շրջանին, ալ Դի Պատի դը Կլանի շրջանին: Նորան պէտք է ալստեղ կանչել և եթէ հարկ լինի դատարանի դռները փակել նորան հարց ու փորձ անելիս՝ լաւ, թող փակեն, մենք չենք վախենում երդեալների առջև զոնփակ ներկաչանալ: Թող միայն չառեն թէ ալստեղ երկրի պաշտպանութեան խնդիր կալ. դա միայն փախուստ տալու միջոց է:

Նախագահը թօթում է ուսերը:

Լաբորի (ձայնը բարձրացնելով և կրքով) Այո, կրկնում եմ, դա միայն փախուստ տալու համար է: Դուք պէտք է ինձ հաւատաք, որ ես նոյնքան լաւ հալընասէր եմ, ինչպէս ամեն մի ուրիշը, և ես չեմ թող տալ, որ ով և իցէ կտակածի իմ հալընաստիբութիւնը, թէկուզ կասկածողը լինի ինքը պրոկուրորը: Ինչու չի ուզում ալստեղ գալ Դի Պատի դը Կլանը: Նա չգիտէ թէ մենք նորան ինչ ենք հարցնելու,

Ինչպէս կարող է նա ասել թէ չի պատասխանելու, քանի որ նա եռանկեան քարն է ամբողջ գործի! Այո, նորից ուզում եմ ճշմարտութիւնը ծածկել, բայց մենք թող չենք տալ որ մօլ ծաղրեն ալս կուրի մէջ, ուր մենք քարտի վրալ ենք դրել մեր առողջութիւնը, մեր կարիէրը, մեր ապագան!

Կլիմանսօ պաշտպանում է Լաբորիի պահանջը Դի Պատի դը Կլանին

դատարան կանչելու նկատմամբ, թէկուզ գորա համար հարկաւոր լինի ոչժի զիմեւ:

Բլանշ Կոմմէնժ նամակով չալտնում է թէ չի գալիս դատարան, որովհետև չգիտէ թէ ինչու համար են նորան կանչում:

Լարորին չալտնում է թէ դա միայն պատրուակ է, և որ օրիորդ Բլանշ Կոմմէնժը չի ներկայացել, որովհետև նորան վախացրել են: Մեզ ուզում են խանդարել որ գործի վրայ լիակատար լուս սփռւի. բայց այդ լուսը ես կ'սփռեմ չնայած բոլոր արգելքներին—կ'զան թէ չեն գալ վկաները:

Նախագահը:—Այդ վերաբերում է մի գործի, որը արգէն դատուած է:

Լարորի: Մենք չարգանքով ենք վերաբերում այն դատավճիռներին, որ տալիս է դատարանը: Բայց, իսկն ասած, ներկայ դատական քննութիւնը, որպէս երևում է, զեռ աւելի էլ կ'ամրացնի Գրէջֆուսի վրայ կտրած դատավճիռը, և նա կ'շարունակի մնալ աքսորի մէջ, ուր նորան ուղարկեց մի օրէնք, որը չատկապէս նորա համար ստեղծւեց: (Հտտարակումեան մէջ լսում են բողոքի բացականչումներն): Բլանշ Կոմմէնժի երկալը հարկաւոր է նոյն պատճառով, որի համար անհրաժեշտ է նաև Պատի դը Կլան'ի երեւալը: Բացատրեմ: Մի քանի տարի առաջ գնդապետ Պիքարը և գնդապետ դը Կլան մուտք ունէին Կոմմէնժի ընտանիքի մէջ, և երկուսն էլ բարեկամական շարաբերութիւններ ունէին նորա ազջիկ Բլանշի հետ: Երբ սկսեց Էստերնազիի գործը, որի մէջ Պիքարը գլխաւոր վկան էր, Պիքարը, որը այդ ժամանակ Թունիսիայումն էր, երկու կեղծ հեռագիր ստացաւ, որոնց նպատակն էր կասկածաւորել Պիքարին: Հեռագիրներից մէկը ստորագրած էր «Սպերանցա» և ըստ երևութիւն ուղարկողը ստիկան Սուֆրէնն էր: Երկրորդ հեռագրի տակ կար «Բլանշ» ստորագրութիւնը և նորա թովանդակութիւնը վերաբերում էր այն բաց նամակին, որի հիման վրայ Պիքարը ուզում էր ապացուցել թէ Էստերնազին կասկածաւոր շարաբերութիւնների մէջ է օտարերկրեաց զիպլոմատների հետ: Հեռագրում ասւած էր—«Ամեն ինչ բացւեց: Խնացել են որ դուք էք կազմել բաց նամակը»: Այդ հեռագրով կամենում էին կասկածելի դարձնել Պիքարին այն բանում, թէ նա կեղծել է Էստերնազիի նամակը. և հէնց այդ էր պնդում չեստոլ Էստերնազին: Երբ Պիքարին կանչեցին Պարիզ՝ նա զիմեց դատական քննիչ Բերտիւլիւա'ին գանդատով որ իրեն ուղարկել են կեղծւած հեռագիր: Գլխաւոր շտաբում պնդում են թէ այդ հեռագիրը, որի տակ «Բլանշ» էր ստորագրած, ուղարկել է Բլանշ Կոմմէնժը, և սորանից մինչև անգամ պահանջել են իւր ձեռագրութեան մի քանի նմուշներ. իսկ գնդապետ Պիքարը, ընդհակառակը, կարծում է որ այդ հեռագիրն ուղարկողը եղել է ոչ այլ ոք, բայց եթէ Գի Պատի դը Կլան: Ահա ինչու անհրաժեշտ է թէ օր. Բլանշ Կոմմէնժի և թէ դը Կլան'ի ներկայանալը այստեղ:

Տիկին Բուլանսի ուղարկել է մի նամակ, որով չալտնում է թէ չի կարող

դատարանը գալ հիւանդութեան պատճառով (Տիկ. Բուլանսին Էստերհազիի մի ժամանակաչ բարեկամուհին է եղել, որի մօտ գտել են Էստերհազիի չալտնի նամակները: Այդ նամակներում, որպէս պնդում են, Էստերհազին շատ անպատկառ խօսքերով է վերաբերել դէպի Փրանսիական զօրքի պետերը):

Լաբորի: Նա չի կարող ներկայանալ ոչ թէ հիւանդութեան պատճառով, այլ որովհետև նորան ևս վախացրել են. որովհետև նորա մօտ կան Էստերհազիի նաև ուրիշ նամակները, որոնք վատթար են քան նոքա, որոնք ամենքին չալտնի են: Էստերհազին աղաչել է վերադարձնել այդ նամակները, մինչև անգամ մահ է սպառնացել: Էստերհազիի օգնութեանն է հասել օստրիկանութիւնը, որը նոյնպէս սպառնալիքներ է արել. նա մինչև անգամ փոխել է բնակարանը, և նոյն պատճառով նա ալժամ հիւանդ է ձևանում: Վկայ Տիսս'ը կարող է երդմամբ վկայել որ տեսել է թէ ինչպէս Էստերհազին աղաչում է եղել իւր նախկին բարեկամուհուն նամակները վերադարձնել: Իսկ վկայ Տիսս'ը չի եկել ալժամ, որովհետև «Կրեզի Լիոնէ» բանկը, ուր նա ծառայում է, սպառնացել է արձակել պաշտօնից, եթէ նա դատարան գնալ. իսկ հակառակ դէպքի համար նորան խոստացել են վարձատրութիւն: Նթէ օր. Բլանշ Կոմէնժ, տիկ. Բուլանսին իսկապէս հիւանդ են, թող նոցա հարցուփորձի ենթարկեն իրենց բնակարաններում:

Կլեմանսօ: Թէ տ. Բուլանսին չէր գալու, այդ մենք ղխէինք զեռ երկու օր առաջ: Մենք գիտենք նաև, որ ճա ալ ևս ահն բնակարանումը չէ, ուր, ինչպէս աչտեղ պնդում են, նա հիւանդ պատկած է:

Զինւորական բացակայ վկաներ: Նախագահը սկսում է կարգալ զինւորական վկաների նամակները: Պատճառ բերելով պաշտօնավարութեան գաղտնապահութիւնը նամակով հրաժարում է զալ կապիտան Լըբրէօն-Ռընօ. դա նա է, որը սնդել է թէ երբ (1894-ին) Դրէչֆուսին կարգալոյժ արին, սա խոստովանել է իրա մօտ իւր չանցանքը:

Լաբորի'ն պահանջում է Լեբրէօն-Ռընօ'ի ներկայանալը. պնդում է թէ Դրէչֆուսը աչգլիսի խոստովանութիւն չի արել նորան. թէ վեց վկայ կ'վկայեն որ ինքը Լեբրէօն-Ռընօ'ն հերքել է թէ իբր Դրէչֆուս աչգլիսի խոստովանութիւն արած լինի:

Գեներալ Մերսիէ, որը պատերազմական մինիստր էր Դրէչֆուսի գործի ժամանակ, նամակով առ դատարանի նախագահը, չալանում է. «Էստերհազին ինձ կատարելապէս օտար է. ես ոչ մի մասնակցութիւն չեմ ընդունել նորա գործում, հետևապէս չեմ կարող որ և է ցուցմունքներ անել»:

Լաբորի: Գեներալ Մերսիէի նամակը մեղ սաստիկ կասկածների տակ է գցում: Մերսիէն զլիսաւոր վկան է: Նա է, և ոչ ալ ոք պատճառը աչ պրոցէսի, որովհետև նա էր որ, օրէնքի հակառակ, դատաւորնիւրին (1894 ին) գաղտնի զօկումէնտ է տւել, առանց նախօրօք ալ ջոյց տալու մեղաւորեալ

Գրէջֆուսին և ոչ էլ Նորա պաշտպանին (Գրմանժ փաստաբանին): Մենք կարեորութիւն չենք տալիս աչդ զոկումէնտին, բայց պահանջում ենք Մերսիէի ներկայանալը: Եթէ իմ ասածը սխալ է—[Թող նա գալ և ասի:

Զուտ: Ես կ'կամենայի գիտենալ, զինւորական դատակարգի վկաները բացակայում են ստացած հրամանի համաձայն, թէ՛ Նոքա իրենց սեփական կամքով են աչդպէս վարուում:

Պրոկուրոր, Աչդ մասին ես ոչինչ չգիտեմ:

Լաբորի աչդ առիթով խնդրում է որ զրաւոր հարց տրւի պատերազմական մինիստրին (գեներալ Բիլիոն):

Կլեմանսօ: Գատարանի ուշադրութիւնն եմ դարձնում աչն հանդամանքի վրայ, որ նախկին մինիստրները (Տրաբիէ և ուրիշներ), որոնք նուձպէս ղերծ չեն սխալներից, ներկայ են: Բնչ հիմունքով զինւորականները իրենց վեր են համարում դատարանից:

Գիներալ Բուաղէֆր և Գրէջֆուսի ու Լստերհաղիի գործերը քննող երկու զինւորական դատարանների մի քանի անդամները նամակներով ներողութիւն են խնդրում որ չեն կարող գալ ու վկայութիւն տալ:

Լաբորի (սաստիկ զարույթով): Ասացէք, ի սէր Աստուծոյ, չին երևակայում արդեօք աչդ վկաները, թէ իրենք մի կաստա են կազմում՝ վեր դատարանից: Եւ իրօք, մինիստր-նախագահը չաչոնեց պատգամաւորների ժողովում թէ դատարանը չի համարձակւիլ դիպչել գեներալներին! Աչմ աչդ գեներալները գործադրում են մինիստր-նախագահի ասածը... Ես խնդրում եմ կանչել ու հարցիր տալ գեներալ Բուաղէֆրին և բոլոր աչ զինւորական վկաներին, որոնք չեն եկել:

Նախագահը չաչոնում է որ պաշտպանութեան խնդիրների մասին գատարանը չաջորդ օրը իւր վճիռը կը տալ:

Նիստը փակուում է:

Ե Ր Կ Ր Ո Ր Դ Ն Ի Ս Տ

Նախագահը բացում է նիստը կարդալով աչ բացակա վկաների նամակները: Ի միջի աչոց ստացւած է նամակ Լստերհաղիից, որը չաչոնում է թէ, ներկայացաւ դատարանը երբ քննում էր իւր սեփական գործը և որ աչնտեղ կատարւած դատավճիռը միանգամաչն բաւական է իւր ղերը որոչելու համար:

Լաբորի չաչոնում է թէ հրաժարուում է Լստերհաղիին հարց ու փորձ անել:

Կլեմանսօն Aurore լրագրի անունից, պահանջում է Լստերհաղիի երևալը, և եթէ հարկ լինի՝ նաև ուժով:

Նախագահը չաչոնում է դատարանի կաչացրած վճիռը բացակա վկաների մասին: Աճո ի մէջ ասւած է թէ դատարանը որոչել է ղուրս կանչել

բոլոր զինւորական վկաներին, նաև էստերհազլին, բայց հրաժարում է կանչել ան թաղաքացիական վկաներին, որոնք զրաւոր լաչտնել են իրենց գալու անհնարաւորութեան մասին:

Ապա նախագահը սկսում է զուրս կանչել ներկայ եղող վկաներին: Առաջինն է Գրէյֆուսի կինը: Լաբորին հարց է տալիս նորա ամուսնու կալանաւորման մասին: Նախագահը կանգնեցնում է Լաբորին լաչտնելով որ Գրէյֆուսի գործը չի քննուած այստեղ:

Զուլա (վեր ցատկելով տեղից): Ես չեմ հասկանում, ինչ հիման վրայ դատարանը խլում է պաշտպաններից վկային հարցեր տալու իրաւունքը, որոնց պարզելուց կախած է իմ գործի ելքը: Ահա երեք շաբաթ է, ինչ ինձ ցեխ են չարտում, իմ տան պատուհաններն են կտրտում: Ես սպանւլում եմ որ ինձ նոցն իրաւունքը տրւած լինի, ինչ տրւում է այստեղ ամեն մի աւաղակի և մարդասպանի—իրաւունք իմ պատիւս պաշտպանելու:

Դատարանը վճռում է, որ Զուլան գրաւոր ձեւակերպէ ան հարցերը, որ նա պիտի տալ Գրէյֆուսի կնոջ:

Զուլա: Թող տէք ինձ արդարանալ:

Նախագահ: Բայց օրէնքի մէջ յօդւած կայ, որը արգելում է Գրէյֆուսի կնոջը հարցեր տալը:

Զուլա: Ես չգիտեմ օրէնքը և չեմ էլ ուզում իմանալ: (Բողոքներ):

Լաբորին աւելի երկար խնդրում է թող տալ Գրէյֆուսի կնոջը հարցեր տալ:

Նախագահը կրկնում է իւրը և ժամանակ տալիս Լաբորին որ սա գրաւոր կերպով ձեւակերպէ իւր հարցերը, լինում է դադար:

Լաբորին, Նիստը վերսկսելուց՝ առաջարկում է դատարանին Գրէյֆուսի կնոջը տրելիք հարցերի ցուցակը: Հարցերը թւով 16 են. օրինակ.

1) Ինչ կարծիքի էք Զուլայի բարի նպատակի վերաբերմամբ: 2) Ինչի վրայ է հիմնուած ձեր կարծիքը. 3) Նախնական քննութիւնը ձեր ամուսնու դուք օրինական էք համարում թէ ոչ: 4) Ձէք պատմիլ արդեօք գնդապետ Դի Պատի դը Կլանի առաջին աչցի մասին ձեր չքնակարանում: Եւ այլն:

Պրոկուրոր: Դատարանը ալժմ կարելիութիւն ունի համոզելու պաշտպանութեան իսկական նպատակների մասին: Միջնադէպերը կրկնում են և շտիպազանց նման են իրար: Յիշում էք այդ առիթով ինչ ասի երէկ: Ես ասի թէ մենք գործ ենք չունենալու մի ծրագրի հետ, որը կանխօրէն կազմւած է: Ալժմ մենք ներկայ ենք այդ ծրագրի իրագործման: Նոքա չեն ուզում օրէնքը ձանաչել! Բայց մենք ձանաչում ենք օրէնքը և երբ լեւալների օղնութեամբ մենք կարող ենք նորա կատարել լաղթանակը ապահովել!

Զուլան կանգնում է տեղից: Ես հռետոր չեմ, ես սովոր չեմ հրապարակով խօսելու, և շատ կարելի է, որ իմ գործ ածած բառերը լիովին չեն

լաւանում իմ մտքերը: Ես խոնարհուում եմ օրէնքի առջև, ես չարգում եմ դատարանը. բայց ես բողոքում եմ այն միջոցների դէմ, որ առնուում են չարտեղ և որոնք հակառակ են արդարադատութեան արժանապատուութեանը. Եւ իրօք, իմ նամակից հանել են մի տող և այդ տողի չիման լրաց ինձ մատնել են դատապարտւած լինելու անհրաժեշտութեանը! Համաձայնեցէք որ այդ ամենը իրաւաբանական «կրիւշոկ»ներ են, արհեստական են, տղեղօ համաձայնեցէք որ այդ ամենը դատարանին անարժան են: Ես ակամալ ասացի, թէ չեմ ընդունում օրէնքը: Ոչ, ես ինձ օրէնքից վեր չեմ դնում, բայց ես կանգնած եմ անարդար պրոցեդուրներից վեր, որոնցով կամենում են բերանս փակել:

Նախագահ: Ես պէտք է նորից ձեր ուշադրութիւնը դարձնեմ այն բանի վրայ, որ Դրէչֆուսի զործի և Ներկալ զործի մէջ ոչ մի կապ չկայ:

Դորանից չետոյ դատարանը մերժում է պաշտպանութեան բոլոր հարցերը, մերժելով զորանով նաև տիկին Դրէչֆուսին հարցեր տալը:

ԼՂԲԼՈՒԱ. (Սա փաստաբան է և գլխաւոր աջակիցը Շերեր-Կեստնէրի (սենատի նախկին փոխ-նախագահներից մէկը: Մօտ 40 տարեկան, բացչէկ մաղերով): Ես Պիքարի մանկութեան ընկեր եմ և երբէք մեր չարաբերութիւնները փոխւած չեն: 1895-ին Պիքարը նշանակւեց պետ տեղեկութիւնների բււրօի՝ պատերազմ, մինիստրութեան մէջ և երբեմն խորհրդի էր կանչուում ինձ իրաւաբանական խնդիրների մասին: Այդ ժամանակ նա ինձ հետ չի խօսել Դրէչֆուսի զործի մասին: Սեպտեմբերին 1896 թ. նա լանկարծ թողեց իւր պաշտօնը և ուղարկւեց այլ և այլ տեղեր, վերջը Տունիսիայի Սուս քաղաքը, զինւորական պաշտօնով: Յունիսին 1897 թ. մի դէպք նորան բերաւ Պարիզ, նա ստացել էր իւր նախկին ստորադրեալից (զնդ, Հանրիից) մի նամակ սպառնական ոճերով: Պիքարը պէտք է պաշտպանւէր. նա դիմեց ինձ, և ահա այդ ժամանակ առաջին անգամ խօսեց Դրէչֆուսի զործի մասին, առանց ինձ զինւորական գաղտնիքներ չալտնելու: Նա ինձ չալտնեց որ Դրէչֆուսը անմեղ է և ցոյց տւեց գեն. Գոնդի դրած նամակները: Տունիսիա եղած ժամանակ ստացել էր կեղծ հեռագիր, որ նորա դէմ ինտրիգներ են սկսւած. ահն է՝ Տունիսիա եղած ժամանակ ստացել էր կեղծ հեռագիր, որ ակնչալտնի կերպով ուղարկւած էր զինւորական մինիստրութիւնից: Դեռ 1896-ի վերջին նա ստացել էր երկու կեղծ նամակներ «Սպերանցա» ստորագրութեամբ, որոնք, ըստ երևութին, նողմալէս զինւորական մինիստրութիւնից էին ուղարկւած: Եւ այդ կեղծ անունով էր ստորագրած այն կեղծ հեռագրերից մէկը, որ Պիքարը ստացել էր Սուսում 10 և 11 նոյեմբերի 1897 թ.: Խնդիրը պարզելու համար ես դնացի սենատոր Տրարիէի մօտ և առաջարկեցի նրան այդ ֆակտերի մասին կառավարութեանը տեղեկացնել: Տրարիէն համաձայնեց, բաց ստաց որ դորա համար պէտք է չարմար ժամանակ ընտրել: Պիքարի ստացած

նամակները ըստ երևութին ունէին նորան խալտառակելու նպատակ. Այն որ ուղարկած էր 1896-ին, բռնել էր զինւորական մինիստրութիւնը և նորա պատճենը վերցրել. միւս նամակները նոյնպէս բռնած էին պատերազմական մինիստրութիւնից և միայն նորերս են չանձընել Պիկարին:

Լաբորի: Ինչ բովանդակութիւն ունէին այդ հեռագրերը?

Լըբլուս: Հեռագիրներից մէկում ասած էր. «Այս ասուածը (demi-dieu) ամեն օր հարցնում է օրիորդ Կոմէնժին, երբ կարող է նորան տեսնել բարի-ասուածը (bon dieu)? Ստորագրած էր «Speranza» (Սպերանցա): Հեռագրի նպատակն էր կարծել տալ թէ Պիքարը չարաբերութեան մէջ էր որ և է քաղաքական գործիչի, օրինակ՝ Շերէր-Կեստնէրի հետ: Հեռագրի մէջ գործածած անհասկանալի խօսքերը պարզելու համար պէտք է ասեմ որ օրիորդ Կոմէնժին շրջանում Պիքարին անւանում էին bon dieu, (բարի-ասուած) իսկ սպառ լալըման'ին կոչում էին «կէսասուած»: Երկրորդ հեռագիրը «Բլանշ» ստորագրութեամբ այսպէս էր. «Այս ավացուց, որ քաղաքալին հեռագիրը (petit bleu) գրել է Ժորժը»: Այդ հեռագիրը ակնարկ է այն հեռագրի վրայ, որ ուղարկել էր գնդապետ Լատերհագիին և որը, Պիքարի աչքում, Լատերհագիի մեղաւորութեան ավացուցն էր: «Սպերանցա» է ստորագրւած նաև այն նամակը, որ ստացել է Լատերհագին և որով նախազգուշացնում էին նորա գէմ բարձած մեղադրանքի մասին: Գատարանի ուշքն եմ դարձնում այն հանգամանքի վրայ, որ Պիքարը կատարելապէս օտար է այդ բոլոր կեղծիքներին:

Նախագահ: Որտեղից դուք այդ զիտէք:

Լըբլուս: Ինձ չալանի են ֆակտերը, որովհետև ես Պիքարի պաշտպանն էի Պիքարի պրոցեսում:

Լաբորի: Յայտնի է ձեզ, վկայ, որ երբ մի նամակ վերադարձեց Կոմմէնժներին՝ Դի Պատի զը Կլան միայնակ չէր գործում, այլ գործում էր ծպտեալ կնոջ հետ:

Լըբլուս: Այո, օրիորդ Բլանշ Կոմէնժին գրած նս մակները զը Կլանը վերադարձրեց այն ժամանակ, երբ այդ պահանջեց զեներալ Դաուս, բացի մէկից, որի համար ասել էր թէ մի տիկնոջ մօտ է, ոչը 500 Փրանկով կը վերադարձնի այն տեղում, ուր այժմ շինում է Ալէքսանդր III-ի կամուրջը՝ աւելացնեմ նաև, որ Դի Պատի զը Կլանին մեղադրում էին Կոմմէնժ քնտանիքին անստորագիր նամակներ գրելում: Այդ նամակներից մէկը ցուց տրւեց ոստիկանութեան պրեֆէկտ Լոզէին, և նա հաստատեց որ նորա հեղինակը զը Կլանն է:

Նախագահ: Այդ բոլորը շատ լաւ. բայց ինչ կապ ունի այդ Լատերհագիի գործի հետ?

Լաբորի: Մենք կ'ապացուցենք որ ծպտեալ դաման, որը զեր է կատարում Լատերհագիի գործում, մի կերպ ծագում էր պատերազմական մինիստրութիւնից և միաժամանակ դաշնակից է Լատերհագիին:

ՇԵՐԵՐ-ԿԵՍՏՆԷՐ: (Նա գունատ է, բայց խօսքը հաստատութիւն և հուանդ է ցոյց տալիս):

Նախագահը զգուշացնում է առաջուց, որ չի թույլ տալու Գրէչֆուսի գործից խօսելու:

Շերէր-Կէստներ: Նս կը հաղորդեմ թէ ինչպէս եկաւ իմ համոզման՝ վերաբերեալ Գրէչֆուսի անմեղութեան և Էստերհազիի մեղաւորութեան մասին: Ինձ ցոյց տւին զեն. Գոնզի գրած նամակները Պիքարին ¹⁾: Գեն. Գոնզը այդ նամակներում Պիքարի հպեացքին էր և խրախուսում էր որ Պիքարը շարունակի խուզարկութիւնները: Նս երկար տատանում էի, օգտւեմ թէ ոչ այդ նամակներից. բայց այժմ ինձ անհրաժեշտ է թւում որ նոցա կարգամ երդւեալներին:

Նախագահ: Նս այդ չեմ կարող ձեզ ցոյց տալ:

Լաբորին բողոքում է:

Նախագահը վերջ ի վերջոյ համաձայնում է որ այդ նամակների միայն բովանդակութիւնը հաղորդւի:

Նամակները Գոնզի առ Պիքար: Այդ մասին Շերեր-Կէստներ հաղորդեց հետեւեալները. 7 սեպտ. 1896 թ. զենեւրալ Գոնզ գրում էր Պիքարին. «Սիրելի Պիքար! Շարունակեցէք ձեր խուզարկութիւնները ամենամեծ զգուշութեամբ: Չեմ կարծում թէ հարկ լինի կողմնակի անձերին մասնակցել տալ, օրինակ, էքսպերտներին»: Պիքարը պատասխանում էր թէ կը հետևի այդ ցուցմունքներին, բայց աւելցնում էր. «Այդ մարդիկ, որոնք սխալում էին 1894 թ-ին, մեծ աղմուկ կը բարձրացնեն, և գուցէ աւելի լաւ է գործը զուտ դատաստանական ճամբով տանել, որ սկանդալ չդուրս գալ»:—Գոնզը ապա գրում էր. «Քանի որ ձեր խուզարկութիւնները այդքան չաշողեցան, այժմ խնդիրը այլ ևս այն չէ որ գործի վրայ լուս սփռել, այլ միայն այն, թէ ինչպէս կարելի է ճշմարտութիւնը վերականգնել»:— Պիքարը պատասխանում էր. «Մենք պէտք է շտապենք, Նթէ սպասենք՝ այլ ևս դժւար կը լինի ճշմարտութիւնը վերականգնել»:

Ապա Շերեր-Կեստներ հաղորդեց թէ ինչպէս նա Գրէչֆուսի գործի վերաքննութեան համար դիմեց պատերազմական մինիստր Բիլլիօին և մինիստր-նախագահ Մելլինին, խնդրելով որ գործը իւր ձեռքը վերցնի. պատմեց թէ ինչպէս պատերազմական մինիստրը չուսողլեց նորան, թէ ինչպէս մամուլի մէջ այդ ժամանակ քստմնելի կռիւ սկսեց նորա դէմ:

Զոլայի հարցմունքին պատասխանելով չալտնում է՝

Շերէր-Կեստներ: Այո, ևս աղաչեցի զենեւրալ Բիլլիօին և խնդրեցի որ

¹⁾ Գենեւրալ Գոնզ՝ օգնական շտաբի պետ Բուազէֆրի՝ մեծատրն էր գնդ. Պիքարի. վերջինս պատերազմական մինիստրութեան մէջ տեղեկութիւնների (լրտեսութեան) քիւրօի պետն էր մի առժամանակ, 1895—96-ին:

նա անձամբ ծանօթանալ գործի հետ: Բիլլիօն խոստացաւ, բայց երեք օր ժամանակ ուզեց: Ես ասացի տալիս եմ երկու շաբաթ ժամանակ: Աս լուեցի, թէն այդ ժամանակ ինձ վրալ մամուլի մէջ ցեխ էին շարտում, անւանում էին ինձ դերմանացի, պրուսացի...:

Ձոյա: Որպէս ինձ—խտալացի!

Շերէր-Կեստնէր: Ես սպասեցի երկու շաբաթ, բայց մինիստրի խոստացած խուզարկութիւնների մասին ոչինչ չիմացալ՝ ոչ այդ ժամանակ և թէ չետոր:

ԿԱՋԻՄԻՐ-ՊԵՐԻԷ ¹⁾ կանչում է իրը վկայ: Նախագահը առաջարկում է նորան աջ ձեռքը բարձրացնել շերդեղու համար: Բայց Կազիմիր-Պերիէն չալտնում է. «Ես շատ ցաւում եմ որ ստիպւած եմ առաջուց չալտնել որ հաղորդել ոչինչ չեմ կարող: Էստերհազիլի գործին ես բոլորովին անծանօթ եմ, իսկ ինչ վերաբերում է միւս գործին, ապա այդ նկատմամբ ինձ կայում է իմ դերը որպէս հանրապետութեան նախկին նախագահ: Ամբողջ ճշմարտութիւնը ուրեմն հաղորդել չեմ կարող:

Նախագահ: Այնուամենայնիւ ես պարտաւոր եմ ձեզ առաջարկել երգել: Կազիմիր-Պերիէ տատանւում է, բայց չետոյ բարձրացնում է աջ ձեռքը: Լաբորին հարցնում է, գիտէ՞ր արդեօք Կազիմիր-Պերիէն, երբ նախագահ էր հանրապետութեան, այն մեղադրանքի մասին, որ ուղղած էր Գրէչֆուսի դէմ:

Նախագահը արգելում է այդ հարցը դնել:

Լաբորին հարցնում է գաղտնի դոկումէնտի մասին, որ ցոյց է տրւած եղել Գրէչֆուսի դատաւորներին, բայց ոչ Գրէչֆուսին իրան և նորա պաշտպանին:

Նախագահը նորից արգելում է Գրէչֆուսի գործի մասին հարց տալ:

Կ. Պերիէ չալտնում է թէ իրեն ոչ մի գաղտնի դոկումէնտի մասին չալտնի չէ Էստերհազիլի գործում:

Ձոյա և Լաբորի ջանքեր են անում Գրէչֆուսի մասին խօսել: Նախագահը արգելում է: Կազիմիր-Պերիէն վերջը կրկնում է իւր սկզբի ասածը: Հասարակութիւնը մեծ օւացիաներ է սարքում Կազիմիր-Պերիէին, որը թողտուութիւն է ստանում հեռանալու:

ԿԱՍՏՐՕ (մօտ 50 տարեկան) պատմում է թէ ինչպէս բուլւարում գնեց մի լրագիր, ուր կար բորգըրօի ֆակսիմիլէն ²⁾ և տեսաւ որ դա Էստերհազիլի ձեռքն է, որի հետ նա մօտ բարեկամութիւն ունէր: Ապա այդ հաղորդեց Շերէր-Կեստնէրին: Գորանից չետոյ նա ստացաւ մի անատորագիր բաց նամակ, զուած խեղաթիւրած ձեռքով, որով չալտնում էր թէ այդ զրպարտութիւնը նրան թանկ կը նստի:

¹⁾ Կազիմիր-Պերիէն հանրապետութեան նախագահն էր 1894-ին, երբ քննեց Գրէչֆուսի գործը:

²⁾ Ֆակսիմիլէն—նույնատիպ ընդօրինակութիւն:

ԵՐՐՈՐԳ ՆԻՍ

(Նխտը սկսում է երկարատե վէճով Նախագահի և պաշտպանների միջև աչն առթիւ, որ Նախագահը հարկ էր դատել Նախընթաց օրը արած արդեւքը՝ աիկին Գրէչֆուսին հարցեր զնելու մասին՝ վերացնել և թող տալ որ հարցեր տրւեն նորան Գրէչֆուսի և Էստերհագիի մասին):

ԳՆՆԵՐԱԼ ԲՈՒԱՒԷՖՍ՝ մերժելով պատասխանել չաքորիին գաղտնի դոկումէնտի մասին, որ վերաբերում է Գրէչֆուսի գործին, մերժում է պատասխանել Լաքորիի ալլ հարցերին և ասում է. «Ծպտեալ դամալին ես չեմ ձանաչում: Գեներալ Գոնզլի նամակների հրատարակութիւնը ես համարում եմ վատ քալ: (Ալլ նամակները հրատարակեցին օր առաջ երեք լրագրերում): Ինչ վերաբերում է Գրէչֆուսին՝ ես նորա մեղաւորութեան մասին համոզւած եմ: Ալլ համոզմունքը ինձ տւել է թէ Գրէչֆուսի պրոցէսը և թէ աչն հանգամանքները, որ եղել են պրոցէսից չետու:

Կլեմանսօ: Բալց օտարօտի է, թէ ինչպէս գաղտնի դոկումէնտը, որ ստացել է Էստերհագին՝ ծպտեալ դամալից, զկարող էր ընկնել գեներալ Բուաղէֆրի ձեռքը:

Բուաղէֆր: Պատերազմական մինխտրութեան սպաները պատական տղերք են, որոնք միմիաչն իրենց պարտքն են կատարում և մի հոգս ունին — հոգսը հաչրենիքի համար:

ԳՆՆԵՐԱԼ ԳՈՆԶ Կատասխանում է Լաքորիի հարցերին, թէ չի ճանաչում ծպտեալ դամալին, որից Էստերհագին ստացել է գաղտնի դոկումէնտը և չալտնում է Լաքորիի հարցերի առիթով թէ «Ալլ բոլորը թակարդներ են»: Ալլ խօսքի համար լինում է միջնաղէպ, որը վերջ է տըրւում փաստաբանների աւագի և ապա պրոկուրորի միջամտութեամբ և Գոնզլի խոստովանութեամբ թէ ալլ խօսքով ինքը աւելի ասաց քան ուզում էր ասել: Ապա գեն. Գոնզ շարունակում է՝

«Լրագրերում տպւած են իմ նամակները գնդապետ Պիքարին: Պիքարը ինձ հաղորդել էր իւր կասկածները Էստերհագիի մասին: Ես ասի նրան թէ ալլ զէպքում պէտք է ջոկել երկու գործերը, աչն է թէ մի կողմում կալ Գրէչֆուսի գործ, միւս կողմում Էստերհագիի գործ. բալց իմ մտքովը երբէք չի անգել քննել Գրէչֆուսի գործը: Ես խորհուրդ էի տալիս Պիքարին խոյս տալ անդգուչ քալլերից, օրինակ՝ Էստերհագիին ձերբակալել առանց բաւականաչափ հիմունքների:

ԿՈՄՆԵՐԱՆՏ ԼՈՏ չալտնում է թէ գործը եղել է աչնպէս, ինչպէս ցոյց է տըրած կամենդանտ՝ Ռաւարիի զեկուցման մէջ. աչն է՝ Պիքարը խնդրել է իրեն՝ Լոտին՝ լուսանկարչական կոպիա հանել աչն քաղաքալին հեռագրից, որ ուղարկւել էր մայրը Էստերհագիին, և աչն կերպ, որ չերեալ թէ հեռագիրը պատուած է, Պիքարը աւելցրեց. «Դուք կարող էք չամենաչն զէպս վկալել թէ հեռագիրը ով է ուղարկելը»: Առ ալլ ես ասացի:

«Ես այդ բնաւ չեմ կարող, ես ուղարկողին չեմ ճանաչում»: Այդ հանգամանքին կարեորութիւն չտալով՝ ես շարունակեցի չարաբերութիւններ ունենալ Պիքարի հետ:

ԳՐԻԲԼԷՆ (գինւորական մինիստրութեան մէջ արխիւարիտ): Փաստաբան Լըբլուալին ես տեսալ մի անգամ գնդապետ Պիքարի մօտ առանձին: Նոցա մօտ սեղանի վրայ դրած էին երկու պապկաններ դոկումէնտներով. մէկը բաց ծրարի մէջ էր: Այդ պապկան դրած էր գնդապետ Հանրիի ծրարի մէջ:

Լաբորի: Այդ ինչպէս կարող էիք այդքան շուտով նկատել:

Գրիբլէն: Գնդապետ Հանրիի այդ ծրարը օժտել էր իւր զրազայլին անուճով:

Լաբորի: Ինչի համար:

Գրիբլէն: Նա չէր կամերում որ վկայաթղթերը իւր բացակայութեամբ կարդացեն:

Լըբլուա (Պիքարի փաստաբանը): Ես պնդում եմ, որ պ. Գրիբլէնի խօսքերը անպայման սխալ են:

Գրիբլէն: Երգում եմ Աստուծով որ նա ճշմարտութիւն չէ խօսում:

Լըբլուա: Ես էլ երգում եմ Աստուծով որ նա ճշմարտութիւն չէ խօսում: Եւ վկան (Գրիբլէնը) ինքը իրան հակառակում է: Էստերհազիի գործի քննութեան ժամանակ նա այդ դէպքը վերաբերում էր 1896 թ. հոկտեմբերին: Ես ասացի նորան, որ այդ ժամանակ ես Պարիզում չէի: Գորանից չեսոյ նա փոխեց թիւը: Այդ բոլորը կարելի է ապացուցանել:

Նախագահ: Ինչպէս?

Լըբլուա: Խուզարկութեան խորհրդի վկայաթղթերով:

Լաբորին խնդրում է որ այդ վկայաթղթերը առաջ բերեն:

Ա. Կլեմանսօ: Երկու վկաներից մէկը անպատճառ ստում է:

ԳԵՆԵՐԱԼ ՄԵՆՍԻԷ (Նախկին պատերազմական մինիստր Գրէյֆուսի գործի քննութեան ժամանակ) կանչում է իբր վկայ:

Լաբորի: Գիտէ արդեօք գեն. Մերսիէն կոմենդանտ Ռաւարիի զեկուցման մասին:

Մերսիէ: Ոչ, չգիտեմ:

(Լաբորին ապա շարունակում է հարցեր տալ Նոչն զեկուցման մասին. Մերսիէն շարունակ կրկնում է որ չգիտէ: Ապա Լաբորին հարցնում է գաղտնի դոկումենտի մասին Գրէյֆուսի գործում, ուր կալ այս խօսքը՝ «Այդ կանալիա Գ...») Մերսիէն պատասխանում է թէ այդ վերաբերում է Գրէյֆուսի գործին, որի մասին ինքը չպիտի խօսէ):

Լաբորի: Յաւտնի է արդեօք գեն. Մերսիէին մի քանի մտերմական դոկումէնտների հրատարակութեան մասին?

Մերսիէ: Ես կարդացի *Eclair* («Էքլէր») լրագրում, թէ աչնտեղ խօսքը ինչ-որ դոկումէնտների մասին է: Ես չեմ ճանաչում:

Լաբորի: Դրէջֆուաին կալանաւորելուց չնտու շուտով երևացին *Libre Parole, Eclair et Patrie* լրագրերում տեղեկութիւններ ալդ մասին, որոնք կարող էին բղխել միաջն պատերազմական մինիստրութիւնից: Գեն. Մերսիէն հրամայեց արդեօք քննութիւն կատարել ալդ առիթով:

Մերսիէ: Ես ոչ մի քննութիւն կատարել չտուի: Ալդ ամենը կատարել էր մինիստրութիւնից դուրս: Իսկ եթէ կ'ուզէք իմանալ իմ սեփական կարծիքը—ես կ'տեսնեմ որ ալդ մերկացումները կատարեցին մինիստրի կամքի հակառակ: Ես կարող եմ ալդ ասել, որովհետեւ ալդ ժամանակ ես մինիստր էի:

Ապա, պատասխանելով Լաբորիի հարցին, Մերսիէն կրկնում է, որ մերկացնողներին չգիտէ, բայց որ չի կարծում թէ նոքա մինիստրութեան միջից լինէին:

Ա. Կլեմոնսո: Բայց էլ ո՞ր աղբիւրից կարող էին ծագել մերկացումները, քանի որ դոքա չայտնի էին միաջն պատերազմական մինիստրութեան մէջ:

Մերսիէ: Ալդ երբ պատահեց:

Լաբորի: 29-ին հոկտեմբերի (1894 թ.):

Մերսիէ: Ալդ ժամանակ Դրէջֆուալը արդէն կալանաւորած էր, և մերկացումները կարող էին բղխել միաջն նորա ընտանիքից:

Լաբորի: Բայց զեն. Մերսիէին լաւ չայտնի էր, որ գնդապետ Դի Պատի դը Լիլան սաստիկ սպառնում էր տիկ. Դրէջֆուաին, պահանջելով որ նա սչինչ չխօսի իւր մարդու անհետանալու մասին: Նա ի հարկէ ոչինչ չասաց: Առաջարկում եմ դատարանին տիկ. Դրէջֆուաին և զեն. Մերսիէին աչք-աչքի կանգնեցնել:

Ապա Լաբորին նորից խօսում է գաղտնի զոկումէնտի մասին. նախագահը թօթւում է ուսերը: Լաբորին շարունակում է՝—

«Ինչպէս հաղորդած էր լրագրերում, գեշերալ Մերսիէն ինքը չալտնել է, թէ առաջարկել է դատարանին գաղտնի զոկումէնտ: Ես չուս ունիմ որ եթէ ալդ առիթը նորան դիմեմ, նա չի հերքիլ:

Մերսիէ: (Բարձր ձայնով): Ներեցէք, ներեցէք, դա իսկ չէ: (Հասարակութիւնը բուռն ծափահարում է. փաստաբանների մի մասն էլ մասնակցում է):

Լաբորի: Այտեղ չպէտք է մութ բաներ մնան, ուստի խնդրում եմ զեն. Մերսիէին հաղորդել, կամենում է արդեօք իւր պատասխանով ասել, թէ գաղտնի զոկումէնտ չկար, թէ նա կամենում էր ասել թէ ալդլիսի չալտարարութիւն նա չի արել:

Մերսիէ: Առաջին հարցին հրամարում եմ պատասխանել:

Լաբորի: Գեներալ! Եթէ դուք տաք աջն պատասխանը, որի համար խնդրում ենք, ապա չալտարարում եմ ձեզ, որ մենք կ'խոնարհուենք ձեր

արժանապատուութեան առաջ: Մենք երբէք կասկածներ չենք ունենալ, եթէ դուք տաք մեզ զինւորի ազնիւ խօսք:

Մերսիէ: Քանի որ ինձնից հարցնում են իմ կարծիքը զինւորի խօսքի վրայ,—ես կ'աամ խօսք: Յայտարարում եմ, որ Ղրէչֆուսը դաւաճան էր և դատապարտուել է կանոնաւոր և օրինական կերպով: (Բուռն ծափահարութիւններ և «Անցցէ գե՛ն. Մերսիէ»!):

(Ապա Լաբորին կտրականապէս դնում է գաղտնի զոկումէնտի հարցը, բայց Մերսիէն դորան չի պատասխանում):

Նիստը ընդհատուած է դադարով և վերսկսում է ժամը 5-ին: Կատարանը մերժում է մի շարք խնդիրներ որ հալցել էր Լաբորին՝ զններալ Բուազէֆրին և Ռաւարիի զեկուցման առթիւ տրուելիք հարցերի մասին:

ՏՐԱՐԻԷՅՕ (սենատոր. նախկին մինիստր արդարադատութեան: Նախադա՛ր մեծ շարժանքով է վերաբերում դէպի նա և թող է տալիս խօսել առանց ընդհատելու. Տրարիէն խօսում է մէկ ու կէս ժամ): Նա պատմում է պարզ ու անշեղ Ղրէչֆուսի և Էստերհազլի գործերը և երդեալներին ուշքն է դարձնում աչն հակասութեան վրայ, որ Ղրէչֆուսը դատապարտուած է բորղըրօի (մի զոկումէնտի) հիման վրայ, որովհետև բորղըրօի ձեռագրութիւնը նման է նորա ձեռագրութեան, իսկ Էստերհազլին արդարացրած է, որովհետև թէև բորղըրօի ձեռագրութիւնը Էստերհազլինն է, բայց դա Ղրէչֆուսն է կեղծել: Ապա Տրարիէօ՛ն խօսում է աչն գաղտնի զոկումէնտի մասին, որը ցոյց է տրւած եղել դատաւորներին, բայց ոչ Ղրէչֆուսին և նորա պաշտպանին: «Չկալ, ասաց նա, այնպիսի պետական հիմունքներ, որոնք արդարացնէին այդպիսի անկարգութիւններ: Վարելու աչդ ձեր հակառակում է մեր արդարադատութեան հիմնական սկզբունքներին»:

Տրարիէօ՛ն ապա պատմում է, թէ ինչպէս Պի.քարը, իւր մերձակոր իշխանութեան լանձնարարութեամբ, վարում էր քննութիւն Էստերհազլի դէմ, և թէ ինչպէս պատերազմական մինիստրութեան շրջաններում ծափեց Ղրէչֆուսի գործը վերաքննելու միտքը: Այդ ժամանակ Eclair լրագրում տպւեց բորղըրօի Փաքսիմիլէն, որի մէջ կալ այս Փրազը—«Աչդ կանալիա Ղրէչֆուսը...»: Աչդ զոկումէնտը, լրագրի ասելով, կտրականապէս ցոյց էր Ղրէչֆուսի մեղաւորութեան, աչպէս ասած՝ վերջին քարը նորա գերեզմանի վրայ: Բայց աչդ զոկումէնտը փոխել էին թերթի շահերի համար և և նորա մէջ գրել էին Ղրէչֆուսի անունը, մինչդեռ բնագրի մէջ միայն «Գ» տառը կալ: Միևնոյն ժամանակ «Madin» լրագրում դուրս բերեց բորղըրօն և հետը գրել Ղրէչֆուսի նամակներից նմուշներ, որ ցոյլ տրուի կատարեալ նմանութիւնը: Ո՞րտեղից ևն գալիս արդեօք աչդ մերկացումները?

Յետոյ Տրարիէօ՛ն առաջ է բերում գե՛ն. Գոնդի նամակները: Ապա խօսում է սպառնական նամակների և կեղծ ձեռագրերի մասին, որ ուզար-

կրած էին Պիքարին. Նա ապացուցում է թէ ինչպէս ծածուկ ազիտատորներ Նորից գրգռեցին հասարակաց կարծիքը, չիշեալ լրագրրի մերկացումների միջոցով, այլ և պատգամաւորների ժողովում եղած վիճաբանութեանց միջոցով, և այն էլ այնպիսի ժամանակ, երբ կառավարութեան մի քանի անդամները հող էին պատրաստում գործը վերաքննելու:

Չ Ո Ր Ր Ո Ր Կ Օ Ր

Նախագահը, բաց անելով նիստը, չափոնում է թէ պաշտպանութեան խնդիրները որ արեւած էին նախորդ օրը դատարանին, մերժւած են: Ապա կարդացում է զեներալ Բուաղէֆրի նամակը, որով նա խնդրում է շուտով հարց ու փորձի ենթարկել գնդապետ Հանրիին՝ սորա տկար առողջութեան պատճառով: Ապա կարդացում է տիկին Լ. Դրէչֆուսի նամակը, որով խնդրում է այլ ևս իրեն չկանչել հարցուփորձի, որովհետեւ այս վերջին օրերի անցքերը այնքան ուժեղացրել են նորա սրտի հիւանդութիւնը, որ նա վախ է կրում հարցուփորձի միջոցին ուշաթափութեան մէջ ընկնի: Կանչւում է սենատոր Տրարիէօն, որին Լաբորին հարց է տալիս գաղտնի զոկումէնտի մասին, որի համար Տրարիէօն ասում է թէ նորա մասին իմացաւ ոչ մինիստր եղած ժամանակ, այլ չետոյ, կողմնակի կերպով: Լաբորին կամենում է այդ առթով այլ հարցեր տալ, բայց նախագահը արգելում է Դրէչֆուսի գործից խօսել: Կանչւում է ապա կոմենդանտ Ֆորցինետտին, (նախկին վերատեսուչը Շերչ-Միդի կոչւած բանտի, ուր պահւում էր Դրէչֆուսը): Ֆորցինետտին հետեւում էր Դրէչֆուսին, որից նա տպաւորութիւն էր ստացել թէ անմեղ է. և երբ դատապարտեցին Դրէչֆուսին, նա մօտեցել էր սորան ու ասել— «Թող աւէք սեղմել ձեր ձեռքը, կապիտան». զորա համար և նա յարձակեց ծառայութիւնից): Լաբորին նորան հարց է տալիս, բայց նախագահը արգելում է, որովհետեւ Դրէչֆուսին է վերաբերում: Ապա կանչում են Գի Պատի ղը Կլանիին, որը կատարել էր Դրէչֆուսի գործի նախնական քննութիւնը: Լաբորին հարց է տալիս նորան օր. Բլանչ Կոմէնժին վերաբերեալ, բայց նա մերժում է պատասխանել, ասելով որ մասնաւոր գաղտնիքները նա չի չափոնի և որ այդ չի վերաբերում էստերհազիի գործին:

ՀԱՆՐԻ, ԳՈՆՁ և ԼԸԲԼՈՒԱ. (Ենթասպալ Հանրին համարւում է Գի Պատի ղը Կլանիի հետ ի միասին՝ զլիաւոր պատճառը Դրէչֆուսի գործի: Հանրին ժողովրդի մարդ է, որը երկու անգամ ազատւել է թշնամու ձեռքերից պատերազմի ժամանակ, ստացել է իւր աստիճանները միմիայն իւր քաջութեամբ և հաւատարմութեամբ):

Լաբորի. Մալոր Ռաւարին հաղորդել է իւր զեկուցման մէջ, թէ զընդապետ Պիքարը բաց է արել այն թղթերի ծրարը, որ ենթասպալ Հանրին գաղտնի զոկումէնտների հետ զրել էր արխիւի մէջ: Ճիշդ է այդ արդեօք:

Հանրի: Ես այդ ժամանակ արձակուրդի մէջ էի, երբ Պիքարը հրամայել էր արխիւարիտա Գրիբլէն'ին լանձնել նորան զոկումէնտները:

Լաբորի: Ինչ աստիճան ունէիք դուք այդ ժամանակ:

Հանրի: Ես բատալիոնի պետ էի:

Լաբորի: Ում հրամանի տակ էիք գտնուում:

Հանրի: Գնդապետ Պիքարի հրամանի տակ:

Լաբորի: Եւ դուք զարմանալի էք գտնուում որ Պիքարը պահանջել է իրեն լանձնել զոկումէնտները?

Հանրի: Այդ զոկումէնտները զրել էր պահարանում գնդապետ Սանդհէրը, որը ինձ էր լանձնել. և ես հրաման ունէի որ նոքա կարող էին բացուել միայն շտաբի գլխաւորի ներկայութեամբ:

Լաբորի: Ո՞ր էր այդ ժամանակ գնդապետ Սանդհէրը:

Հանրի: Նա հիւանդ էր:

Լաբորի: Ո՞վ էր նորան փոխարինում?

Հանրի: Գնդապետ Պիքար:

Լաբորի: Շնորհակալ եմ. այդքանն էլ ինձ հերիք է: Ասացէք խնդրեմ, ո՞վ է այժմ պետը շախտութեան գործերի համար:

Հանրի: Ես:

Լաբորի: Ում գլխաւորութեան ներքո:

Հանրի: Գեներալ Գոնզլի (որ է գլխաւոր շտաբի պետի օգնականը):

(Կանչուում է գեն. Գոնզ):

Նախագահ: Գեներալ! Լրագրերի մէջ հրատարակուել են ձեր նամակները գնդապետ Պիքարին. կը հաղորդէիք մեզ ձեր նամակները իսկական միտքը:

Գեն. Գոնզ: Իմ նամակների միտքը լաւ ըմբռնելու համար պէտք է գիտենալ թէ ինչ հանգամանքներում էին նոքա զրւած: Ես առաջարկում էի գնդ. Պիքարին բերանացի և թէ զբաւոր կերպով՝ գործի քննութեան մէջ մեծ զգուշութիւն պահպանել: Եւ ես առաջարկում էի նրան ինձ տալ ֆակտեր և չբաւականանալ միայն տպաւորութիւններով, որովհետեւ Պիքարը ուզում էր Էստերհազին նոյն իսկ ձերբակալել, և ես զիմազրում էի: Գորա հետ միասին ես խորհուրդ էի տալիս բոլորովին մի կողմ թողնել Իրէլֆուսը գործը, որովհետեւ Պիքարի սկսած հետախուզութիւնները չէին վերաբերում այդ գործին: Էստերհազին կարող էր լինել Գրէլֆուսի լանցակիցը, և կամ կարող էր մի բոլորովին այլ գործի մէջ խառնուած լինել: Ես կ'աւելացնեմ, որ այդ գրապրութիւնը Պիքարի հետ լրտեսութեան գործի էր վերաբերում, մի բանի, որից աւելի դադանին չկալ աշխարհումս: Պիքարի առաջին պարտքն էր այդ ի պաշտօնէ գրապրութիւնը դադանի պահել, որովհետեւ միայն պատերազմական միջիտարը և շտաբի պետը իրաւունք ունէին գիտենալու Գնդ. Պիքարը լրտեսութեան բիւրօի պետն էր:

դա մի մեծ պատիւ է, բայց և անագին պատասխանատուութիւն և աշխատանք է պահանջում. դնդ. Սանդհէրր դորանից մեռաւ!

Լաբորի: Այդ ինչ դոկումէնտներ են, որոնց մասին խօսք կալ ձեր նամակներում և որոնց առիթով հարցնում էք թէ ինչպէս նոքա կարող էին ընդօրինակուել:

Գոնդ: Ահա ինչ: Գնդ. Պիքարը չաւակնում էր թէ դտել է որ էստերհազին փորձել է ձեռք բերել արտիլերիական հրաձգութեան զասագիրքը (Manuel de tir d'artillerie) և որ նա իւր ռեզիմէնտում (74-րդ) վերցրել է պատճեններ մտերմական դոկումէնտներից:

Ես պահանջեցի Պիքարից քննել այդ գործը. բայց ոչ մէկի և ոչ միւսի համար նա ընդունակ չեղաւ էստերհազինի դէմ ամենափոքր ապացոյց բերել:

Լաբորի: Գե՛ն. Գոնզը իւր նամակներում խորհուրդ է տալիս Պիքարին ձեռագրերի համեմատութիւններով չզբաղուել: Մի՞թէ խօսքը բորղըրօի մասին չէր:

Գոնդ: Ես խորհուրդ էի տալիս սչ մի համեմատութիւններ չանել:

Լաբորի: Բայց դուցէ դուք խորհուրդ էիք տալիս ձեռագրութիւնները հետազօտել: Խնդիրը բառերի մէջ չէ:

Գոնդ: Այո, խորհուրդ էի տալիս:

Լաբորի: Ուրեմն խնդիրը բորղըրօի մասին էր:

Գոնդ: Այո:

Լաբորի: Լաւ, քանի որ խօսքը բորղըրօի ձեռագրութեան մասին է, նա ուրեմն միաժամանակ վերաբերում էր Գրէյֆուսի գործին:

Գոնդ: Բայց ես ասացի Պիքարին, որ նա մի կողմ թողնի Գրէյֆուսի գործը:

Լաբորի: Լաւ, հարկ եղածը իմացալ:

(Պաշտպանները շարունակում են Հանրիի հարուփորձը: Երկարատե խօսք է լինում ալն առթով, թէ արդեօք ճշմարիտ է որ Հանրին տեսել է փաստաբան Լըբլուաին Պիքարի հետ խորհրդակցելիս նորա կաբինէտում):

Հանրի: Ես երբէք չեմ խորհրդակցել Լըբլուալի հետ:

Լըբլուան պնդում է որ ունեցել է:

Հանրի: Գա սխալմունք է:

Լաբորի (դիմելով Լըբլուալին): Չէք կարող արդեօք ասել թէ ձրտեղ էր պատահել խորհրդակցութիւնը:

Լըբլուա: Հանրիի կաբինէտում:

Հանրի: Կրկնում եմ, որ վկան սխալում է:

Լաբորի: Չէք կարող, պ. Լըբլուա, նկարագրել Հանրիի կաբինէտը:

Լըբլուա: Գա ճամբորդ աղաւնիների մասին էր: Ձեր բիւրօն երկու պատահանների մէջ է. մուտքը մի երկար կորիդորի աջ կողմի առաջին դռնից է:

Հանրի: Այդ ճիշդ է. բայց ես պնդում եմ որ ձեզ երբէք չեմ ընդունել իմ կարբինէտում:

Ապա Հանրի մի հարցի պատասխանելով, որ գաղտնի դոկումէնտները 1895 թ-ից սկսած կնքւած են պահուում:

Մի քանի այլ հարցերից լիտով Հանրին խնդրում է որ թույլ տրւի տուն գնալ որովհետև ջերմ ունի և բժշկի հակառակ է դատարան եկել:

Լաբորի: Գարձնում եմ դատարանի ուշքը այն բանի վրայ, որ վկան երէկ մի գործով ուղարկւած էր ուրիշ տեղ, իսկ այսօր արդէն հիւանդ է:

Հանրի (տաքացած): Ես չեմ թույլ տալ որ իմ խօսքերը կասկածի ենթարկւեն. օ, այդ էր պակաս: Իրաւունք չունիմ ջերմով հիւանդանալու? Ես մասնակցել եմ 18 կռիւներում, պ. պաշտպան, և աշնտեղ է որ ես ջերմ եմ ստացել! Եւ ես այսօր էլ կ'երթալի ուր ինձ ուղարկէին, եթէ ջերմը ստիպած չլինէր ինձ Պարիզ վերադառնալ:

(Լինում է դադար. ապա նախագահը չաչտնում է թէ մերժւած է Լաբորիի խնդիրը տ. Բուլանսիին կանչելու, որի մօտ Էստերհազիից նամակներ կան: Ա. Կլեմանսօն խնդրում է որ հարց ու փորձերը կատարեն տիկ. Բուլանսիի տանը, և որ նամակները, որոնց մէջ կան սպառնական նամակներ, ուղղած տիկ. Բուլանսիին, դատարանին չանձնւեն: Ապա մի անկարեոր հարց են տալիս Լաբատիւյին, և ապա կանչում են կոմենդանտ Ռաւարիին, որը իւր զեկուցման մէջ ասել էր թէ Պիքարը տեղ է փաստաբան Լըբլուպի ձեռքը գաղտնի աքտեր, որոնց մէջ այն, ուր կալ գրւած «Այդ կանալիա Գ... շատ պահանջկոտ է դառնում»:

Լաբորի: Այդ ինչ դոկումէնտ էր?

Ռաւարի: Չգիտեմ:

Լաբորի: Բայց ձեր զեկուցման մէջ դուք լիշատակում էք. ուրեմն գիտէք:

Ռաւարի: Իմ գործը չէր նորանով զբաղւել: Ես միաջն գրում էի վկաների ցուցմունքները: Թող բերեն Էստերհազիի գործը և դուք կը տեսնէք: Լաբորի: Ախ, ինչ հիանալի քննութիւն!

Ռաւարի: Բողոքում եմ այդ խօսքերի դէմ: Ձինւորական քննութիւնը չի կատարւում այնպէս որպէս ձերը:

Լաբորի: Այդ դոկումէնտը նոյնն է, որ Էստերհազին ստացաւ, իւր խօսքերով, ծպտեալ կնոջից և ուղարկեց զինւորական մինիստրին իւր պաշտպանութեան համար: Ինչպէս կարող էր այդ դոկումէնտը զուրս գալ զինւորական մինիստրութիւնից:

Ռաւարի: Այդ ինձ անչալտ է:

ԳՆՆԵՐԱԼ ՊԵԼԼԻԷՕ (Պարիզի հրապարակի հրամանատարը, որին չանձնւած էր կատարել Էստերհազիի գործի նախնական քննութիւնը, Ռաւարիից լիտով): Ես ամենամեծ չարգանք ունիմ իմ երկրի արդարադա-

տուժեան համար: Ես պատրաստ եմ հրաժարել ծառայական գաղտնիքներ պահպանելու իրաւունքից և մանրամասն պատմել նախնական քննութեան ընթացքը, որ ես վարում էի: Ես կ'ընեմ միմիայն այն բաներից, որոնք երկրի պաշտպանութեան զործին են վերաբերում: Էստերհազի մասին ինձ չանձնած էր երկու քննութիւն կատարել. մէկը գինւորական, միւսը դատաստանական: 14-ն նուեմբերին էր (1897), երբ Մատթէոս Դրէչֆուս պատերազմական մինիստրութեանը տաժ իւր գանգատով Էստերհազիին մեղադրեց թէ նա է բորղըրօի իսկական հեղինակը: 16-ին ես հրաման ստացալ գնն. Սոսիէից զինւորական քննութիւն կատարելու: Կանչեցի Մ. Դրէչֆուսին: Մատթէոս Դրէչֆուս (դատապարտածի եղբայրը) չհերկաւացրեց ինձ ոչ մի ապացոյց Էստերհազիի դէմ: Նորա ցանկութեամբ ես հրաւիրեցի ինձ մօտ պ. Շերէր-Կէստնէրին: Բայց իմ հարցմունքին թէ ուր են ձեր ապացոյցները? Շերէր-Կէստնէրը պատասխանեց թէ նա ոչ մի ապացոյց չունի, բայց որ աչդպիսիներ ունի Լըբուան: Կանչեցի սորան: Նա ներկաւացրեց մի քանի փորձեր Էստերհազիի ձեռագրութիւնից և գնն. Գոնզիի նամակները գրած՝ գնդ. Պիքարին: Նորա ասելով Լըբուան աչդ նիւթերը ստացել էր Պիքարից: Գորա հետ միասին նա ասաց, նոյն Պիքարի վրայ հիմնելով, թէ պատերազմական մինիստրութեան մէջ կալ վկայաթուղթ Էստերհազիի վերաբերեալ՝ դաւաճանութեան առիթով: Ասաց թէ աչդ նշանաւոր տեղեկութիւնը նա ստացել էր իւր բարեկամ Պիքարից: Աչպէս ուրեմն, գնդ. Պիքարը չպտնել էր իւր բարեկամ Լըբուաչին թէ կան գաղտնի վկայաթղթեր Էստերհազիի դէմ: Պիքարի կողմից դա մի ծանր քալ էր. համոզեցուց որ Պիքարը մեծ սխալ է գործել: Կարգացի գնն. Գոնզի նամակները, որոնք ոչ մի վերաբերմունք չունէին Դրէչֆուսի զործին: Բայց, զորա հակառակ, ապացոյցը ձեռքիս էր որ Պիքարը մի ամենամեծ զինւորական սխալ էր կատարել: Նա մի օտարի, ինչպիսին է փատաբան Լըբուա, հաղորդել էր իւր մեծաւոր զինն. Գոնզի նամակները: Ես եզրակացրի որ Պիքարին պէտք էր կարգապահական պատժի ենթարկել և պահանջեցի որ Պիքարը ետ կանչւի Տունիսիալից, որ կարողանալ իրեն պաշտպանել: Գնն. Սոսիէն, հասարակաց կարծիքին զիջանելով, ինձ պատւիրեց սկսել երկրորդ քննութիւնը՝ դատաստանական ձեռով: Կանչել տւի Էստերհազիին: Ապա հրամայեցի խուզարկութիւն կատարել Պիքարի մօտ: Բորղըրօի մասին շատերն էին խօսում, բայց ամենքը տեսել էին միայն պատճենը, մինչդեռ պատճենը բոլորովին նման չէ բնագրին, և գրեթէ կարելի է ասել թէ աչդտեղ կեղծիք է տեղի ունեցել: Աչպէք է նկատեմ, որ Պիքարը գործել է աւելի քան թեթևամտութեամբ: Քննութեան ժամանակ նա խօսում էր ինչոր քաղաքալին հեռագրի մասին, որ ուղարկւած էր Էստերհազիին և որը բռնել է Պիքարը: Ես աչդ հեռագիրը մօտս բերել տւի: Պիքարը կամեցել

էր լուսանկարել աչդ զոկումէնտը աչն կերպ, որ նկատելի չլինի թէ նա պատուած է: Աչդ կ'ունենար աչն միտքը թէ զոկումէնտը գտնել է Էստերհազիի մօտ: Հեռագրի վրայ չկար պոստալին նամակաղրոյձ, և պարզ էր, որ աչդ հեռագիրը Էստերհազին երբէք չէր ստացել: Ուրեմն ապացուցած չէր հեռագրի խտուրթիւնը, Բացի աչդ, քննութիւնը ցուց տւեց որ գնդ-Պիքարը փորձել էր հեռագրին խտականութեան կերպարանք տալ: Նա լուսանկարել էր տւել աչնպէս որ պատուածքները չերեան և նորա վրայ դրել էր պոստի կնիք: Սա ապացուցւած և վկայւած էլ Միւս կողմից, շափազանց միամտութիւն կը լինէր Պիքարի համար մտածել, թէ քաղաքաչին հեռագիրը ուղարկւած լինէր Էստերհազիին մի օտարերկրեաց դեսպանութեան զինւորական կցորդի կողմից ¹⁾ որովհետև զինւորական կցորդը երբէք աչդքան անզգույ չէր վարւի: Պիքարը, բացի աչդ, խոստովանեց, որ նա, առանց պատշաճաւոր թուլտութեան, բաց էր անում Էստերհազիի նամակները ութ ամիս շարունակ, առանց սակաչն նոցա մէջ կասկածաւոր բան գտնելու: Չբաւականանալով դորանով, ճահրամայել էր խուզարկութիւն կատարել Էստերհազիի մօտ: Նա ուժով կոտրել է տւել նորա սեղանի արկղները, բաց է արել տւել նորա կնոջ պահարանը և մինչև անզամ շինել է տւել մի կեղծ բանալի, որը մոռացմամբ թողել են կողպէքի մէջը: Աչդ ամենը անասելի մանեօվրներ էին: Եւ ես չզարմացայ երբ Էստերհազիին անպարտ արձակեցին: Ես ինձ համար մեծ պատիւ եմ համարում, որ կարող եմ ապացուցել, որ Ֆրանսիական զօրքի մէջ չկայ երկու դաւաճան, աչլ կաչ միաչն մէկը: (Գնն. Պելլիէօն աղմկալի ցոյցեր են անում):

Կարող եմ երկու խօսք էլ Դրէչֆուսի գործին վերաբերեալ ստել:

Նախագահ: Ես աչդ չեմ կարող թուլ տալ:

Լաբորին նախ խնդրում է թուլ տալ. բաց նախագահը արգելում է. ապա Լաբորին բողոքում է որ զեներալներին թուլ է տրւում մեղադրանքներ անել Դրէչֆուսի վրայ, իսկ պաշտպաններին չի թուլ տրւում հերքել:

Ա. Կլեմանսօն հարց է տալիս Ռաւարիի զեկուցման մէջ լիշատակող գաղտնի զոկումէնտի մասին, թէ արդեօք ինչ կարծիքի է աչդ մասին:

Պելլիէօ: Ինչ կարծիք էք ուզում որ ես չաչտնեմ. ես աչտեղ եկած եմ, որ ասեմ ինչ գիտեմ, և ոչ թէ կարծիքներ չաչտնելու համար:

Նախագ. Պրն. պաշտպան, դուք իրաւունք չունիք վկայից հարցնել կարծիք որ և է բանի վերաբերեալ: Դա հարցադրութիւն չէ:

Ա. Կլեմանսօ: Ներողութիւն: Մեզ չաչտնի է որ Էստերհազին, իւր ասելով, ստացել է մի զոկումէնտ ծպտեալ դամալից, և որ աչդ կինը զոկումէնտը պէտք է ձեռք բերած լինէր պատերազմական մինիստրութիւնից:

¹⁾ Ամեն մի մեծ պիտութեան դեսպանատան մէջ կաչ նաև զինւորական ներկայացուցիչ, որ կուչում զինւորական ստաչէ (զինւորական կցորդ):

ուր նա գտնուում էր: Աչապիսով գոկումէնտին վիճակւած է եղել ամբողջ Պարիզը պատել: Ինչ կ'ասի այդ մասին գեն. Պելլիէօն:

Պելլիէօ: Այդ մասին ինձ ոչինչ չաչտնի չէ:

Ա. Կլեմանսօ: Աչապիսով ուրեմն, մի դէպքում, երբ Պիքարի ձեռքում գաղտնի գոկումէնտներ կան, գեն. Պելլիէօն նոցա մասին կարծիք է կազմում, իսկ հակառակ դէպքում՝ նա կարծիք չունի:

Պելլիէօն թօթուում է ուսերը:

Ա. Կլեմանսօ: Հարցնում եմ վկային, ինչու նա հրամայեց խուզարկութիւն անել Պիքարի մօտ, իսկ Էստերհագիին չխուզարկեց:

Պելլիէօ: Այդ խուզարկութիւնը աւելորդ կը լինէր, որովհետեւ ինքը Պիքարը այդ մասին հոգս էր քաշել:

Ա. Կլեմանսօ: Բայց այդ ժամանակի ընթացքում անցել էր մի քանի ամիս: Ինչու դուք Էստերհագիին չխուզարկեցիք:

Պելլիէօ: Որովհետեւ հարկ չհամարեցի:

Ապա կանչուում է փաստաբան Սայլ, ծերունի, որը պատմել էր թէ Կրէյֆուսի դատաւորներից մէկը միամտաբար իրեն ասել է թէ դատարանին իրօք ներկայացել է գաղտնի գոկումէնտ, չաչտնի բորզըրօից դուրս: Լաբորին հարց է տալիս այդ մասին. նախազանը արդեւում է. երբ Ա. Կլեմանսօն նույն առիթով հարց է տալիս, Սալը լռում է:

Հ Ի Ն Գ Ե Ր Ո Ր Դ Օ Ր

Կանչուում է նորից գեն. Պելլիէօ:

Պելլիէօ: Ես բոլորովին չեմ հասկանում թէ ինչ է կատարուում այստեղ: Զուլան մեղադրուում է զինւորական դատարանը վիրաւորելու համար: Այդ վիրաւորանքին նա չէր արժանացել, որովհետեւ դատարանը կազմող օֆիցերները գործում էին կատարեալ անկախ կերպով: Նոքա ծառայել են հայրենիքին պատերազմի գաշտում, մինչդեռ՝ ուրիշները այդ միջոցին տանն էին նստած: Ես շատ ցաւում եմ, որ Էստերհագիի գործը ոչ լիովին հրապարակապէս քննուեց. բայց դա պատերազմական միջոցների գործն էր: Պէտք է նորից կրկնեմ, որ գնդապետ Հանրի երբէք խորհուրդ չէր արել փաստաբան Լըբրուալի հետ. այդ ապացուցուեց Էստերհագիի պրոցէսում:

Զուլա. Վկան իմ հասցէին ակնարկ արաւ, ասելով թէ ոմանք տանն էին նստած, երբ ուրիշները կուսի դաշտում էին: Բայց ես ինձ թույլ եմ տալիս հարցնել, միթէ նա չգիտէ թէ հայրենիքին կարելի է ծառայել ալ և ալ կերպ: Գեներալ Պելլիէօն նորան ծառայում է սրով, ես՝ գրչով: Եւ ինչ գիտե՞ք թէ ով աւելի լաւ է ծառայում: Ես կ'թողնեմ ապագային գեներալ Պելլիէօի և Էմիլ Զուլաի անուանները, և թող դոցա մէջ ընտրութիւն անի! (Մտախնարութ., ծիծաղ և աղմուկ):

ԳՆԴԱՊԵՏ ՊԻՔԱՐ: (Զուլալի ամենազլխաւոր վկան. 45 տարեկան,

բարձրահասակ), Լաբորիի հարցմունքին պատասխանելով, ասում է:—Մա-
 չիսին 1896 թ., ինձ հասցրել էին Էստերհազիին ուղղած մի քաղաքային
 հեռագրի առանձին մասերը: Այդ ժամանակ ես պետ էի տեղեկութիւնների
 բիւրօի պատերազմական մինիստրութեան մէջ, այլ խօսքերով պետը այն
 բաժանմունքի, որը վարում է լրտեսութեան գործերը, Հեռագրից երևում էր,
 որ Էստերհազին գտնուում էր կասկածելի չարաբերութիւնների մէջ, Նախքան
 իմ մեծին (գեն. Գոնզին) այդ մասին չալտնելը, ես դիմեցի մի օֆիցէրի,
 որը ձանաչում էր Էստերհազին, տեղեկութիւններ ստանալու համար
 Գոքա շատ անպատաս էին Էստերհազիի համար, Ահա այդտեղ, ի միջի ալըց,
 իմացայ, որ Էստերհազին զրամական շատ նեղ դրութեան մէջ է և շարունակ
 զբաղւած է ամեն տեսակ մտերմական ղոկումէնտներ ձեռք բերելով: Այդ
 մասին չալտնեցի իշխանութեան (Գեն. Գոնզ'ին) որը առաջարկեց ինձ որ
 շարունակեմ հետախուզութիւններս Շուտով ես ձեռք բերի Էստերհազիի
 նամակները և զարմացայ տեսնելով նմանութիւն նորա ձեռագրութեան և
 բորդըրօի ձեռագրութեան միջև: Երկու անձի ցույց տալի այդ նամակները,
 նախօրօք ծածկելով ստորագրութիւնները, — Բերտիլիոնին և Դի Պատի դը
 Կլան'ին: Բերտիլիոնը ասաց թէ դա Դրէչֆուսի ձեռքն է, Դի Պատի դը
 Կլանը՝ թէ Դրէչֆուսի եղբայր Մասթէոսի ձեռքն է: Նկատեցէք, որ դը
 Կլանը միշտ այն կարծիքի է եղել, որ բորդըրօն գրել է Դրէչֆուսը, միայն
 թէ նմանեցնելով իւր եղբոր ձեռքին: Կ'աւելցնեմ զորան իմ ազէնտներից
 մէկի արած չալտարարութիւնը թէ մի օտար պետութեան զինուորական
 կցորդը չարաբերութիւնների մէջ է մի Փրանսիացի 50 տարեկան օֆիցէրի
 հետ, և որ նա պահանջում է սորանից չալտնի ղոկումէնտներ: Կոմիսիոնար
 Ռաւարիի ղեկուցման մէջ մի տեղ կայ, ուր ասւած է. «Իմ համոզմունքը
 հիմնւած է գաղտնի թղթերի մի ղոկումէնտի վրայ»: Այդ կատարեալ ձիշտ
 է: Բայց այդ ղոկումէնտը վերաբերում է Էստերհազիին և ոչ Դրէչֆուսին:
 Ես նոր սկսել էի տեղեկութիւններ հաւաքել թէ Էստերհազիի ձեռքում եղել
 են արդեօք բորդըրօի մէջ փշուած ղոկումէնտները, երբ անսպասելի կերպով
 Eclair («Էքլէր») լրագրում վերարտագրեց ղոկումէնտը, ուր կայ «Այդ կա-
 նալիա Գ...»: Շուտով գորանից չետոյ Matin («Մատէն») լրագրում երևաց իս-
 կական բորդըրօի պատճենը: Լրագրերում արնում էին, թէ բորդըրօն հրա-
 տարակւած էր իմ շնորհիւ, բայց կտրական չալտնում եմ, որ ես այդ բանին
 օտար եմ: Նոյն ժամանակ պատգամաւորների ժողովում Կաստըլէնը զիմեց
 կառավարութեանը հարցով՝ վերաբերեալ նոր սկսուող փորձերին, որոնք
 պիտի Դրէչֆուսի գործի վերաքննութիւնը առաջացնէին: Միաժամանակ
 Պարիզ եկա Էստերհազին (Ռուանից, ուր նա ծառայում է), ըստ երևու-
 թիւն շատ անհանգստացած: Բայց այդ միջոցին ինձ հեռացրին Պարիզից—
 նախ Տուլոն, ապա Տուլիսիա: Աւելի ուշ ինձ կանչեցին այնտեղից Շերէր
 Կեստնէրի պահանջմամբ: Այդ ժամանակ գեներալ Պելլիէօ'ին չանձնւած էր

քննութիւն կատարել Էստերհագիւի գործի համար, որին Գրէյֆուաի եղբայրը մեղադրում էր: Ինձ հարց ու փորձի կանչեցին, և այդտեղ իմացաց որ իմ նամակները գրաւած են և բացւած: Այդ ամենը շարունակութիւն էր այն մախինացիաների, որոնք աւելի առաջ սկսւած էին իմ դէմ: Գեռ Տունիսիա եղածս ժամանակ, ես ստացալ գնդապետ Հանրիից նամակ, որով նա մեղադրում էր ինձ թէ ես իբր բաց եմ արել նորա պապկան դսկումէնտներով և իբր թէ ստորագրեալ օֆիցէրներս սպառնացած եմ եղել պահանջելով նոցանից ինձ հարկաւոր տեղեկութիւններ և այլն: Այդ ժամանակ դեռ Շերեր-Կեստնէրը ձայն չէր բարձրացրել: Այն օրերը ես Պարիզ գնացի (մալիս 1897 թ.), ուր և դիմեցի փաստաբան Լըբլուալին: Եւ նորան լսնձնեցի, իմ պաշտպանութեան համար, զեն. Գոնզի նամակները: Ահա հէնց այդ ժամանակ սկսեց Շերեր-Կեստնէրի արշաւանքը լցուալ Գրէյֆուաի: Իմ անունը երևաց լրագրերում: Միաժամանակ իմ գլխաւորները Տունիսալում կանչեցին ինձ իրենց մօտ, ուր և գնացի Պարիզից, և ի մեծ զարմանս իմ, հարցրին, հրամայել եմ ես արդեօք մի դամալի որ ինձ համար պատերազմական մինիստրութիւնից մի դոկումէնտ գողանալ: Ի հարկ է, ես պատասխանեցի ոչ, քանի որ երբէք տուն չեմ վերցրել որ և է պաշտօնական դոկումէնտներ, երբէք նկատողութիւններ չեմ արել իմ թղթերի մէջ, որ վերաբերէին այդպիսի դոկումէնտներ:—Անցաւ մի քանի ժամանակ: Մի անգամ մի օրւայ ընթացքում ստացալ երեք նամակ և հեռագիր: Նամակներից մէկը Էստերհագիից էր, և նա ինձ մեղադրում էր թէ ես պատերազմական մինիստրութեան մէջ չափազանց լինեմ վկայութիւնների պապկալի միջից մի գաղտնի դոկումէնտ, որը նա այժմ ստացել է մի ծպտեալ դամալից: Երկրորդը՝ հեռագիր էր՝ ստորագրած «Ապերանցա», երրորդը նոնպէս հեռագիր էր «Բլանշ» ստորագրութեամբ: Օտարաբար էր նաև այն, որ Libre Parole լրագրում (Պարիզում) խօսուում էր այդ ժամանակ իմ ստացած երկու հեռագրերի մասին, շնաչափ որ լրագիրը այդ մասին այդքան շուտ չէր կարող իմանալ Տունիսիալից:—Ես եկալ Պարիզ և հարցութիւնս բնթարկեցի զեն. Պելլիէօի կողմից: Չգիտեմ ով է հաղորդել զեներալին իմ բնաւորութեան մասին: Ինձ հարցրին՝ երբեիցէ հիպնոտիզմով գրազուել եմ, եղևի եմ ես երբ և իցէ չարաբերութեան մէջ ծպտեալ դամալի հետ: Այդ բոլորը անմտութիւն էր: Ես խնդրեցի հարցնել զանազան անձերի,—ինձ մերժեցին: Կոմենդանտ Ռաւարի, որը շարունակում էր նախնական քննութիւնը, ըստ երևութիւն աւելի զբաղւած էր թէ ինչ եմ ես շինում, քան թէ ինչ է շինում Էստերհագին: Գնդապետ Բիւշ ասել էր ինձ Տունիսիալում, թէ Էստերհագին կեղծիք է կատարել. մի ալ օֆիցէր Տոչնպէս զորա նման մի բան էր ասել: Այդ մասին ես հաղորդեցի Ռաւարիին, բայց նա հարկ չդատեց այդ վկաներին հարց ու փորձ անել: Նա առհասարակ ոչ մի ուշադրութիւն չէր դարձնում իմ հաղորդածների վրայ:

Յետոյ, դատարանում (երբ Էստերհազիին էին քննում) իմացալ թէ ինչպէս վարպետութեամբ ամբողջ գործը շուռ էին տուել իմ դէմ: Շատ լաւ: Ինձ չանդիմանում էին թէ ես իմ պահարանում պահում էի մի հեռագրի կտորները. բայց ես իրաւունք ունէի իբր բիւրօի պետ լրտեսութեան գործերի: Ինձ չանդիմանում են թէ ես ուզեցի լրտանկարել տալ այդ հեռագիրը արնպէս, որ նկատելի չլինի թէ նա պատուած է. բայց ես չէի ուզում որ ամենքը իմանալին թէ որտեղից է վերցրած հեռագիրը: Ասացին թէ ես զաղտնի զոկումէնաներ եմ ցոյց տուել փաստարան Լըբլուալին: Կտրականապէս չաչտնում եմ, որ իմ խօսակցութիւնների միջոցին Լըբլուալի հետ երբէք այդ տեսակ զոկումէնաներ մեր աչքի առաջ չեն եղել և որ Լըբլուալին երբէք այդ տեսակ զոկումէնաներ չեմ ցոյց տուել: Նթէ ես, ենթադրենք թէ, ալգպիսի լուրջ զեղծում կատարած լինէի, համաձայնեցէք, ինչպէս զոները բաց կ'թողնէի: Կամենդանտ Ռաւարիի զեկուցման մէջ ես մեղաւորում եմ որ ես հրամայել եմ Էստերհազիի մօտ խուզարկութիւն կատարել, թէ ես հրամայել եմ պահարանը կտորել և ալին: Բայց ես Էստերհազիի մօտ երբէք խուզարկութիւն չեմ կատարել, և շատ պարզ պատճառով. ինձ չաչտնի էր որ Էստերհազիին նախազգուշացրել են և որ արդէն ուշ է: Միակը որ ճիշտ է, աչն է, որ իմ ազէնաներից մէկը դնացել է Էստերհազիի բնակարանը, որ վարձով էր տրուած, և աչտեղ իմացել է, որ վաւարանում կալ ալրած թղթից մնացած մոխիր: Միամամանակ նա բերաւ մօտս մի ալցեսոմս, որի վրալ մի քանի խօսք էր գրւած, և ես հրամայեցի ազէնտին ալցեսոմսը տանել ու կրկին իւր տեղը դնել: Բողորը, ինչ երէկ ալտեղ պատմեց գեւ. Պելլիէօ, նա իմացել է Էստերհազիից, և այն էլ խօսքին հաւատալով, շտանալով նրանից ոչ մի ասպայտց: Ահա բողորը, ինչ որ կարող եմ ասել: Բայց եթէ ինձ հարցեր տան...

Նախագահ: Յետոյ: Այժմ չաչտնում եմ զաղար:

(Հասարակութեան մեծ մասը Պիքարին օւացիա է սարքում):

Նախագահը վերսկսում է նիստը հարցով, թէ պաշտպանութիւնը չի կամենում արգեօք հարցեր տալ Պիքարին:

Լարորի: Ներկալ էր դնդ. Պիքար Գրէյֆուսի պրոցեսին (1894-ին) պատերազմ. մինիստրի (զեն. Մերսիէի) հրամանով:

Նախագահ: Ալգ հարցը ես թող չեմ տալիս:

Լարորի: Ապա ալ հարց կը տամ: Պատերազմ. մինիստրութեան մէջ կալ արդեօք զաղտնի աքտալին նիւթ, որը նախորոշէր թէ Էստերհազին մեղաւոր չէ:

Պիքար: Ալգպիսի զոկումէնաներ ես չեմ ճանաչում:

Լարորին ասա տալիս է շատ հարցեր, որոնց պատասխանում է Պիքար:

(Մենք ալտեղ, տեղի սղութեան համար, առաջ ենք բերում ալգ պատասխանները, մէկը միւսի շտեղից, առանց Լարորիի տած հարցերը չիչելու, որոնց կարելի է գուշակել տրւած պատասխաններից):

Պիրար: Մախինացիաները իմ դէմ, իմ կարծիքով, նպատակ ունէին խանդարել ուր Էստերհագիի մեղաւորութիւնը չապացուցւի:—Էստերհագին գործում է ոչ միայնակ, այլ ունի համախոհներ պատերազմ. մինխտրութեան մէջ:—Ես այդ գիտեմ այն նամակից և հեռագրերից, որ ստորագրած էին «Սպերանցա» և «Բլանչ». այդ հեռագրերը կարող էին բղխել միայն պատերազմ. մինխտրութիւնից:—Գոցա նպատակն էր համոզմունք կազմել տալ թէ ես գաղտնի միաբանութեան (սինդիկատի) անդամ եմ:—Գեներալ Պելլիէօն ուշք չէր դարձնում այդ նամակների և հեռագրերի իսկութեան վրայ:—Խնդրեցի պատերազմ. մինխտրին քննել այդ խնդիրը:—Փէ կարևոր էր Պարիզից ինձ ուղարկելը 1896 ին (Նախ Տուլոն, ապա Տունխիա), այդ թող ասեն իմ գլխաւորները. կարծում եմ սակայն որ ինձ տւած չանձնարարութիւնը միանգամայն անհրաժեշտ չէր:—Գեներալ Լըկլէրկ (Տունիսում) ստացաւ հրաման որ ինձ ուղարկի Տրիպոլիսի սահմանը. բայց Լըկլէրկը տատանւում էր, այդ հրամանը շատ օտարօտի գտնելով:—Այն տեղը ուր ուղարկում էին ինձ, վտանգաւոր է կեանքի համար:—Իմ խուզարկութիւնների մասին Էստերհագին նախազգուշացրած էր անստորագիր նամակով, և դա կարող էր լինել պատերազմական մինխտրութեան բերօքից կամ նորա մի ագէնտի կողմից, որին չանձնուում է վերահսկողութիւնը: Ագէնտը, որ հասցրեց ինձ քաղաքային հեռագիրը (Էստերհագիին ուղղած) նույնն էր, որ բորզըրօն բերաւ զինուորական մինխտրութիւնը:

Լարրի: Յայտնի է ձեզ, որ Էստերհագիի դատի ժամանակ վերջինս ներկայացրեց դատարանին նորա մերձաւոր իշխանութեան տւած նպատաւոր վկայութիւնները, և որ այդ կարծիքների մէջ խօսուում էր գովասանքով նորա բնաւորութեան մասին:

Պիրար: Ես կարդացի այդ վկայութիւնները և մի քիչ զարմացաւ: Գեներալ Գերրիէ, որպէս ինձ չայտնի է, նկատե՞լ որ Էստերհագին իւր ձեռքով նորա վկայութեան մէջ զրեւ էր գովասանական խօսք, և ասեց թէ կեղծիք է կատարել:

Լարրի: Կալին արդեօք դաղտնի դոկումէնտներ, որոնց թւին պատկանէր դոկումէնտը «Այդ կանալիա Գ...» խօսքերով, Գրէէֆուսի դատից առաջ:

Պիրար: Կարծում եմ կալին, բայց այդ դոկումէնտները ինձ չայտնի են միայն 1896 թւականից:

Լարրի: Ինչ տեսակ է այդ գաղտնի դոկումէնտը: Նամակ է:

Պիրար: Այդ հարցին չեմ կարող պատասխանել առանց իշխանութեան թույլտւութեան:

Լարրի: Տեսել էք դուք բորզըրօրի բնագիրը:

Պիրար: Այո. և, բացի այդ, ես տեսաւ չիտոջ նաև նորա լուսանկարչական պատճենները, որոնք ցոյց էին տրուում պատերազմ. մինխտրութեան մէջ:

Լաբորի: Ուրեմն կան պաշտօնական լուսանկարչական պատճեններ,
Պիքար: Այո՛:

Լաբորի: Վկան կարդացել է արդեօք, որ երկէլ գեն. Պելլիէօ ասաց
թէ Martin («Մատէն»—Ա.ա.ա.ա.ա.) լրագրում հրատարակածը շատ տարբեր-
ւումէ բնագրից:

Պիքար: Բորղըրօի պատճենը ալնքան քիչ էր տարբերում բնագրից,
որ պատերազմ. մինիստրութեան բիւրօյում հարցնում էին իրենք իրենց
թէ ինչպէս կարող էր ալդքան նմանութիւն ձեռք բերել:

Լաբորի: Բայց Գրէլֆուսի դատի ժամանակ դատաւորներին ներկայաց-
րած էր իսկականը:

Պիքար: Ի հարկէ:

Լաբորի: Ինչ միտք կարող էր ունենալ ալն, որ Լատերհազիին ուղ-
ղած քաղաքային հեռագիրը լուսանկարել էք ալնպէս որ չերևալ պատ-
ւած լինելը:

Պիքար: Այդ ես երբէք չկարողացալ հասկանալ:

Լաբորի: Երբ Eclair (Էքլէր) լրագրում երևաց գաղտնի զոկումէնտը
«Այդ կանալիս Գ...» խօսքերով, դուք պահանջեցիք գործի քննութիւնը:

Պիքար: Այո, պահանջեցի գրաւոր կերպով:

Լաբորի: Քննութիւն կատարւեց:

Պիքար: Ոչ:

Լաբ.: Ինչո՞վ էք ալդ բացատրում:

Պիքար: Չէին կամենում աղմուկ բարձրացնել:

Լաբորի: Ընդդիմադրում էիք դուք որ գեն. Գոնզի նամակները հրա-
տարակէն:

Պիքար: Ամենակարական կերպով:

Ապա Պիքարը, մի մի պատասխանելով Լաբորիի հարցերին, ասում է,
ես ոչ մի գաղտնի զոկումէնտ չեմ տեսլ փաստաբան Լըբլուպին,
չնայած որ ալդ պնդում են դեն. Պելլիէօ, Ռաւարի, Հանրի և Գրիբլէն.—
Ալն հանգամանքը, որ իմ ստորագրեալ գնդապետ Հանրի կարող էր ինձ
սպառնական նամակներ գրել, ալդ ինձ թւում էր շատ լուրջ հանգամանք:

Լաբորի: Ինչպէս էք կարծում,—ալժմ ես զիմում եմ ձեզ որպէս լը-
տեսութեան բիւրօի նախկին պետին,—անհրաժեշտ չէր մի օֆիցերի (Լյ-
տերհազիի) կալանաւորումը, որի գէմ մեղադրանք կար դաւաճանութեան
համար:

Պիքար: Իմ կարծիքով դա անհրաժեշտ էր:

Լաբորի: Ձեր հետախուզութիւնը սկսելուց չետոյ դուք հրաման չստա-
ցաք գործը չչարունակել:

Պիքար: Ոչ, չստացալ:

Լաբորի: Հապա ինչու էիք ալդ գործով զբաղում:

Պիքար: Ես կատարում էի պարտականութիւնս, որ խիղճս թեւադրում էր:

Լաբորի: Ձեր իշխանութեան կողմից արգելքի չէիք հանդիպում:

Պիքար: Ոչ, ամենևին: Բայց եթէ ես պաշտօնապէս հրաման ստանալ, ես կ'կատարէի օֆիցէրի պարտքը և կ'հնազանդէի:

Լաբորի: Անմիջական չարաբերութիւնների մէջ էիք արդեօք պատերազմ. մինիստրի հետ Գրէյֆուսի և Էստերհազիի գործի համար:

Պիքար: Գերազանում եմ ետ կանգնել այդ հարցին պատասխանելուց:

Նախագահը (դէպի Պիքարը): Հաստատում էք որ ձեր բերօջում ընդունել էք փաստաբան Լըբլուալին և նորա ներկայութեամբ ունեցել էք աքտալին թղթեր, վերաբերեալ պոստալին աղանձիների, այլ նաև մի կողմից բաց ծրար, մէջը նամակով:

Պիքար: Ես չաճախ ընդունել եմ փաստաբան Լըբլուալին, և այդ ալցելութեան մասին չեմ լիշում:

(Հրաւիրում է արխիւարիուս Գրիբլէն, որը կրկնում է իւր նախկին պնդածը այդ դէպքի մասին, իսկ Պիքարը ասում է թէ Գրիբլէնը սխալում է): Ապա Լաբորիի և գեն. Պելլիէօ'ի միջև լինում է մտքերի ջերմ փոխանակութիւն. Պելլիէօն պնդում էր թէ Մատթէոս Գրէյֆուս ոչ մի ապացոյց չուէց իրեն Էստերհազիի մեղաւորութեան մասին: Լաբորին պահանջում է որ զուրս կանչւի այն ագէնտը որ պատերազմական մինիստրութեանը հասցրել է հուշակաւոր բորղըրօն: Մալեօր Լոտը պատասխանում է որ դա մի հասարակ ծառայ է, որը ոչինչ չի կարող ասել: Լաբորին նկատում է գնդ. Ռաւարիին որ սա լաւ չէ տարել դատաստանական քննութիւնը: Ռաւարին պատասխանում է՝ զինւորական-դատական քննութիւնը այնպէս չի կատարում որպէս ձերը:—Պիքարը չանդիմանում է Ռաւարիին որ սա քննութիւնը կատարել է ինսինուպիաների միջոցով:

(Շարունակելի)

ԵՐԵՒԱՆԻ ՔԱՂԱՔԱՅԻՆ ԸՆՏՐՈՒԹԻՒՆՆԵՐԻ ԱՌԹԻՒ

1898 թ. փետր. 8, Երևան.

Որքան ցաւալի է, երբ ամենահամակրելի սկզբունքների վրայ հաստատուած հիմնարկութիւնները, շնորհիւ վարիչների, երկրի պաշտանների և մանաւանդ ազգաբնակութեան զանազան տարրերի որոշ չատկութիւնների, անկարող են լինում տալ այն օգուտները և տալ նրան այն դիւրութիւնները, որոնց ի նկատի առած՝ այս կամ այն տեղում մտցրած են զրանք: Ամենքիս չայտնի է, որ Տաճկաստանը ունի հիանալի օրէնքներ թղթի վրայ, որոնք այնտեղ ընդունուած են այդ երկիրը եւրոպական մի պետութիւն դարձնելու, ուր պիտի լինի խղճի ազատութիւն, կեանքի և գոյքի ապահովութիւն և այլն: Բայց, այն էլ չայտնի է, որ այնտեղ այդ օրէնքները ոչ մի հետեանք չեն ունենում, շնորհիւ վատ վարիչների, մամուկական կրօնի առանձին ազդեցութեան և ազգաբնակութեան որոշ մասի ուրիշ տրադեցիաներով կրթուած լինելուն:

Նւ եթէ մենք դիտելու լինենք, թէ որպիսի տեղերում է երևան գալիս այս երևութը, կը դանք այն եզրակացութեան, որ իրենց տւած բարիքներից չեն կարողանում օգուտել այն տեղերը, որոնց ազգաբնակութիւնը կամ մնւած է այնպիսի սկզբունքներով ու տրադիցիաներով, որոնք անհնարին են դարձնում այն բարիքների վայելումը այդ երկրում, առանց աստիճանաբար տեղի ունեցող նախապատրաստութեան և կամ որտեղ, թէն հասարակութիւնը կանգնած է դէպի այդ բարիքները հասկանալը տանող ճանապարհի վրայ, բայց զեռ նրանում այն աստիճան թույլ են այդ բարիքները ըմբռնող տարրերը, որ նրանցից օգուտիլը համարեա թէ անկարելի է դառնում:

Վերջին տեսակի երկրներից են ի միջի այլոց Ռուսաստանի մի քանի մասերը և մեր երկիրը, մասնաւորապէս Անդրկովկասը:

Ռուսաստանում վերոյիշեալ հիմնարկութիւնների թւումն են զմաստուները և քաղաքային ինքնավարութիւնները: Հիմնարկութիւններ, որոնք վարչական ամենալաւ ձևերից են, ինքնավարական, հիմնուած ընտրողական սկզբունքի վրայ, որով հասարակութեան իրաւունք է տրուած

ընտրել իւր ցանկացած մարդկանց վերոյիշեալ հիմնարկութիւններին ենթակալ գործերը կառավարելու: Ուրեմն ըստ երևութին խնդիրը լուծւած է: Բաւական է որ մարդիկ հասկանան իրանց իրաւունքների սահմանը և կընտրեն մի մարդ՝ իրանց ուզալի նման կառավարելու: Բայց դաւն էլ դրանում է, որ ոչ ամեն տեղ մարդիկ այն աստիճանի զարգացում և քաղաքիական առաքլնութիւն ունին, որ ցանկացած հետեանքին հասնել կարելի լինի: Ինչպէս զեմտուօներից Ռուսաստանի որոշ մասերը չեն կարողանում աչնպէս օգտուել, որ միւսների նման իրենց երկրի չառաջադիմութեան քալերը խոչորացնելու ծառայեցնեն նրան, աչնպէս էլ մեր երկրում չեն կարողանում օգտուել ինքնավարական հիմնարկութիւններից: Փաղաքալին ինքնավարութիւնը իրանից սպասւած բոլոր բարիքները աչն ժամանակ միաչն կարող է տալ, երբ հասարակութիւնը գիտակցօրէն կը վերաբերւի իւր դերին: Երբ նա հասկանալ, որ ինքն է իւր տէրը: Իր ձեռքն է գործերին ընթացք տալը: Երբ մանաւանդ հասարակութեան անդամը հասկանալ, որ իւր շահը ընդհանուրի շահի պաշտպանութեան մէջ է, երբ հասարակութեան անդամը աչնքան առաքլնութիւն ունենալ, որ չմտածի միաչն իւր փողերը ի հաշիւ ուրիշների և ի վնաս հասարակութեան շատացնել, ալ մտածի նաև չունևորի և անօգնականի մասին: Սրա հակառակ՝ ինքնավարութիւնից սպասելիք բարիքների համար աննպաստ դրութիւնների ամենավատթարներից մինի մէջն է Երևանը: Մինչև անգամ ծիծաղելի է թւում, երբ Երևանի վերաբերմամբ մտածում ես—հասարակութեան իւրաքանչիւր անգամ իւր շահը տեսնի ընդհանուրի շահի պաշտպանութեան մէջ: գիտակցօրէն վերաբերւի իւր դերին:

Ահա մի օրինակ, որը կը պատկերացնի ալը հասարակութեան անդամների վերաբերմունքը դէպի քաղաքալին ինքնավարութեան գործերը: Զաչնաւորները մեծ մասամբ, թէ հալերը և թէ թուրքերը, բացի աչն որ անգրագէտ են, մինչև անգամ ռուսերէն չեն իմանում: Աչնպէս որ վիճաբանութիւնները անհասկանալի են ձաչնաւորների մեծամասնութեան համար: Վերջիններս փառաւորապէս նիրհում են վիճաբանութիւնների ժամանակ և երբ բանը հասնում է խնդիրը քէտրկելուն, երբ նախազահի առաջարկութեամբ հարցի հետ համաձաչն լինողները պիտի ոտքի կանդնեն, հետաքրքրողների մի քանխի ոտքերի ձաչնից միւսներն էլ ոտքի են կանդնում, երբեմն աչքերը տրորելով: և ալսպիսով խնդիրը լուծւում է: Եթէ հասարակութիւնը և նրանց ընտրած ձաչնաւորները գիտակցօրէն վերաբերւէին իրենց դերին, կը հասնէր արդեօք ալս դրութեան Երևանի քաղաքալին ինքնավարութիւնը: Երևակայեցէք մի քաղաք, երբ փողօցի մի մալթից միւսն անցնելու համար ստիպւած ես անադին չըջան անել, և ուիսկ են անում գալոչներդ ցեխի մէջ թողնելու: Աչդ դեռ լաւ է: Իսկ երբ

բողոքովին հնար չկա՞յ անցնելու? Երբ մայթերով անցնելիս խողովակներից անձրևի կամ ձնից հալած ջուրը գլխիդ է թափուում, երբ մի տեղ սովորութիւն է հետևակների անցուղարձի համար շինած մայթերի վրայ ձիեր, էջեր և այլ անասուններ կանգնեցնել պալտելու, բեռնելու համար, որից ստիպած մարդ պիտի իւր ճանապարհը փոխի և ցեխերի միջով անցնի: Երբ մի դպրոցի վարչութիւն անկարող է լինում քաղաքի կարգ պահպանողների օգնութեամբ աշակերտների ճանապարհի վերապից վերացնել նրանց դարգացման համար վատ ազդեցութիւն ունեցող, փոքրիկ սկուտեղում շրջանաձև իւր ապրանքը դարսած և վիճակախաղի օգնութեամբ իւր ունեցածը սպառող թուրք քաղցրավաճառին: Ապա երբ քաղաքային ինքնավարութիւնը անկարող է զսպել հացավաճառներին! Առաջինները հասարակութեանը ժողովրդին կերակրում են հում, համարեա խմոր հացով, որը մարդի առամների տակ երբեմն աւազի հասիկներ է երևան հանում. իսկ երկրորդները ուշք չդարձնելով քաղաքի հաստատած 8 կոպէկ գնի վրայ, շարունակում են միսը ծախել Փոռնտը 10 կոպէկով, ալն էլ ինչ սարսափելի միս!

Բայց հետաքրքիր է, թէ ինչի համար է մսավաճառների այդ լամառութիւնը: Կարելի է կարծել, թէ պակաս գնով վաճառումը ձեռնտու չէ, բայց սխալ կը լինէր այդպէս մտածելը: Այժմ մտացու կենդանու գինը շատ մեռած է: Գարնան մօտ ժամանակ է, երբ գիւղացին կենդանիների համար հաւաքած առանց ալն էլ սուղ կերակուրը տաւարին կերցրած, այլ ևս հնարաւորութիւն չունենալով գոմում տաւարը պահելու, իսկ արօտի հանել չկարողանալով, որովհետեւ արօտ չկա՞յ, ստիպւած է ահազին քանակութեամբ, իր համար ամենաանհրաժեշտները չես գնելով, եղներ, կովեր և ոչխար ծախել, որպէս զի դրանով կարողանա՞յ գոնէ մնացածի համար կերակուր տնտեսել: Մի կողմից տաւարի լղարութիւնը, միւս կողմից քանակութեան շատութիւնը, երրորդ կողմից վարպետ գնողների սուր հոտառութիւնը, երբ զգում են, որ գիւղացին ստիպւած է ծախում, իրերը դնում են ալն դրութեան մէջ, որ տաւարը շատ մեռած գնով է վաճառում մսավաճառներին: Իսկ սրանք չնայելով ալս բոնին և մանաւանդ առանձին ջանք էլ չեն գործ դնում մտացուն չաղացնելու, օգտուելով քաղաքային ինքնավարութեան անտարբերութիւնից, թուլութիւնից, թէ ուրիշ պակասութիւններից, միսը այդպէս թանգ են ծախում: Մի խօսքով ամեն կողմից դժգոհութիւններ են լսում ինքնավարութեան հասցէին:

Մարտին լինելու են նոր քաղաքագլխի, քարտուղարի և անդամների ընտրութիւններ: Հասարակութեան մէջ, արդէն զանազան շրջաններում սկսում են խօսել ապագայ քաղաքագլխի ընտրութեան մասին:

Սովորական խօսքը, որը լսում է այդ խօսակցութիւնների մամանակ, սա է. «Կարմար մարդ չունինք»: Եղածները չեն ուզում իրանց աւելի

ապահով պաշտօնները թողնել և ընտրել քաղաքագլխութեան անհատատատ պաշտօնի համար: Առ այժմ շատերը կանգ են առել մի անձնաւորութեան վրայ, որին, նրա անձնական չատկութիւնները աչքի առաջ առած՝ համարում են չարմար: Դա պ. Արշակ Կամսարականն է, ծառայութիւնը թողած զինւորական գնդապետ: Ինչպէս տեսանք Երևանում քաղաքալին ինքնավարութիւնից կախած շատ դործեր կաղում են շնորհիւ խիստ կարգապահութեան և կոնտրոլի քացակալութեան: Այդ իսկ տեսակէտից պ. Կամսարականի թեկնածութիւնը չարմար է համարում, իբրև զինւորական մարդի, որ կը կարողանայ խիստ կարգապահութիւն մտցնել իր իշխանութեան լանձնած գործերում: Կարծում ենք որ ընտրութիւնը մատ չէ. ցանկանք չաջողութիւն: Ի հարկէ չպէտք է մոռանալ, որ քաղաքագլխութը առանց լաւ գործակիցների անընդունակ կը լինի լաւ քաղաքագլխութիւն անելու:

ՄԱՐ. ՅԱՐ.

ԹԱՏՐՈՆԻ ՇՈՒՐՋԸ

2. ՍԵՒԵԱՆԻ

XVII

Բագւայ խմբի ներկայացումները.—Ներկայացումներ թիֆլիսում.—97—98 թ. Թատերաշրջանի վախճանը.—Նոր Թատերաշրջան.—† Վարդովեան Յակոբի կամ Գիւլլի Ալի էֆէնդու մահը:

Բագւայ հայ դրամատիք խումբը շարունակելով իւր ներկայացումները հետզհետէ արեցին «Չարլէլի մօրաքույրը».—«Կեանք».—«Արի բաժանւենք և հացի ջրի չուսով».—«Սիւզան և Իմբէր».—«Աղբրիէն լը Կուվրէօր».—«Ղարաբաղի աստղագէտը».—«Անմեղ չանցաւորներ և տիկինը Ննջում է»։ Ապա խումբը տեղափոխւեց թիֆլիս և հետզհետէ ներկայացրեց «Աղբրիէն լը Կուվրէօր».—«Չարլէլի մօրաքույրը».—«Հալրենական տուն».—«Օտարներ».—«Անմեղ չանցաւորներ»— և պիտի խաղացին «Գարբնապետ».—«Կեանք»։ Մարտի 22-ին Բագւայ դրամատիք խումբը վերջացնում է իւր ներկայացումները և խմբի անդամները ցրոււմ են գաւառները ներկայացումներ տալու։ Թէ Բագու և թէ թիֆլիս ընդամէնը տրւած են 39 ներկայացում:

Թիֆլիսում մնացող դերասանները ևս շարունակեցին իրանց ներկայացումները. խաղացեցին «Սխալ հաշիւ» ու «Գիակ և ազուաւներ»,—«Անպատիւ չեն ծնւում» և «Մկնիկը».—Ասլան Բալասի»:

Վերջացաւ 97—98 թ. Թատերաշրջանը. Բաղուն դրեց մի նոր գործի սկիզբը, և Նշաններից երևում է, որ նա երկարատև պիտի լինի Գործի նիւթականը ապահովւած է. մի խումբ երիտասարդներ գովելի եռանդով 98—99 թատերաշրջանի համար պէտք եղած նիւթական օժանդակութիւնը չանձն են առած, ինչպէս նաև գործի վերաջ հսկելը. խմբի նախկին կարգադրիչները իրանց անփորձութեամբ շատ սխալներ կարող էին

գործել. այժմեան գործի գլուխ կանգնողներին մնում է խրատել անցեալից, Թատրոնական գործը շատ բարդ է. նրան բազմակողմանի սովորելու համար անհրաժեշտ է երկարատև փորձառութիւն: Մեր անձնական կարծիքն է, որ Թատրոնական գործի գլուխ կանգնողները ընթացիկ գործերի առիթով լաւ կը լինի եթէ չաճախ դիմեն քիչ թէ շատ փորձած դերասաններին, և ի նկատի ունենան նրանց կարծիքը ևս. (անշուշտ վերջնական որոշումը իրանց վերապահելով): Մեր տեսած Թատր. մասնաժողովները միշտ բարոյապէս անջատուած են եղել դերասաններից. նրանց իրար միացնող ոչինչ կապ, ոչինչ օղակ չէ եղել, մինչդեռ դրա հակառակը պէտք է որ լինէր: Շարքաթական 1—2 անգամ դերասանները Թատրոնական գործին գլուխ կանգնողների հետ միասին խորհրդակցէին Թատրոնը ամուր հիմքերի վերայ դնելու, ռէպէրտուարի ընտրութիւն, ներկայացումները հասարակութեան հետաքրքրելի դարձնելու և ալ խնդիրների մասին, որոնք թէ աչս և թէ աչն կերպ անմիջական կապ ունեն Թատրոնական գործի առաջադիմութեան հետ: Ինչո՞ւ չօգտուել աչն դերասանների փորձառութիւնից՝ որոնք 13, 20, 25, 30, 35 և աւելի սարիներ բեմի վերայ են:

Ինչպէս վերև լիչեցի, արդէն մտածում է եկող 98—99 թատերաշրջանը աւելի կանոնաւորելու համար: Ամէն գործ սկզբում իւր խոչըդոտները ունի, և նա հետզհետէ կը վերանայ՝ քանի փորձառու դաւան գործին գլուխ կանգնողները, Ինչպէս ամեն թատերաշրջանի սկզբին, նոյնպէս և այժմ անհրաժեշտ ենք համարում Թատրոնական մասնաժողովի ուշադրութիւնը հրաւիրել հետևեալ անչափ կարևոր և ընդմիշտ բարձի թողարած խնդիրների վերայ.

1. Պիէսների լեզուն կանոնաւոր և միօրինակ դարձնելու խնդիր:

«Մուրճի» ընթերցողները քանիցս կարդալու առիթ ունեցել են աչս մասին. բաւց խնդիրը միշտ խնդիր է մնացել. ոչ ոք ամենափոքր ուշադրութիւն չէ դարձրել աչս կենսական խնդրի վերայ, աղճատ, ոչ մի բանի չնմանող պիէսների լեզուով սնուել է հասարակութիւնը: Գծգոհութիւններ հասարակութեան մէջ, չորդօր, խրատ մամուլի միջոցով—ոչ մի ազդեցութիւն չէ արել Թատրոնական գործի գլուխ կանգնողների վրայ:

2. Ռէպէրտուարի պատրաստութեան խնդիր:

Մասնաժողովը անցեալ տարի ոչ մի նախնական պատրաստութիւն չէր տեսել զոնէ 10 հատ նոր պիէս Թարգմանել տալու, աչնպէս որ խումբը Բագու հաւաքւելով չէր իմանում թէ ինչ խաղաչ: Գործին գլուխ կանգնողները այժմ ամեն հնար ունին վաղօրօք աչ մասին մտածելու:

3. Խմբի կազմակերպութեան խնդիր:

Աչս խնդիրը նոր չէ ծագած, բաւց շատ անկանոնութիւնների պատ-

ճառ դարձաւ անցեալ տարւոյ թատերաչրջանին: Գլխաւոր խնդիրը դերասանուհիները սակաւութեան պատճառով էր. իսկ եղածներից ոչ մէկը չէր համաձայնում աղանի դերեր կատարել. վեց դերասանուհի եղած խմբում այնպիսի պիէս պատահեց, որ բացի մէկից ոչ մի դերակատար չկար, մինչդեռ պիէսում հարկաւոր էր երկու կին ընդամէնը:

4. Ռէժիսորի խնդիր:

Աւելորդ չեմ համարում կրկին շեշտել այս խնդրի վերայ. «Մուրճ»-ի նախորդ համարում բաւական գրած է, և կարծում եմ որ թատրոնական մասնագիտողը լուրջ ուշադրութիւն կը դարձնէ այդ մասին. Մի գործին հմուտ ռէժիսոր ամեն ինչ է մի կանոնաւոր խմբի համար:

Շնորհաւորելով նորակազմ մասնագիտողի գործունէութիւնը՝ բոլոր սրտից չաջողութիւն ենք ցանկանում:

Ներկայ թւակ. փետրւարի սկզբներում Կ. Պոլսում վախճանեց չալտնի հաչ անտրպրընէօր Յակոբ Վարդովեան: Հանգուցեալը 1864 թւականին ներկայացել էր հանգ. դրամատուրգ Սրապիոն Հեքիմեանին և խնդրել որ իբր դերասան ընդունի իրան իւր խմբում: Հեքիմեան նախելով Վարդովեանի հուժկու հասակին և առողջ կազմածքին պատասխանել էր.

— Գնա փալան մը առ կռնակդ, կանգնէ հրապարակի վրա և աչտեղ քու բազդդ փնտռէ:

Վարդովեան զայրացած և դերասան դառնալը մտքումը դրած սկսել էր իւր գործունէութիւնը ինքնօգնութեամբ: Նա չաճախ խաղում էր իւր խմբով թուրքերէն, իսկ շարաթ գիշերները հալերէն: Իւր ճարպիկութիւնով կարողացաւ հռչակաւոր Ալի փաշայից մեծաշնորհ ստանալ իբր անտրպրընէօր: Այդ ասպարիզում նա աւելի սնուն հանեց քան իբր դերասան, 80-ական թւականներին Սուլթանի պալատում կազմած խմբի ռէժիսօր լինելով և կամենալով իւր հաւատարիմ հպատակ լինելուն գործնական ապացուցը տալ՝ վերջերս մահմեդականութիւն ընդունեց. իբրև հաչ ապրում էր Յակոբ Վարդովեան անունով, և մեռաւ իբրև մահմեդական՝ Գիւլլի Ալի էֆէնդի անունով:

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐԻՆ

Բերլին 16-ին (4) Մարտի.

«Մշակ»-ի 24 №-ում տպած պ. Մալումեանի նամակի առթիւ թող
աւէք խնդրեմ երկու խօսք ասել:

Հրէս Գրէչֆուսը մասնել է ֆրանսիական դօրքի գաղտնիքը մի մեծ
պետութեան. Ջինեորական դատարանը նորան աքսորի է գատապարտել,
ճանաչելով մեղաւոր: Զուան կարծում է որ նա անմեղ է, պ. Արասխա-
նեանը կարծում է, որ նա մեղաւոր է: Գաղտնի թղթերին, որոնք պահուած
են այդ գործի մասին ֆրանսիական ղինեորական շտաբում, անձանօթ են
և՛ պ. Զուան և՛ պ. Արասխանեանը և՛ ամբողջ աշխարհը: Այդ թղթերին
միակ անմիջապէս ծանօթ ատեանը գատապարտել է Գրէչֆուսին: Հարց է.
սխալմել է այդ ատեանը, թէ՛ մեղաւոր է Գրէչֆուսը:

Հեռւից՝ ընթերցողներս միմիայն հաւանական ենթադրութիւններով
կարող ենք Զուալի կամ կառավարութեան կողմը հակիլ: Առանց ուրանա-
լու Զուալի վեճ և դովելի համարձակութիւնը՝ պաշտպանել իւր համոզ-
մունքը (աւելի լաւ էր ասել ենթադրութիւնը) հրապարակօրէն, ամեն մի
անձի անհատական գործն է՝ այս կամ այն կարծիքն ունենալ Գրէչֆուսի
մասին: Եթէ, առաջները տատանւողներ էլ կալին, Զուալի գործի քննու-
թիւնը 15 օրու ընթացքում սրատես և լաւ ազբիւրներից օգուտը ընթեր-
ցողի համար ավաշկարա բաց արաւ, որ եղած վատտերից առօտակաւը
90% խօսում է ի վնաս Գրէչֆուսի և Զուալի: Եւ ոչ մի խելքը զլխին
մարդ չի կարող ենթադրել, որ Ֆրանսիալի նման մի ազատ երկրի դա-
տարանը առանց ուլ և ալի դատապարտէր մի անմեղ Գրէչֆուսի և ազատ
արձակէր մի մեղաւոր կատերճաղի՛ր: — Ալս է գործի էութիւնը երկու խօս-
քով: Տիւմ ճաշակի և խելքի բան է մոլեգնօրէն Զուալի կողմը բռնել և
քղաւել, որ Գրէչֆուսը արդար է, որպէս անում է մեր «Մշակ» լրագիրը,
որի համար Տիւմ Զուան անսխալական մի պապ է դառել, կամ ի նկատի
ունենալով Զուալի պնդումի անհիմն լինելը, մեղաւոր ճանաչել Գրէչֆու-
սին, որպէս անում է պ. Արասխանեանը, և կամ սառնասրտութեամբ
սպասել գործերի աւելի պարզելուն, որպէս անում են եւրոպական շատ

թերթեր, որոնք առժամանակ բաւանում են լոկ փաստերի անաչառ արձանագրութեամբ ¹⁾։

«Մշակ»-ի հետ վիճելը անկարելի է դառնում այն պատճառով, որ այդ լրագիրը բացի անվաչել-անգրական ոճերից, սովորութիւն ունի առանց փաստերի, ամեն բան զողմալօրէն, ամենաընդհանուր, ամենածալ-բաշեղ բառերով կրկնելու, բղաւելու և միմիայն բղաւելու. «մի Ալլան՝ կալ և նորա մարդարէն Մահամեղն է. մի ճշմարտութիւն կալ աշխարհի երեսին, և նորա քարոզիչը «Մշակը»—ահա այդ լրագրի լօղածների սքեման, կարգացէք պ. Յովհաննիսեանի անվաչել լօղածը № 24-ում, կամ պ. Մալումեանինը 26-ում, ուր բնորոշ են հետեւեալ տողերը: «Նրբ Զոլալի դէմ դուրս է գալիս մեր գրականութեան մի օրդան, դա ցոյց է տալիս, որ կամ այդ օրդանը «Մուրճ»-ը մինչև այժմ խաբել է հասարակութիւնը (հասարակութեանը), իրան ցոյց տալով որոշ սկզբունքների հետեող, և կամ այժմ է դաւաճանում այդ սկզբունքներին ալլանդակ պատկեր ցոյց տալով մի աճալիսի գործում, ինչպէս է Լամիլ Զոլալի խնդիրը»... գրում է «Մշակը» 26-Ձե-ում: Ապա դիմելով «Մուրճի աշխատակիցներին, շարունակում է՝ «Թող այդ աշխատակից պարոնները բարձր ասեն. համաձայն են արդեօք պ. Արասխանեանին... Գա է պահանջում իրանց պատիւը և թէ այն օրգանի պատիւը, որին իրանք մասնակցում են»...

Պար. Մալումեանին պատաշխանում են զանազան միջոցներով որոնք ես գտնում եմ սաստիկ խիստ ի նկատի ունենալով այն թըլ-ւառ հոգեկան վիճակը, որ ցոլում է նորա գրութեան ամեն մի տողից: Ասէք խնդրեմ, որ խելքը գլխին մարդը այնպիսի բաներ կը-

¹⁾ Մուրճ'ում Զոլալի պնդումների մէջ կշռի ծանրութիւնը չէր նկատուած այն կէտը որ Գրէպիտուին է վերաբերում, այլ այն, որ վերաբերում է զլխաւոր շտաբի ղերին Էտտերհազի քննութեան ժամանակ: Եւ առհասարակ Մուրճ № 1-ում այն մտքն էր լալտեւում, որ դատաւարութիւնից առաջ չպէտք էր դատաւիճիւններ կարգալ մէկի մեղաւորութեան, միւսի անմեղութեան մասին: Զոլալի պնդումները այդ մասին մենք անհիմն չէինք լալտենել, այլ (մեր լօղածը դրւած լինելով դատաւարութիւնից առաջ) ասում էինք թէ այդ խնդիրների համար պէտք է սպասել դատաւարութեան վախճանին, իսկ մինչև այդ՝ պէտք է հաւատով վերաբերել դէպի դատարանների վճիռը: Մինչև Զոլալի դատի սկսելը թէ ինչ վերաբերմունք պէտք էր ունենալ, մենք արտապալտել էինք մեր լօղածի ար խօսքերով. «Մենք Ֆրանսիան ճանաչում ենք այնքան ազատ և լուսատու երկիր, որ կարող ենք հաւատ ունենալ, որ նորա հաստատութիւնների հովանու ներքոյ սուան ու արդարութիւնը երևան կը գան նաև անկախ օտար ազգերի ձայների միջամտութեան, ազգերի, որոնցից շատերը գիւմիալն պիտի սովորեն Ֆրանսիայից թէ ինչ է օրէնք, ինչ է արդարալատ լիւրիւն» (Մուրճ № 1, էջ 150-151):

գրէ որպէս Մալումեանը.—«Որովհետև պ. Արասխանեանը Ջուլային անսխալական չի համարում, դէ ուրեմն դաւածանում է իւր սկզբունքներին. և ալդ պատճառով, «Մուրճ»-ի պարոն աշխատակիցներ, ասացէք, համաձայն էք պ. Արասխանեանին. որ դէ, պ. Մալումեանի լողիկալով դուք էլ «Մուրճ»ն էլ, գուցէ նորա ընթերցողներն և գրաշարն էլ դաւածան դուրս գան ալն սկզբունքին, որ հոգեհիւանդ Մալումեանի համար մի անտարակուսելի դողմա է դառել».—Այս է պ. Մալումեանի լողիկան, որ ուղեղի կենդրոնների խանդարման բոլոր նշաններն ունի: Հիւանդ պ. Մալումեանին ես չեմ պատասխանում, ալ ալդ փոքրիկ անալիզով ուզում եմ ընթերցողներին մի դադափար տալ նորա հոգեկան ցաւալի վիճակի մասին: որը ինձ, գուցէ և շատերի համար մի հին և ակնալատի իրողութիւն է. իմպատասխանը պ. Մալումեանին».—Ըստ կարելոյն շուտով դիմել մի հոգեբան քօչկի օգնութեանը: Նորա գրած դեղատոմսի մէջ նա կը գտնի «Մուրճ»-ի աշխատակիցներէ շատերի պատասխանը ¹⁾:

ԳՐ. ՎԱՆՅԵԱՆ

¹⁾ Տպագրելով մեր աշխատակից պ. Վանյեանի այս նամակը, մենք կը նկատենք մեր կողմից միայն մի բան, այն է որ Մշակի ակնարկած լօղւածում ալն, ինչ պատարակում է, մեր կարծիքով միակողմանի կերպով վերագրում է լօղւածը ստորագրող Խ. Մալումեանին: Մինչդեռ ներկայ դէպքում ալդ անձը տիպական ներկայացուցիչ է ամբողջ Մշակի ներկայիս ուղղութեան: Նա ալդ գրել է լռելեալն համերաշխութեամբ Մշակի ոչ միայն բոլոր խմբագրական աշխատակիցներին, ալ և Մշակի բոլոր կողմնակիցներին հետ: Իբր ապացուց թող ծառայի թէ ալն համաձայնութիւնը, որ տեղ է ալդ թերթի խմբագրութիւնը լօղւածի հրատարակման համար, և թէ ալն լռութիւնը որ պահպանում են (և պիտի պահպանեն!) ալդ թերթի կողմնակիցները հետեւալ գրականական օգինբաղութեան զիմաց: Դատեցէք. ալդ Մալումեանը (որին Աստուած լիտերատոր անւանի!) իւր ստորագրութեամբ տպած նոյն լօղւածում, իբր թէ կրկնելով Մուրճի յօղւածի խօսքերը, ասում է ապլումբով.

«Հալ գրողը նրա համար չէ գրում Ջուլայի գործի մասին, որ ներգործի ֆրանսիական կառավարութեան վրայ, ինչպէս երեխալարար կարծում է Մուրճի խմբագիրը, ալ նրա համար, որ...» (տես Մշակ № 26):

Մինչդեռ անա թէ Արասխանեանը ինչ էր ասել.

«Հարկաւ՝ հալ ընթերցող հատարակութեան համակրութիւնը կամ հակակրութիւնը արդարադատութեան գործում՝ Ջուլայի խնդրի վերաբերեալ՝ դրականապէս ոչ մի նշանակութիւն չունին: Նկատեցէք որ (ստորագծումը բնագրումն է!) հալկական մամուլը ոչ մի ճնշում չի կարող գործել ֆրանսիական երդեւալների դատարանի վրայ, և ոչ էլ հալկական հասարակաց կարծիքը կարող է արժանանալ ուշադրութեան նոյն իսկ Ջուլայի կողմնակիցների կողմից Թրանսիպուան Բաց միթէ խնդիրը դորանուսն է?» (տես Մուրճ № 1, էջ 151): Էլ ինչ խօսէք այսքան պարզ խօսքերը աղաւաղիւր բնգունակ դրական գործիչների հետ!...

ԶԱՆԱԶԱՆ ԼՈՒՐԵՐ

ՆԻԷՐՆԵՐ ՄՈՒՐՃԻ ՊԱՐՏՔԵՐԸ ՀԱՆԳՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ. (Տես սկիզբը Մուրճ № 1): Բաքուից պ. Առաքել Գատտրեանը ուղարկել է մեզ Մուրճի պարտքերը հանգցնելու գործի համար 300 ռուբլի Ապալիսով մինչև այժմ աչգ նսպատակի համար ստացած ենք 350 ռ., որով չուրջ 5.500 ռուբլի պարտքից այժմ մնում է 5.150 ռուբլի:

ԶՈՒԱՅԻ ԴԱՏՐ: Էմիլ Զոլալի գատը աչքան մեծ ազմուկ հանեց ամբողջ լուռուոր աշխարհում, և հետաքրքրութիւնը այդ գործի համար աչքան խորը թափանցեց ընթերցող հասարակութեան շրջաններում, որ մենք կարծում ենք թէ Մուրճի ընթերցողների ցանկութեան հանդէպ ենք գալիս՝ ներկայացնելով իւր ամբողջ ընդարձակութեամբ Զոլալի պրոցէսը երզնաւորի դատարանում: Հարկաւ, աչքն որ տալիս ենք մեր ընթերցողներին չի ներկայացնում ամենքի արտասանած խօսքերը իրենց լրակատարութեամբ. եթէ ի նկատ ունենանք աչքն որ պրոցէսը տեւեց տասնուհինգ նիստ, և ամեն մի նիստը տեւում էր դրեթէ ամբողջ օր, և որ կալին նաև խօսողներ մի-երկու-երեք և աւելի ժամերով, ապա պարզ կ'լինի որ պրոցէսի լիակատար արձանագրութիւնը տպելու համար կ'պահանջւէր մի հաստ հատոր: Այդքան հեռուն չէր կարող գնալ մեր մտադրութիւնը. հարկաւոր է միայն որ ոչ մի կարևոր խօսք բաց թողած չլինի մեր տպածի մէջ: Դորա համար մենք օգտուեցինք Պետերբուրգի «Виржевыя Вѣдомости» ամենօրեակ լրագրի տպած հաշիւներից (թերթի 19 համարներում, № № 27-ից մինչև 45). բաց, չբաւականալով դորանով, ամենակարևոր վկաների խօսքերի համար մենք փոյթ ենք ունեցել համեմատելու Փրանսիական աղբիւրների հետ և ուրեմն տեղ-տեղ լրացնելու: Ամբողջը աչուամենայնիւ անկարելի եղաւ զետեղել Մուրճի մի համարում. այս անգամ զետեղում ենք հինգ առաջին նիստերի արձանագրութիւնը, որի մէջ կան նաև ամբողջ դատաւարութեան համար կարևոր վկայութիւններ: Տեղ խնայելու համար մենք բաց ենք թողել հանդիսականների և ժողովրդի ցուցերի նկարագրութիւնները, դարձնելով մեր ուշադրութիւնը լոկ դատաւարութեան ընթացքի վրայ:

Թերևս աւելորդ չէ աւելացնել, որ ոչ մի հայկական թերթ, թէ մեզնում և թէ արտասահմանում, չուեց Ձուլալի դատաւարութեան հաշիւը, թէև ամենքը իրենց պարտականութիւնն էին համարել նոյն խնդրատաւարութիւնը չսկսած՝ իրենց դատաւճիռները կարգաւ և փաթաթիւ նոցա իրենց անտեղեակ ընթերցողներէ շնքներին...

ՇԱՆԹԻ «ՎԵՐԺԻՆ» ՎԷՊԸ ԼՂԱ Է տեսնելու առանձին գրքով մարտի 25-ին: Գինը նշանակւած է 60 կոպէկ: Ամբողջ դուա արդիւնքը հեղինակի օգտին է: Ամեն պահանջ պէտք է ուղղել Մուրճի խմբագրութեան: Ղիւրութիւն է արւում զինը վճարել պոստի մտրկաներով: Քսան օրինակ կամ աւելի միանդամից գնողները վճարում են հատին 50 կոպէկ:

ՎԵՀԱՓԱՌ ԿՆԹՈՂԻԿՈՍԸ, որպէս հաղորդեցինք անցեալ անգամ, Թիֆլիսից ուղևորեց Բաքու, փետր 5-ին:

7-ին աչցելեց Վեհին շիա մահմեդականների նահանգական ատեանի (մէջլիսի) նախագահ Սխունդ Մուլա-Ջևադ Սխունդ Մուլա-Աղա: Ձագէ: Հալրիկը խօսեց հաւ և պարսիկ ազգերի պատմական գրադիութեան մասին: Նոյն օրը ներկայացան փակւած հալ գպրոցների նախկին ուսուցիչները և վարժուհիները, զլիաւորութեամբ նոյն գպրոցների նախկին տեսուչ պ. Հալրապետ Ղուկասեանի, որը ներկայացրեց Հալրիկին մի փառատր և մեծ նկար Ս. էջմիածնի վանքի, կանաչի վրալ հանած:—8-ին Վեհը, վաղ առաւօտւանից, շարունակեց ընդունել աչցելուներին, քաղաքի միջնակարգ գպրոցների աշակերաններին երկու սեռից և ուրիշներին, թւով մի քանի հազար հոգու, խմբերով: Այդ նոյն օրը ներկայացաւ Վեհին մի պատգամաւորութիւն Գանձակից: Երեկոեան ներկայացան Վեհի ընդունելութեան կարգադիր մասնաժողովի անդամները, որոնք չալտնեցին թէ փետր. 10 ին կաթողիկոսի պատւին ճաշկերութ պիտի լինի: Հալրիկը, սակաւն, հրաժարեց ալ գատուից, ասելով որ եկած է Բաքու միայն իւր հօտը աչցելելու համար: Կաթողիկոսը խորհուրդ տւեց ալ ճաշկերութի փոխարէն ծախքը կատարել հալ փախտականների օգտին:

Փետր. 9-ին Վեհը աչցելեց Բալխանին, ուր գիտեց «Ա. Մանթաշեան և լնկ.» ու «Նղբարք Միրզոյեաններ» ֆիրմաների հանքերը (վերջինիս կառավարիչ ինժեներ Վարդանան աղուհաց մատուցեց ոսկեջրած արծաթէ ափսէի վրալ) և «Վասպեան ընկ.» հանքերը, ուր ճաշի սեղան սարքեց: Ներկայացան Հալրիկին Բալխանու հանքերի հալ կառավարիչները: Հալրիկը ուղղեց նոցա խօսք գիտութեան մասին, որ պիտի ծառալի արդիւնաբերութեան և առևտրին: Պատ-

րատած ճաշկերուլթին, ուր Հալրիկը առանձին սեղանից նախագահում էր, Վեհը թաս առաջարկեց Թագաւոր Կալսեր կենաց, ապա կարգադրիչ մասնաժողովի անդամների և բանւոր մարդոց համար: Ամենքը խոտացան հոգս քաշել իրենց հանքերի բանւորների համար. Պր.՝ Աւ աքել Ծատուրեանց առաջարկեց յօգուտ Էջմիածնի և Երուսաղէմի վանքերի մի շաքաթական արդիւնքը իւր հանքերից, որքան և նա լինի, և պարտաւորեց իւր եղբորորդի Յովհաննէս Ծատուրեանցին նոյնը անել ամեն տարի 9-ից մինչև 15 փետրւարի, կենդանի կլինի թէ ոչ ինքը Առ. Ծատուրեանցը: Պարոն Յովհաննէս Ծատուրեանը մերձենալով Հալրիկին համբուրեց աջը և չալտնեց որ միշտ սրբութեամբ պիտի կատարի իւր հօրեղբոր կամքը: «Մանթաշեան և Ընկերութիւն» անդամներից մէկը նւիրաբերեց Վեհափառին ալդ մի օրւաչ հանքի արդիւնքը (աւելի քան 100000 փութ նաւթ). նոյնը արաւ և նաւթագործական «Արարատ» ընկերութեան անդամը: Նոյնը չալտնեցին նաև բոլոր ալլ ֆիրմաների ներկաչացուցիչները, նւիրելով մի օրւաչ արդիւնքը: Ինժ. Աղամեանց առաջարկեց, ալդ օրը չաւերժացնելու համար, մասնաժողով կազմել որը խնդրամատուց լինի կառավարութեանը գրադարան-ընթերցարան հիմնելու Բալխանում բոլոր բանւորների համար, առանց խտրութեան աղգերի, և առաջարկեց մասնաժողովի նախագահ ընտրել պ. Առ. Ծատուրեանին: Վերջինս, հրաժարելով նախագահ լինելու պատւից, նւիրեց ալդ գործին 1.000 ռուբլի և առաջարկեց գորա համար ընտրել պ. Միք. Արամեանցին, որ և կատարեց:

14 փետր. Վեհափառը ժամանեց Գանձակ քաղաքը, ուր ընդունեցին իշխանութիւնները և ժողովրդի մեծ բաղմութիւն «Կեցցէ Հալրիկ» գոչումներով:

Գանձակից Վեհ. կաթողիկոսը մեկնեց Ս. Էջմիածին:

ՍՍԻ ԿԱԹՈՂԻԿՈՍՈՒԹԻՒՆԸ: Տարիներ առաջ Սսի կաթողիկոս ընտրւած Գլխորիս արքեպ. Ալէաթճեան, որպէս չալտնի է, չհաստատուեց սուլթանից, իսկ տաճիկ կառավարութեան զրդմամբ Սսի միաբանութեան կողմից ընտրւածը ժողովուրդը ապօրինի ճանաչեց: Աւ Ալէաթճեան մնում էր միակ օրինաւոր ընտրւածը, որը սակաչն դատապարտւած էր Կ. Պոլսում մնալու: Փետրւարի վերջերքը Կ. Պոլսի քաղաքական և կրօնական խառը ժողովը, ս. պատրիարքի նախագահութեամբ, զբաղւեց ալդ խնդրով. տաճիկ կառավարութեան որոշ կամքի ղլմաց՝ Ալէաթճեանին թող չտալ Սսի (Կիլիկիոյ) կաթողիկոս լինելու, ժողովում որոնեցին ալլ և ալլ պատճառներ նորա ընտրութիւնը անկանոն համարելու համար: Կատարեց քւէարկութիւն քաղաքական ժողովի անդամների կողմից առանձին, կրօնական ժողովի անդամներ:

րից առանձին: Արդիւնքը այս եղաւ որ վճոււեց նոր ընտրութիւն կատարել, և ընտրութիւնը ընկաւ Երուսաղէմի միաբան լուսարարապետ Սահակ եպ. Խապայեանի վրայ:

ԿՐԹԱԿԱՆ ՆՈՐ ՄԻՆԻՍՏՐ-ԲՈԳՈՒԷՊՈՎ: Փետր. 13-ին բարձրագոյն հրամանով կրթական մինիստր (ի տեղի հանգուցեալ Կոմս Դելեանովի) նշանակեց Նիկողայ Պաւլովիչ Բոգոլէպով (ծնւ. 1847 թ.): Առաջներում նա եղած է Մոսկուայի համալսարանի ուսկտոր (1883-ից), և չետոյ Մոսկուայի ուսումնարանական շրջանի հոգաբարձու: Նոր մինիստրը, որպէս ինքը չալտնեց, կուսակից չէ արմատական փոփոխութիւններ:

ՎՐԱՍՏԱՆԻ ՆՈՐ ԷՔԶԱՐԽՐ: Վրաստանի էքզարխ (գլուխը ուղղափառ եկեղեցու կովկասեան թեմերի) Ն. Բ. Սրբազնութիւն Վլադիմիր, որ վարում էր այդ պաշտօնը 1891 թականից ի վեր, այժմ նշանակւած լինելով Մոսկուայի և Կոլումնի միտրոպոլիտ, նորա տեղը իբր Վրաստանի էքզարխ նշանակւած է Ն. Բ. Սրբազնութիւն Ֆլաւիան, որ մինչ այդ արքեպիսկոպոս էր Խոլմի և Վարչաւի:

ՊԱՐՍԿԱՍՏԱՆԻՅ: (Թաւրիզի մեր չատուկ թղթակցից ստացած ենք մեծ թղթակցութիւն, թւագրած 11 մարտի, որ ժամանակը չներեց ամբողջապէս զետեղել. հաղորդում ենք առայժմ մի քանի զլխաւոր կէտերը համառօտակի):

—Սալմաստի Հաւթան և Մահլամ գիւղերում կատարուեցին խուղարկութիւններ բաւց շատ սոսկալի կերպով. նախ Հաւթանը շրջապատեցին 500 զինուոր, ապա 200 ձիաւոր զինուորներ սարիարաստի առաջնորդութեամբ փչեցին պատերազմական շփոթը, գցելով բնակիչներին սարսափի մէջ: Խուղարկեցին բոլոր հալ տները. չգտանւեց զէնք և ոչ զաչաղներ, հակառակ տաճկաց կառավարութեան պընդումներին: Խուղարկութիւնները տեղեցին երեք օր, որի միջոցին քանդեցին գիւղական մի քանի տներ, զինուորները կողոպտում էին և բռնաբարութիւններ չկատարում: Տաճկահալ փախտակաճներից բռնեցին Մահլամում 90 հոգի, Հաւթանում 30 հոգի, որոնց տարան Խօզ իբր «զաչաղներին». դոցանից ճանապարհին շատերը մեռան: Նոյն իսկ քննիչ ուղարկւած Ֆաթի Սուլթանին վկայեց որ պարսիկները արածը «քաֆիրութիւն» էր:—Խուղարկութիւններ կատարուեցին նաև անցեալ տարի, որից չետոյ 200 տուն հալեր զաղթեցին Ռուխա. նոյն շարժումը սկսւած է այժմ ևս:

—Թաւրիզի հաւց առաջնորդ Սարսցեան վարդապետը, զպրոցները հոգաբարձութեան պահանջի համեմատ՝ վերջապէս ուղարկեց իւր հրաժարականը Ս. Էջմիածին. նորան ճանապարհածախք տւին 50 թուման: Առաջնորդարանում կապցած ժողովի մէջ վճոււեց որ առաջնորդ նշա-

Նախի անպատճառ ուսանողատակ եպիսկոպոս: Հ. Սառաջեանի համաձայնութեամբ տեղապահութիւնը լանձնեց Ղալալի եկեղեցու քահանայ տէր Մկրտչին:

— Համադանում շէլսի և մութաչառի աղանդաւորների միջև եղաւ մեծ արիւնհեղութիւն, սպանւածներ երկու կողմից 700 հոգի ևն հաշոււմ:

ՓՐՔԱՀԱՅ ՓԱԽՍՏԱԿԱՆՆԵՐԸ: Վեհափառ Կաթողիկոսը խնդրել է թուլտուլթիւն մեր կառավարութիւնից բանակցութեան մէջ մտնելու Կ. Պոլսի ռուսաց զեսպանի հետ՝ Ռուսիայի սահմաններում ապաստանած հալ փախստականների վերադարձի մասին:

— Ախալքալաքի գաւառում և Կարսի երկրում ապրող 51 ընտանիք, տաճկահալ փախստականներից, խմբով խնդրամատուց են եղել Կովկասեան զլխաւոր իշխանութեան՝ որ ռուսահպատակ ընդունեն և Կարսի երկրի «Մրէ» կոչւած պարապ հողում բնակութիւն հաստատեն: Կառավարութիւնը աղ խնդիրքը մերժեց:

ՕԳՆՈՒԹԻՒՆԸ ՀԱՅԵՐԻՆ ՏԱՀԿԱՍՏԱՆՈՒՄ:

Բաբելից, լուճարի 5-ին «աւետիս» մանգալով տեղացի հարուստներից քսան հոգու մօտ, ժողովել է 915 ուրբի, որից զուտ արդիւնք 895 ու փոխադրել է Կ. Պոլս, ռուսաց զեսպանի միջոցով ս. պատրիարքին լանձնելու համար, տաճկահալ որդերի օգտին:

ՌՈՒՍԻԱՅԻ ՄԱՐԳԱՀԱՄԱՐԸ: Անցեալ 1897 թ. լուճ. 28-ին Ռուսիայում կատարւած միօրեալ մարդահամարի արդիւնքներից առաջիմ չափսն է կացուցել հետեւեալը: Ամբողջ կազարութեան ազգաբնակութիւնն է 12^ր. 411. 736 հոգի, որից արական 63. 253. 131, իգական՝ 63. 158. 605 հոգի (աչնպէս որ ամեն 1000 արականի վրայ գալիս է 999 իգական): Ամբողջ Ռուսիայի տարածութիւնը, չհաշւելով ամենանշանաւոր ներքին ջրերը, 18.794.684 քառակասի վերստ լինելով մի քառակ. վերստի վրայ գալիս է մօտ 6,8 հոգի: Քաղաքներում բնակոււմ են 16.289.181 հոգի, ուրեմն ընդհանուրի մօտ 12 տոկոսը Ամենախիտ բնակութիւնը Վիսլաեան երկրումն է իւր տասը նահանգներով (ալսինքն Լեհաստանում), ուր մի քառ. վերստի վրայ գալիս է 84, 6 հոգի. ապա Կովկասը—23,6 հոգի, Եւրոպական Ռուսիան 22, ու Ֆինլանդիան 8,8, Թուրքաստան և Անդրկասպեան երկիր 8,9, անապատային նահանգները 1,8, և վերջապէս Սիբիր, ուր մի քառ. վերստի վրայ գալիս է 0,5 հոգի (ալսինքն 2 քառակ. վերստի վրայ 1 հոգի): Նահանգներից ամենախիտն է Լիւբլիննահանդը, ուր մի քառ. վերստի վրայ գալիս է 130,7 հոգի և վարչաւի նահանգը 126 հոգի. Մոսկուայի նահանգում 83,2, Պոդոլեան նահանգում 82,1, Պոլտաւի նահ. 63,7, Եկատերինսուլաի նահ. 37,9, Նիժնգորոդեան նահ. 35,6 Տաւրիկեան նահ. (Ղրիմ) 27,2, Պերմի նահ.

10,4, Օրէնբուրգի նահ. 9,7, Օլոնէցի նահ. 3,2 և Արխանգելեան նահ. միայն 0,5:

Սեռի տեսակէտից, թէև ընդհանուր առմամբ ամբողջ կաշարութեան մէջ 1000 արականին գալիս է 999 իգական, բայց այլ և այլ մասերում այդ չարաբերութիւնները շատ տարբեր են: Եւրոպական Ռուսիայի նահանգներում 1000 արականին գալիս է 1.028 իգական, Ֆինլանդիայում 1.022, Լեհաստանում 986, Սիբիրում 937, Կովկասում 895, անապատային նահանգներում 894, Թուրքեստանում և Անդրկասպ. երկրում 836: Իգականը ամենագերակշիռն է Եւրոսլաւի նահ., ուր 1000 արականին գալիս է 1330 իգական, և ամենափոքրը Պրիմորսկից երկրում՝ 1000 արականին 455 իգական: Սախալին կըղզում 1000 արականին ընկնում է 148 իգական, բայց, ինչպէս չափանի է, Սախալինը արտորովայր է: Քաղաքները մէջ իգականը գերակշիռ է Արխանգելսկում, ուր 1000 արականին գալիս է 1-111 իգ., Նէժինում 1.137, Կալիչում 1.164 իսկ արականը գերակշիռ է Պետերբուրգում ուր 1000 արականին գալիս է 826 իգ., Մոսկա 763, Թիֆլիս 671, Սեւաստոպոլ 571, Բաթում 399, Խաբարովսկ 279, Վլադիվաստոկ 186:

ՍԻՔԻՐԻ ԵՒ ՄԻՋԻՆ-ԱՍԻԱՅԻ ՆԱՀԱՆԳՆԵՐԻ ՆՈՐ ԲԱԺԱՆՈՒՄԸ: Բարձրագոյն հրամանով 7-ին մարտի—

1, Իրկուտսկի գեներալ-նահանգապետութեան մէջ ալժմեանից զինւորական կառավարութիւնը բաժանւում է քաղաքացիականից, կազմւում է մի զինւորական շրջան Տաբուլսկի, Տոմսկի, Ենիսէյսկի, Իրկուտսկի նահանգներից և Ակմոլինսկի, Սեմիպալատինսկի, Եակուտսկի երկիրներից. այդ զինւորական շրջանը, որ կոչւելու է ալժմեանից Սիբիրեան զինւորակոն շրջան, ունենալու է իւր վարչութեան կենտրոնը Օմսկ քաղաքում:

2, Սեմիրեչենսկի երկիրը հանւում է Օմսկի զինւորական շրջանից և Անապատային (Ստեպնօ) գեներալ-նահանգապետութիւնից, որպէս նաև ներքին գործոց մինիստրութեան իշխտնութիւնից, և միացւում է Թուրքեստանի զինւորական շրջանի և գեներալ-նահանգապետութեան հետ, լանձնելով կառավարութիւնը զինւորական մինիստրութեան:

3, Անդրկասպեան երկիրը հանւում է պատերազմական մինիստրի ընդհանուր կարգով անմիջական կառավարութիւնից և միացւում է Թուրքեստանի զինւորական շրջանին և ստորադրւում Թուրքեստանի ընդհանուր նահանգապետին, նոյն հիմունքներով, որպէս այդ ընդհանուր նահանգապետութեան միւս երկիրները:

4, Իրկուտսկի ընդհանուր նահանգապետին չատկացուած է Իրկուտսկի զինւորական ընդհանուր նահանգապետի կոչումը, ստորագրելով նորան ալդ ընդհանուր նահանգապետութեան մէջ եղած զօրքերը:

ԳԱՏԱԻՈՐՆԵՐԻ ԱՆՓՈՓՈԽԵԼԻՈՒԹԻՒՆՆԸ Անդրկովկասում: Նոր դատարանական կարգերի հիմնական սկզբունքներից մէկը այն է, որ դատաւորները իրենց վճիռները տան անկախ կերպով—հետևելով միայն օրէնքին և իրենց խղճին: Համոզմունքը անկախօրէն լաւտնելը ապահովելու համար պէտք է որ դատաւորը նաև իւր պաշտօնում ապահով զգալ, այսինքն որ նա, օրէնքին և իւր խղճին հետևած լինելու համար չզրկուի իւր պաշտօնից, ալ խօսքերով որ նա լինի անփոփոխելի: Ալդ ընդհանուր սկզբունքը չէր դործադրուած Ռուսիայի մի քանի երկիրներում: Այժմ, 15 մարտի, հրատարակուած է Բարձրագոյն հրաման, որով դատաւորների անփոփոխելութեան սկզբունքի սահմանափակումը վերացրած է Անդրկովկասի և Վխուլայեան երկրում (Ահա ստան):

ՄԱՀՄԵԳԱԿԱՆՆԵՐԻ ԳԱՂԹ: Պաշտօնական աղբիւրից իմացուած է, որ Գանձակի թրքաշատ նահանգից 6000 ընտանիք խնդիրք են մատուցել կառավարութեան՝ թիւրքիա գաղթելու թուղտութիւն ստանալու համար: Ինկատի ունենալով խնդրատուներին ալդ ահազին բազմութիւնը—Վովկասեան իշխանութիւնները միջոցների են դիմել ալդ երևույթի պատճառները իմանալու: Հնարաւոր են համարում, որ դա թիւրքիայի նախագծերի արդիւնք է: զուրս քչելով հայերին իրենց երկրից—իսկ նոցանից մի քանի տասնեակ հազար հողի Վովկասումն են ապաստանւած,—թիւրքիան կամենում լինի նոցա զիւղերը և հողերը Վովկասից սպասուող գաղթական թիւրքերին չատկացնել:

Աւելորդ չէ ալդ առթիւ առաջ բերել «Կաւկազ» լրագրի մի լողւածից հետևեալը: Թերթը (Ձճ 67) ասում է որ եթէ ալդ 6000 ընտանիքը զուրս գալու լինեն, «չպէտք է բոսլէն բաց թողնել Կալսեր կամքը կատարելու համար, որով ազատ հողերը պէտք է արւեն ուս գաղթականներին: Եթէ (չարունակում է թերթը) պարսպ մնացած հողերը ալդ նպատակի համար անչարմար դատուեն, ապա կարելի է հողերի փոխանակութիւն կատարել»:

Յանկալի է որ «Կաւկազ»-ը աւելի որոշ խօսէր այն մասին, թէ նա ինչպէս է հասկանում «հողերի փոխանակութիւն» խօսքը:

ԳՈՒՍՈՒՐՆԵՐԻ ԳԱՂԹ: Մի ալ գաղթ էլ Վովկասից սպասուում է զուխորոնների կողմից, որոնք մտադիր են գաղթել ալ պետութիւնների Յալանի է, որ երկու տարի առաջ Ախալքալաքի գաւառի զուխորոնները չկամեցան հարտակուել զինւորագրութեան օրէնքին, կրօնական հիմունքներով: Ալդ անհնազանդութեան հետևանքը եղաւ

նոցա ցրիւ տալը, որի պատճառով նոքա տնտեսական մեծ զրկանքներ կրեցին. Գաղթել ցանկացողները 3000 հոգի են:

ՀԵՐԱԿԻ II-ի թաղման հարիւրամեակին հանդիսաւոր հոգեհանգիստ կատարեց Մծխեթի մալր եկեղեցում, ուր թաղած է վրաց ալք նախալերջին թաղաւորը: Ներկայ էին բարձրաստիճան անձեր, այլ և պատգամաւորութիւն: Թիֆլիսի խորհրդարանից՝ քաղաքագլուխ պ. Նւանգուլեանի գլխաւորութեամբ: Վրաց աղնւակահարութեան մէջ ստորագրութեան թերթ չըլնեց՝ Հերակլ II-ի անունով 6 թոշակաւորներ պահելու համար այլ և այլ գպրոցներում: Հոգեհանգիստ կատարեց նաև Թիֆլիսի խորհրդարանի դահլիճում և տեղական մահմեդականներին մղկիթում՝ թէ շիաների և թէ սիւնիների կողմից:

ՆՈՐ ՔԱՂԱՔ: Սեծովեան նահանգում վճռուում է հիմնել մի նոր քաղաք «Կրասնանա Պոլեանա» անունով:

ՊՈԼԻՏԵԽՆԻԿՈՒՄ ԹԻՖԼԻՍՈՒՄ: Թիֆլիսում պոլիտեխնիկում հիմնելու համար շարունակուում են նւիրարերութիւնները: Բաժում քաղաքի խորհրդարանը վճռել է չտակացնել տարեկան 2000 ռ., Գուլթալիսը տարեկան 1000 ռուբլի, Օզուրգէթը՝ միանւագ 1000 ռուբլի, ապագային թողնելով այլ որոշումները. (Թիֆլիս-ը, որպէս հաղորդել ենք արդէն, վճռել է տալ տարեկան 30.000 ռուբլի): Գանձակը չալտնել է իւր համակրութիւնները, թողնելով ապագայում որոշել մասնակցութեան չափը: Բաքում շուտով լինելու է նաւթագործների տարեկան ժողովը, ուր պիտի քննւի նաև ալք խնդիրը, աչն է թէ որքանով նաւթագործները պիտի մասնակցեն Թիֆլիսի պոլիտեխնիկումին, եթէ հիմնելու լինի: Իսկ քաղաքային խորհրդարանը ալք խնդրի որոշելը թողել է մինչև որ Թիֆլիսի և Վլադիկավազի առաջարկները միաժամանակ կը քննեն:

Ստաւրպոլի (հիւս. Կովկաս) քաղաքային վարչութիւնը, համակրութեամբ վերարբուելով Թիֆլիսում պոլիտեխնիկում հիմնելու դադափարին, վճռեց իւր տարեկան օժանդակութեան չափը որոշել 1899 թւականին:

Թիֆլիսի քաղաքային վարկի ընկերութեան ընդհանուր ժողովը ընդունեց իւր վարչութեան առաջարկը՝ միանւագ 50.000 ռ. նւիրել, եթէ պոլիտեխնիկումը հիմնելու լինի Թիֆլիսում:

Նոյն նպատակով եղբ. Միրզոփեանների նաւթագործական ընկերութեան վարչութիւնը որոշել է բաժնետէրերի ընդհանուր ժողովին առաջարկել անցեալ տարուալ օգոստից նւիրել 25.000 ռուբլի:

Թիֆլիսի աղնւակահանաց բանկի վերահսկող կոմիտէն վճռեց առաջարկել բանկի ընդհանուր ժողովին նւիրել նոյն գործին բանկի գիւղատնտեսական կապիտալի 10% ը, աչն է 5.700 ռ.:

ՆՈՐ ՊՈԼԻՏԵՆԻԿՈՒՄՆԵՐ ՌՈՒՍԻԱՅՈՒՄ: Ծրագրւած է նոր պոլիտեխնիկոսներ բանալ Վարշաուում և Կիևում: Վարշաւինը ունենալու է 3 բաժանմունք՝ ինժեներական, մեխանիկական և քիմիական. ուսանողների թիւը որոշւած է մինչև 750: Կիևինը ունենալու է չորս բաժանմունք՝ 1.100 ուսանողների համար աչն է՝ մեքենագէտներ 350, ինժեներներ 325, գիւղատնտեսներ 250 և քիմիկոսներ 175 ուսանող: Ուսման վարձը լինելու է տարեկան 100 ռուբլի:

ՔԱՂԱՔԱՅԻՆ ԻՆՔՆԱՎԱՐՈՒԹԻՒՆ:

—Թիֆլիս: Նորընտիր քաղաքազուլու պ. Գէորգ Սեանդուլեան, մինիստրական հաստատութիւնը տտանալուց չետոյ պաշտօնը ստանձնեց 15 փետրարի, իսկ առաջին անգամ խորհրդարանին նախագահեց փետր. 18-ին: Իւր շնորհակալական ձառի մէջ նոր գաղաքազուլուը աեսութիւն արաւ աչն ամենի, ինչ կատարել է իւր նախորդների օրերով քաղաքաչին ինքնավարութիւնը 1875-ից Թիֆլիս ներմուծելու ժամանակից՝ Իլմալեանի, Մատինեանի, Կիպիանի՛ի և Նազ. Թումանեանի օրերով ձառը հաւանութիւն գտաւ ընդհանրութեան և նոչն իսկ Սեանդուլեանի ընտրութեան հակառակ եղած իրաւասունների կողմից:

—Բարու: Վաղաքաչին վարչութեան անգամութիւնից հերթով գուրա եկող Սափարեանի տեղ քւէարկւեցին 3 մարտի՝ նախկին օտարականապետ Ազլէրէրէրէ և քաղաքաչին քարտուղար Սմայէնակիւ. բաւց երկուսն էլ չընտրւեցին: Սափարեանը հրամարեց քւէարկութիւնից:

ԿԵՆՍԱԹՈՇՍԿԻ ԳԱՆՁԱՐԱՆ ՆԵՐՍ. ԳՊՐՈՑՈՒՄ: Ներսիսեան զպրանոցի հոգաբարձութիւնը ձեռնարկել է զպրոցի ուսուցիչների և ալ ծառաւորների համար կենսաթոշակի գանձարան հիմնելու գործին: Կանոնադրութեան մշակումը մտ է վերջանալուն, որից չետոյ պիտի առաջարկւի վեհ. կաթողիկոսին ի հաստատութիւն:

Ուրախալի է տեսնել հոգաբարձութեան հոգատարութիւնը ալ մասին, բաւց չենք կարող չնկատել, որ կենսաթոշակով ապահովելը միմիաչն մի զպրոցի ուսուցիչներին—տարօրինակ երևոյթ է: Անշուշտ, Ներսիսեան զպրոցի հոգաբարձութեանը չէ պատկանում հոգսը ալ թեմական զպրոցների մասին. բաւց և ալս կալ, որ մեր թեմական զպրանոցներից միմիաչն Թիֆլիսինն է որ ապահով վիճակ ունի: Ինչիցն է սլղ. պատճառը կտակների շատ միակողմանի ուղղութիւն է: Ներսիսեան զպրանոցին կտակում են մեծ գումարներ, իսկ Շուշուալ, Երևանի համար մտածող չկալ: Ներսէսեան զպրանոցը, զլիստորապէս շնորհիւ ալղ կտակների, ալժմ ունի տարեկան 65.000 ռ.

աւելի եկամուտ, իսկ Շուշանը, Երեանինը շունին նոյն իսկ քա-
ւորդը այդ եկամուտի:

ԳԻՒՂԱԿԱՆ ԲԱՆԿ: Երեանի նահանգի Նախիջևանի գաւառի Թմբուլ գիւ-
ղում, (1000 տուն հայ և թուրք ընակիչ) ոստիկանութեան առա-
ջարկով հիմնուում է գիւղական բանկ: Գիւղական համալնքի վճարով
ամեն տուն տալիս է 3 օ. և կազմում 3000 ու. հիմնական գրամա-
դրուխ: Բանկը հիմնելուն մասնակցել կարող են նաև կողմնակի ան-
ձեր, զեր գալով որ և է գումար, որի համար կը ստանան 4⁰/₀:
Բանկը տալու է վող 8⁰/₀-ով: Բանկը կառավարելու է գիւղացիներ-
րից ընտրած վարչութիւնը: Գանձապահը ընտրուում է 3 տարով:

ԵՐԵՒԱՆՈՒՄ ԳԻՒՂԱՏՆՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ: Երեանում բազուց Ալաւերա-
կան կողկասեան Գիւղատնտեսական ընկերութեան ճիւղը, որը կոչ-
ւած է կարևոր զեր կատարելու Երեանեան նահանգի տնտեսական
զարգացման համար, եթէ նա գործելու լինի արթնութեամբ: Ալաւի-
տով Անդրկողկասում գիւղատնտեսական ընկերութիւններ կան Թիֆլի-
սում (կենտրոն), Քուլթալիսում (ճիւղ) և Երեանում (ճիւղ):

ԿՈՎԿ. ԳԻՒՂԱՏՆՏ. ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆԸ (Թիֆլիս) 1897 թ. գործելու է այս
Նախահաշուով՝ մուտք 11.880 ու., ծախք 10.581 ու.: Ալպեղործական
զպրոցի բիւջէի Նախահաշիւն է՝ մուտք 18.368 ու., ծախք 17.026 ու.:
ՕՋԻՍԻ ԳԻՒՂԱՏ. ԳՊՐՈՅ: Գուշէթի գաւառի Օձիսի գիւղում հիմնուում է
միջնակարգ գիւղատնտ. զպրոց:

ՆԻԼՐՆԵՐ ՆԻ ԿՏԱԿՆԵՐ:

— Ալբի տ. Շահբուգաղեան (Թիֆլիս) լանձնեց Թիֆլիսի քաղա-
քագլխին 1.000 ուուրլի բանւորներին հիւանդանոցի համար

— Աւետիք Բալազեան Նուկտսեան (Բաքալ գրամատէր, Թիֆ-
լիսաբնակ) շատկացրել է 30.000 ոուրլի, իբր նւէր, Թիֆլիսի Մալր
եկեղեցու գաւթում պատմական եկեղեցական թանգարան կառուցա-
նելու գործին:

— Ալէքսանդր Վահրամեան (ալլապէս՝ Վախրամով), դաւառա-
կան բժիշկ, վախճ. փեսաւարին) կտակով թողել է 17.000 ոուրլի,
որից 3.000 ու. Թիֆլիսի առաջին կլասիկական դիմնաղին, 3000 ու.
Թիֆլիսի առաջին իդական դիմնաղին, 7.000 ու. Ներսիսեան դպ-
րանոցում թողակաւորներ պահելու, 4000 ու. կրթական ալլ պէտ-
քերի համար՝ ըստ հաւեցութեան կտակակատարներին:

— Հաննա Կուտուֆ Ասիս (Եգիպտոսի կալիբէ վերաբնակած,
բնիկ Հալէպցի) կտակով թողել է 800 ոսկի արժէքով (մտ 18.400
ֆրանկ) կալւածք կալիբէի Ս. Ասուածածինն կեղեցուն, և 200 ոսկի
աղքատներին: (Ամբողջ կարողութիւնը ենթադրուում է մինչև 6000
ոսկի):

ՀԱՍԱՆ-ՋԱԼԱԼԵԱՆԻ ԿՏԱԿԻ ՀԱՇԻԻԸ. Մոսկուայի Լազարեան ձեմարանի վարչութիւնը ուղարկել է մեզ Սարգիս արքեպ. Հասան-Ջալալեանի կտակած գումարի հաշիւը, որից երևում է հետևեալը. կար ցմէկն չունար 1897 թ.—67.500 ռուբլու տոկոսաբեր թղթեր և 1.1⁹⁴ ռ. 97 կ. առ ձեռն դրամ:—Իսկ ցմէկն չունար 1898 թ. կան տոկոսաբեր արժեթղթերով 72.000 ռ., առ ձեռն դրամ 682 ռ. 47 կ.

ԲԱՔԻԱՅ ՆԱԻԹԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԸ ԵՒ ԱՆԳՂԻԱՑԻՒՔ: Վերջին ժամանակներս նկատուում է անզլիացիների կողմից ձգտում՝ Բաքուէ նաւթալին շրջանում ամուր օտք զնելու, գնելով Բալախանու նաւթալին հորերը տեղացիներից. Այսպիսով երկու տարի առաջ անզլիական մի ընկերութիւն գնեց Առաքել Մատուրեանի հանքերի մի մասը, մի տարի առաջ նոքա գնեցին թուրք Հաջի Զէյնալ Թաղիեւից սորա նաւթալին բոլոր գործերը 5 միլիոն ռուբլով. իսկ այժմ ահա մի անզլիական ընկերութիւն գնել է Ալ. Մանթաշեանի բոլոր նաւթալին հորերը, նաւերը և գործերը Բաքուում և Բաթումում 22 (քսանուերկու) միլիոն ռուբլով: Այդպիսի խոշոր գումար մինչև այժմ դեռ ևս չի տեսել ոչ մի կովկասցու աչք, և հաւանական է որ այսպիսի առօրե ծախսերը նոր տրամադրութիւններ ներշնչեն տեղացի նաւթագործներին:

ՀԱՅՈՑ ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ՖՈՆԴԻ ԽՆԴԻՐԸ: Ժամանակ առ ժամանակ տեղական մամուլի մի-երկու օրգանների մէջ հարցեր են տրուում թէ ինչ եղաւ Գրականական ֆոնդի խնդիրը: Այդ նկատողութիւնների տոնից միշտ երևում էր, որ իբր միմիայն բարի ցանկութիւն է պահատում որ «չստով» պատշաճաւոր կառավարութեանը ներկայացնել մշակած կանոնադրութիւնը, որպէս զի այդ համակրելի ընկերութիւնը իրադործւած տեսնենք: Սե միշտ էլ այդ նկատողութիւնների մէջ չափանել է խուլ լանդիմանութիւն «մասնաժողովին», որին իբր թէ լանձնւած է կանոնադրութիւնը կառավարութեան առաջարկելի հաստատութիւն: Որպէս զի հասարակութիւնը այդ մասին սխալ տեղեկութիւնների չհետեի, պարաք ենք համարում այդ առիթով հարցրել հետևեալը.

Գրականական ֆոնդ հիմնելու նախապատրաստ. վերջին ընդհ. ժողովը կազացաւ 1894 թ., հոկտեմբերին, ևրք քննուց լանձնաժողովի կազմած կանոնադրութեան ծրագիրը և, միաձայնութեամբ բոլոր հրաւիրւածների, վճռեց լանձնել կանոնադրութեան նախագծի վերջնական խմբագրութիւնը ժողովի ցուցմունքների համաձայն՝ նախապատրաստական ժողովների նախագահ Աւ. Արասխանեանցին, որը այդ անելուց չետու պիտի հրաւիրէր ժողովին մասնակցողներին մի քանիսին, վերջնական խմբագրութիւնը նոցա մօտ կարգալու հա-

մար, և ապա ներկայացնէր պատշաճաւոր կառավարութեան ի հաստատութիւն: Այստեղ շատ տեղին է նկատել, որ այլ բան է մի հաստատուած ընկերութեան ընդհանուր ժողովի վճիռ, և այլ բան է նախապատրաստական-ընկերական մի ժողովի վճիռ. մինչդեռ առաջինը պարտաւորիչ է և ընտրուած անձը պատասխանատու է կանոնադրութեան, որ ասել է թէ օրէնքի առաջ, և պարտաւոր է վճիռները որոշած ժամանակում կատարել, երկրորդ դէպքում ընտրուածը կրում է լոկ բարոյական պարտաւորութիւններ, հետևապէս նա չէր կարող արտաքին հանգամանքները ի նկատի չառնել: Արդ, այդ ժողովները, իրենց վճիռը տալու ժամանակ, չէին կարող նախատեսնել այն խոշոր անցքերը, որ պատահեցին շատ շուտով գորանից լատոյ և որոնք անդիմադրելի արգելքներ պիտի դնէին գործին շտապով ընթացք տալուն:

Այս են ահա այն շարժառիթները, որոնց պատճառով 1894 թ. ծրագրած կանոնադրութիւնը մինչև այժմ աննպատակաչարմար է գատել իշխանութեան ներկայացնելու Աւելի հեշտ բան չէր կարող լինել քան վերցնել ու պատրաստի ծրագիրը ներկայացնել նահանգապետին, որի համար մի երկու փոքր անցնելու նկղութիւնը պէտք էր լանձն առնել, և ուրիշ ոչինչ: Բայց այդ կը նշանակէր ամենևին չհասկանալ բարոյական պատասխանատուութիւն ասած բանը և ոչ էլ այն հաւատի զինը, որով ընկերակիցները պատեցին իրենց ընտրած անձին, սորան լանձնելով գործը: Այս հպեացքին հակառակ անձերը միշտ ազատ էին իրենց ժողովն ունենալ և թէկուզ նոյն մշակուած ծրագիրը ներկայացնել կառավարութեան երբ և կամենային:

Ինչ վերաբերում է այսուհետեւ անելիքին, մի բան պարզ է, որ կանոնադրութեան ծրագրից պէտք է հանել մանկավարժներին վերաբերեալը և, որպէս կարծում ենք, աւելցնել մի կէտ, այն է որ ընկերութիւնը, իւր գլխաւոր նպատակից լատոյ, ունենար նաև նպատակ՝ օժանդակութիւն տալ կողմասում գործող կամ հիմնելիք այն հաստատութիւններին, որոնց նպատակն է գրագէտներին և ուսումնականներին օգնել՝ լինեն այդ հաստատութիւնները պետական և թէ այլ և այլ ազգերին պատկանող:

Ահա այդ առաջարկութիւնը շքննելու համար լինելու է շուտով մի խորհրդակցութիւն:

ՕՐԻՆԱԿԵԼԻ ՏԱՆՊԻՏԷՐ: Դուռաւեր մեծ հալաքն օկ դիւզի (Բարչալուի դաւ.) տանուակը հինգ ամիս առաջ ընտրեց (Վ.ախթանդ) Մեհրաբեան, որը դուր է, սովորական տանուակը ներքի տիպարից. նորա կարգադրութեամբ ամեն տօն և կիրակի օրերը խանութ երբ փակուած են, խիստ հսկողութիւն է նշանակել փողոցների և դաւիթների մաքրութեան հա-

մար, նորա ջանքերով հրաւիրած է բժիշկ, աղքատների համար հիմնւած է ձրի դեղատուն. մտցրած է գիւղական վարչութեան մէջ կանոնաւոր հաշւապահութիւն, հասարակաց ժողովներում ուշադրութիւն դարձնում է ոչ միայն հարուստների այլ և ամեն աղքատի խօսքին, հարկերի և այլ տուրքերի բաշխումը առաջին անգամ կատարում է կանոնաւոր կերպով. տեղական զինեկաճառութեան մէջ գործածուող երկու տեսակ զիւզիւմ'ները, որոնցից մէկը 25 ֆունտանոց, միւրը 20 ֆունտանոց, որով զինեկաճառները հարստահարում էին գիւղացի արգիւնարերողներին, վերացրած են և նոցա տեղը մտցրած հաւասար վնդոն, առանձին դրոշմով. տանուտէրը ստացել է հասարակութեան համաձայնութիւնը հասարակական պահեստ ունենալու համար, ուր մատչելի գներով պիտի վաճառւեն խաղողի որդը բուժելու պարագաները: Հասարակութիւնը, զնահատելով իւր տանուտէրի գործունէութիւնը, նշանակել է ալժմ տարեկան 500 ո. ուժիկ:

ՀԱՅՎԱԿԱՆ ՄԱՄՈՒՆ. Ս. Էջմիածնի «Արարտ» ամսագիրը ալժմ հրատարակում է ներքին գործոց մինխտրութեան հաստատած ծրագրով: Ծրագիրը պարունակում է ալժմեան հրատարակութեան բոլոր բաժինները:

Մասիս (Կ. Պոլսում, արտօնատէր Կ. Ս. Իւթիւհեան) նորըց սկսեց հրատարակել իրր մեծ օրաթերթ, (47-րդ տարի) աշխատակցութեամբ Գր. Զոհրապի, Հրանտ Ասատուրի և այլն:

ԹԱՐԳՄԱՆՈՒԹԻՒՆՆԵՐ «ՄՈՒՐՃ»: ԻՅ. Թիֆլիսի «Նովոս Աբաղրենիե» ռուսերէն լրագրում մենք այս երկու ամուալ ընթացքում թարգմանած տեսանք «Հալ բոշաները» Գր. Վանցեանի և «Աննա» վէպը Վ. Փափագեանի: Առաջինը տպւած էր միմիայն Մուրճում, երկրորդը նախ Մուրճում և ապա արտատպւեց Մուրճում լոյս տեսած նոյն հեղինակի մի շարք պատմածքների ժողովածուի մէջ («Տուրիտի լիշողութիւններ») ընդհանուր խորագրով): Այս հանդամանքները սակայն չեն չիչւած չիչեալ ուրա թերթում, երեի իրր... աւելորդ մանրամասնութիւններ:

ՄԻ «ՇՆՈՐՀԱՌՈՐՈՒԹԻՒՆ» ՄՇԱԿ'ԻՆ. Բերլինի հալ ուսանողներից 10—15 հոգի, ըստ երեութին ամենից շատ համակրողները, մի նամակով ուղղած Մշակի խմբագրութեան, այդ թերթի 25 ամեակը լրանալու և «ամենօրեալ» (?) դառնալու առիթով, հարկ են համարել. ի միջի այլոց չալտնելու բառ առ բառ հետեւալը. «Մենք (գրում են նոքա Մշակին) չենք միանում հասարակութեան (80 ?) այն պահանջին, որ «Մշակը» բաւականանայ հիմնագրի արածը շարունակելով, այլ...» և այլն: Այդքանը ի հարկէ լաւ է, թէն այդ կարծիքը Մշակի բովանդակութեան ու ուղղութեան մասին տաւնեակ տարի առաջ էլ է արտա-

լալուել, և նոյն իսկ թերթի հիմնադրի ծաւրաւեղ զաչրոյթը գրգռել... Բայց միայն լիշեալ ուսանողները մեծ անհեռատեսութիւն են արել, որ բաւականին որոշ խօսքերով իրենց կարծիքը Մշակի մասին չափանելուց չետոյ՝ դեռ Մշակին չանձնարարում են զբաղւել աւելի լուրջ խնդիրներով... Նոքա ցանկութիւն են չափում որ Մշակը «տնտեսական կեանքի առաջ բերած նոր պրոբլեմները աւելի որոշակի հրապարակախօսութեան առարկաչ դարձնի և առանց տատանելու դառնալ զիւղացու, մշակ-հալածածի ցաւերի օրգան»։ Մարդկանց, որոնց ուղեղը միշտ բանել է անւանարկութիւնների, զրպարտութիւնների, ստերի և կլօւնականութիւնների շուրջը, մարդկանց, որոնք օրն ի բուն տքնում են թէ ինչպէս անւանարկեն Մուրճ-ին, որը լիշեալ ուսանողների ցանկացած պրոբլեմներից արդէն մի գրականութիւն է ստեղծել—այդ մարդկանց աչմս չանձնարարում են պաշտպանել շահերը աչն գասակարգերի, որոնք զղւել միայն կարող են՝ աղպիտի փաստարաններին աւելի մօտիկից ճանաչելով... Ոչ, դուք լաւ խորհուրդ չէք տալիս! Զոկ բան է, եթէ դուք առաջարկած լինէիք Մշակին կատարելապէս մատչելի թեմաներ—զբաղւել աղաւաղումներով, զրական գողերին պատսպարելով և աչնու Ահն կարգացէք ներքն երկու ամենաթարմ աղացուցները:

ՄՇԱԿԻ ՆՈՐԱԳՈՅՆ ՍԻՐԱԳՈՐԾՈՒԹԻՒՆԻ: Անցեալներում մենք չաճախ առիթներ ենք ունեցել ցոյց տալու թէ ինչպէս Մշակը սիստեմատիկան կերպով աղաւաղում է Մուրճի խօսքերը—և, ի հարկ է, որոշ նպատակներով: Նորագոյն նմուշը այդ աղաւաղութեան հետեւալն է.

Մուրճ: «Հարկաւ՝ հաչ ընթերցող հասարակութեան համակրութիւնը կամ հակակրութիւնը արդարադատութեան գործում՝ Զուլալի խնդրի վերաբերեալ՝ զրականապէս ոչ մի նշանակութիւն չունին: (Ստորագծումը բնագրումն է): Հաչկական մամուլը ոչ մի ձնչում չի կարող գործել Քրանսիական երգւեալների դատարանի վրայ, և ոչ էլ հաչկական հասարակաց կարծիքը կարող է արժանանալ ուշագրութեան նոյն իսկ Զուլալի կողմնակիցների կողմից Ֆրանսիաում: (Տես Մուրճ № 1, էջ 151):

Մշակ: «Հաչ գրողը նրա համար չէ գրում Զուլալի գործի մասին, որ ներգործի Քրանսիական կառավարութեան վրայ, ինչպէս երեսխապարար կարծում է Մուրճի խմբագիրը...»: (Տես Մշակ, № 26, 2-րդ երես, 2-րդ սիւն):

Համեմատեցէք Մշակի ձեռքով կատարած Մուրճի սողերի այդ ազատ փոխադրութիւնը, և ասացէք, ընթերցող, կարող էք երևակալել մի աւելի մեծ ստորութիւն մի թերթի կողմից, քան աչն վարմունքը, որ առանց կարմրելու իրեն թուլ է տալիս Մշակը:

Ազգայնի զինքերով մեզ զէմ կուողը պէտք է մատնել խորին զգւանքի սպազրական խօսքի պատիւը հասկացող ընթերցող հասարակութեան կողմից: բաւց արիւր ու անսէք որ այդ կամովին աղաւաղումը կատարած է մի յօգւածի մէջ, ուր խօսուում է «պառաջդիմութեան», սկզբունքներին!

Ի՞նչ դարչնլիութիւն...! Միակ արդարացուցիչ հանգամանքը այդ զազրելի արարմունքի մէջ այն է, որ այդ դարչնլիութեան հեղինակն է Խ. Մալումեան, ունենալով իբր ասխտէնտնէր մի կողմից Ա. Քալանթարին, միւս կողմից Տիգր. Յովհաննիսեանին, և tutti quanti... Գուցէ հարկաւոր է մի այլ ապացոյց ևս—կարդացէք ճերքի սողերը: Մի ՀԱՅՈՑ ԹԵՐԹ, ՈՐ ԳՐԱԿԱՆ ԳՈՂՈՒԹԻՒՆ Է ՔԱՐՈՂՈՒՄ: Մեր ընթերցողները անշուշտ ուշադրութիւն դարձրած կ'լինեն Մուրճի № 1-ում «Աեպուն» ստորագրութեամբ տպած յօգւածի վրայ Գր. Բալասեանցի «Ռոտտոմ և Սալման» գրքի մասին: Յօդածագիրը, որ մեր աշխատակիցներից չէ, գրել և Մուրճին էր լանձնել իւր այդ յօգւածը՝ գրղւած այն շատ նպաստաւոր դրախօսականից, որ լուս էր տեսել Մուրճի անցեալ տարւալ վերջին համարում նոյն գրքի մասին: «Աեպունը» գտել էր որ մեր աշխատակից պ. Յ. Տէր-Միրաքեան, նպաստաւոր կարծիք չալտնելով պ. Բալասեանցի գրքի մասին, զո՞ն էր գնացել մի միտտիֆիկացիալի: Աեպունը երկար ցիտատներով ապացուցանում էր, որ Գր. Բալասեանցը մի գրականական գող է: Այդ տեսակ մի հանգամանքի դիմաց՝ Մուրճի խմբագրութիւնը ընդունեց տպել վից տարադրական երես բունող յօգւածը, որից հինգը միմիայն ցիտատներից էր բաղկացած: Ազգայն էր պահանջում գրականութեան շահը: Ամեն մի ընթերցող կ'հասկանար մեղ ղեկավարող ազնիւ միտքը:—Մուրճի խմբագրութիւնը, թէ իրեն և թէ ընթերցող հասարակութեանը ապահովելու համար ամեն մի կասկածից, որ կարող կ'լինէր ծագել Աեպունի առաջ բերած ցիտատների ճշտութեան մասին, Մուրճի նոյն № 1-ում (տես էջ 166) չալտնեց հետեւեալը. «Պարտք ևնք համարում չալտնել, որ Աեպուն ստորագրութեամբ յօգւածի մէջ առաջ բերած ցիտատների ճշտութեան համար պատասխանատուութիւնը իւր վրայ է վերցրել պ. Արչակ Մեհրաքեանը» Միմիայն այդպիսի երաշխաւորութեամբ Մուրճը հիւրընկալեց մեղ անձանօթ «Աեպուն»-ի յօգւածը:

Սորանից էլ աւելի զգուշութիւն, սորանից էլ աւելի հոգս գրական մաքրութիւն ապահովելու համար?—

Բայց ա՞ն սկսուում է իտղը: Որտեղ: Մշակում: Կարդացէք Մշակի խմբագրութեան այս «չալտարարութիւնը».

«Շուրաւեր. Գր. Բալասեանց. Գուք հեռագրով դիմումն էք անում, որպէս զի Մուրճի խմբագրութիւնը չալտնի ձեր գիրքը քննա-

դատող լօղածաղրի անունը: Ձեր պահանջը անարդար է: Ոչ մի օրինաւոր խմբադրութիւն իրան թուլ չի տալ բաց անել թղթակիցի կամ աշխատակցի անունը, եթէ ինքը լօղածաղիրը ալդ չէ ցանկանում: Եթէ ալդպիսի դէպքեր պատահել են աչս և աչն խմբադրութեան կողմից, — դա պէտք է համարել կատարեալ ստորութիւն: Մեր խորհուրդն է՝ անտես առնել այն յօդածները, որոնք քննարատութիւն չեն, այլ հայծոյանք: (Տես Մշակ, № 35, 4 ըդ երևս):

Մենք այժմ տեղը չենք համարում ծածկանունների մտայն մեր հալեացքը զմտադրել Մշակի խմբադրութեան հալեացքներին, քնաւ կուսակից չլինելով շատերի ձգտումներին՝ ծածկանունների տակ թաղնելով ալ և ալ ինտրիգներ սարքել: Ծածկանուններ զաղտնի պահելը պարտաւորիչ է միմիայն որոշ դէպքերում, և ոչ միշտ և ամենուրեք: Բաց դա՛ մի խնդիր է, որը անտես ենք առնում այժմ: Կարեսրը ներկայումս աչն է, որ մեղնում գտնուում է մի լրագիր, որը զրականական սոսկալի գողութիւնների համար մեղադրողին խորհուրդ է տալիս անտես առնել տպագրական խօսքով կատարւած մերկացումները: Մշակ՛ը զորանով բացարձակ կերպով քարոզում է գրական ապականութիւն: Խնդիրը շատ լուրջ է, մեղնում փորձ են անում բանիւ և խորհրդով խրախուսել գրական գողութիւնները և արհամարել կատարւած մերկացումները: Եթէ մեր զրական գասակարգը լուռ կ'մնայ գրական խարդախութիւնները սպաքան բացարձակ կերպով կատարւող քարոզին, որ լինում է Մշակի՛ում, ապա այդ գասակարգը պէտք է ճանաչել զուրկ ամեն պատուից: Անբարոյականութեան քարոզը չի կարող աւելի բացարձակ կերպով կատարւել, քան այդ լինում է Մշակի՛ում: Թող մեր գրական գասակարգը ընթերցող հասարակութեան առաջ չալտնի, որ նա բնկեր չէ Գր. Բալասեանին, եթէ վերջինս չարդարանայ նորա վրայ Մուրճում բարդած մեղադրանքից: Եւ երբ ալդ մեր կողմ տպարդիւն չի անցնիլ, ապա հերթը կ'գալ զատաստանին Մշակի՛ գլխին, որը ցանդդնութիւն ունի զրական խարդախութիւնները ալդքան բացարձակ կերպով քարոզելու:

Եւ որպէս զի ամենքին հասկանալի լինի, որ Մշակի՛ը իւր այդ անբարոյական չորդորը անում է ոչ առանց անձնական նկատումների, թող սոււած լինի, որ պ. Գր. Բալասեանցը Մշակի՛ թղթակից է, իսկ վ. Կենտիկի Բաղմալէպ ամսագրում մի-գլուխ Մշակի բառաբանողը:

ՄՍՈՒՐ (Նասլի, փոքր երեխաների ապաստարան) ընկերութեան հաշից երևում է, որ 1897 թ. (երրորդ տարի) ընդունւել են 147 երեխա, (93 ընտանիքների պատկանող), որոնցից 114 ռուս, 10 հայ, 9 լե-

հացի, 8 դերմանացի, 5 վրացի և 1 հրէայ: Մի երեխալի համար օրական ծախք զալիս է 32 կոպ: Ապաստանարանը ունեցել է մուտք 5.196 ու. 92 կ., ծախս 2.524 ու. 88 կ.: Ընկերութեան հիւանդանոցում կար 22 մահճակալ, օդուել են 170 երեխալ: Ղոցանից ներքին հիւանդութիւնների համար 69, սուր վարակիչ ցաւերով 101 (քութեչ 78, դիֆտերիա 23), նոցանից մեռան ղեղինտերիալով 1, քութեչով 18, դիֆտերիալով 5: Ամբուլատորապէս հիւանդանոցը օգնել է 411 երեխալի: Հիւանդանոցը ծախք ունեցել է 4.457 ուրբլի 84 կ., ուրեմն ամեն մի մահճակալի զալիս է տարեկան 202 ու. 63 կ.: Հիւանդանոցը ունեցել է մուտք 7.638 ու. 83 կ., ծախս 4.457 ու. 84 կոպէկ:

ԹԻՖԼԻՍԻ վաճառականաց ժողովը մարտ 8-ին կատարեց ընտրութիւններ ծառայող անձերի. վաճառականաց աւագ վերընտրեց Ն. Ա. Դաւթեան (65 սպ. և 2 սև), ընկերներ նորան՝ Ի. Ա. Շաղինեան, Ե. Մ. Յակոբեան, առևտրի և մանուֆակտուրի կոմիտէի անդամներ՝ Մ. Թամաձեան Ա. Փրիդոնեան. Ա. Մանթաշեան, Միլեան, Փ. Վարդազարեան և Կարապետեան:

Առ. 1-ն չունւ. 98 թ. Թիֆլիսի առևտրականաց վարչութիւնը ունէր հիմնական գրամագուլիս 153.069 ու. 51 կոպ:

ՉԻԻՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ: Փետրարի վերջերքը Թիֆլիսում մի քանի օր աչնօքան չորդ ձիւն եկաւ, որին հաւասարը զանելու համար պէտք է զիմել մի քանի տասնեակ տարիների վիշտութեանը. վերա քաղաքամասում, օրինակ, ուր ձիւնը աւելի երկար դիմանալու սպամանների մէջ էր, ձիւնի խորութիւնը հասնում էր մինչև 14 վերջոկ, քաղաքի կենտրոնում, կտուրների վրայ, մինչև 10 վերջոկ:

ՄԻՖԻԼԻՍԸ ԴԱՂՍՏԱՆՈՒՄ: Դաղստանի Սամուրեան շրջանում բոլոր գիւղերում կան վարակւածներ սիֆիլիսով, բաւց դորա գլխաւոր բունը Խնով, Բորչ, Լուչէկ և Բուտուլ գիւղերումն է: 1896 թ. վկաւած հիւանդներ սիֆիլիսով այդ շրջանում եղան 96 հոգի, որոնցից 82-ը Բուտուլ գիւղում (ուր 1570 արական և 1670 կին բնակիչներ կան): Պէտք է նկատել որ վկաւածների թիւը իրականից քիչ է, որովհետեւ կանաւք աղտեղ երբէք չեն բժշկուում այդ հիւանդութիւններից:

ՉԻՆԱՍՏԱՆ: Պորտ-Արտիւր նաւահանգիստը (ուր ձմեռը ծովը չի սառչում) և Տալինի վան ծովախորշը Ռուսիան Չինաստանից կամենում է վերցնել կապալով 99 տարի ժամանակով:

Գերմանիան, որպէս չալտնի է, արդէն գրաւել է Յեաօ-չփօն նաւահանգիստը և նորա շրջական:

Ֆրանսիան պոճանջներ է դրել Չինաստանին. Ֆրանսիան պահանջում է որ չինական պոտտի կառավարութեան գլուխ նշանակելի

Ֆրանսիացի, ապա որ չորս որոշ պրովինցիաներ Նանցէ մեծ գետից հարաւ ոչ ոքին չը զիջեն, որ երկաթուղին Լէյֆօուից շարունակւի, երկաթուղին մտնի Իւնանի խորքերը և որ Լէյֆօու նաւահանգստում հիմնւի քարածուխի կայարան:

Անգլիան աշխատում է իւր ձեռքը զցել Չուսանը. իսկ Նապոնիան՝ Վէլիսավէլ:

Եւ Չինաստանը. իւր ներքին փտութիւնը ցուց տւած լինելով չին-եապոնական պատերազմից չետոյ, այդ ամենի համար ստիպւած է միմիայն զիպլոմատիկական բանակցութիւններով բաւականանալ...

ՅՈՒՆԱՅ ԹԱԳԱՒՈՐԻՆ սպանելու փորձ կատարւեց փետրւ. 26-ին (14-ին), փորձը անաջող անցաւ: Յունական մամուլի խօսելու եղանակը անաջող պատերազմից զէս չէր կարող լոյներին մի աւելի ազնիւ գործի գրդել ժողովրդի անհատներին, քան թէ աչն որ կատարւեց, Յուները իրենք ամենաաղմկալի ցուցերով պահանջեցին պատերազմը, և չետոյ իրենց պարտութեան վրէժը ուղեցին հանել իշխող տոհմից: Ատոր վարմունք, նամանաւանդ որ հաստատ կարելի է պնդել, որ եթէ Յունաստանը առանց մեծ միասի դուրս եկաւ գործից՝ այդ եղաւ մի մեծ չափով չնորհիւ իրենց թագաւորի կապերին զօրեղ պետութիւններին հետ: Այդ դէպքի աւրթով ժողովրդի կողմից համակրութեան ցուցերեղան թագաւորի համար, և մեծապէս նպատեցին որ վերանար աչն վիճը, որ կար թագաւորի և ժողովրդի մեջ:

ԿՐԵՏԷ: Ռուսաց կառավարութեան առաջարկը՝ Կրետէի նահանգապետ Նչանակել լունաց թագաւորի երկրորդ որդի պրինց Գէորգին, մերժելուց քնտոյ՝ սուլթանը ինքը իւր կողմից մեծ պետութիւններին առաջարկ արաւ որ նահանգապետ նշանակւի օսմանեան հպատակ մի անձ: Մեծ պետութիւնները այդ առաջարկը չընդունեցին:

Կերմանիան իւր նաւերը ետ կանչեց Կրետէի ջրերից:

Աւստրօ-Ռուսարիան ետ կոչեց իւր ցամաքալին զօրքերը Կրետէից, թողնելով նաւերը միայն հիւպատոսարանների պաշտպանութեան համար:

ԱՒՍՏՐԻԱ. Նոր մինիստրութիւն: Գաուչի մինիստրութիւնը հազիւ տեւեց երեք ամիս. նա հրտարական տւեց: Մինիստր-նախագահ Նշանակւած է կոմս Թուն, Բոհեմիալի նախկին փոխար.ոան: Կաուչի հրտարականի պատճառներն են Ռուսարիայի հետ ընդհանուր կապերութեան բւլջէի մասին բաճակցութիւնների աւրթով հանդիպած դժուարութիւնները, որպէս նաև ներքին անհանգիստ դրութեան շարունակւելը:

ԿՈՒԲԱ ԿՂՁԻ: ԻՍՊԱՆԻԱ ԵՒ ՀԻՒԱ. ԱՄԵՐԻԿԱ. Իսպանիալի անկարողու-

թեան պատճառով այս երեք տարում ընկճել ապստամբութիւնը կուբա կղզում և ինքնավարութիւն տալ այդ մեծ կղզուն, Հիւս. Ամբրիկայի Միացեալ Նահանգները պահանջներ են դնում իսպանիային, և արդէն լուրջ հիմքեր կան որ խնդիրը կարող է վերջանալ Միացեալ Նահանգների պատերազմական միջամտութիւնով լոգուա կուբայի կատարեալ անջատման իսպանիայից: Առաջմ Միացեալ Նահանգների նախագահ Մակ Կլինթէ մտադիր է սլարամէնտից պահանջել կէս միլիոն դոլար՝ կուբայի ոչ-պատերազմող բնակիչներին օգնելու համար, առաջարկելով իսպանիային նոյնն անելու. եթէ իսպանիան մերժի՝ Միացեալ Նահանգները կը միջամտեն ուժով:

ՅՈՒՋՄՈՒԿՔՆԵՐ ԲՈՄԲԷՅՈՒՄ: Առողջապահական ծառայողներից մէկի փորձը՝ մտնել մի մահմեդականի տուն, Ռիպուռոտադ՝ում, իմանալու համար մահմեդականուհու հիւանդութեան պատճառը (որ ժանտախա էր ենթադրում), անկարգութիւն առաջացրեց. մահմեդական ամբոխը սկսեց քարեր արձակել առողջապահական ծառայողների (անգլիացոց) վրայ. ուժեղացած լինելով զինւած ոստիկանութեան գալուստով՝ ծառայողները կրկնեցին իրենց պահանջը հիւանդին քննելու մասին, առաջարկելով ամբոխին ցրւել. վերջինս չանսաց և սկսեց ծեծել ծառայողներին. ոստիկանութիւնը լարձակում գործեց և ամբոխից 4 ին սպանեց, մի քանիսին վիրաւորեց: Յուզումը մեծացաւ. հնդիկները միացան մահմեդականներին, և ոչ մի քրիստոնեաց, որ նոցա ձեռքն էր ընկնում, անվնաս չէր պրծնում. երկու զինւոր սպանւեցին: Բոմբէլում ձեռնարկեցին զինւորական միջոցների. առողջապահիկ խումբերին ուղեկցում են զինւորները: Կատարեցին բազմաթիւ կալանաւորումներ, դոցա մէջ և 2 զինւորներին սպանողները:

ԿՈՐԷԱ: Մարտի 8-ին ռուսաց կառավարչական մի ծանուցում հաղորդեց որ կորէայի կայսր Լի և նորա կառավարութիւնը հորհակալութիւն չաչտնելով իւր ժամանակ ռուսաց կառավարութեան կողմից ցուց տւած զինւորական պաշտպանութեան համար, դտնում է, որ երկիրը կարող է այժմ կառավարել առանց կողմնակի օգնութեան զինւորական և ֆինանսական գործում, և որ Ռուսաց կայսեր շնորհակալութիւն չաչտնելու համար կորէայի կայսրը թուլտութիւն է խնդրել առանձին դեսպան ուղարկելու Պետերբուրգ: Առ այդ ռուս կառավարութիւնը չաչտնել է որ ետ կ'կանչի իւր ֆինանսական խորհրդականին, իսկ զօրքը, դուրս բերելով կորէական ծառայութիւնից, մի առժամանակ կ'թողնի ռուսական միսսիայի կարգադրութեան ներքոյ, ի նկատի առնելով կորէայի ղեռ անորոշ զրութիւնը: Ռուսիան ալդպէս վարւելով լոյս է չաչտնում որ կորէան կ'մնայ անկախ կայսրութիւն. հակառակ դէպքում Ռուսիան պիտի պաշտպանի իւր շահերը և իրաւունքները:

ՓՈՎԱՅԻՆ ՈՅՈՒ ՈՒՃԵՂԱՅՈՒՄԸ ԵՒՐՈՊԱՅՈՒՄ: Եւրոպական քաղաքականութեան շահագրգռելը հեռաւոր Չինաստանի նկատմամբ նոր դրդում է աւել եւրոպական առաջնակարգ պետութիւններին ուժեղացնելու իրենց ծովային պատերազմական ուժերը: Այդ պատրաստութիւնները տեսնուած են այժմ Անգլիան, Ֆրանսիան, Գերմանիան, Ռուսիան: Գերմանական կառավարութիւնը պարլամէնտից պահանջեց 400 միլիոն մարկի կրեդիտ և պարլամէնտը ընդունեց առաջարկի այդ հիմնական լոզածը 212 ձայնով ընդդէմ 139-ի: Ռուսիայում կայսերական հրամանով նոյն գործին չատկացրած է այժ 90 միլիոն ռուբլի արտակարգ ծախս:

† ԿԱՒԱԼՈՏՏԻ (Ֆելիէ), գլուխ իտալական արմատական կուսակցութեան վախճանւեց 23 փետր. (հ. տ.), զոհ գնալով մենամարտի նոյնպէս պարլամէնտի անգամ Մակոլաչի հետ: Կաւալոտտի մահը սուղ պատճառեց ամբողջ իտալիայում: Կարիբալդիի մահից վետու ոչ մի իտալացու մահ այնքան խորը չի վշտացրել իտալացոյց, որքան Կաւալոտտի մահը: Հանդուցեալը գործնով 33-րդ անգամն էր մենամարտութեան դուրս եկել:

† ՇԻՇԿԻՆ, Իւան Իւանովիչ, չալտնի ուսն նկարիչ-պէլզաժիտ, վախճանւեց 8 մարտի, 68 տարեկան հասակում: 1-65 թ-ին նա ստացաւ ակադեմիկոսի կոչումը, իսկ 1873-ին գեղարեստից ակադեմիան տւեց նորան պրոֆեսորի կոչում: Շիշկինը մանաւանդ սիրով նկարում էր անտառը, և այդ բանում նա համարուում էր առաջին հեղինակութիւն:

† ՍՏԱՏԻՈՎՍԿԻ, Բոլիսլաւ Իգնատիւիչ, վախճանւեց մարտի սկզբին: Հանգուցեալը նախկին պետն էր Կովկասեան հաղորդակցութեանց ճանապարհների շրջանի, մինչև մօտ ժամանակներս, և այդ ասպարիզում աչքի ընկնող գործիչ էր և շատ համակրելի անձնաւորութիւն: Թաղման համար մարմինը փոխադրւեց Թիֆլիս:

† ՍՏԵՓԱՆԵԱՆՑ Թովհանէս, (չուչեցի, Թիֆլիս վերաբնակած) վախճանւած մարտի 3-ին Սուխումում, 35-36 տարեկան հասակում: Վաճառական դասակարգի մէջ գնահատուած երիտասարդ էր, իբր կապող օղակ հազ գրական շրջանների և վաճառական դասակարգի: Եղած էր մի քանի ժամանակ հայոց ձխակ. դպրոցի ուսուցիչ:

† ՀԱԽՈՒՄԵԱՆ, Համբարձում աղա, վախճանւած մարտի 3-ին, 65 տար. հասակում: Բնիկ չուչեցի (նախնիքը Ագուլիսի 18-րդ դարում Շուշի գաղթածներից), մի ժամանակ մեծ հարստութեան տէր. նպաստաւոր եղաւ մանուկների կրթութեան գործին և իւր ծախքով հիմնեց իւր տանը Շուշու առաջին օրիորդական դպրոցը, և հովանաւորող եղաւ իւր ժամանակաւ ինտելիգէնտ ուժերին: Վաչելում էր ժողովրդակա-

հուժիւն իբրև ազնիւ և աղուհացով մարդ, այլ նաև իբրև շատ հաճելի զրուցող:

ՆՈՐ ՍՏԱՑԻԱԾ ԳՐՔԵՐ

(Ուր թւական չկայ — ներկայ տարւանն է)

- 1) ՄՈՒՐԱՏԵԱՆ, Մեղիքսեղեկ եպիսկ.— Պետրոս Շանչեանց. կենսագրութիւն, պատկերով, (Արտասպած «Լուսալ» հանդիսից): Թիֆլիս, տպ. Շարաձէ. գինն է 50 կոպէկ:
- 2) ԶԱՄԱԼԻ, աչըղ.— Քոռուլու հէքիաթը: Գգիր օղու և Պօլի բէկի հետ պատահած անցքերը: Փոխադրութիւն տաճկերէնից Մասն առաջին: Թիֆլիս, տպ. Մ. Վարդանեանցի. 40 կոպէկ:
- 3) Ս. Հ.— Շիլլուի սպանութիւնները (Յ. Խուրլարեանի և միւսները գործը), զինուորական դատարանի քննութիւնը Շուշում. (թարգ. Նով. Օրոզ. լրագրից): Թիֆլիս, տպ. Մն. Մարտիրոսեանի, գինն է 50 կոպէկ:
- 4) ՄՈՎՍԷՍ ԽՈՐԵՆԱՅԻ, աշխարհաբար թարգմ. և լուսաբանեց Ստեփանէ, Խորէն եպիսկ.— Հաղոց պատմութիւն: (Հիմնովին սրբապրած և ուղղւած աշխարհաբար ք. տպագրութիւն): Ս. Պետրբուրգ. 1 ուրբի 50 կոպէկ:
- 5) ՄԱՐԱՂԵԱՆ, Տաճատ քահ.— Յիսուսի Քրիստոսի երկրաւոր կեանքը և վարդապետութիւնը, հիւսւած չորս աւետարանիչներից ժամանակագրական կարգով: Բաքու, տպ. Ս. Տէր-Յովհաննիսեանի, գինն է 1 ռ.:
- 6) ФРЕНКЕЛЬ, А. С.— Средства для борьбы съ разбоемъ на Кавказѣ. Изд. Кавк. Юрид. О-ва. Тифлисъ. 75 կոպէկ:

ՎՐԻՊԱԿՆԵՐ:

Մուրճ № 1. «Հաղնէի բանաստեղծութիւնները» մէջ, էջ 56, տող 1, յովրեցալ (ոչ՝ սորւեցալ). էջ 64, տող 4 պէտք է լինի՝ երկտասարդ մը կը սիրէ աղջիկ մը, որ ուրիշ մէկ քրտասարդ կ'ընտրէ: «Աջ ու ձախ» չօղւածում, էջ 158, տող 1518՝ վրակապերով (ոչ՝ վերակապերով). էջ 159, տող 24, փուշերը (ոչ՝ փողերը). էջ 160, տող 18, քան եթէ զօրեղ (ոչ՝ եթէ զօրեղ):

ՀՐԱՏԱՐԱԿՈՒԹԻՒՆՆԵՐ

ԱՐՏԱՏՊԻԱԾ «ՄՈՒՐՃ» ԱՄՍԱԳՐԻՑ

Բ. Կ.

1. ՊՈՕՇԵԱՆՅ, ՊԵՐՃ.— «ՑԵՅՆԵՐ» (վէպ).	1	—
2. ՏԷՐ-ԳՐԻԳՈՐԵԱՆՅ, ԳՐԻԳՈՐ (ՂՂԼարցի)՝ «Մանուկների մարտողութ. գործարանների հիւանդութիւնները»	—	05
3. ԱՏՐՊԵՏԵԱՆ, Ս.— «ԽԵՒ-ԿԱՐԱՊԵՏ», վէպ հայ-կաթողիկեների կեանքից	1	—
4. ԼԷՅ.— «ԿՈՐԱԾՆԵՐ» (վէպ).	—	50
5. Մ.-ՇԱՀՆԱԶԱՐԵԱՆՅ, Ս.— «ՀԱՅ ԳԻՒՂԱՅՈՒ ՍԵՒ ՕՐԸ»	—	40
6. ՍԱՐԳՍԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.— «ԱՅՅ ԹԻՒՐԲԱՅ-ՀԱՅԱՍՏԱՆԻՆ»	—	60
7. ՊՈՕՇԵԱՆՅ, ՊԵՐՃ.— «ԲՂԴԷ», վէպ	1	20
8. ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ.— «ԽԱԹ-ՍԱՐԱ» (հայ բոշան. կեանքից	—	15
9. ՄԱՐԻՍԵԱՆ, ԿԻԿԻՆ Մ.— «ՀԵՂԻՆԷ» (մեծ վէպ), ա. մասը	—	50
10. » » » » բ. մասը	—	75
11. ՂԱՐԱԳԵՕԶԵԱՆՅ, Յ.— «ՍԵՒ-ԼԵՈՆՅԻՔ» (տոհմապ. պատկ.)	—	15
12. ՆԱՄԱԼԵԱՆ, ԱԼԵԲՍԱՆԴՐ.— «ՀԱՐԵՒԱՆՆԵՐ»	—	03
13. » » «ՄԻՆԱՍԻ ԵԶԸ»	—	03
14. » » «ԵԶԻԴ ԱՂԶԻԿԸ»	—	03
15. » » «ԾԱՆՐ ՔԱՐԸ»	—	03
16. » » «ՆԻԱԶԻԱԾ ԿԵԱՆՔԸ»	—	03
17. » » «ՄԵՐ ԻՆԶԸ ԿԸ ՊԱԿՍԻ»	—	03
18. ԲԻՇՄԻՇԵԱՆՅ, ԱԼ.— «ԲՈՅՍԵՐԻ ՄԵԾԱՐԱՆՔԸ»	—	15
19. ԲԱԼԱՂԵԱՆ, ՍԱՄՈՒԷԼ.— «ՄԻԿՐՈՅՆԵՐԸ»	—	10
20. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.— «ԶԱԼԱԲԻՆԵՐԻ ԱՐՇԱԽԱՆՔԸ»	—	10
21. ՏՈՒԷՆ, ՄԱՐԿ.— «ԶԻԱՐՃԱԼԻ ՊԱՏՄԻԱԾՔՆԵՐ»	—	15
22. ՎՐՈՅՐ, Մ.— «ՊԵՏՐՈՍ ԱԴԱՄԵԱՆ»	—	20

23. ԱՐԾՐՈՒՆԻ, Վ. ԲԺՇ.— «ՀԻՊՆՈՏԻՍՄ», Մասն ա. — 50

24. ՄԱՆՈՒԷԼԵԱՆՅ, ԼԵՒՈՆ.— «ՏԻԳՐԱՆՈՒՀԻ» (չրամա). — 50

25. ՇԻՐՎԱՆՁԱԴԵ.— «ԱՐՍԷՆ ԳԻՄԱՔՍԵԱՆ» 1 50

26. ՍԵՆԿԵԻԻՉ, ՀԵՆՐԻԿ.— «ԱՌԱՆՅ ԴԱԻԱՆԱՆՔԻ» 1 50

27. ԱՂԱՅԵԱՆՅ, ՂԱԶ.— «ԻՄ ԿԵԱՆՔԻ ԳԼԽԱԻՈՐ ԴԷՊՔԵՐԸ» — 75

28. «ԱԴԱՄԵԱՆԻ ՆԱՄԱԿՆԵՐԸ ՍԱՆԴՐՈՒՆ», յառաջաբանով
 և ընտրութեամբ ՎՐՈՅՐԻ — 20

29. ԱՐԾՐՈՒՆԻ, ԲԺ. Վ.— «ՀԻՊՆՈՏԻՍՄ», մասն բ. — 50

30. ՂԱՐԱԶԵԱՆ, ԳԷՈՐԳ.— «ԲԱՆԻՈՐՆԵՐԻ ԱՊԱՀՈՎԱՅՈՒՄԸ
 Արևմտեան Եւրոպայում և Ռուսիայում» — 50

31. ԲԱՀԱԹՐԵԱՆ, ՍԱՐԳ.— «ՀՈՂԱՅԻՆ ԵՒ ԱՆՁՆԱԿ. ԻՐԱԻ.
 ՀԻՆ-ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ» — 40

32. ՓԱՓԱԶԵԱՆ, Վ.— «ՏՈՒՐԻՍՏԻ ՅԻՇԱՏԱԿԱՐԱՆԻՅ» (պատ-
 կերներ) — 40

33. ՄԻՐԻՄԱՆԵԱՆ, ՅԱՐ.— ՇՈԹԱ ՌՈՒՍՍԻԵԼՈՒ ՎԵՆՁԵՆԱ-
 ԻՈՐԸ, արձակ պատմած, Կենսագրութիւնով — 15

34. ՇԱՆԹ.— «ԳՈՒՐՄԵՅԻՆԵՐ», Վէպ — 50

35. , «ԵՐԱԶ ՕՐԵՐ». — 40

36. ՏԵՐ-ՄԻՐԱՔԵԱՆՅ, Յ.— «ԺՈՂՈՎՐ. ԸՆԹԵՐՅԱՆՈՒԹԻՒՆԸ» — 25

37. ԶԱՔԱՐԵԱՆ, ԹԱԴԵՈՍ ԲԺ.— «ԱՄՈՒՍՆԱԿԱՆ ԱՌՈՂՋԱ-
 ՊԱՀՈՒԹԻՒՆ» — 20

38. ԲԱԲԿԵՆՅ, Գ.— «ՆՈՐԵԿ», (վէպ) — 70

39. ՓԱՓԱԶԵԱՆՅ, Վ.— «ԱՆՅԱԳԸ» — 15

40. ՇԱՆԹ.— «ՎԵՐԺԻՆ», (վէպ) — 60

XVI ԱՂԲԻԻՐ XVI

IX ՏԱՐԱԶ IX

Միամեսայ պատկերազարդ հանդէս մանուկների, ծնողների և դաստիարակների համար:

Պատկերազարդ շաբաթաթերթ ընտանեկան ընթերցանութեան համար:

Կը հրատարակեն նոյն ուղղութեամբ եւ աշխատակիցների մասնակցութեամբ:

Ծ Ր Ա Գ Ի Ր

ԱՂԲԻԻՐԸ լոյս է տեսնում իւրաքանչիւր ամիս 2—3 թ., տարեկան 12 №№:

ՏԱՐԱԶԸ լոյս է տեսնում ամեն կիրակի, իւրաքանչիւր № 1—2 թերթ. տարեկան 48—50 №№:

Ա. ՄԱՆԿԱԿԱՆ ԲԱԺԻՆ. Մանկաբույժ, Զրոյց, Հէքիտ, Ճանապարհորդութիւն, Կենսագրութիւն, Բանաստեղծութիւն, Կիտութիւն եւ արեւտ: Նոր լուրեր: Այլ եւ այլք: Զարմալիք: Մանկական, Ֆրեթէլեան, շախմատի եւ այլ խաղեր, Ռեքուսներ, Թւարանական խընդիրներ, Անեկդոտ, Հանելուկ, Երգեր նուտաներով:

Կեդարեւտ եւ զիտութիւն: Պատմական, Ժախանակակից վէպեր, պատկերներ, Թատրոնական դրամքներ: Բանաստեղծութիւն: Քննադատութիւն: Կենսագրութիւն: Կար, ծել, ծեռագործ եւ ամեն նորութիւն արհեստների վերաբերիւալ: Տնային արդիւնարդութիւն, տնտեսութիւն: Ճանապարհորդութիւն եւ արկածք: Երաժշտութիւն եւ Թատրոն: Լուրեր, տեղեկութիւններ: Յօդածներ եւ այլն: Ֆելիետոն, ծաղր, առակ եւ կատակ: Շախմատի եւ այլ խաղեր, Բերու: Հարցեր, խորհուրդներ: Այլ եւ այլք: Սուրհանդակ: Յայտարարութիւններ:

Բ. ԲԱԺԻՆ. Կրթութեան եւ դաստիարակութեան վերաբերիւալ յօդածներ եւ տեղեկութիւններ: Առաջարկութիւններ: Խորհուրդներ: Մատենախօսութիւն եւ նոր գրքեր: Խառն լուրեր: Պատասխաններ: Յայտարարութիւններ:

Առաջիկայ 1898 թ. կը տպագրեն Տարագում ի միջի ալոց Լճի Զոլայի նշանաւոր ՊԱՐԻՋ վէպը, որ դեռ լոյս չտեսած ալնքան մեծ աղմուկ է հանել աշխարհի բոլոր դրական աշխարհում եւ միաժամանակ քնազրի հետ տպագրում է եւրոպական բոլոր լեզուներով: Բացի ալ կը տպագրեն մի շարք վէպեր և պօէմաներ, որոնց թւումն է և՛ ՍԵՒ ՔԱՂԱՔ շատ մեծ վէպ, Բազայ բուրժուադայի, գործարանական եւ Բալխանի գործաւորների կեանքից:

Բ. ԳՐԱՆ ԳԱՂՏՆԻՒԲԸ, վէպ Կ. Պոլսի սուլթանների կեանքից, Գաղաքական և ներքին աշխարհ Տաճկաստանի, ազգային սահմանադրութիւն: Նիւիչէրներ, վէզիրներ, հոգևորականութիւն և ժողովուրդ:

ԱՂԲԻԻՐԻ մէջ կը տպագրեն ԼԷՕՆ ԿԱՅՍՐ հրահանգիչ-դաստիարակի մանկական վէպը և մի շարք պատմական պօէմաներ, Բնագիտական քաժինը Ազբիրի 3/4-ական մասը կը կազմէ:

Մանուկ հասակին ընթերցանելու հէքիաթներն ու զրույցները ընտրուում են շատ մեծ խնամքով:

Մանկավարժական յօդածներ դաստիարակների և ծնողների համար կը տպագրուեն առանձին թերթերով, եթէ բաժանորդների թիւը 1000-ից անցնի:

Առաջիկայ **1898 թ.** ԱՂԲԻՐԻ **ՊՐԷՄԻԱՆ** մի շատ շքեղ **ԱԼԲՈՄ** է, Աղբիրից չորս անգամ մեծ գիրքով, 24 գոյնըզգոյն բուն գեղարեստական նկարներով, որի նմանը մինչև այսօր չենք ընծայաբերիլ մեր բաժանորդներին:

ՏԱՐԱԶԻ պրէմիան--ՄԱՅՐԱԿԱՆ ԲԱԽՏ մի մեծադիր խրոմօ-օլէօգրաֆ է, սքանչելի պատկեր, պատրաստուած Եւրոպայի ամենանշանաւոր գործարանում: փառայեղ գարդ հայի դահլիճին:

ԱՂԲԻՐ-ՏԱՐԱԶ հանգէտները ունին աշխատակիցներ Պետերբուրգում, Մոսկայում, Պարիզում, Վիեննայում, Վենետիկում, Լոնդոնում, Բերլինում, Ժրնեւում, Կ. Պոլսում, Հնդկաստանում, Սիբիրում, Ամերիկայում, Երուսաղէմում, Էջմիածնում, Հոռնում, Բոլգարիայում եւ Կովկասի բոլոր քաղաքներում:

Անցնող 1897 թ. ալլ բոլոր երկիրներից տպագրել են յօդածներ Աղբիրում և Տարազում ու պատկերներ ալլ հանգէտների համար բացառապէս պատրաստուած են Եւրոպայում:

ԱՂԲԻՐԻ տարեկան գինը **3** ուսուրի ԱԼԲՈՄ պրէմիայով չորս ուսուր. (արտասահման 5 ու. կամ 12 ֆր.): ՏԱՐԱԶԻ տարեկան գինը **6** ուսուրի, ՄԱՅՐԱԿԱՆ ԲԱԽՏ պրէմիայով եօթը ու. (արտասահման 10 ու. կամ 30 ֆր.):

Պրէմիաները կ'ուղարկուեն բաժանորդներին Աղբիր և Տարազի Կոնսուլարի №28-ի հետ:

Իւրաքանչիւր պրէմիան առանձին արժէ 3 ու. Աղբիր-Տարազ միևնոյն հասցէով գրող բաժանորդը, երկու պրէմիաների ճանապարհածախս պէտք է վճարի միայն մէկ ուսուրի:

Պրէմիաները ստանում են տարեկան բաժանորդագինը լիովին վճարելուց յետոյ:

Հասցէն՝ Тифлисъ. Редакция иллюстр. журн. „Агбюръ-Таразъ“ կամ Tiflis (Caucase) Rédaction des journaux „Agbur“ et „Taraz“.

Խմբագիր-հրատարակիչ՝ ՏԻԳՐԱՆ ՆԱԶԱՐԵԱՆ

Открыта подписка на 1898 годъ
на ежедневную политич. и литературную газету

„НОВОЕ ОБОЗРѢНІЕ“

(пятнадцатый годъ изданія)

Въ 1898 г. „Новое Обозрѣніе“ будетъ выходить въ Тифлисъ, какъ и въ прошлые годы, ежедневно, по программѣ большихъ столичныхъ газетъ.

Въ истекающемъ году, въ газетѣ, кромѣ мѣстныхъ силъ, участвовали также К. С. Баранцевичъ, И. К. Вересоевъ, В. К. (Петербург. корресп.), Л-овичъ (Лондон. корресп.), Д. Н. Маминъ-Сибирякъ, М. А. Протопоповъ, акад. Тархановъ. В. Е. Чехихинъ, А. С. Хах-овъ и др.

Условія подписки: съ пересылкою и доставкою: на годъ—10 р., на полгода—6 р., на три мѣсяца—3 р. 50 к., на одинъ мѣсяць—1 р. 50 к. *За границу*: на годъ—17 р., на полгода—9 р., на три мѣсяца—5 р. (Подписка принимается не иначе какъ считая съ перваго числа любого мѣсяца). Для сельскихъ учителей льгота: подписная цѣна на годъ—7 р., пол-года—4 р.

Для годовыхъ подписчиковъ, какъ городскихъ, такъ и иногородныхъ, обращающихся непосредственно въ контору редакціи, **ДОПУСКАЕТСЯ РАЗСРОЧКА** на слѣдующихъ условіяхъ: при подпискѣ вносится—3 р., къ 1-му марта—2 р., къ 1-му мая—3 р. и къ 1-му сентября—2 р.

Подписка и объявленія принимаются **ВЪ ТИФЛИСѢ**: въ конторѣ газеты, Баятинская ул., № 8.

Иногородные адресуютъ свои требованія: въ Тифлисъ, въ редакцію „Новаго Обозрѣнія“.

Лица, подписавшіяся на годовое изданіе „Новаго Обозрѣнія“ 1898 г. въ настоящее время, будутъ бесплатно получать газету въ текущемъ году со дня подписки.

Հոյս տեսաւ եւ վաճառուով է

„ՆՈՐ ՓՈՐՉ“

ԳՐԱԿԱՆԱԿԱՆ ԵՒ ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՀԱՆԴԻՍԻ

ԱՌԱՋԻՆ ԳԻՐԸԸ

ՀԵՏԵՒԵԱԼ ԲՈՎԱՆԳՆԿՈՒԹԵԱԾԻ

1) Առաջարանի փոխարէն:—2) Ա. Աղելեան շար չկայ (ուսուցչի յիշատակարանից):—3) Յովհաննէս Շահնազարեան Անմեղ զոհեր (կանայք Գ. Չուբարի գրեածքներով):—4) Ա. Լազարեանց Ձեռագիր (վէպիկ ժակ Նորմանից):—5) Յովհ. Գնունի Ինչ է կտակել իր ազգին Ա. Պուշկինը (քննական տեսութիւն):—6) Արտաշէս Մարգ թէ անասուն (Մարսել Պրեւո'ի „Lettres de Femmes“-ը):—7) Օր. Կատարինէ Ներսէսեանց Խղճացէք (վէպիկ—Մարսել Պրեւո'ից):—8) Ստ. Գրիգորեան Մի ուղղութիւն Գեղարեւոտական կրօնիկայի մէջ (Ի. Իւանովից):—9) Մելիք Իւ. Տուրգենևի Արձակ բանաստեղծութիւնները պ. Ալ. Մատուրեանի թարգմանութեամբ:—10) Խմբագրութեան կողմից:—11) Յայտարարութիւններ:

Իւրաքանչիւր օրինակի գինն է ամենայն տեղ 75 կոպէկ:

Հասցէ՝ Москва, Больш. Дмитровка, д. Живаго, кв. № 2.

Иваву Шахъ-Назарянъ.

СКОРО ВЫЙДЕТЪ ИЗЪ ПЕЧАТИ

„КАВКАЗСКАЯ ЖИЗНЬ“

Художественно-литературный иллюстрированный сборникъ кн. II.

Содержаніе: I. Военно-грузинская дорога, стихотвореніе *В. Лебедева*. II. Жиквани, древнѣйшій городъ Грузіи, неизданная статья историко-археолога *Платона Гоеселіани*. III. Сельскія картинки, изъ Важа-Пшавела, съ грузинскаго, *А. Никитина*. IV. Мингрельскій языкъ (разговорный и литературный). V. Осенняя ночь, стихотвореніе *П. Опочинина*. VI. Невинная жертва, повѣсть *Раффи*, съ армянскаго. VII. Изъ кн. *Ильи Чавчавадзе*, стихотвореніе *В. Величко*. VIII. Верійское ущелье, этнографическій очеркъ *Ив. Ростомова*. IX. Кавназь, въ экспромптахъ поэтовъ: *А. Будищева*, *В. Мазуркевича*, *Ф. Соллогуба*, *В. Шуфа* и *А. Федорова*. X. Нашествіе чалабовъ, сцены изъ армянской сельской жизни, *Левона Мануэльянца*. XI. Грузинскіе католики, неизданная статья *Луки Исарлова*. XII. Изъ Тифлисскихъ нравовъ, съ грузинскаго, *НН*. XIII. Изъ кн. *Ананія Церетели*, стихотвореніе *В. Лебедева*. XIV. Закавказская деревня (вмѣсто обзора), *Ш. Давидова*, и т. д.

Цѣна экземпляра, съ пересылкою и доставкою, 1 р. 20 к.; по выходѣ—2 руб. За коленкоровый переплетъ съ золотымъ тисненіемъ—1 руб.

Принимаются объявленія.

Требованія адресовать въ книжные магазины: „Центральной книжной торговли“ и грузинск. „Общества распространенія грамотности“, или издателю *Шіо Давидову*, Тифлисъ-

1871
1872

1873

1874

1875

1876

1877

1878



ՔԱՂԱՅԱԿԱՆ — ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ — ԳՐԱԿԱՆ

Ա Մ Ս Ա Գ Ր Ի

ԲԱԺԱՆՈՐԴՈՒԹԻՒՆԸ 1898 ԹԻԱԿԱՆԻ ՀԱՍԱՐ

Շ Ա Ր ՈՒ Ն Ա Կ Ի ՈՒ Մ Է

ԲԱԺԱՆՈՐԴԱԴԻՆԸ տարեկան 10 սուրբի, կամ 30 ֆունկ:
ԴԻՄԵԼ՝ Թիֆլիս, Սերգիևսկայա փողոց, տուն № 6: Այլ քաղաքնե-
րից՝ Тифлисъ. Въ Редакцію журнала „МУРՇԻ“.
Արտասահմանից՝ Tiflis. Rédaction de la Revue
„MOURTCH“.

ԲԱՔԻՈՒՄ կարելի է գրել նաև սլ. Ֆրիդոն Մարդանեանի մօտ (գրա-
պենակ Ե. և Հ. Մելիքեանների):